

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ՂԱՐՍԼ ՅԱՆ ԱՆՆԱ ՌՈՒ ԲԵՆԻ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ

Ժ.02.01- «Հայոց Լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝ բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Կ.
Եզեկյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ4

ԳԼՈՒԽ 1. ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԿՏԱԳՈՒՄՆԱՔԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒ ԹՅՈՒՆ23

§1. Բնիկ հայ երեւն իրավաբանական տերմիններ23

§2. Իրավաբանական փոխառյալ տերմիններ25

ԳԼՈՒԽ 2. ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ43

§1. Արդի հայ երեւնի իրավաբանական տերմինահամակարգի իմաստաբանական դրսևորումները43

§2. Իմաստափոխությունը արդի հայ երեւնի իրավաբանական տերմինահամակարգում66

ԳԼՈՒԽ 3. ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՇԵՐՏԱՔԱՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒՃՈՒ ԹՅՈՒՆ797

ԲԱԺԻՆ 1. Արդի հայ երեւնի իրավաբանական տերմինների շերտաբանական վերլուծությունը797

§1. Ընդհանուր հայ երեւն տերմինների շերտ807

§2. Հին կամ գրաբարյան բառերի շերտ79

§3. Միջին հայ երեւնյան բառերի շերտ852

§4. Աշխարհաբարյան բառերի շերտ875

ԲԱԺԻՆ 2. Արդի հայ երեւնի իրավաբանական տերմինների բառակազմական առանձնահատկությունները 1096

§1. Արդի հայ երեւնի իրավաբանական վերլուծական տերմինների բառակազմական քննությունը 1118

§2. Արդի հայ երեւնի իրավաբանական համադրական տերմինների բառակազմական վերլուծությունը 1185

§3. Արդի հայ երեւնի իրավաբանական տերմինահամակարգում թույլատրելի գործածությունը ունեցող հապավումներ և համառոտագրություններ 1252

§4. Արդի հայերենի իրավաբանական տերմինների արևելահայերեն-արևմտահայերեն բառակազմական տարբերակներ 1317

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ..... 1395

ՕԳՏԱԳՈՐԿՎԱՅ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ 1462

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՏԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ 1562

ՀԱՎԵԼՎԱՅ (առեկախսուղթյան մեջ գործածված իրավաբանական տերմինների բացատրություն) 1563

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

Յնուժ և միջնադարում հայ ժողովրդի իրավական միտքը պատմականորեն ունեցել է իր իրավական ակունքները, որոնք հիմք են ծառայել ժամանակակից հայ կական օրենսդրության ստեղծմանը. դրանք են՝

1. սովորույթը կամ սովորույթային իրավունքը,
2. կանոնական կամ եկեղեցական իրավունքը,
3. օտար իրավունքի ռեցեպցիան (մովսեսական օրենքները, Թալմուդը¹, ասորահռոմեական դատաստանագիրքը, Աստիոքի ասիզները, բյուզանդական գիսվորական օրենքը և այլ իրավունքներ),
4. ազգային դատաստանագրքերը (Դավիթ Ալավկա որդու «Կանոնագիրքը», Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի»-ն, Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրքը»),
5. թագավորների շնորհագրերն ու մյուս կարգադրությունները,
6. օտարերկրյա պետությունների հետ կնքած պայմանագրերը,
7. իրավահայտ աղբյուրները, այսինքն՝ հայ և օտար պատմագիրների աշխատությունները, վիճաբիր տարեգրերն ու նյութական մշակույթի այլ հիշատակարաններ²:

Յայ իրավաբանական լեզվի բառապաշարը, կապված հայ իրավական մտքի վաղեմության հետ, անցել է ձևավորման բավականին երկար ճանապարհ:

Դեռևս հնդեվրոպական նախալեզվում³ գործածական են եղել այնպիսի արմատներ և բառեր, որոնք, նպաստելով հայերենի

¹ Մովսեսական օրենքների վերամշակված տարբերակն է, որ ծագել է IV – V դդ. Առաջավոր Ասիայի հրեական «գաղութներում», այդ թվում՝ Արաբիայում:

² Տե՛ս **Ասլանյան Ա.**, Յայ աստանի պետություն և իրավունքի պատմություն, Երևան, 2009, էջ 16:

³ Ըստ Յր. Աճառյանի՝ «Յնդեվրոպական նախալեզուն, վորչափով վոր վերականգնված է այժմ գիտությունների միահամուռ ջանքերով, պարունակում է ընդամենը 2223 արմատ բառ», որոնցից «հայերենը պահել է միայն 713 հատ, վոր նշանակում է Յնդեվրոպական ամբողջ բառամթերքի հազիվ մեկ յերրորդ մասը»: Աճառյանի ներկայացրած բառացանկում կան արմատական բառեր, որոնք երկրորդական ածանցներով նոր բառեր են կազմում: Ըստ լեզվաբանի՝ այդ բառերի թիվը հասնում է 196-ի: Այսինքն՝ արմատական բառերն ու ածանցավոր կազմությունները միասին

բառապաշարի միջուկի ձևավորմանը, դարձել են հայ իրավաբանական տերմինաբանության նախադրյալներ:

Հայերենին անցած հնդեվրոպական ծագում ունեցող արմատներն ու բառերը 14-ն են⁴, որոնցից անկախ գործածություն ունեցող արմատական բառերն այսօր իրավական ոլորտի բառային արժեքներ են, իսկ կախյալ գործածություն ունեցող արմատները կենսունակ են տերմինաբանության գործընթացում, ինչպես՝ *այց (հայց) (ais-sk'ha)*, *ստեան (sed)*, *գիւ (wesno)*, *գիւտ (weid, woid) - գտանք, գործ (worg)*, *ի (իք, ինչ, հի, իրաւ, իմն, զի, իր) (k²i) – իրավունք* և այլն⁵:

Որպես նախաքրիստոնեական դարաշրջանի իրավական մտքի սկզբնաղբյուրներ հիշատակվում են՝ ա) Արարայն թագավորների (Արամե, Սարգուրի I, Մենուա իշաբեհնորդի և այլք) հրամանագրերը, հրամաններն ու նամակները, բ) Թադեոս առաքյալին վերագրվող 33 կանոնները⁶:

Քրիստոնեական Հայաստանում հայ իրավագիտական մտքի աստիճանական զարգացումը խթանում է մասնագիտական բառերի համալրումը, որը իրավաբանական տերմինաբանության ձևավորման սկզբնական շրջանում (սկսած 5-րդ դարից) արտահայտվեց փոխառությունների տեսքով:

Հայերենի բառապաշար մուտք գործող իրավաբանական նշանակության օտար բառերը մեծ մասամբ փոխառվում են պահլավերենից (*դատ, վկա, վճիռ*), հունարենից (*դիաթիկ, նոմոս, կանոն*), արաբերենից (*դաւի, թախիր, խրեր*), լատիներենից (*ադվոգատ, կոնրատոր, տեգրէթ*) և հին ֆրանսերենից (*անսիզ, բլայթ, օդրել*)⁷: Պատճառը այսլեզուներով խոսող ազգերի՝ հայերի հետ ունեցած տարաբնույթ շփումն էր: Սակայն իրավաբանական նշանակություն ունեցող բառերը ոսկեդարից միջնադար ընկած ժամանակահատվածում դեռևս չէին ընկալվում որպես մասնագիտական տերմիններ և գործածվում էին տարաբովանդակ

կազմում են 909 բառ (տե՛ս **Աճառյան Յր.**, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940, էջ 33):

⁴ Տե՛ս **Աճառյան Յր.**, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940: **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն, նախագրային շրջան, Երևան, 1987, էջ 109-156:

⁵ Բնիկ հայերեն բառերի ամբողջական ցանկը տե՛ս սույն առենախոսության 22-24-րդ էջերում:

⁶ Տե՛ս **Հակոբյան Վ.**, Կանոնագիրք հայոց, Երևան, հ. 2, 1971, էջ 19-40:

⁷ Հին և հնագույն փոխառություններն իրենց բացատրություններով առավել մանրամասնորեն տե՛ս սույն աշխատության 25-30-րդ էջերում:

աշխատություններում: Օրինակ՝ «Ու այլ մարդոյ խօսք ու **դաւի (սահանջ)** չկա իյայս մէջս, ոչ իմ, ոչ իմ որդւոյ ու ոչ այլ մարդոյ »⁸:

Նոր ձևավորվող հայ իրավաբանական բառապաշարը 4-13-րդ դարերում իր արտահայտությունը գտավ ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր իրավական բնույթ կրող աղբյուրներում, որոնք են՝

1. Գրիգոր Լուսավորչին վերագրվող կանոնները,
2. Աշտիշատի ժողովին վերագրվող կանոնները,
3. Շահապիվանի կանոնները,
4. Սիսի 1243թ. ժողովի կանոնադրությունը,
5. Աղվանից արքա Վաչագանի կանոնական սահմանադրությունը,
6. Յովհան Իմաստասեր Օձնեցու կանոնները,
7. Դավիթ Ալակաորդու «Կանոնագիրքը»⁹,
8. Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը»¹⁰,
9. Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի»-ն,
10. Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը»¹¹,
11. Մոնղոլական մեծ խան Մանգուի և Կիլիկյան հայոց տեր Յեթում (Յեթում Ա) թագավորի միջև կնքված պայմանագրի տեքստը¹²:

Հայ իրավական մտքի պատմության մեջ կարևորագույն ձեռքբերում է Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի»-ին: Այն առաջինն է որպես հասարակական բոլոր ոլորտները կարգավորող օրենքների առավել ամբողջական և պետության կողմից կիրառություն ստացած օրենսգիրք, որը, ընդգրկելով իր ժամանակներում արդեն իսկ ձևավորման գործընթաց ապրող հայ իրավաբանական բառապաշարի զգալի մասը, դրանց հաղորդում է տերմինային արժեք՝ գործածելով համապատասխան մասնագիտական խոսքում, հաճախ բառերին տալով գիտական սահմանումներ: Այսպես՝ Մխիթար Գոշը, գործածելով **վոխ**

⁸ «Ժե դարի հայ երեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, Երևան, 1967, էջ 22:
⁹ Սույն կանոնները տե՛ս **Հակոբյան Վ.**, Կանոնագիրք հայոց, Երևան, հ. 1, 1964, հ. 2, 1971:
¹⁰ Տե՛ս **Շնորհալի Ն.**, Թուղթ ընդհանրական, էջ միածին, 1865:
¹¹ Տե՛ս **Գոշ Մ.**, Գիրք դատաստանի, Երևան, 1975: **Սպարապետ Ս.**, Դատաստանագիրք, Երևան, 1958:
¹² Պայմանագրի աշխարհաբարյան տարբերակը տե՛ս **Ավագյան Ռ.**, Հայ իրավական մտքի գանձարան, հ. 1, Երևան, 2001, էջ 645-647:

բառը, որն այսօր փոխարինվում է **փոխառություն** տերմինով (փոխառության պայմանագիր), տալիս է հետևյալ սահմանումը.

«Եւ **փոխասացաւ**, զի անդրէն հատուցի գլուխն»¹³: Այսինքն՝ «Եվ փոխովություն անվանվեց, որովհետև մյուսի կողմից է հատուցվում»¹⁴:

Դատաստանագրքում գործածված իրավաբանական նշանակություն ունեցող բառերի մեծ մասը, որոնք ինչպես փոխառյալ, այնպես էլ բնիկ հայերեն բառեր են, ներկայիս իրավական և եզրվի բառապաշարի¹⁵ հիմնաշերտի մնայուն արժեքներ են, ինչպես՝ **առյան, դատ, դատավոր, դատախազ, գանձ, գրալ, վկա, փոխառու** և այլն: Գոչը գործածել է բառեր, որոնք մեզ համար մնացել են որպես պատմական երևույթների անուններ, ինչպես՝ **անդրանկություն** (*ժառանգություն փոխանցման սկզբունք, ըստ որի՝ հայրական ունեցվածքի մեծագույն մասն անցնում է անդրանիկ որդուն*), **անձին գին, վարձանք**¹⁶, **ժառանգակից** (*ժառանգներից յուրաքանչյուրը*), **բահր, նեհ**¹⁷ և այլն:

Հայ իրավական մտքի պատմության մեջ Սմբատ Սպարապետի դատաստանագիրքը՝ որպես միջնադարյան իրավական աղբյուր, այնքանով է կարևոր, որ եղել է Կիլիկյան Հայաստանի պետական կառավարման օրենսգիրք: Այն իր բնույթով քիչ է տարբերվում Մխիթար Գոչի դատաստանագրքից (հատկապես բառապաշարով): Աշխատության մեջ հեղինակը խոսում է իրավաբանական այնպիսի իրականությունների մասին, որոնք իրենց և եզրվական արտահայտությունը պետք է գտնեին ավելի ուշ՝ նոր ժամանակներում: Իրավաբանական այսպիսի հասկացություններից

¹³ **Գոչ Մ.**, Գիրք դատաստանի, Երևան, 1975, էջ 65:

¹⁴ **Ավագյան Ռ.**, Հայ իրավական մտքի գանձարան, հ. 1, Երևան, 2001, էջ 429:

¹⁵ Ատենախոսությունների մեջ հաճախ են հանդիպում նույն իմաստն արտահայտող իրավաբանական բառապաշար և իրավական և եզրվի բառապաշար արտահայտությունները, որոնց **իրավաբանական** և **իրավական** բաղադրիչները գործածվում են իբրև հոմանիշներ՝ «իրավաբանությունը և առհասարակ իրավունքին հատուկ» նշանակությամբ:

¹⁶ **Վարձանք** և **անձին գին** տերմիններն անվանում են միևնույն երևույթը՝ նշանակելով «2. Դրամ, որ տալիս են աղջկա հօրը՝ աղջկան կին առնելու համար. գրաւական» (տե՛ս **Նազարյան Ռ.**, Գրաբարի բառարան, Երևան, հ. 2, 2000, էջ 508):

¹⁷ **Բահր** (<bāhr>), **նեհ** (<nārx>) բառերը պարսկական փոխառություններ են՝ **բահր**-ը՝ *օգուտ, շահ*, **նեհ**-ը՝ *սակ, վաճառելի ապրանքների վրա պետության կողմից դրված գին* նշանակություններով:

Էր **սերվիտուտը**¹⁸, որի մասին Սպարապետը շարադրում է՝ առանց այն անվանելու: Օրինակ՝

«Եւ ջուր հանել ի գետոց ջրելոյ կամ ջաղցնոյ՝ չկարէ ոք արգելուլ կամ ասել թէ՝ սինաւոս (սահման) իմ է, մի հանել ջուր»¹⁹: Այսինքն՝ «Գետերից այգի ու բանջարանոց ջրելու կամ ջրադացն աշխատեցնելու համար ջուր հանելը ոչ ոք իրավունք չունենա արգելել կամ ասել թէ՝ իմ հողի միջով ջուր մի՛ տար»:²⁰

Նույնը վերաբերում է այն հասկացությանը, որն այսօր արտահայտվում է **սպայ մանագիր** տերմինով: Սմբատ Սպարապետը երևույթին տալիս է **սպայ ման** կամ **սրման** և եզրական բնորոշումը՝ շարադրելով *սպայ մանը* օրինականացնելու տարբեր միջոցներ, ինչպես՝ 1. գրավոր ձևը, 2. *սպայ մանադիր կողմերի փոխադարձ համաձայնությունը հայրենակալ վաճքի առուծափի դեպքում*, 3. *վավերացում և իրականացում վկաների ներկայությամբ*: Օրինակ՝

«Վասն ջաղցնոյ եւ այլ այնցեղ իրաց, երբ գնէ ոք վկայաւք եւ **հաստաւթ թղթով**՝ նա այլ չկարէ փաւշամնիլ՝ ոչ գնաւղն եւ ոչ ծախաւղն...»²¹:

Միևիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերին անդրադարձել են գիտական տարբեր բնագավառների հայագետներ՝ կատարելով իրավաբանական, փիլիսոփայական և այլ բնույթի

¹⁸ **Սերվիտուտ** բառը կիրառելի է միայն վերջին ժամանակներում: Այն ծագել է ևատիներեն *servitus (servitutis)* բառից՝ *ստրկություն* և, *ենթարկվածություն* և իմաստով: Այսօր նշանակում է *իրավունքի տեսակ, ըստ որի՝ անձին իրավունք է վերապահվում օգտվելու ուրիշի գույքից որոշակի շրջանակներում կամ սահմանափակել սեփականատիրոջ իրավունքը որոշակի հարաբերություններում*: Ձևավորվել է հռոմեական իրավունքում՝ մասնավոր սեփականատերերի հակադարձ շահերը կարգավորելու համար: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով **սերվիտուտ** տերմինը սահմանվում է որպես *ուրիշի հողամասից սահմանափակ օգտվելու իրավունք* (հդ. 210):

¹⁹ **Սպարապետ Ս.**, Դատաստանագիրք, Երևան, 1958, էջ 16:

²⁰ **Սպարապետ Ս.**, Դատաստանագիրք, Երևան, 2008, էջ 39:

²¹ Նույն և տեղում, էջ 125:

վերլուծություններ²²: Դատաստանագրքերի բառապաշարի վերաբերյալ վերլուծական աշխատանքները դեռևս երկուսն են²³:

Սույն ուսումնասիրություններից բացի, ցավոք, լեզվաբանական ոչ մի վերլուծական աշխատանք չի կատարվել 4-13-րդ դարերի իրավական բովանդակությունն ունեցող վերոնշյալ աղբյուրների բառապաշարի վերաբերյալ:

1520 թվականին, երբ Հայաստանը բաժանվեց Օսմանյան կայսրության և Պարսկաստանի միջև, հայ ժողովրդի մեջ ամրապնդվեց ազգային ազատագրական պայքարի օրինականության և ինքնորոշման իրավունքի գաղափարը, որը 18-րդ դարում նոր վերելք ապրեց հատկապես հայկական գաղթօջախներում: Հնդկաստանում հրատարակվեցին Հայաստանի ազատագրման ծրագրային երկեր, ինչպես *Մովսես Բաղրամյանի «Նոր տեսրակ որ կոչի հորդորակը»*, *Հակոբ Շահամիրյանի «Տեսրակ որ կոչի նշավակը»*, *«Որոգայթ փառաց»*-ը: Վերջինս և «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց» օրենսգիրքը սույն դարաշրջանի հայ իրավունքի ոչ մեծաթիվ յուրօրինակ հուշարձաններից են:

Իրավական լեզվի բառապաշարային հագեցվածությամբ առանձնանում է «Որոգայթ փառաց» աշխատությունը, որում հեղինակը կարծես իմի է բերում 4-16-րդ դարերի հայ իրավական լեզվի գրեթե ամբողջ բառային կազմը²⁴:

«Որոգայթ փառաց»-ը իրավալեզվամտածողական հարուստ պաշար ունեցող աշխատություն է: Չհայտնվելով լեզվաբանների

²² Տե՛ս **Գոշ Մ. 1120-1213**, Դատաստանագիրք հայոց: Իրավաբանական հետազոտությունք հանդերձ ծանօթությունքք, Վաղարշապատ, 1880: **Սամուելյան Խ**, Մխիթար Գոշի Դատաստանագիրքը և հին հայոց քաղաքացիական իրավունքը, Վիեննա, 1911: **Թորոսյան Խ**, Դատարանային համակարգը միջնադարյան Հայաստանում ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի, ԳԱ «Տեղեկագիր», №125, 1965: **Թանանյան Գ.**, Մխիթար Գոշի իրավունքի փիլիսոփայությունը, Պատմա-բանասիրական հանդես, №1, 2012, էջ 38-52: **Սուքիասյան Ա.**, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978: **Սամուելյան Խ**, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939 և այլն:

²³ Տե՛ս **Ղարսլյան Ա.**, Հայերենի իրավաբանական տերմինները միջնադարի դատական համակարգում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», 1-2, 2013, էջ 137-143: **Սուլեյմյան Ա.**, Հայկական դատաստանագրքերի բառապաշարը միջնադարում, «Լեզու և լեզվաբանություն», 1-2, 2015, էջ 45-52:

²⁴ Դեռևս 18-րդ դարի 1788-1789 թվականներին Հնդկաստանի Մադրաս քաղաքում Շահամիր Շահամիրյանը հասարակության դատին հանձնեց «Որոգայթ փառաց» գիրքը, որը, համաձայն պատմաբան Աբգար Հովհաննիսյանի ներկայացրած փաստացի աղբյուրների, տպագրվել է Հակոբ Շահամիրյանի անունով, քանի որ հայր Շահամիրյանը ցանկացել է անմահացնել վաղամեռիկ որդու անունը (տե՛ս **Иоаннисян А.** К истории возникновения «Западни честолубия». «Известия» АН АрмССР. 1948, № 3, էջ 21-24):

ուշադրութեան կենտրոնում՝ այն չի վրիպել իրավագետների վերլուծական մտքից²⁵: Նրանում արտահայտված են գաղափարներ, որոնք պետք է հիմք ծառայեին ապագա օրենսդրության որոշակի կառույցների (գործադիր, օրենսդիր, դատական մարմիններ) և դրանց հետ կապված իրավաբանական նոր անվանումների ստեղծմանը (ՀՀ Ազգային ժողով, Կառավարություն):

19-րդ դարի սկզբում և կեսերին ազգային իրավունքի գրականությունը համալրվեց նոր գործերով, ինչպես՝ «Ռուսահայոց Պոլիոթենիան – Կանոնադրությունը» (1836թ.), որով պետք է առաջնորդվեր հայ եկեղեցին Արևելյան Հայաստանը ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո, և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից ընդունված «Ազգային Սահմանադրութիւն հայոց»-ը (1860 թ.), որն էլ պետք է կարգավորեր արևմտահայերի կրոնահամայնքային կյանքը: Այս կանոնադրության մեջ գործածված շատ տերմիններ, որոնց թվում կան նաև գրաբարյան բառեր, իրենց իրավական նշանակություններով այսօր ընկալվում են որպես միայն կամ առավել քան արևմտահայերենում գործածվող իրավաբանական տերմիններ, ինչպես՝ *ամբաստանություն*, *զանցառություն*, *ատենապետություն*, *ատենադպրություն*, *դիվանատուն* և այլն: Մեջբերենք.

«Քննիչ յանձնաժողովը՝ *ամբաստանութիւնը* (մեղադրանք նշանակությամբ) քննելով, տեղեկագիր կու տայ Ընդհանուր ժողովին որ գաղտնի քուէարկութեամբ կորոշէ ինդիքը»²⁶:

19-րդ դարում, երբ Հայաստանի տարածքները մասնատված էին Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև, հայ գրական մտքի ազատարտահայտումը հայտնվեց շրջանակների մեջ:

Չնայած ազատ ստեղծագործելու սահմանափակ պայմաններին՝ 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում իրավական բնույթի հոդվածներ, աշխատություններ հրատարակեց հայ ականավոր գրող, իրավաբան-հռետոր Գրիգոր Չոհրապը, ինչպես՝ «*Օսմանյան իրավունքում քաղաքացիության տարբերության պատճառով*

²⁵ Տե՛ս **Թելուկ Մ.**, Հայ կական առաջին սահմանադրությունը. «Որոգայթ փառաց»-ը և ՀՀ 1995թ. սահմանադրությունը, Երևան, 2001:

²⁶ «Ազգային սահմանադրութիւն հայոց», Կ. Պոլիս, 1860, էջ 36:

ժամանգով թյուր և ստանալով ու արգելքի մասին», «Քրեական իրավունք», «Հայ կական հարցը փաստաթղթերի և ույսի տակ» և այլն²⁷:

Սակայն ինչպես այս, այնպես էլ վերոնշյալ իրավական աղբյուրների և եզրական առանձնահատկությունները դարձյալ ուսումնասիրման առարկա չդարձան:

Հայ իրավաբանական տերմինների առաջին համակարգումը եղավ 1919 թվականին, երբ Թիֆլիսի հայ փաստաբանների միության նախաձեռնությամբ հայ իրականության մեջ առաջին անգամ կազմվեց և Հայաստանի առաջին հանրապետության օժանդակությամբ հրատարակվեց **«Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարանը»**, որը հավաքական մտավոր աշխատանքի հազվագյուտ օրինակ է: Բառարանը կազմվեց ինչպես հայագետների (Տիգրան Հովհաննիսյան, Մանուկ Աբեղյան, Ստեփան Մախասյան), այնպես էլ հայ իրավաբանների (Արշակ Կուսիկյան, Հարություն Զմշկյան, Ալեքսանդր Պապովյան) համատեղ և փոխկապակցված գործունեությամբ: Այնպես է նպաստեր «մի կողմից ամենակարևոր օրենսգրքերի հայերեն թարգմանության գործում և միևս կողմից պիտի հայերենին անվարժ արևելահայ դատական պաշտոնեաներին ու փաստաբաններին հնարաւորութիւն տար դնել ի սպաս հայ ժողովրդի իրենց իրավաբանական հմտութիւնը»²⁸:

«Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարանի» մյուս առավելությունը նրա կազմության մեթոդն էր: Աշխատանքի սկզբում իրավաբանները նախապես ընտրեցին 1100 ռուսերեն մասնագիտական տերմին, որոնցից յուրաքանչյուրի հայերեն համարժեք տարբերակը հայագետները կա՛մ ընտրում էին հայերենի գործող բառապաշարից, կա՛մ հին հայերենից, երբեմն էլ բարբառներից, կա՛մ էլ, չգտնելով համապատասխան բառ, որ ամբողջությամբ կարտահայտեր ռուսերեն տերմինի իմաստը, հայերենի բառակազմական միջոցներով կազմում էին նորերը, հակառակ դեպքում ընդունում օտարազգի տերմինը, եթե այն գործածական էր գրեթե բոլոր եվրոպական և գու՛նեւերում:

²⁷ Տե՛ս Ավագյան Ռ., Գրիգոր Չոհրապի և Գրիգոր Չուբարյանի իրավական միտքը, Երևան, 2003:

²⁸ «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան», Թիֆլիս, 1919, էջ 3:

Այս պիսով՝ հայ ազիտու թյան մեջ 1-ին մասնազիտական՝ իրավաբանական բառարանն իր աշխատանքային կազմակերպվածությամբ և մեթոդաբանությամբ կարևոր ազդակ հանդիսացավ ապագայում կազմվելիք իրավաբանական բառարանների ստեղծման գործընթացին: Հասարակության դատին հանձնվեց 1400 տերմին, որոնցից շատերը դարձան հայ իրավաբանական համակարգի մնայուն և անփոփոխ արժեքներ, ինչպես՝ **իրեղեն ապացույց, ինքնիրավչություն, դռնբաց (դռնփակ) նիստ, հայցային վաղեմություն, փաստաբան** և այլն:

Խորհրդային կարգերի հաստատմամբ Հայաստանի գիտական տարբեր ոլորտներ համալրվեցին նոր երևույթներ անվանող տերմիններով: Ուստի ԽՍՀՄ-ի միութենական և ինքնավար հանրապետություններում 1920-1930-ական թվականներին ստեղծվեցին տերմինաբանական հանձնաժողովներ (խորհուրդներ, կոմիտեներ), որոնց գործառույթն էր նոր տերմինների կազմությունը, փոխառությունների ընթացքի կանոնավորումը, այլ կերպասած՝ տվյալ էզվի տերմինաշինության նորմավորումը²⁹:

1933 թվականին Խորհրդային Հայաստանում ստեղծվում է տերմինաբանական խորհուրդ, որը «հայոց էզվի գործող նորմաներին և սկզբունքներին համապատասխան քննարկում ու լուծում է հայերենի ուղղագրության, կետադրության, նոր տերմինների և ուղղախոսության վիճելի հարցերը, ընտրություն է կատարում մասնազիտական և տերմինաբանական բառարաններում և առհասարակ էզվում գոյություն ունեցող գուգահեռ տերմինների ու բառերի միջև, քննարկում այդ առթիվ եղած անհատական ու կոլեկտիվ առաջարկները և ընդունում համապատասխան որոշում...»³⁰:

Տերմինաբանական կոմիտեի հսկողությամբ 1924 թվականին երևանում լույս տեսավ թվով երկրորդ **«Ռուս-հայերեն իրավաբանական բառարանը»**³¹, որում ներկայացված է մասնազիտական այնպիսի բառամթերք, «վոր պարունակում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Միության, Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետության յեվ

²⁹ Տե՛ս «Հայ կական սովետական հանրազիտարան», հ. 11, Երևան, 1985, էջ 676:

³⁰ «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Երևան, 1978, էջ 222:

³¹ Տե՛ս «Ռուս-հայերեն իրավաբանական բառարան», Յերեվան, 1924:

Հ.Ս.Խ. Հանրապետության որենսդրություններն ու պետական հիմնարկությունների դիվանական լեզուն»³²:

Բառարանում երբեմն մեկ ռուսերեն բառի դիմաց տրված են երկու-երեք հոմանիշ տարբերակներ՝ ընտրությունը թողնելով գործածողներին, ինչպես՝ *адвокат - փաստաբան, դատական պաշտպան, устоец – պահանջատեր, հայցատեր, уголовный – քրեական, պատժական, залогодатель - գրավադիր, գրավատու* և այլն:

Խորհրդային կարգերի գաղափարախոսության ազդեցությամբ ծնված տերմինները (*միաեծանություն, սոցիալիստական իրավագիտակցություն, հողի աշխատավորական վարձակալություն* և այլն), սակայն, 70 տարի անց պետք է ընկալվեին որպես հնաբանություններ³³:

Վերոնշյալ երկու բառարանների դերը թերևս այնքանով է կարևոր հայ իրավատերմինահամակարգի ձևավորման գործընթացում, որքանով նրանք դարձան հայ իրավագիտության մեջ ներթափանցած բազում հասկացությունների հայացման առաջին գրավականը և հիմք դրեցին իրավաբանական տերմինների թարգմանական և լեզվահամեմատական բառարանակազմությանը, քանի որ հետագայում կազմվեցին ոչ միայն ռուսերեն, այլև անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուների ու հայերեն իրավաբանական տերմինների լեզվահամեմատական բառարաններ³⁴, որոնք պարբերաբար վերամշակվելու և կանոնակարգվելու, իսկզբանե թարգմանական գործընթացում իրավաբանների և լեզվաբանների համատեղ գործունեության անհրաժեշտություն ունեն: Այսպես՝ 2005 թվականին չորրորդ անգամ վերահրատարակված, Մեծ Բրիտանիայի հանրահայտ բառարանագիր Փիտեր Քոլինի հեղինակած 11 000 բառ ու բառակապակցություն ընդգրկող իրավաբանության

³² Նույն տեղում, էջ 4:

³³ Տե՛ս սույն ատենախոսությունը, էջ 93-95:

³⁴ Տե՛ս **Փոթեյան Վ.**, Ռուս-հայերեն իրավաբանական բառարան, Երևան, 1972: **Քարլ Ուլլ.**, Անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն իրավաբանական բառարան, Երևան, 1994: **Պետրոսյան Լ.**, Արդի Ռուս-հայերեն իրավաբանական բառարան, Երևան, 1998: **Աբգարյան Իգ.**, Ֆրանսերեն-հայերեն իրավաբանական բառարան, Երևան, 2001: **Օգանովա Ռ.**, Գերմաներեն-հայերեն իրավաբանական բառարան, Երևան, 2002: **Վարդանյան Ս.**, Անգլերեն-հայերեն-ռուսերեն իրավաբանական բառարան, Երևան, 2004: **«Русско-армянский словарь юридических терминов и перефраз»**, Ереван, 2005: **Քոլին Փ.**, Իրավաբանության բացատրական բառարան. անգլերեն-հայերեն-անգլերեն, Երևան, 2005: **Մարտիրոսյան Մ.**, Զաղաքական, դիվանագիտական, իրավաբանական տերմինների իսպաներեն-հայերեն բացատրական բառարան, Երևան, 2011 և այլն:

բացատրական բառարանի հայերեն թարգմանությունում հաճախ հանդիպում են այնպիսի օրինակներ, երբ հեղինակը օտար լեզվի իրավաբանական տերմինը, որն անվանում է մեր օրենսդրությանը ոչ բնորոշ հասկացություն, թարգմանելիս ստեղծում է հայերեն զավեշտալի տարբերակներ, ինչպես՝ *օդային զայրույթ, սպասվող հայց, ցմահ ազնվական* և այլն³⁵:

«Ռուս-հայերեն իրավաբանական տերմինների և շրջառույթների բառարանի» թարգմանիչը, իրավական լեզվի բառապաշարին լիովին չտիրապետելով, այլալեզու իրավաբանական տերմինի դիմաց հաճախ ներկայացնում է կամ անհամապատասխան տարբերակ, ինչպես՝ *предявитель иска – հայցորդ (փոխարենը՝ հայցվոր), протестант – բողոքական (փոխարենը՝ բողոք բերող անձ), рабочее время – աշխատանքային ժամանակ (փոխարենը՝ աշխատանքային ժամ)* և այլն³⁶, կամ հոմանիշ բառեր, որոնցից մեկը իրավաբանական տերմին չէ, օրինակ՝ *прощение – ներում, функция – գործառույթ, գործու նեու թյ ան ուղղու թյ ու ն*³⁷ և այլն: Հավելենք, որ բառարանն ընդգրկում է 3483 իրավաբանական տերմին:

Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումը (1991 թ.) հայ հասարակության առջև բացեց տեղեկատվության և գիտելիքների հարուստ հորիզոն՝ պայմանավորված մեր երկրի այլապետությունների հետ ունեցած լայնամասշտաբ փոխհարաբերություններով:

ՀՀ իրավական դաշտում տեղի ունեցան մի շարք նշանակալից փոփոխություններ, մասնավորապես 1995 թվականին ՀՀ Սահմանադրության ընդունմամբ հիմնովին վերակառուցվեց խորհրդային հասարակությունից ժառանգություն մնացած օրենսդրական դաշտը: Վերակազմավորվեցին նախկին իրավական կառույցները (դատարաններ, տեղական ինքնակառավարման մարմիններ), ստեղծվեցին նաև նորերը (ՀՀ փաստաբանների պալատ, հանրային պաշտպանի գրասենյակ): ՀՀ-ն վավերացրեց մի շարք

³⁵ Տե՛ս **Քուլին Փ.**, *Իրավաբանական բացատրական բառարան*, Երևան, 2005:

³⁶ Տե՛ս **«Русско-армянский словарь юридических терминов и перефраз»**, Երևան, 2005:

³⁷ Ընդգծվածները իրավաբանական տերմիններ չեն:

միջազգային հանրաճանաչ պայմանագրեր³⁸, ինչպես նաև անդամակցեց
որոշ միջազգային իրավական կառույցների³⁹: Նշված
փոփոխություններն, անշուշտ, իրենց անդրադարձը ունեցան հայ
իրավաբանական բառապաշարի վրա՝ այն համալրելով ինչպես
նորակազմ (*դատալ սուլմ, դատավարագետ, իրավասուբյեկտություն*),
այնպես էլ փոխառյալ տերմիններով (*նոու-հաու, լիզինգ,
ֆրանչայզինգ*), նաև նոր հասկացություններ անվանելու նպատակով
որոշ բառեր վերափոխատարելով (*դեպք, մասնագետ, օգնական*):

Ինչ խոսք, հայ իրավունքի պատմական զարգացմանը զուգահեռ՝
ձևավորվում և որպես առանձին գիտական բառաչերտ էր զարգանում
հայ իրավական լեզվի բառապաշարը⁴⁰, որն իր նոր համալրումներով
դեռևս մինչ օրս չի արժանացել լուրջ լեզվաբանական
վերլուծական ուսումնասիրության: Բացառություն են կազմում
բառարանակազմական աշխատանքները:

Առանց լեզվական համեմատության՝ մեկ բառարանում հայերեն
իրավաբանական տերմինների համակարգման առաջին փորձը եղավ
Երևանում 1991 թվականին հրատարակված **«Իրավաբանական համառոտ
բացատրական բառարանը»**⁴¹: Այն ընդգրկում է քաղաքացիական,
քրեական, դատավարական իրավունքին, ինչպես նաև նոր տնտեսական
օրենսդրությանը վերագրվող 700-ից ավելի տերմիններ իրենց
բացատրություններով: Բառարանի հեղինակների նպատակն էր ՀՀ-ի
անկախացմամբ վերակառուցված սեփական օրենսդրությունը
հայացել, հանրությանը ներկայացնել հայերենով, որպեսզի որևէ
իրավական ակտ ճիշտ մեկնաբանելու և կիրառելու
անհրաժեշտության դեպքում իրավաբանը հնարավորություն ունենա
դիմելու օրենսդրական ակտերում նշված տերմինների ստույգ
պարզաբանմանը: Հեղինակների փաստամբ «դակարևոր գործնական

³⁸ Օրինակ՝ ՀՀ-ն 2002 թվականի մարտի 20-ին վավերացրեց «Մարդու իրավունքների և
հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի Նոյեմբերի
4-ին ստորագրված Եվրոպական կոնվենցիան:

³⁹ Օրինակ՝ 2001 թվականի հունվարի 25-ին ՀՀ-ն դարձավ Եվրոպայի խորհրդի և իրավ
անդամ:

⁴⁰ Քանի որ սույն առենախոսության ուսումնասիրման առարկան արդի հայերենի
իրավաբանական տերմիններն են, ուստի **արդի հայերենի իրավական լեզվի
բառապաշար** արտահայտությունը հաճախ փոխարինում ենք հայերենի տվյալ
բառաչերտը տերմինաբանական տեսանկյունից բնութագրվող **արդի հայերենի
իրավաբանական տերմինաբանարգ** արտահայտությամբ:

⁴¹ **Գյուլենեջյան Ս., Գյուլենեջյան Մ.**, Իրավաբանական համառոտ բացատրական բառարան,
Երևան, 1991:

խնդիր է, քանի որ իրավաբանական լեզվում ավելորդ հոմանիշները դժվարացնում են, իսկ որոշ դեպքերում էլ բացառում տերմինների հայերեն օգտագործումը, քանզի հայերեն լեզվով իրավաբանական գրականությանը սահմանափակ է, և, ի տարբերություն մյուս հանրապետությանների, չեն հրապարակվում հիմնական օրենսգրքերի գիտագործական մեկնաբանությունները»⁴²:

Իրավական տեղեկատվության բացակայության պատճառով 1996 թվականին հիմնադրվեց Իրավական տեղեկատվական կենտրոն «ԻՐՏԵԿ» ՓԲԸ-ն իր կայքէջով՝ նպատակ ունենալով հասանելի դարձնել իրավական ոլորտը և դրանով նպաստել Հայաստանի Հանրապետության իրավական պետության կայացմանը⁴³: Նպատակակետին հասնելու քայլերից էր 11 470 իրավաբանական տերմին ընդգրկող էլեկտրոնային բառարանի կազմումը, որն իր որոնման և հղումների աշխատակարգով անփոխարինելի է կազմակերպությանների ղեկավարների, պրոֆեսիոնալ իրավաբանների և ֆինանսական ոլորտի աշխատողների համար⁴⁴:

Այսօր իրավաբանական պաշտոնական տեղեկատվական աղբյուրները բավականին բազմազան են, անգամ դրանցից մի քանիսն ունեն իրենց էլեկտրոնային տարբերակը⁴⁵: Սակայն ոչ բոլոր կայքէջերում կգտնենք լեզվական բնույթի ենթավերնագրեր (օրինակ՝ իրավական ակտերի, հապավումների, տերմինների բացատրական բառարան), որոնք կօգնեն ընթերցողին հեշտ ընկալել ու որևէ դժվար ըմբռնելի իրավական ակտ:

2006 թվականից «Իրավունքի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ ստեղծվում է <http://www.healthrights.am/arm/> կայքէջը, որը հանրությանը ծառայում է

⁴² Նույն տեղում, էջ 3:

⁴³ Տե՛ս «Իրավական տեղեկատվական կենտրոն» կայքէջը՝ <http://www.irtek.am/views2/about.aspx?lang=hy-am>:

⁴⁴ Տե՛ս «Իրավաբանական տերմինների բառարան»՝ <http://www.irtek.am/views/dictionary.aspx>:

⁴⁵ Համաշխարհային բանկի և ՀՀ արդարադատության նախարարության նախաձեռնությամբ 2005 թվականից գործում է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգը (ՀԻՏՀ կամ ARLIS) www.arlis.am կայքէջով: ՀԻՏՀ-ի իրավական ակտերի բազայի համալրման և սպասարկման աշխատանքները իրականացնում է «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲ ընկերությունը:

Հանրային տեղեկատվական համակարգ է նաև «Դատալեքս»-ը, որը հնարավորություն է տալիս իրական ռեժիմում ստանալ տեղեկություններ բոլոր դատարաններում քննվող գործերի մասին և տրամադրում է մի շարք այլ ծառայություններ (տե՛ս <http://www.datalex.am/>):

որպես առողջապահական իրավունքի վերաբերյալ հավաստի տեղեկատվական առցանց շտեմարան: Այն ընդգրկում է նաև բժշկական և իրավաբանական հասկացություններ, երևույթներ անվանող տերմինների էլեկտրոնային բացատրական բառարան⁴⁶ և իրավաբանական հասպտակների առանձին ցանկ⁴⁷:

Իրավաբանական տերմինների ճյուղային տարբերակման առաջին փորձը եղավ Արմեն Ոսկերչյանի հեղինակած **«Քրեաիրավական տերմինների արդի համառոտ բացատրական բառարանը»**: Յեղիևակի կարծիքով, յուրաքանչյուր գրքի լույսընծայման անհրաժեշտությունը նախատեսված էր պայմանավորված են դրան կատարված հասարակության ունեցած պահանջներով: Եվ քանի որ դատաիրավական բարեփոխումների արդյունքում արդեն ընդունվել են ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքեր, թե՛ արակտիկայում և թե՛ տեսության մեջ գրեթե ամեն օր կարիք էլինում դրանք օգտագործելու: Համաձայն հեղինակի տեսակետի՝ այդ օրենսգրքերը ճիշտ կիրառելու և դրանցից առավել քան արդյունավետ օգտվելու ամենակարևոր նախապայմանը իրավաբանական, մասնավորապես՝ քրեաիրավական էլեզվի տիրապետելն է⁴⁸: Ուստի հեղինակը ներկայացնում է քրեական և քրեական դատավարության իրավունքներում հաճախ կիրառվող արդի քրեաիրավական 500 տերմինների հնարավորինս կարճ բացատրությունները, քանի որ «դրանց իմաստի ու բովանդակության ճիշտ ըմբռնման ու դրանք տեղին օգտագործելու անհրաժեշտությունը ներկայումս առավել քան կարևոր է»⁴⁹:

Հայերեն իրավաբանական տերմինների վերջին բացատրական բառարանը Արեն Կոբալյանի հեղինակած **«Իրավաբանական համառոտ բացատրական բառարան»** է⁵⁰, որը, սակայն, չունենալով նախաբան, ընթերցողին չի տեղեկացնում հեղինակի աշխատանքի նպատակի, տերմինների քանակի և ընտրության սկզբունքների մասին:

⁴⁶ Տե՛ս **«Գործնական ուղեցույցի բառարան»** բաժինը՝ <http://www.healthrights.am/arm/glossary/>:

⁴⁷ Տե՛ս **«Հասպտակների ցանկ»** բաժինը՝ <http://www.healthrights.am/practitioner-guide-arm/more/977/>:

⁴⁸ Տե՛ս **Ոսկերչյան Ա.**, Քրեաիրավական տերմինների արդի համառոտ բացատրական բառարան, Երևան, 2004, էջ 4:

⁴⁹ Նույն տեղում, էջ 5:

⁵⁰ Տե՛ս **Կոբալյան Ա.**, Իրավաբանական համառոտ բացատրական բառարան, Երևան, 2006:

Իրավաբանական տերմինների առաջին և եզրվավերլուծական գիտական աշխատանքը՝ **«Իրավաբանական տերմինների կառուցվածքային-իմաստաբանական վերլուծություն»**

վերտառությունը, հրատարակվեց 2010 թվականին Սուսաննա Տիրյանի հեղինակությամբ: Վերջինիս կարծիքով՝ «այսպիսի ուսումնասիրությունը ոչ միայն կանխանշում է տերմինաբանության զարգացման միտումները՝ այդ ընթացքում բացահայտելով արգասավոր բառակազմական կաղապարները, այլև նպաստում է այդ համակարգի տերմինների ճշգրտմանը, միօրինականացմանը»⁵¹: Հեղինակը կառուցվածքային քննության է ենթարկում իրավաբանների խորհրդակցմամբ ընտրած 3500 տերմին-բառային միավորներ, որոնք խմբավորում է գերակշիռ մաս կազմող **բուն իրավաբանական՝ դատական առյան, հակընդդեմ հայց, ներում, կալանք**, ապա **հարակից և ոչ հարակից** գիտաճյուղերի միավորների՝ **բժշկագիտություն, տնտեսագիտություն, քաղաքականություն, դիվանագիտություն, համագործածական** և այլն՝ *հիվանդության թերթիկ, աճուրդ, հաշվեկշիռ, ընտրաթերթիկ*: Այնուհետև հեղինակը անդրադառնում է պարզ և բաղադրյալ տերմիններին, ներկայացնում է վերջիններիս առավել գործունե բառակազմական կաղապարները:

Հոդվածը, սակայն, չի խուսափել մեկ-երկու թերություններից: Այսպես՝ թեպետ այն վերնագրված է «Իրավաբանական տերմինների կառուցվածքային-իմաստաբանական վերլուծություն», այստեղ չենք հանդիպի ոչ մի տերմինի իմաստային վերլուծության: Հետևաբար սույն աշխատանքը վերաբերում է առավել ապես տերմինների կառուցվածքային վերլուծությանը:

Մասնագիտական որոշակի թերություն է այն, որ նա պարզ տերմինների շարքում է ընդգրկում ածանցավոր՝ **հողված, տվյալ** և բարդ՝ **բացարկ** տերմինները:

Այնուամենայնիվ, սույն գիտական հոդվածի առկայությունը հայագիտության մեջ գովելի է և ունի նույնատիպ և առավել ընդգրկուն ուսումնասիրություններ կատարելու պարտադրողական բնույթ: Լեզվավերլուծական այսպիսի աշխատանքները ինչպես որ դյուրըմբռնելի են դարձնում գիտական տվյալ ոլորտը, այնպես էլ

⁵¹ **Տիրյան Ս.**, Իրավաբանական տերմինների կառուցվածքային-իմաստաբանական վերլուծություն, «Ձահուկյանական ընթերցումներ», Երևան, 2010, էջ 281:

այդ ճանապարհով, ինչ խոսք, որոշակիորեն հասարակայնացնում են տվյալ ոլորտի տերմինահամակարգը:

Իրավաբանական տերմինների վերաբերյալ հաջորդ լեզվավերլուծական աշխատանքը Ա. Մուշեղյանի հեղինակությամբ 2015 թվականին տպագրված **«Չայ կական դատաստանագրքերի բառապաշարը միջնադարում»** գիտական հոդվածն է, որում հեղինակը կատարել է Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերի բառապաշարի ծագումնաբանական, իմաստաբանական և բառակազմական որոշակի ուսումնասիրություն: Մուշեղյանի հավաստմամբ՝ դատաստանագրքերում գերակշիռ թիվ են կազմում իրավաբանական տերմինները⁵²:

Թեպետ այսօր ունենք իրավաբանական լեզվահամեմատական, բացատրական բառարաններ, այնուամենայնիվ դրանք կազմված են միշտ թերություններով, ինչպես՝ սխալ թարգմանությունները, հեղինակների՝ իրավաբանական հասկացությունների բովանդակությանը լիարժեքորեն չտիրապետելը, հետևաբար տերմինների ոչ ճշգրիտ կամ երկարաշունչ, ինչպես նաև օրենսգրքերից քաղված դժվարընկալելի բացատրությունները և միանշանակ բառարանի ստեղծման ոչ կուլեկտիվ (իրավաբանների և լեզվաբանների համատեղ աշխատանքի բացակայություն) բնույթը, ինչը չի կարող լիարժեքորեն նպաստել հայ հասարակության իրավագիտակցության բարձրացմանը: Նպատակակետին հասնելու կարևորագույն ազդակներից մեկը կարող է լինել **հայ իրավական լեզվի բառապաշարի բոլոր տերմինների կամ իրավունքի ճյուղերից յուրաքանչյուրին բնորոշ տերմինների՝ իմաստային ճշգրիտ բացատրությամբ կազմված իրավաբանական արժեքավոր բառարանները**, որոնց կազմությունը դեռևս մնում է լեզվաբանների և իրավագետների առաջնահերթ անելիքներից մեկը:

Ժամանակակից հայ իրավական ոլորտներափանցած տերմինների հասարակայնացման, դրանց վերաբերյալ բնակչությանը փոքրիշատե տարրական գիտելիքներ փոխանցելու լրջագույն խթանիչ է նաև **հայ իրավաբանական գրականության և լեզվական վերլուծական ուսումնասիրություններ կատարելը**: Ցավոք, մինչ այսօր ոչ մի

⁵² Տե՛ս **Մուշեղյան Ա.**, Չայ կական դատաստանագրքերի բառապաշարը միջնադարում, «Լեզու և լեզվաբանություն», 1-2, 2015, էջ 45-52:

լուրջ և ծավալուն հետազոտական աշխատանք չի տարվել այդ ուղղությամբ: Մեր ատենախոսությունն առաջին փորձն է, որում ներկայացնում ենք հայ իրավունքի զարգացման տարբեր շրջափուլերից ժամանակաված և նորագույն ժամանակներում կազմված իրավաբանական տերմինների ծագումնաբանական, իմաստագործառական, շերտաբանական և բառակազմական քննությունը. տերմիններն ընտրվել են հայ իրավական լեզվի ձևավորման գործընթացում մեծ ներդրում ունեցած թե՛ իրավաբանական և թե՛ լեզվաբանական միջարքադբյուններից⁵³:

Ատենախոսության ուսումնասիրության առարկա արդի հայերենի իրավաբանական տերմինները հայերենի զարգացման տարբեր շերտերի պատկանող, այդ թվում՝ արևմտահայերեն բառեր են: Ըստ էդ. Աղայանի՝ «Արդի հայերեն ասելով՝ հասկանում ենք աշխարհաբար նոր հայերեն գրական լեզուն իր երկու գրական տարբերակներով, որոնք մեր ազգային գրական լեզվի գոյության երկու ձևերն են»⁵⁴:

Լեզվական քննության ենթ ենթարկել 1100 և ավելի իրավաբանական տերմին, որոնցից հարյուր իննսուներեքն առանձնացնում ենք որպես նախագրային շրջանից միջնադար ընկած ժամանակահատվածում ձևավորված հայ իրավական ոլորտի լեզվի բառապաշար, որը, առավելապես 20-րդ դարի սկզբներից սկսած, համալրվեց նորանոր տերմիններով, ինչի արդյունքում այսօր ունենք բավականին կառուցիկ և ամբողջական իրավատերմինահամակարգ:

Տերմինները ներկայացնում են իրավական դաշտի տարբեր ոլորտներ՝ սահմանադրական, դատարանակազմական, քաղաքացիական, քրեական, քրեաիրավական, քաղաքացիական-դատավարական, քրեական-դատավարական, դատաբնական-հոգեբուժական, հասարակական հարաբերություններն իրենց ենթաօլորտների մեջ՝ ամուսնաընտանեկան, հողային, գույքային, աշխատանքային, վարչական, միջազգային և այլն: Սրանք տերմինաբանության

⁵³ Օրինակ՝ Մխիթար Գոշ, «Գիրք դատաստանի», Սմբատ Սպարապետ, «Դատաստանագիրք», Հակոբ Շահամիրյան, «Որոգայթ փառաց», ՀՀ օրենսգրքեր, հայ իրավունքի դասագրքեր, մասնագիտական և լեզվաբանական բառարաններ և այլն:

⁵⁴ **Աղայան էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 7:

տեսանկյուններից կոչվում են իրավաբանական տերմինահամակարգի մանրահամակարգեր:

Ատենախոսության վերջում ներկայացված է **հավելված**, որտեղ տրվում են սույն աշխատանքում գործածված դժվարըմբռնելի տերմինների նշանակությունները: Տերմինների հաջորդականությունը ներկայացված է այբբենական կարգով:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Սույն գիտական աշխատանքը ձեռնարկելիս նպատակ ենք ունեցել ուսումնասիրելու հայ իրավական լեզվի բառապաշարն իր զարգացման շրջափուլներով⁵⁵՝ հայ իրավական մտքի ձևավորման վաղ ժամանակներից մինչև մեր օրերը: Աշխատել ենք նպատակն իրագործել մեր առջև դրված հետևյալ խնդիրների լուծմամբ.

1. Տերմինների ծագումնաբանական քննությամբ տարանջատել բնիկ և փոխառյալ իրավաբանական տերմինները: Քննել բնիկ հայերեն տերմինները՝ արմատական բառեր և կախյալ արմատներ ենթաբաժիններով, ներկայացնել դրանց արդիականությունը ժամանակակից իրավաբանական տերմինահամակարգում:

Փոխառությունները դասակարգելով ըստ փոխառու աղբյուրների՝ քննել դրանց հետ կապված ցանկացած լեզվական երևույթ (հայերեն տարբերակների ստեղծում, օտարաբանություն և այլն), ինչպես նաև որպես փոխառության առանձին տեսակ՝ առանձնացնել և քննել պատճենումներն իրենց ենթատեսակներով:

2. Կատարել արդի հայերենի իրավաբանական տերմինների իմաստագործառական քննություն: Ուսումնասիրել հայ իրավունքի զարգացման բոլոր շրջափուլներում գործածվող տերմինների իմաստային առանձնահատկությունները և իմաստափոխության դեպքերը:

3. Հայ իրավաբանական տերմինահամակարգում զարգացող լեզվական որոշ երևույթների (բազմիմաստություն, բացարձակ հոմանիշություն) բացահայտմամբ պարզել ներկայիս իրավական խոսքի պարզմատուցումը խոչընդոտող դրդապատճառները:

4. Կատարել իրավաբանական տերմինների շերտաբանական քննություն: Հիմք ընդունելով գրական հայերենի զարգացման

⁵⁵ Հայ իրավական լեզվի բառապաշարի զարգացման շրջափուլները համապատասխանում են գրական հայերենի զարգացման փուլներին:

շրջափոխելը՝ առանձնացնել իրավաբանական տերմինների՝ ընդհանուր հայերենյան, գրաբարյան, միջին հայերենյան, աշխարհաբարյան բառաչերտերը՝ իրենց ոչ գործուն (հնաբառեր և պատմաբառեր) և գործուն (ներկայիս օրենսդրական և լեզվում գործածվող տերմիններ, նորակազմություններ) բառամթերքով:

5. Համաժամանակյա մոտեցմամբ ուսումնասիրել իրավաբանական տերմինների բառակազմական առանձնահատկությունները (տերմինների կազմություն, կաղապարային կառուցվածքներ, բաղադրական՝ սերող և բաղադրող հիմքեր, բառակազմական տարբերակներ):

6. Հայ իրավատերմինահամակարգի հնարավորինս խմբավորված և լեզվավերլուծական քննությամբ բարձրացնել հասարակության հետաքրքրության աճը իրավաբանական գրականության նկատմամբ՝ սեփական իրավունքները ճանաչելու և անհրաժեշտության դեպքում դրանք պաշտպանելու նպատակով:

ԳԼՈՒԽ 1.

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հայ հասարակության մեջ իրավական մտքի ձևավորման առաջին արտահայտությունները դեռևս հարյուրավոր տարիներ առաջ ստեղծված ազգային սովորույթներն ու եկեղեցական կանոններն են:

Հայ իրավաբանական բառապաշարը, կապված հայ իրավական մտքի վաղեմության հետ, ունի հնագույն պատմություն: Թեև 5-րդ դարում և դրանից վաղ՝ նախագրային շրջանում, **իրավական լեզվի բառապաշար** կամ **իրավաբանական տերմին** հասկացությունները ընդհանրապես գոյություն չեն ունեցել, այնուամենայնիվ հայերենի բառապաշարում եղել են բառեր, որոնք գործածվել են օրենքի ուժ ունեցող կանոններում, դատաստանագրքերում, պայմանագրերում և այլ իրավական աղբյուրներում և այսօր էլ շարունակում են կիրառվել ՀՀ օրենսդրությունում՝ ընկալվելով որպես մասնագիտական՝ իրավաբանական տերմիններ:

Կատարելով արդի հայերենի իրավաբանական տերմինների ծագումնաբանական քննություն՝ դրանք բաժանում ենք երկու խմբի՝ **բնիկ հայերեն իրավաբանական տերմիններ** և **իրավաբանական փոխառյալ տերմիններ**:

§1. Բնիկ հայերեն իրավաբանական տերմիններ

Բնիկ հայերեն իրավաբանական տերմինները «հնդեվրոպական ծագում ունեցող բառարմատները կամ արմատական բառերն են, որոնք գրաբարից, միջին հայերենից և հայ բարբառներից փոխանցվել են ժամանակակից հայերենին, ինչպես նաև վերոհիշյալ արմատներով կամ արմատական բառերով լեզվի զարգացման հին և նոր

շրջաններում կազմված բաղադրությունները»⁵⁶: Հայերենին անցած հնդեվրոպական ծագում ունեցող 909 արմատներից և բառերից առանձնացրել ենք 14-ը⁵⁷ հետևյալ խմբավորվածությամբ՝ **ա) անկախ արմատական բառեր**, որոնք այսօր իրավական ոլորտում գործունե տերմինային արժեքներ են, ինչպես՝ **առեան (sed), գին (wesno), գործ (worg), նիստ(nizdo), փորձ (phor-** ձևից՝ **ձ** անականով)⁵⁸:

Իբրև հնդեվրոպական ծագում ունեցող «արմատական ձև» Գևորգ Ջահուկյանը տարբերակում է նաև **բողոք (bhol)** բառը⁵⁹, որը ևս ներկայիս իրավական ոլորտի տերմինային արժեք է: Հավելենք, որ լեզվաբան Հրաչյա Աճառյանը ստույգ տեղեկություն չի տալիս այս բառի ծագման վերաբերյալ:

Բողոք, գին, գործ, փորձ բառերը, պահպանելով իրենց արտահայտած հիմնական իմաստը, բովանդակային դաշտի նեղացմամբ այսօր ՀՀ օրենսդրության լեզվում կիրառվում են որպես մասնագիտական բառեր: Այսպես՝ որպես բնիկ հայերեն բառ՝ **գործ** նշանակում է «գործ, աշխատանք, պաշտոն, բանուածք, վարք», նեղացնելով իր բովանդակային դաշտը՝ իրավական խոսքում այն կիրառվում է հետևյալ նշանակությամբ՝ «*Դատական կամ վարչական քննություն նորևե խնդրի՝ հարցի՝ վեճի ևն*»⁶⁰:

Ասյան բառը, իր ունեցած իրավաբանական նշանակություններին զուգահեռ, իմաստային ընդլայնման հետևանքով իրավական լեզվում գործածվում է նաև նոր նշանակությամբ: Իսկ **նիստ** բառը՝ իբրև իրավաբանական տերմին, այսօր արտահայտում է բոլորովին նոր հասկացություն⁶¹:

Հնդեվրոպական ծագում ունեցող նշված բառերից գրեթե բոլորը նաև իրավաբանական նորանոր բաղադրյալ տերմինների

⁵⁶ **Սուլքիայան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2008, էջ 183:

⁵⁷ Տե՛ս **Աճառյան Հր.**, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940, էջ 34-80:

⁵⁸ Այս թվին չի պատկանում ոսկեդարյան և միջնադարյան հայ իրավական աղբյուրներում հիշատակվող **երդումն** բառը, քանի որ այսօրվա իրավական ոլորտում չունի տերմինային արժեք:

⁵⁹ Գևորգ Ջահուկյանը, **բողոք** բառից բացի, իր աշխատությունում ընդգրկում է մի քանի տասնյակ արմատական ձևեր, որոնք, ինչպես ինքն է ասում, չեն արտացոլված Յ. Պոկոռնու և Հ. Աճառյանի բառարաններում: Հեղինակը դրանք ներկայացնում է բառային զուգաբանությունների աղյուսակում + նշանով (տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն, նախագրային շրջան, Երևան, 1987, էջ 109-156):

⁶⁰ **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 255:

⁶¹ **Ասյան, նիստ** բառերի նոր նշանակությունները տե՛ս սույն աշխատության 38-րդ և 99-րդ էջերում:

բաղադրիչներ են, ինչպես՝ *ապրանքի գին, արտահանման գին, դատական գործ, քրեական գործ հարուցել, արտահերթ նիստ, դատական նիստի քարտուղար, փորձագետ, փորձաքննություն, բողոքարկել* և այլն:

բ) կախյալ արմատական բառեր, որոնք սոսկ ակտիվ գործառույթ են իրականացնում ներկայիս իրավաբանական տերմինաշինության գործընթացում. դրանք են՝ **այց** (*ais-sk' ha*) – *հայց (հաճական), հայցվոր, ի (իք, ինչ, հի, իրա, իմն, զի, իր)* (*k²i*) – *իրավունք, իրավանորմ, իրավական կարգավիճակ, ինքնիրավչություն, լոյծ (leug') – լուծել, լուծարել, կալ (g²w-əi) – կալ անավորել, կալ անք, մեղ (mel) – մեղք, անմեղսունակություն, մեղադրանք, մեղադրյալ, ցոյց (skeu-sk) - ցուցմունք:*

Ուշագրավ օրինակ է հնդեվրոպական ծագմամբ **գիւտ** արմատական բառը, որը, նույնարմատ **գտանք** բառին գուգահեռ գրաբարյան և միջինհայերենյան իրավական աղբյուրներում գործածվելով իբրև ինքնուրույն բառ՝ «1. Գտնուելը՝ կորած կամ փնտրած իրի» նշանակությամբ⁶², ներկայիս իրավական ակտերում այլևս չի կիրառվում որպես անկախ գործածություն և նետցող բառային միավոր: Երկու գուգահեռ տարբերակներից ժամանակակից հայերենի իրավաբանական բառապաշարում միևնույն գործառույթով կիրառվում է միայն **գտանք** տերմինը:

§2. Իրավաբանական փոխառյալ տերմիններ⁶³

Ծագումնաբանական տեսանկյունից արդի հայերենի իրավատերմինահամակարգը բավականին ընդգրկուն է փոխառյալ տերմիններով, որոնց բազմաքանակության պատճառը իրավաբանության մուտքն էր օտար իրականությունից (հատկապես պահլավական, ասորական, հունա-հռոմեական) հայ իրականություն:

⁶² **Ղազարյան Ռ.**, Գրաբարի բառարան, հ. 1, Երևան, 2000, էջ 329:

⁶³ Հայերենում ցանկացած օտար բառ կազմությամբ պարզ է, թեև դրանք իրենց մայրենի լեզվում հնարավոր է՝ լինեն ինչպես պարզ բառեր, այնպես էլ բաղադրյալ կազմություններ:

Որպես իրավական լեզվի բառապաշարի հարստացման արտալեզվական գործոն՝ իրավաբանական փոխառյալ տերմինները կատարվել և կատարվում են երկու ճանապարհով՝ **անմիջական** և **միջնորդավորված**: Անմիջական ճանապարհով կատարվող փոխառությունները փոխառու լեզու են մուտք գործում տվյալ բառի սկզբնաղբյուրը հանդիսացող լեզվից, իսկ միջնորդավորված ճանապարհով կատարվող փոխառությունները՝ մեկ ուրիշ՝ «միջնորդ» լեզվից:

Ըստ իրենց անմիջական աղբյուրների՝ իրավաբանական փոխառյալ տերմինները, ինչպես բոլոր փոխառությունները, լինում են **ներքին** և **արտաքին**, իսկ ըստ ստեղծման ժամանակաշրջանի՝ **հնագույն**, **հին** և **նոր**, **նորագույն**: Արտաքին փոխառությունները կատարվում են օտար լեզուներից, իսկ ներքին փոխառությունները՝ տվյալ լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերից: Այս տեսակետից լեզվաբան Էդուարդ Աղայանը գրական աշխարհաբարը դասում է աշխարհի բացառիկ լեզուների թվին, քանի որ *«մեր գրական աշխարհաբարի արդի երկու ճյուղերը՝ արևելահայերենը և արևմտահայերենը, ազատորեն կարող են ըստ անհրաժեշտության փոխառություններ կատարել և կատարել են միմյանցից, գրաբարից, միջին հայերենից, ժողովրդախոսակցական լեզվից ու բարբառներից»*⁶⁴:

Հին և հնագույն իրավաբանական տերմինները ինչպես գրաբարից անմիջականորեն, այնպես էլ նրա միջնորդությամբ փոխառված բառեր են:

Իբրև ներքին փոխառություններ՝ գրաբարից անմիջականորեն փոխառված իրավաբանական տերմինները գրական հայերենում պահպանվել են գրաբարյան կազմությամբ, ինչպես՝ *իրավունք*, *բաժանմունք*, *հանցանք*, *գտանք*, *մեղք* (կազմված *-ունք*, *-անք*, *-ք* հոգնակիակերտ մասնիկներով), *իրավագանց*, *ծերբակալել* (եզակի գործիական հոլովի վերջավորություններով), *ծանուցել*, *հատուցել* (կազմված *ծանուցանել*, *հատուցանել*՝ *-ուցան-* (<ոյց+ան) պատճառական ածանցով) և այլ բառեր⁶⁵:

⁶⁴ **Ջահուկյան Գ. և ուրիշներ**, Հայոց լեզու, մաս I, պրակ Ա, Երևան, 1980, էջ 334:

⁶⁵ Գրաբարյան ներքին փոխառություններն առավել մանրամասն տե՛ս սույն աշխատության 78-79-րդ էջերում:

Գրաբարի միջնորդությամբ փոխառված տերմինները օտար լեզուներից հայերենին անցած բառերն են, որոնց մեջ թվային գերազանցությամբ առանձնանում են պարսկական փոխառությունները: Սրանք ինքնուրույն բառեր կամ արմատներ են, որոնք արտահայտում են իրավունքի քաղաքացիական, քրեական ճյուղերին, դատական համակարգին վերաբերող հասկացություններ, ինչպես՝ **գրավ (grav)**, **տույժ (tōž-ēt)**, **տուգ/անք/**, **վնաս (vinās)**⁶⁶, **պարտք/ (partu-)**, **գանձ (ganj)**, **երաշխիք/ (raxš)**, **ժառանգ (žaradāng)**, **կտակ (gitāk)**, **պաշտպան (paštpān)**, **ոստիկան (ōstikān)**, **բանտ (band)**, **վճիռ (vičir)**, **վկա (vīkay)**, **դատ (dāt)**, **դատավոր (dātavar կամ dātuvar)**, **դատվազ (dāt-xvāz)**, **օրենք/ (awδēn)**:

Ընդհանուր ծագմամբ արմատական տարբերակներ են **տույժ** և **տույգ** բառերը⁶⁷: Յրաչյա Աճառյանը գրում է. «բառիս (տույժ) կրկնակն է տույգ, որ առանձին չի գործածվում»: Այս արմատական տարբերակներով կազմվել են **տուգանք**, **տուժանք**, **տուժող** իրավաբանական տերմինները:

Հավելենք նաև, որ գրաբարում և միջին հայերենում **տույժ** արմատն ունեցել է ինքնուրույն գործածություն: Ինչպես՝

*«Եւ գիւնարբուացն կցորդութիւնն դատիցի հաւաստի, եւ նոցայ ն ընդ նմին լիցի տույժն»*⁶⁸:

ժառանգ, **կտակ** բառերի ծագումնաբանության վերաբերյալ Յրաչյա Աճառյանը ստույգ ոչինչ չի գրում՝ բացառությամբ այլ լեզվաբանների կամ հայտնի բառարաններում (օրինակ՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի») տեղ գտած կարծիքների⁶⁹: Այս բառերի իրանական ծագման մասին է խոսում լեզվաբան Գևորգ Ջահուկյանը⁷⁰:

Լեզվաբանական որոշակի տարակարծություններ կան **դատավոր** բառի ծագումնաբանության վերաբերյալ:

⁶⁶ Միջնադարում **վնաս** բառին զուգահեռ՝ միևնույն նշանակությամբ գործածական էր պարսկական ծագում ունեցող **վզեան (վզեն)** բառը, որի հաճախակի կիրառությունը հանդիպում ենք Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում», օրինակ՝ «Ու **վզեն**ն պարոնին կու լինի» (տե՛ս **Սպարապետ Ս.**, Դատաստանագրք, Երևան, 1958, էջ 168):

⁶⁷ Տե՛ս **Աճառյան Յր.**, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 420:

⁶⁸ **Գոշ Մ.**, Գիրք դատաստանի, Երևան, 1975, էջ 47:

⁶⁹ Տե՛ս **Աճառյան Յր.**, նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1973, էջեր 228, 674:

⁷⁰ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջեր 280, 432:

Յրաչյա Աճառյանի արմատական բառարանում բառը տրված է որպես իրանական աղբյուրներից հայերենին անցած փոխառություն՝ «*դատաստան կտրոդ*», լայնաբար «*իշխան, կառավարիչ*»⁷¹ նշանակությամբ: Գևորգ Ջահուկյանի հավաստմամբ՝ -*var* վերջածանցը հայերեն –*ավոր* ածանցի հետբաղարկվել է և ստացել հայկական կազմության ձև⁷²: Ջահուկյանի կարծիքին հակամետ են և լեզվաբան Սերգեյ Գալստյանը, որը, **դատավոր, դատաստան** բառերը ենթարկելով բառակազմական վերլուծության, ընդունում է որպես ածանցավոր բառեր, ինչպես՝ *[դատ]ավոր, [դատ]ատան*⁷³:

Դատավոր բառի ածանցավոր կազմության մասին է նշում նաև Աշոտ Սուքիասյանը՝ չտալով որևէ պարզաբանում⁷⁴:

Այս տեսակետի պնդման համար թերևս անհրաժեշտ են լուրջ հիմքեր, որոնց առկայության դեպքում կարող ենք ժխտել **դատավոր** բառի փոխառությունն ինչպես:

Իրավաբանական փոխառյալ բառեր են հունարենի միջնորդությամբ լատիներենից փոխառված **նոտար (notarius)**՝ *քարտուղար, գրագիր*, և արաբական ծագում ունեցող **կապա (qabāla)**՝ *կապալով առնելու գործողությունը, կապալագիր* նշանակությամբ բառերը: Ժամանակակից իրավական ակտերում իբրև գործուն տերմիններ՝ այս բառերը գործածական են իմաստափոխության հետևանքով ձեռք բերած բոլորովին նոր իմաստներով⁷⁵:

Ասորերենից փոխառված **քուրա/քրա (kūrā)** արմատը, որ նշանակում է «*հալոց, բովբ, մետաղ հալեցնելու վառարան*», Յրաչյա Աճառյանի հավաստմամբ իբրև բաղադրիչ գործածական է հետևյալ արմատական կազմություններում՝ «*քրայական «մետաղական», քրեական*»⁷⁶:

Ըստ երևույթին՝ հեռավոր անցյալում քուրաներում աշխատելը ծանր և կյանքի համար վտանգավոր է եղել: Այդ վայրերում զբաղվել են մետաղ հալելով, մետաղյա գործիքներ պատրաստելով կամ կավամաններ թրծելով: Ուստի, համաձայն հայկական սովորույթային

⁷¹ Աճառյան Յր., նշվ. աշխ., հ. 1, Երևան, 1971, էջ 630-631:

⁷² Տե՛ս Ջահուկյանի Գ., Յրաչյա Աճառյանի ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 187:

⁷³ Տե՛ս Գալստյանի Ս., Դարոցական բառակազմական բառարան, Երևան, 2014, էջ 43:

⁷⁴ Տե՛ս Սուքիասյանի Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2008, էջ 280:

⁷⁵ Տերմինների նոր իմաստները տե՛ս սույն ատենախոսության 70-րդ և 73-րդ էջերում:

⁷⁶ Աճառյան Յր., նշվ. աշխ., հ. 4, Երևան, 1979, էջ 595:

իրավունքի, հանքեր հանելու և դրանք հալելու տաժանակիր աշխատանքով պատժում էին ծանր հանցագործությունն կատարողներին, որոնց անվանում էին «քուրայ ականներ», այսինքն՝ քուրաներում աշխատողներ: Նման պատժամիջոցը լուրջ ազդակ հանդիսացավ **քրեական** բառի ստեղծման պարագայում⁷⁷:

Ռուսերենի միջնորդությամբ անգլերենից փոխառված լատինական ծագմամբ **կրիմինալ** բառը **քրեական** տերմինի հետ ունի սոսկ իմաստային ընդհանրություն և այսօր արդի հայերենի բառապաշարում դիտվում է որպես օտարաբանություն:

Վերոնշյալ իրավաբանական հին և հնագույն փոխառությունները բնիկ հայերեն բառերի հետ այսօր կազմում են արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարի հիմնաշերտի զգալի մասը:

Բավականին մեծ թիվ են կազմում անմիջական ճանապարհով հայերենին անցած այն հնագույն և հին փոխառությունները, որոնք պատմական դարաշրջաններում, հատկապես միջնադարում, իրավական տերմինահամակարգում երբեմնի ակտիվ գործածություն են ունեցել⁷⁸: Այսպես՝ **իրավաբանական տերմիններ՝ փոխառված արաբերենից՝ դաւի** «վեճ, պահանջ, հայց» < davi, **եմռ** «իր, գործ» < emr, **թափիր** «մեղք, հանցանք» < taxsir, **խիսմ** «դատի մեջ հակառակորդ» < xasm, **խրեր** «վճիռ, որոշում, դատավճիռ» < garar, **ղադի** «դատավոր» < qadi, **մաղքամայ** «դատարան» < mahkeme, **մահր** «օժիտ» < mahr, **ջազայ** «պատիժ» < jaza, **Ֆաթվա** «պատասխան, վճիռ, որոշում» < fatua,

աքսկերենից՝ գոլնահ «մեղք, հանցանք» < gonah, **գոլնահքար** «մեղավոր, հանցավոր» < gonahkar, **դաղ** «կնիք, դրոշմ, նշան, խարան» < dag, **դաւեքար** «գանգատավոր, պահանջատեր» < dava-kar, **զնճիլ** «շղթա, կապանք» < zanjir, **զնտան** «բանտ. զնդան» < zendan, **տիվան** «ատյան» < diva, **տիվանապյ շի** «դիվանապետ, գլխավոր դատավոր» < divanbasi,

հունարենից՝ ասքտիկս «մոլորիակ» < apodeiksis, **դիաթեկ** «կտակ» < diadeke, **դիմիսոն** «բանտ» < demosion, **նօմոս** «օրենք, կարգ» < nomos, **պրիստիմոն** «տոկոս» < prostimon,

⁷⁷ Աշխարհի լեզուների մեծամասնությունում իրավունքի քրեական ճյուղի անվանումը առաջացել է հանցագործությունն (օրինակ՝ անգլալեզու երկրներում՝ criminal law, անգլերեն՝ crime բառից) կամ պատիժ (Գերմանիայում՝ Strafrecht, գերմաներեն՝ Strafe բառից, Բուլղարիայում՝ наказателно право) բառերից:

⁷⁸ Տե՛ս **Ղազարյան Ռ.**, Միջին գրական հայերենի բառապաշարը, Երևան, 2001, էջ 91-148:

լ առիւներէնից` ադօզայ թ «փաստաբան» < advocates, **առմաջ** «նստիկան. զինվոր» < arma «զենք», **բրեսետ** «կոնսակալ. դատավոր» < praeses, **բրօնօնօտար** «ավագ նոտար» < protonotar, **գանցել ար//գանցել արիոնս** «դիվանատան պետ» < Լատ. cancellarius, **դերմ** «որոշում, օրենք» < terminus, **կոնրատոր** «վերակացու. հոգաբարձու» < curator, **սիվիլական** «քաղաքացիական» < civilis, **սեգրեթ** «օրենքի ուժ ունեցող որոշում` վճիռ» < decretum, **սեգրեթալ** «դատական օրենք» < միջ. Լատ. decretalia,

հին ֆրանսերէնից` անսիզ «օրենք» < assises, որից` **անսիզվոր** «իրավատեր», **ավոզայ թ** «փաստաբան» < avocat, **բլայ թ** «դատի մեջ պաշտպանութեան թյուն» < plaid, որից` **բլայթել** «դատարանի առաջ իր դատը պաշտպանել» < plaidier, **բրվլեճ** «արտոնութեան թյուն» < privilege, **չալոնջ** «բողոք, գանգատ» < chalonge, **չաստել** «պատժել, պատժի ենթարկել» < chastier, **սազայ //սայ զայ //սայ ժին** «բռնագրավում» < saisie, saigine, **սֆընդել //սֆընտել** «պաշտպանել. արգելել, արգելք դնել» < defendre, **քիթ** «ազատ, զերծ, անմասն» < quite, **օդրել** «արտոնել, իրավունք տալ» < otreier, **ֆայլել** «դատի մեջ պարտվել, դատը տանուլ տալ» < faillir,

լեհերէնից` աբելսցիա «վճռաբեկ գանգատ» < apelacja < Լատ., **արեսոդ** «կալանք» < areszt, **գազնայ** «բանտ» < kazn, **ինվէնդար** «գույք» < inwentarz, **լանցուխ** «շղթա» < lancuch, **ռաթուշ** «բանտ» < ratusz < գերմ., **սդադոնդ** «կանոնադրութեան թյուն» < statut, **ստարօսդայ** «վարչական գործերի գլխավոր կառավարիչ» < starosta, **վոյվոսայ** «քաղաքացիական` վարչական բարձր պաշտոնյա», **տվոտ** «ապացույց, փաստաբան» < dowod,

թուրքերէնից` կելոնր «եկամուտ, օգուտ, շահ» < gelir, **ափհ** «գրավ, երաշխիք, գրավական» < pey, **սուլջ** «մեղք, հանցանք» < suci:

Ժամանակակից հայերէնում այս բառերի մեծագույն մասը ոչ մի ոլորտում կիրառելի չէ` բացառութեամբ մի քանիսի, որոնք նույնութեամբ կամ որոշակի ձևափոխութեամբ գործածվում են ժողովրդախոսակցական և եզրում, բարբառներում, գեղարվեստական գրականութեան մեջ ոճական որոշակի նպատակադրումով, օրինակ` **սիվան** և **սիվանայ շի** բառերը **դիվան**, **դիվանբաշի** բառաձևերով և իրավական բնույթի տարբեր նշանակութեան ներքո գործածական են հայերէնի տարբեր բարբառներում.

դիվան - «1. Ար. Թբ. 2նգգ. Շիր. Դատ, դատաստան: 2. Ար. Թբ. Ղրբ. (Գրս.) Կր.(Շիր.) Դատարան»,

դիվանբաշի - «1. Ար. Ղրբ. (Գրս.) Կր. Մ2. և այլն Գլխավոր դատավոր»⁷⁹:

Նմանաբնույթ օրինակներ են՝ աղվօզայթ, դաւի, սդադուդ, գնճիլ, աբէլացիա, արեսդ, սուչ, պէհ/բեհ և այլ փոխառություններ, որոնք ժամանակակից իրավական ակտերում փոխարինվել են *փաստաբան, հայց, կանոնադրություն, ձեռնաշղթա, բողոքարկում, կալանք, մեղք, գրավ* տերմիններով:

Եթե իրավաբանական հին, հնագույն փոխառությունները նախագրային, ոսկեդարյան և միջնադարյան ժամանակաշրջաններում հայերենի իրավական լեզվի բառապաշար ներթափանցած բառեր են, որոնք անվանում են իրավունքի քաղաքացիական և քրեական ճյուղերին, դրանց ենթաճյուղերին վերագրվող հասկացություններ, ապա **Նոր** կամ **Նորագույն** փոխառությունները հայերենի բառապաշար անցում կատարեցին սկսած աշխարհաբարյան շրջանից և շարունակում են մինչ այսօր: Դրանք հայ իրավունքի ինչպես վաղ, այնպես էլ նոր ժամանակներում ձևավորված տարբեր ճյուղեր (սահմանադրական, վարչական, միջազգային և այլն) ներկայացնող հասկացությունների անվանումներ են:

Վերջին տարիներին փոխառությունների աննախադեպ աճը պայմանավորված է երկրի անկախության, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների միջև հասարակական-իրավական միջազգային նոր հարաբերությունների ձևավորմամբ, իրավական կառույցների համալրմամբ և իրավական բնույթի այլ գործառույթներով: Ի տարբերություն հնագույն փոխառությունների՝ նոր կամ նորագույն փոխառությունների մեծ մասնունի՝

1. Լատինական ծագում՝ նախնուներենի և ապա այլ լեզուների միջնորդավորմամբ: Արդի հայերենի իրավատերմինահամակարգում լատիներեն ծագում ունեցող տերմինների թվային գերակշռությունը պայմանավորված է հայ իրավունքի ձևավորման

⁷⁹ «Հայ ոց լեզվի բարբառային բառարան», հ. 1, Երևան, 2001, էջ 335:

հիմքում ընկած հռոմեական իրավունքի ու նրա բառապաշարի առկայությունը: Այսպես՝

աֆեկտ – [ռուս. аффект < լատ. affectus կիրք, հուզմունք]: Խիստ ուժեղ, բուռն ընթացող կարճատև հուզական վիճակ, որի ընթացքում թուլանում կամ լիովին բացակայում է կամային վերահսկողությունը,

դիսպոզիցիա - [ռուս. диспозиция < լատ. dispositio բաշխում, բաժանում]: Իրավաբանական նորմի մաս, որը պարունակում է որոշակի կարգադրություն, արգելք,

կասացիա - [ռուս. кассация < ֆր. Cassation, գերմ. Kassation < լատ. cassatio բեկանում, ոչնչացում]: Վճռաբեկություն, վճռաբեկում, բեկանում,

կոնսենսուս – [ռուս. консенсус < լատ. consensus միակարծիքություն, համաձայնություն]: Պաշտամենտում, խորհրդակցություններում որոշումների ընդունումը առանց մասնակիցների քվեարկության, համընդհանուր համաձայնությամբ պայմանավորված, համաձայնություն⁸⁰,

նոտիֆիկացիա - [ռուս. нотификация < ֆր. notification < լատ. notificatio]: Միջազգային իրավունքում՝ մի պետության կողմից մյուսին միջազգային այս կամ այն հարցի վերաբերյալ սեփական մոտեցումների մասին տեղեկացնելը⁸¹,

վինդիկացիա - [ռուս. виндикация < լատ. vindication պաշտպանում, պահանջում]: Սեփականատիրոջ (հայցվորի) կողմի դատական կարգով իր ունեցվածքը հետստանալու պահանջը ցանկացած երրորդ անձից, ով առանց որևէ օրինական հիմքի տիրապետում է այդ ունեցվածքին,

տրանսֆերտ - [ռուս. трансферт < ֆր. transfert < լատ. transferre փոխադրել]: Միջազգային պայմանագրերով բնակիչների տեղափոխությունների պետությունների միջև՝ քաղաքացիության ավտոմատ փոփոխությամբ,

ցեսիա- [ռուս. цессия < լատ. cessio]: Պահանջների զիջումն այլն:

⁸⁰ **Կոնսենսուս** բառը նույն նշանակությամբ նաև քաղաքական տերմին է:

⁸¹ **Նոտիֆիկացիա** բառը տարբեր նշանակություններով նաև ֆինանսական և դիվանագիտական տերմին է:

Լատինական ծագման բառեր են նաև՝ *կոնտրադենտ* (< *contrahens*), *կոնֆիրմացիա* (< *confirmatio*), *ռեզիդենտ* (< *residens*), *ռեգիստր* (< *registrum*), *ռեգեստր* (< *regestum*) և այլ տերմիններ⁸²:

2. հոլանական, ֆրանսիական, գերմանական, իտալական, շվեդական ծագում՝ կրկին ռուսերենի միջնորդավորմամբ, օրինակ՝

գլոսսա - [*ռուս. глосса* < *հոլ. glossa* լեզու, խոսք]: Օրենքի տողացի մեկնություն,

դեբիտոր – [*ռուս. дебитор* < *ֆր. debitor*]: Պարտապան՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ունի պարտք տվյալ հիմնարկությանը, գործարանին, կազմակերպությանը ևն,

դելիմիտացիա - [*ռուս. делимитация* < *ֆր. delimitation*]: Միջազգային իրավունքում՝ փոխադարձ համաձայնություն հարևան պետությունների սահմանագծի որոշումը և գրանցումը համապատասխան քարտեզի վրա,

ինկասո – [*ռուս. инкассо* < *իտ. incasso*]: Բանկային գործառնություն, երբ բանկը մատակարարի հանձնարարությունը իր վրա է վերցնում գնորդից վճարման ենթակա դրամական գումարների գանձումը՝ դրամական, ապրանքային կամ հաշվարկային փաստաթղթերի հիման վրա,

հիպոթեք – [*ռուս. ипотека* < *հոլ. hypotheke*]: Անշարժ գույքի գրավը, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի գրավը,

սաբոտաժ – [*ռուս. саботаж* < *ֆր. sabotage* < *saboter*]: Վնասարարություն: Այն գործողությունը կամ անգործությունը, որը պետությունը թուլացնելու նպատակով ուղղված է արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության, դրամական համակարգի, առևտրի կամ տնտեսության այլ ճյուղերի, ինչպես նաև կազմակերպությունների կամ պետական մարմինների գործունեության քայքայմանը, եթե այդ արարքը կատարվել է կազմակերպություններն օգտագործելու կամ դրանց բնականոն աշխատանքին խոչընդոտելու միջոցով (ՀՀ քրեական օրենսգիրք, հդ. 304),

⁸² Սույն և առհասարակ չբացատրված տերմինների նշանակությունը տե՛ս **Հավելվածում**:

Ֆրանչայզինգ - [<ռուս. франчайзинг < անգլ. franchising < ֆր. franchise]:
Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլ տվող անվան
պայմանագրի անվանում⁸³:

Միջազգային տարաբնույթ փոխարարությունների
արդյունքում (օրինակ՝ պայմանագրերի, համաձայնագրերի
ստորագրում) հայ իրավական լեզուն փոխառեց մեծ թվով անգլերեն
տերմիններ, ինչպես՝

անդերռայթեր – [<ռուս. андеррайтер < անգլ. underwriter]:
իրավաբանական անձ, որն իրականացնում է արժեթղթերի
տեղաբաշխման գործունեություն,

Նոու-հաու – [<ռուս. ноу-хау < անգլ. know-how բառացի՝ գիտեմ (know)
ինչպես (how) անել այդ]: Չբացահայտված տեղեկատվությունը՝
ներառյալ արտադրության գաղտնիքները (տե՛ս ՀՀ քաղաքացիական
օրենսգիրք, հդ. 1100),

ինսայդեր – [<ռուս. < инсайдер < անգլ. insider]: Յուրաքանչյուր
անձ, որը հաշվետու թողարկողի կապիտալում իր մասնակցության,
թողարկողի կառավարման որևէ մարմնում իր անդամության,
պաշտոնի կամ այլ պարտականությունների կատարման կամ
ծառայությունների մատուցման կապակցությամբ տիրապետում է
ներքին տեղեկությունների (տե՛ս ՀՀ օրենքը արժեթղթերի
շուկայի մասին, հդ. 161),

լիզինգ – [<ռուս. лизинг < անգլ. leasing]: Արտադրական
կառույցների, տրանսպորտային միջոցների, սարքավորումների
երկարաժամկետ վարձակալություն,

լոբբինգ - [<ռուս. лоббинг < անգլ. lobbying]: Օրենսդիր և պետական
մարմինների վրա տարբեր ճնշումների գործադրումը՝ որևէ
շահավետորոշում ակնկալելու համար,

կոնտրաֆակտ (նմանակում) – [<ռուս. контрафакт < անգլ. counterfeit]:
Ստեղծագործության օրինակ, որի պատրաստումը կամ տարածումը
հանգեցնում է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների

⁸³ Սույն և ներքոնշյալ փոխառյալ իրավաբանական տերմինների
բացատրությունները տե՛ս **Հայ րապետյան Ա.**, Օտար բառերի բառարան, Երևան, 2011:
Ավետիսյան Ավ., Հայերենում գործածվող օտար բառերի բառարան, Երևան, 2014:
<http://irtek.am/views/dictionary.aspx>:

խախտման (տե՛ս ԶԶ օրենքը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին, հդ. 65),

Կոնոսամենտ - [ռուս. КОНОСАМЕНТ < ֆր. connaissance < անգլ. comsingment]: Ապրանքը տնօրինելու մասին փաստաթուղթ, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ տնօրինելու կոնոսամենտում նշված բեռը և փոխադրելուց հետո ստանալու այն:

Առհասարակ իրավաբանական տերմինների մի սովորականացված, մասնավորապես ծագումով հունարեն կամ լատիներեն տերմիններ, լայն տարածում գտնելով ժամանակի զարգացած լեզուների իրավաբանության տերմինափոխարկում, այսօր դիտվում են որպես **միջազգային տերմիններ**, օրինակ՝ **դիվիդենդ** (<լատ. *dividendus*), **ռենտա** (<լատ. *reddita*), **ամնիստիա** (<հուն. *amnestia*), **ապելյացիա** (<լատ. *appellatio*), **ուլտիմատում** (<լատ. *ultimus*), **ֆիլիալ** (<լատ. *filialis*) և այլն:

Հավելենք, որ այս բառերը «տերմինային ձևավորում են սուսցելեվրոպական լեզուներում՝ ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի և այլ լեզուների միջոցով»⁸⁴:

Ժամանակակից հայերենի իրավական լեզվի բառապաշարում միջազգային տերմիններից շատերն ունեն իրենց հայերեն համարժեք տարբերակները, որոնք ինչպես միաբառ, այնպես էլ կայուն կապակցություններ են: Չնայած այս հանգամանքին՝ իրավական լեզուն հաճախ առաջնությունը տալիս է փոխառյալ տերմիններին: Երբեմն դրանց կողքին նշվում են հայերեն համարժեքները: Այսպիսի նախընտրության պատճառը այդ փոխառությունների առավել հասարակայնացված բնույթ, ինչպես նաև միջազգային նշանակություն ունենալն է: Բացի այդ՝ դրանք ամբողջ ծավալով են արտահայտում տվյալ հասկացության բովանդակությունը: Օրինակ՝

աբոնենտ (< ֆր. *abonner*) – սպառող

ալիմենտ (<լատ. *alimentum*) – ապրուստի միջոց

ակցեպտ (<լատ. *acceptus*) – առաջարկի ընդունում

օֆերտա (<լատ. *offertus*) - առաջարկ

Էմանսիպացիա (<լատ. *emancipatio*) – ազատագրություն

ինդոսամենտ (< գերմ. *indossament* լատ. < *dorsum* մեջք) – փոխանցագիր

⁸⁴ Սուլքիայան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2008, էջ 178:

կոնվենցիա (< լատ. conventio) – համաձայնագիր

պատրոն (< լատ. patronus) - օգնական

պատրոնատ (< ֆր. patronage) - խնամակալություն

ռեստիտուցիա (< լատ. restitutio) - իրավական, գույքային վիճակի վերականգնում

էքստրադիցիա (< լատ. extraditio) – հանցանք կատարած անձանց հանձնելը

ռեցիդիվիստ (< լատ. recidivus) - կրկնահանցագործնային:

Օրինակ՝ **«ՕՖերտան** մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված **առաջարկն է**, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ պայմանագիրը կնքված համարել առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ» (ՀՀ քաղաքացիական օրենսգրք, հդ. 451):

Ինչպես տեսնում ենք, **օՖերտա** տերմինի սահմանման մեջ առկա է հայերեն համարժեք տարբերակը (**առաջարկ**):

Ներկայիս իրավաբանական գրականության մեջ գործածության տեսանկյունից դժվար է հստակորեն ասել, թե **կրիմինալ իստիկա – քրեագիտություն** և **կրիմինոլոգիա – քրեաբանություն** փոխառյալ և հայերեն տերմիններից որ մեկն է առավել հաճախ կիրառվում, քանի որ միևնույն հասկացությունն արտահայտող բառային այս տարբերակները հավասարապես գործածվում են մասնագիտական թե՛ գրավոր և թե՛ բնավոր խոսքում: Օրինակ՝

«Հանցագործության անձի ուսումնասիրությանը է զբաղվում կրիմինոլոգիան՝ համարելով ինչպես հասարակական, այնպես էլ բնական գիտությունների մեթոդաբանությունը»⁸⁵:

Լինում է նաև հակառակ երևույթը, երբ հայերեն բառերն են ակտիվորեն կիրառվում ներկայիս իրավական ակտերում, իսկ դրանց փոխառյալ տարբերակները մեծ մասամբ գործածվում են մասնագիտական բնավոր խոսքում կամ երբեմն գրավոր խոսքում նշվում են հայերեն համարժեքի կողքին: Ինչպես՝ *«Գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանվում է օրենքով, իրավաբանական անձը կարող է զբաղվել*

⁸⁵ «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք», ընդհանուր մաս, Երևան, 2003, էջ 176:

միայն հատուկ **թույլ տվության (լիցենզիայի)** հիման վրա» (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հդ. 52):

Այսպիսի տերմիններ են՝

համաներուժ – ամնիստիա

բողոքարկուժ – ապելյացիա

իրավաբանորեն – դեյուրե (<լատ. de jure)

փաստացի – դեֆակտո (<լատ. de facto)

օրինական – լեգիտիմ (<լատ. legitimus)

իրավասու, լիիրավ – կոմպետենտ (<լատ. competens)

փոխզիջուժ – կոմպրոմիս (<լատ. compromissum)

կաշարուժ – կոռուպցիա (<լատ. corruptio)

կանոնադրություն – ստատուտ (<լատ. statutum)

բռնագրավուժ – կոնֆիսկացիա (<լատ. confiscatio)

իրավական դրություն – ստատուս (<լատ. status)

պատժամիջոց – սանկցիա (<լատ. sanctio) և այլն:

2004 թվականից հայ իրավաբանական տերմինահամակարգ ներմուծվեց նոր հասկացության անվանում՝ **օմբուդսմեն (<զվեդ. ombudsman)**, որը շատկարճ ժամանակահատվածում ստացավ իր հայերեն համարժեքը՝ **մարդու իրավունքների պաշտպան**⁸⁶: Ժամանակակից իրավական ակտերում գործածվում է հասկացության հայերեն տարբերակը, իսկ փոխառյալ տերմինը դեռևս մնում է կենսունակ մասնագիտական բանավոր խոսքում:

Իրենց հայերեն համարժեք ձևերն ունենալու դեպքում փոխառյալ բառերը շարունակում են գործածվել և ընկալվել որպես փոխառություններ, քանի դեռ որոշ ժամանակահատվածում զուգահեռաբար գործածվելու ընթացքում դրանցից որևէ մեկը վերջնական հաղթանակ չի տանում:

Երբ իրավաբանական միևնույն հասկացության հայերեն և փոխառյալ բառային տարբերակների զուգահեռ գործածությունը

⁸⁶ «Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) անկախ ու անփոփոխելի պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ դեկլարվելով օրինականության, հասարակական համակեցության և սոցիալական արդարության հիմնարար սկզբունքներով» (ՀՀ օրենքը մարդու իրավունքների պաշտպանի մասին, հդ. 2):

ավարտվում է հայերեն համարժեք տարբերակի հաղթանակով, փոխառությունը վերածվում է օտարաբանության, ինչպես՝

ադվոկատ (<լատ. *advocatus*) – *փաստաբան*

պատենտ (<լատ. *patens*) - *արտոնագիր*

դեսցենդենտ (<լատ. *descendent*) - *ժառանգ*

դոկումենտ (<լատ. *documentum*) - *փաստաթուղթ*

էքսպերտ (<լատ. *expertus*) - *փորձագետ*

լեգիտիմացիա (<լատ. *legitimus*) - *օրինականացում*

բանդիտ (<իտլ. *banda.*) - *ավազակ, կեղեքիչ*

կոդեքս (<լատ. *codex*) – *օրենսգիրք*

յուրիսպրունդենցիա (<լատ. *iurisprudentia*) – *իրավաբանություն, իրավագիտություն*

յուրիստ (<գերմ. *Jurist*) – *իրավաբան*

պրեռոգատիվա (<լատ. *praerogativa*) - *արտոնություն*

պրեցեդենտ (<լատ. *praecedens*) – *նախադեպ*

պրոկուրատորա (<լատ. *procurare*) - *դատախազություն*

պրոկուրոր (<լատ. *procurare*) - *դատախազ*

ռատիֆիկացիա (<լատ. *ratificatio*) - *վավերացում*

ռեգլամենտացիա (ֆր. <լատ. *reglamentation*) – *կանոնակարգում*⁸⁷ և

այլն:

Բառաչարքի առաջին բաղադրիչները ներկայիս իրավական ակտերում այլևս գործածական չեն: Դրանց կիրառման արգելման վերաբերյալ նշվում է նաև «**Իրավական ակտերի մասին**» **ՀՀ օրենքի** օրենսդրական տեխնիկայի կանոններում՝ «*Իրավական ակտերում չի թույլատրվում ... օտարալեզուն տերմինների անհարկի օգտագործումը*» (հդ. 36):

Երբ փոխառյալ տերմինի հայերեն տարբերակը չի ընդունվում հասարակության կողմից զանազան պատճառներով, օրինակ՝ բառի՝ հասկացության իմաստային դաշտը ոչ լիարժեք արտահայտելը, երկարառձև լինելը, անհաջող կազմությունը և այլն, վերջինս դառնում է մաքրամոլության արդյունք, ինչպես՝ **հետպահանջընկալ (ռեգրեսսիվ), օգտակալություն (սերվիտուտ), փոխանցագրող (ինդոսսևտ):**

⁸⁷ Սույն և վերոնշյալ բոլոր տերմինները ռուսերենի միջնորդությամբ փոխառված բառեր են:

Իրավաբանական տերմինահամակարգի համալրման եղանակներից մեկն է **պատճենումը**: Այն «փոխառության հատուկ տեսակ է համարվում, երբ փոխ է առնվում ոչ թե օտարազգի բառը, այլ նրա իմաստը կամ՝ և՛ իմաստը, և՛ կառուցվածքը»⁸⁸: Պատճենման տեսակներն են **իմաստային, կառուցվածքային** և **կիսապատճենումները**:

Ռուսերենի կարևոր ու լուրջ դերի առկայությունը հայերենում մեկ անգամ ևս փաստում են պատճենումները, որոնց քանակային համալրումը առավել ակտիվ բնույթ ստացավ հատկապես Չայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, քանի որ նորաստեղծ օրենսդրական դաշտ ներթափանցած մի շարք հասկացություններ անհրաժեշտ էր հայացնել ⁸⁹:

Իմաստային պատճենում կատարվում է, «երբ լեզվի սեփական բառը փոխ է առնում միայն օտարազգի բառի իմաստը: Այս դեպքում բառը, փաստորեն, իր հնչյունական կազմով, բառաբերականական կառուցվածքով բնիկ, սեփական է, իսկ նրա մեկ կամ մեկից ավելի (երբեմն՝ ժամանակակից բոլոր) իմաստները փոխառություն են որևէ օտար լեզվից»⁹⁰:

Իրավաբան տերմինահամակարգում հանդիպում են իմաստային պատճենման հատուկ ենտօրինակներ:

Յոմանիշների, բացատրական բառարաններում **առյան** բառին այսօր վերագրվում են՝ **1. Ժողով, նիստ 2. արենարդի, 3. դատարան, 4. դատ** իմաստները: Բացակա իմաստ է **աստիճան, աստիճանակարգություն**, որը ռուսերեն **инстанция** բառի իմաստային պատճենումն է: Այս իմաստով է սույն տերմինը գործածվում *առաջին առյանի դատարան* արտահայտության մեջ: Ինչպես՝ «*Առաջին առյանի դատարաններն ընդհանուր իրավասության դատարանների առաջին կամ հիմնական օղակն են*»⁹¹:

Կան տերմիններ, որոնց իմաստափոխությունը նկատելի է միայն կայուն կապակցության մեջ, ինչպես՝ **վարել, մարել, հանել** բառերը:

⁸⁸ Սուքիասյան Ա, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2008, էջ 209:

⁸⁹ Տե՛ս «Ռուս-հայերեն իրավաբանական բառարան», Յերեվան, 1924:

⁹⁰ Սուքիասյան Ա, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2008, էջ 265:

⁹¹ «Չայաստանի Յանրաբնակչության դատարանակազմությունը և իրավաբանական մարմինները», Երևան, 2003, էջ 187:

Վարել (վարել գործը) բայը իր բառարանային իմաստներին գուգահեռ այսօր իրավաբանական դաշտում կիրառվում է **մասնակցել դատական վարույթին** նշանակությամբ՝ պատճենելով ռուսերենի **вести дело (в суде)** արտահայտության իմաստը: Ինչպես՝ «Դատարանում ներկայացուցիչ կարող է լինել դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորությունը նույնպես գործունակ քաղաքացի» (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրք, հդ. 40):

Ռուսերենի **погасить судимость** և **снять судимость** տերմինների օրինակով հայերենի **մարել** և **հանել** բառերը **դատվածություն** տերմինի հարադրմամբ հայ իրավական ոլորտի քրեական ճյուղի բառապաշարում ձեռք են բերել նոր իմաստներ. **դատվածությունը մարել** տերմինը՝ *վերացնել դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետի լրանալուց հետո* իմաստը (ՀՀ քրեական օրենսգրք, հդ. 84), իսկ **դատվածությունը հանել** տերմինը՝ *դատապարտյալի խնդրանքով դատարանի կողմից վերացնել դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները մինչև դատվածությունը մարելու ժամկետը լրանալը, բայց ոչ շուտ, քան այդ ժամկետի կեսը լրանալը* իմաստը (նույն տեղում, հդ. 84): Մեջբերենք.

*«Եթե նախկին հանցագործության համար **դատվածությունը մարված կամ հանված է, ապա անձը օրենքի տեսանկյունից համարվում է երբևէ հանցանք չկատարած**»⁹²:*

Իրավատերմինահամակարգում մեծ թիվ են կազմում **կառուցվածքային պատճենումները**, որոնք կազմվում են օտար բառերի կամ արտահայտությունների (դարձվածքների) իմաստային մասերի՝ բաղադրիչների թարգմանությամբ: Պատճենման այս տեսակը յուրացնում է այլալեզու բառերի և՛ իմաստը, և՛ բառակազմական կառուցվածքը, թեև բառի բաղադրիչները իրենց նյութական մասով հայերեն բառեր են: Ածանցավոր կազմությունների պատճենման ժամանակ ռուսերեն ածանցները փոխարինվում են համապատասխան կամ իմաստով մոտ հայերեն ածանցներով, օրինակ՝

работодатель – գործատու

⁹² «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք», ընդհանուր մաս, Երևան, 2003, էջ 503:

судебный следователь – դատաբաննիջ
 правопорядок – իրավապարզ
 правосудие – իրավադատություն
 правоспособность – իրավունակություն
 состав преступления – հանցակազմ
 военно – судебный – ռազմատանկան
 юрисконсульт – իրավախորհրդատու
 волеизъявление – կամահայտնություն

Պատճենման ժամանակ նախածանցները մեծ մասամբ փոխարինվում են հայերեն համարժեքներով, ինչպես՝

неочуждаемый – անօտարելի
 субкомиссия – ենթահանձնաժողով
 субарендатор – ենթավարձակալ
 подсудный – ընդդատյալ:

Արեւմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդը արևելահայերենի իրավական դաշտում **դատական գործը կարճել** կենսունակ տերմինի փոխարեն առաջարկում է գործածել **դատաբանում** բառը⁹³, որը կազմել է **non-suit** անգլերեն տերմինի⁹⁴ բաղադրիչների կառուցվածքային պատճենմամբ: **Non** բառն ունի ժխտական նշանակություն, իսկ **suit**-ը անգլերենում իրավաբանական տերմին է՝ **դատական գործ** նշանակությամբ: Ցավոք, նորաստեղծ բառն ամբողջությամբ չի արտահայտում իրավական երևույթի իմաստային գործառնությունը և նույնիսկ կիրառական շփոթ կարող է առաջացնել **դատվածությունը մարել** կամ **հանել** տերմինների համեմատությամբ:

Հայերենում սակավաթիվ են **իրավաբանական տերմին-կիսապատճենումները**, որոնք կազմված են հայերեն և փոխառյալ բաղադրիչներից, ինչպես՝ *диспозитивность* - դիսպոզիտիվություն, *институционализация* - ինստիտուցիոնալացում (նոր սահմանակարգերի հիմնում), *паритетность* - պարիտետություն (իրավահավասարություն) և այլն:

⁹³ Տե՛ս «Արեւմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Ուղեցույց Գ», Պրովանս, 1998, էջ 57:
⁹⁴ **Բարսեղյան Ն.**, Անգլերեն-հայերեն բառարան, Երևան, 2011, էջ 553:

Ամփոփելով իրավաբանական տերմինների ծագումնաբանական քննությունը՝ կատարենք հետևյալ եզրահանգումները.

1. Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարի հիմնաշերտի զգալի մասը կազմող տերմինները դեռևս հնդեվրոպական նախալեզվից ժառանգած բնիկ հայերեն արմատական բառերն ու հին, հնագույն փոխառություններն են, որոնք ոչ միայն շարունակում են գործածվել ներկայիս հայ իրավական աղբյուրներում, այլև էական նշանակություն ունեն նորակազմ տերմինների բառակազմական գործընթացում:

Հին և հնագույն փոխառություններից հայ իրավական լեզվի բառապաշարում մնայուն արժեքներ են պահպանել փոխառված տերմինները (տույժ, գանձ, ժառանգ, կտակ):

2. Նոր կամ նորագույն իրավաբանական փոխառությունների մայր լեզուն հիմնականում լատիներենն է, որից նախ ուսերենի, ապա անգլերենի, ֆրանսերենի և այլ լեզուների միջնորդությամբ տերմիններ է փոխառում հայերենը:

Քիչ թիվ չեն կազմում փոխառության տեսակ ընդունվող կառուցվածքային պատճենմամբ կազմված մասնագիտական տերմինները:

3. Փոխառությունների մուտքը հայ իրավական լեզու բոլոր ժամանակներում էլ գործառական ակտիվ բնույթ է կրել: Ութեն փոխառյալ տերմինները մեր բառապաշարում օտար բառեր են, այնուամենայնիվ չպետք է դրանցից խույս տալ կամ զբաղվել մաքրամոլությամբ, քանի որ այս բառերը ոչ միայն հարստացնում են մեր լեզուն, ճկուն ու առածգական դարձնում լեզվամտածողությունը, այլև, ի վերջո, նրանցից շատերը, լինելով միջազգային տերմիններ, դառնում են օտար քաղաքացիների հետ հաջող շփման գրավական:

ԳԼՈՒԽ 2.

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ

§1. Արդի հայ երեւի իրավաբանական տերմինահամակարգի իմաստաբանական դրսևորումները

Ցանկացած գիտական բառապաշարում իմաստաբանութունը ուսումնասիրում է տերմինի դրսևորած իմաստային առանձնահատկութունները, ինչպես նաև այն իմաստափոխութունները, որ կրել կամ կրում է բառը՝ պայմանավորված լեզվի զարգացման միջարք գործոններով:

Արդի հայ երեւի իրավաբանական տերմինահամակարգը իմաստագործառական տեսանկյունից այլ գիտութունների տերմինահամակարգերի համեմատությամբ ունի թե՛ ընդհանուր հատկանիշներ և թե՛ տարբերակիչ առանձնահատկութուններ: Սույն գլխի նպատակն է ուսումնասիրել իրավաբանական տերմինների դրսևորած իմաստագործառական առանձնահատկութունները:

Իրավաբանական տերմինը (ինչպես ցանկացած գիտութան տերմին) բառ կամ կայուն կապակցութուն է, որն իրավական ակտերում ունի միատեսակ գործածութուն, արտահայտում է իրավաբանական հասկացության հստակ և որոշակիացված նշանակութուն՝ առանձնանվով իր մենիմաստությամբ և կայուն գործառնություն⁹⁵: Իրավաբանութան, ինչպես նաև յուրաքանչյուր գիտութան տերմինաշինութան հիմքում, ընկած է բառ-հասկացութուն-առարկա իմաստաբանական եռանկյունին, քանի որ «բառերը պետք է համապատասխանեն իրենց արտահայտած հասկացութուններին, իսկ հասկացութունները՝ առարկաներին»⁹⁶: Սա տերմինաբանութան համար հաջողված,

⁹⁵ Տե՛ս **Черекаев А. В.**, Юридическая терминология в Российском публичном праве, Москва, 2004 // http://www.fpa.su/biblioteka/izdaniya/problemy-teorii-gosudarstva-i-prava/yuridicheskaya-terminologiya-v-rossiyskom-publichnom-prave-a-v-cherekaev/?sphrase_id=28246&SECTION_CODE=problemy-teorii-gosudarstva-i-prava&ELEMENT_CODE=yuridicheskaya-terminologiya-v-rossiyskom-publichnom-prave-a-v-cherekaev&PAGEN_1=2:

⁹⁶ **Смаль Л. Д.**, Некоторые вопросы семантики юридических наук, «Право и демократия»: Вып. №8, Минск, 1997, էջ 34:

հասարակությանը մատչելի մատուցվող տերմինների ստեղծման կարևոր գրավական է:

Իբրև մենիմաստ բառեր՝ իրավաբանական տերմինները տարատեսակ են, քանի որ «բազմանուն են ոչ միայն իրավական դաշտում նորանոր ճյուղերի երևան գալու արդյունքում, այլև այդ ոլորտի՝ հասարակական կյանքի անխտիր բոլոր ճյուղերում իր առկայությունը»⁹⁷: Ուստի իրավաբանական տերմինները բազմաոլորտ և բազմաբովանդակ բառային միավորներ են, որոնք, լինելով հասարակական տարբեր հարաբերություններ կարգավորող իրավական իրակությունների անվանումներ, կազմում են իրավունքի յուրաքանչյուր ճյուղը ներկայացնող տերմինախմբեր, որոնք, առավելագույնս տարբերակված, ընդգրկված են ՀՀ օրենսգրքերում, մասնագիտական գրքերում և ենթաօրենսդրական ակտերում, ինչպես՝ *հանցափորձ, դատվածություն, ազատագրկում (ՀՀ քրեական օրենսգիրք)*, *լուծարում, սուբսիդիար պատասխանատվություն, հայցային վաղեմություն (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք)*, *կեղծամուսնություն, հոգեզավակ, որդեգրում (ՀՀ ընտանեկան օրենսգիրք)*, *աշխատող, գործատու, գործադուլ (ՀՀ աշխատանքային օրենսգիրք)*, *հողամաս, բնապահպանական հողեր, հողաշինարարություն (ՀՀ հողային իրավունք)* և այլն: Առանձնացնում ենք տերմիններ, որոնք ընդհանուր են ՀՀ օրենսդրության գրեթե բոլոր դաշտերին, ինչպես՝ *ֆիզիկական կամ իրավաբանական անձ, առարկա, գույք, սեփականություն, օրենսգիրք, խախտում, իրավական ակտ, օբյեկտ, սուբյեկտ, օրենք* և այլն:

Իրավաբանական տերմինները իրենց արտահայտած նշանակության և գործածության տեսանկյունից տարբերակվում են երկու խմբերով՝

1. տերմինային բառեր, «որոնք սովորական կամ ընդհանուր գործածությամբ ու նշանակությամբ բառ են, բայց տերմինաբանորեն մասնավորված գործածությամբ ու նշանակությամբ՝ տերմին»⁹⁸: Այլ կերպ ասած՝ իրավաբանական այս տերմինները մասնագիտական նշանակությամբ գործածվող

⁹⁷ **Տիոյան Ս.**, Իրավաբանական տերմինների կառուցվածքային-իմաստաբանական վերլուծություն, «Ձահուկյանական ընթերցումներ», Երևան, 2010, էջ 271:

⁹⁸ **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 320:

համագործածական բառեր են, այսպես՝ **պարիժ, կտակ, հողամաս** բառերն ունեն սովորական գործածություն և ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու համար ընդհանուր, ոչ տերմինային նշանակություն, բայց միևնույն ժամանակ գործածվում են իբրև իրավաբանական տերմիններ՝ տերմինաբանորեն մասնավորված հետևյալ նշանակություններով՝

պարիժ – պետական հարկադրանքի միջոց, որը դատարանի դատավճռով պետության անուսից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ (տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, հդ. 48),

կտակ - քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը (տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հդ. 1192),

հողամաս - հողի վերգետնյա և ստորգետնյա տարածքի մասն է, որն ունի ամրագրված սահմաններ, տարածք (մակերես, ծածկագիր), գտնվելու վայր, իրավական կարգավիճակ՝ օրենքներով նախատեսված սահմանափակումներով հանդերձ, որոնք գրանցված և արտացոլված են անշարժ գույքի պետական միասնական կադաստրում (տե՛ս ՀՀ հողային օրենսգիրք, հդ. 5):

Նմանօրինակ իրավաբանական տերմիններ են՝ անձ, անվտանգություն, բողոքել, բռնություն, բացահայտում, չարաչափել, խարդախություն, հատուցել, ապացույց, առարկա, գործ, դատել, կողմ, որոշում, վկա, վնաս, օժանդակել և այլն:

2. տերմիններ, «որոնք միայն տերմինաբանական նշանակություններ ունեն, անկախ այն բանից, թե նրանք գործառական տեսակետից մասսայական և առօրեական գործածություն ունեն՞, թե ոչ»⁹⁹:

Իրավաբանական այսպիսի տերմինները բաժանում ենք երկու ենթախմբերի՝

ա) Չուտի իրավաբանական տերմիններ, որոնք իրավունքի ոլորտից դուրս չեն գործածվում, ինչպես՝ *ալիբի, ամբաստանյալ,*

⁹⁹ Նույն տեղում:

արգել ակալ անք, դատական արձանագրություն, դատասացություն, դատախազ, դատակազմություն, ընդդատյա իրավունակություն, իրավական ամուսնություն, կրկնահանգանք, հայրորոշում, հանցանշան, հանցավայր, մեղադրական ճառ, վճռաբեկ բողոք, բռնիֆիկացիա, դերոգացիա, Էվիկցիա, Լեգիտիմիզմնայլն:

բ) Տերմիններ, որոնք նույն կամ տարբեր նշանակություններով գործածվում են առանձին տերմինահամակարգերում:

1. *Նույն նշանակությունն ունեցող, տարբեր տերմինահամակարգերում գործածվող տերմիններ.*

դիկտատ - (քղբ. իրավբ.): Միջազգային իրավունքում՝ մեկ տերություն կողմից մի ուրիշ տերության հարկադրվող համաձայնությունն՝ պայմանագիր՝ դաշինք,

իմպիչմենտ – (իրավբ. քղբ.): Դատավարության կարգ, ըստ որի՝ պատասխանատվության է ենթարկվում հանցագործություն կամ զանցանք կատարած նախագահը կամ քարտրաստիճան պաշտոնյան,

Լեգալ իզացիա - (իրավբ. քղբ.): Լեգալացում՝ օրինականացում՝ իրավական նորմների կողմից կազմակերպության օրինական գործունեության ճանաչումը:

Մասնագիտական բառերի տարբեր հաջորդականությունը (իրավբ. քղբ. կամ քղբ. իրավբ.) հուշում է, որ տերմինները հաճախակի են գործածվում նշված առաջին տերմինահամակարգում:

2. *Տարբեր նշանակություններ ունեցող, առանձին տերմինահամակարգերում գործածվող տերմիններ.*

անալոգիա - 1. **(գիտ):** *Նմանակություն, համանմանություն, նմանօրինակություն՝ որոշ կարգի նմանություն այնպիսի առարկաների, որոնք ընդհանուր առմամբ իրարից տարբերվում են:* 2. **(լեզվբ.):** *Համաբանությունն՝ Լեզվական որևէ երևույթի առաջացում արդեն գոյություն ունեցող մի այլ երևույթի նմանությամբ, նմանակություն:* 3. **(իրավբ.):** *Օրենքով որոշակիորեն չնախատեսված, բայց իրավական կարգավորում պահանջող հարաբերության վճռումը օրենսդրության համանման նորմով կամ իրավունքի ընդհանուր սկզբունքով:* 4. **(կենսբ.):** *Ոչ միանման կազմություն ունեցող և տարբեր սաղմերից առաջացող օրգանիզմների, օրգանների կամ*

նրանց մասերի արտաքին նմանություն, որը պայմանավորված է կյանքի պայմանների կամ ֆունկցիաների միանմանությամբ,

Էմբարգո – 1. (տնտեսգ.) Որևէ բանի արտահանման ու ներմուծման արգելք: 2. (հրավր.) Օտար տերություն պատկանող ու նեցվածքի (նավի, բեռների ևն) ներկալ ու մ, նավարգելք,

ռեցիդիվ - 1. (բժշկ.): Հիվանդության կրկնությունը թվացող ապաքինումից հետո: 2. (հրավր.): Կրկնահանցագործություն:

Ինչպես տեսնում ենք, իրավաբանական տերմինները մեկուսացված չեն, նրանք կապակցված են մի շարք հարակից գիտությունների կամ գիտության մասնաճյուղերի տերմինների հետ և նաև դրանց միասնությամբ են կազմում գիտական միամբողջական համակարգ: Հայերենի իրավաբանական տերմինահամակարգում առավելապես առկա են ֆինանսական (ապահովադիր, միջնորդավճար, իրացվելի ակտիվ), տնտեսական (աճուրդ, առաջարկ, դուստր ձեռնարկություն, ֆրանչիզա), քաղաքական (Ազգային ժողով, Կառավարություն, Նախագահ), բժշկական (դոնորի իմունացում, արյան պատրաստուկներ, արյան ռեցիդիվներ) գիտաճյուղերի տերմիններ:

Իրավաբանության և լեզվաբանության կապը թե՛ որպես գիտություններ և թե՛ տերմինաբանական համակարգեր խիստ անմիջական է: «Իրավական ակտերը չեն կարող գոյություն ունենալ առանց լեզվական որոշակի կառապարների. երևույթ, որ խոսում է իրավունքի և լեզվի սերտ համագործակցության մասին»¹⁰⁰:

Տերմինաբանության յուրաքանչյուր միավոր առհասարակ բառային միավոր է՝ դրսևորված իմաստաբանական բոլոր հատկանիշներով: Վերջիններս իրավաբանական (ինչպես նաև ցանկացած) տերմինահամակարգում, պայմանավորված տերմինագիտության սկզբունքներով, ունեն անխուսափելի դրսևորումներ, որոնցից են տերմինային բազմիմաստությունն ու հոմանիշությունը:

Տերմինային բազմիմաստություն: Անքննելի է լեզվական այն սահմանումը, որ բազմիմաստությունը լեզվական միավորի մեկից

¹⁰⁰ **Малюкова Е. В.**, Юридическая терминология в системоцентрическом и антропоцентрическом аспектах /диссертация/, Бейск, 2005 // <http://www.dissercat.com/content/yuridicheskaya-terminologiya-v-sistemotsentricheskom-i-antropotsentricheskom-aspektakh>:

ավելի իմաստներ ունենալն է, որը լեզվի բառապաշարի պատմական զարգացման անխուսափելի հետևանք է: Եթե սովորական բառն իր բազմիմաստությամբ գործածվում է լեզվի բոլոր շերտերում և մակարդակներում, ապա «բազմիմաստ տերմինը՝ որպես միևնույն բառ-տերմինի տերմինային տարբեր նշանակությունների ամբողջություն, գործածվում է տարբեր **կամ նույն** տերմինահամակարգ(եր)ում (ընդգծումը հեղինակինն է - Ա. Ղ.) իր տարբեր (միայն տվյալ համակարգին հատուկ) նշանակություններով»¹⁰¹:

Ցանկացած իրավական լեզու ունի շարադրման իր կանոնները՝ տեխնիկան¹⁰²: ՀՀ օրենսդրությունում այն արտահայտված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխում¹⁰³, ուր ամրագրված է բազմիմաստ տերմինների և լեզվական այլ երևույթների վերաբերյալ հետևյալ կանոնը. «Իրավական ակտերի լեզուն պետք է լինի պարզ, հստակ և մատչելի: Իրավական ակտերում չի թույլատրվում հնացած և բազմիմաստ բառերի ու արտահայտությունների, ..., ինչպես նաև օտարալեզու տերմինների անհարկի օգտագործումը: Իրավական ակտում բազմիմաստ բառ օգտագործելու դեպքում պետք է սահմանվի, թե բառը որ իմաստով է օգտագործվում» (հդ. 42, կետ 2): Կիրառելով սույն կանոնը՝ իրավական լեզուն կարողանում է որոշակիորեն շրջանցել տերմինային բազմիմաստության հետ կապված խնդիրները, սակայն դրանց լիարժեքորեն լուծում տալ դեռևս չի հաջողվում:

Ըստ լեզվաբան Էդուարդ Աղայանի՝ տերմինային բազմիմաստությունն իր գործառույթն իրականացնում է երկու ճանապարհով՝ **արտահամակարգային և ներհամակարգային**¹⁰⁴: Առաջնորդվելով բազմիմաստության սույն տարբերակմամբ՝ արդի հայերենի բազմիմաստ իրավաբանական տերմինները քննենք **արտահամակարգային և ներհամակարգային** խմբավորմամբ:

¹⁰¹ **Պետրոսյան Հ.**, Հայերեն տերմինաբանություն, մաս 2, Երևան, 2010, էջ 59:
¹⁰² Իրավական լեզվի տեխնիկան իր առաջին օրինաչափական դրսևորումներով արտահայտվեց 19-րդ դարում (տե՛ս **Иерниг Р.**, Дух римского права. СПб., 1875: Юридическая техника. СПб., 1906):
¹⁰³ Տե՛ս «**ՀՀ օրենքը իրավական ակտերի մասին**» (03.04.2002), ՀՀ ՊՏ 2002.05.21/15(190):
¹⁰⁴ Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 349:

Արտահամակարգային է այն բազմիմաստությունը, երբ միևնույն բառ-տերմինի արտահայտած տարբեր տերմինային նշանակություններինց յուրաքանչյուրը պատկանում է առանձին տերմինահամակարգերի: Օրինաչափական նշանակություն ունի այն հանգամանքը, որ որքան հեռու են տերմինահամակարգերը, այնքան անվտանգ է նախընտրելի տերմինային բազմիմաստությունը:

Այսպես՝ **կողմ** բառը, համագործածական բառ էլիսելուց բացի («1. Որևէ բանի կողքային տարածությունն՝ տեղ, ինչպես նաև այդ ուղղությունը»), ունի նաև տերմինային նշանակություն՝ «...12. **(Երկրչ.)**: Երկրաչափական մակերևույթի (մարմնի) տարածությունը սահմանափակող ուղիղ գծի հատված: 13. **(իրավբ.)**: Դատական որոշ հարաբերություններին մեջ գտնվող անձերինց յուրաքանչյուրը»¹⁰⁵: Տերմինային նշանակություններն ըստ էության նույն ընդհանուր հասկացությունն են արտահայտում՝ յուրաքանչյուրը մասնավորվելով և ստանալով որևէ տերմինային հատկանիշով բնութագրվող տարբերակված հասկացություն:

Արդի հայերենի իրավաբանական բառապաշարում արտահամակարգային բազմիմաստություն արտահայտող տերմինները տարբերակել ենք հետևյալ խմբերով¹⁰⁶.

ա) տերմինային նշանակություններ ստացած համագործածական բառեր՝ ինչպես՝

անձ – «7. **(Սժբ.)**: Երրորդութեան դեմքերինց իւրաքանչիւրը: 8. **(իրավբ.)** Ֆիզիկական անձ, Մարդ անհատը՝ իբրև իրաւունքի ենթակայ (ընդունակ): Իրավաբանական անձ, Որևէ կազմակերպութիւն՝ մարմին՝ հիմնարկութիւն՝ գույք՝ իբրև իրաւունքի ենթակայ (ընդունակ)»:

առարկա - «5. **(ոլս.)**: Ուսուցման մի առանձին ճյուղ կազմող գիտելիքների ամբողջությունը, գիտակարգ (դիսցիպլին): 6. **(լեզվբ.)**: Իբրև ինքնագոյությունը ընդունվող՝ դիտվող երևույթ՝ իր՝ հատկանիշ ևն: 7. **(իրավբ.)**: Ինչ որ կարող է իրավունքի՝ դատի նյութ էլիսել (օբյեկտ)»:

¹⁰⁵ **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 750:
¹⁰⁶ Տերմինների բացատրությունը տե՛ս **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1-2, Երևան, 1976: **Մալխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, 1944-45:

ապացույց - «**2. (տրամ.)**: Որպես ճշմարտության ընդունվող տվյալների հիմամբ նոր ճշմարտության սահմանելուն ծառայող մտահանգման եղանակ: **3. (իրավք.)**: Ամեն կարգի փաստական տվյալ, որի հիման վրա հաստատվում են հանրորեն վտանգավոր արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կատարող անձի մեղավորությունը և պարզում գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքները»:

պաշտպան - «**2. (իրավք.)**: Դատարանում մեղադրյալի շահերը պաշտպանող անձ (սովորաբար իրավաբան), դատապաշտպան: **3. (սպորտ)**: Ֆուտբոլի՝ հոկեյի ևն խաղերում պաշտպանությունն ապահովող մարզիկ-խաղացող»:

բ) միայն տերմինային արժեք ունեցող բառեր հետևյալ խմբավորմամբ՝

➤ առավել ասես իրավական լեզվի բառապաշարում գործածվող տերմիններ, որոնք այլ մասնագիտական նշանակությամբ կիրառվում են տարբեր տերմինահամակարգերում: Սրանք իրավաբանական տերմինահամակարգում հազվադեպ հանդիպող բազմիմաստ բառեր են, ինչպես՝

դատավոր – **1. (իրավք.)**: Դատական մարմնի պաշտոնական անձ, որ վարում է դատավարությունը և դատավճիռ կամ որոշում ընդունում գործի մասին: **2. (սպորտ)**: Մարզական խաղերն ու մրցումները դատող անձ:

դատապաշտպան – **1. (իրավք.)**: Ամբաստանյալի պաշտպանությամբ հանդես եկող իրավաբան: ... **3. (բնստ)**: Մեկի դատը՝ իրավունքները պաշտպանող, պաշտպան:

կողոնք – **1. (իրավք.)**: Օրենսգիրք: **2. (քղք.)** Կանոն¹⁰⁷:

➤ առավել ասես տարբեր տերմինահամակարգերում գործածվող տերմիններ, որոնք համապատասխան մասնագիտական նշանակությամբ կիրառվում են նաև իրավաբանական տերմինահամակարգում: Այս տերմինները հիմնականում միջազգային նշանակություն ունեցող բառեր են: Օրինակ՝

¹⁰⁷ Տե՛ս **Բարսեղյան Զովհ.**, Զայերեն ուղղագրական-ուղղափոսական-տերմինաբանական բառարան, Երևան, 1973, էջ 497:

ապտք - 1. (\$ին.): Հարկի՝ վարձավճարի և ն ժամկետին չ մոլ ծված և վճարողի վրա որպես պարտք մնացած գոլ մար: **2. (իրավք.):** Օրինական կերպով սահմանված՝ նախատեսված գոլ մարը չ մոլ ծել ը՝ չ վճարել ը:

գլ ոսսարիոլմ - 1. (լ եզվք.): Բացատրական բառարան (հատկապես հին տեքստերի): **2. (իրավք.):** Օրենքների և ակտերի մեկնոլ թյ ոլ նների ժողովածոլ:

ռեստիտուցիա - 1. (կենսք.): Վերաճոլ նակոլ թյ ոլ ն. **2. (իրավ.):** Վերականգնոլ մ¹⁰⁸ և այլ ն:

Արտահամակարգային բազմիմաստ տերմինները, թեև որպես լեզվական նշան արտահայտվոլմ են միևնոլյն բառաճևով, այնոլ ամենայնիվ, իրենց իմաստագործառական առանճնահատկոլ թյ ամբ կարողանոլմ են սահմանազատել տարբեր գիտոլ թյ ոլ ններին վերաբերող հասկացոլ թյ ոլ նները:

Ներհամակարգային բազմիմաստոլ թյ ոլ նը, որը տերմինի երկոլ կամ ավելի նշանակոլ թյ ոլ նների պատկանելն է միևնոլյն տերմինահամակարգին, օրինաչ ափ, հետևաբար խրախոլ սելի երևոլյ թ չէ, քանի որ այս պատճառով հաճախ են առաջանոլմ ավելորդ կրկնաբանոլ թյ ոլ ններ, տերմինների սահմանոլմների խախտոլմ, իմաստային շփոթոլ թյ ոլ ններ և այլ ն: Ոլստի որպես ընդհանոլր կանոն տերմինագիտոլ թյ ոլ նը առաջնորդվոլմ է **մեկ տերմինին մեկ իմաստով և տերմինահամակարգոլմ սկզբոլ նքով:**

Արդի հայերենի իրավատերմինահամակարգոլմ գործածվոլմ են տերմիններ, որոնք ոլ նեն ներհամակարգային բազմիմաստոլ թյ ոլ ն: Տերմինային նշանակոլ թյ ոլ նները կարող են պատկանել ինչպես իրավոլ նքի միևնոլյն ճյ ոլղին, այնպես էլ տարբեր ճյ ոլղերի, օրինակ՝ **քրեական գործի հարոլցոլմ** տերմին բառակապակցոլ թյ ոլ նն իր երեք տերմինային նշանակոլ թյ ոլ ններով արտահայտոլմ է քրեական դատավարոլ թյ ան տարբեր հասկացոլ թյ ոլ ններ՝ «1) քրեական դատավարոլ թյ ան ինքնոլրոլյն փոլլ, 2) քրեադատավարական ակտ՝ որոշոլմ, 3) քրեական դատավարոլ թյ ան ինստիտոլ տ»¹⁰⁹, իսկ **մորատրիոլմ** տերմինը իր երկոլ նշանակոլ թյ ոլ ններով՝ քաղաքացիական և միջազգային

¹⁰⁸ Տե՛ ս նոլյն տեղը, էջ 810:

¹⁰⁹ «Հայաստանի Հանրապետոլ թյ ան քրեական դատավարոլ թյ ոլ ն», հատոլկ մաս, երևան, 2005, էջ 9:

իրավունքի գործողության տարբեր անվանումներ՝ «1. Քաղաքացիական իրավունքում՝ պետության կողմից որոշ ժամանակով կամ մինչ որևէ արտակարգ դեպքի ավարտը սահմանված պարտավորության կատարման հետաձգում: 2. Միջազգային իրավունքում՝ երկրների միջև պայմանավորվածություն, որևէ գործողությունից որոշակի կամ անորոշ ժամանակով ձեռնպահ մնալու կամ հետաձգելու մասին»¹¹⁰:

Ներհամակարգային բազմիմաստության օրինակ է **երաշխավորություն** տերմինը: Այն, իրավական համակարգի քաղաքացիական ոլորտում ունենալով իր նշանակությունը՝ պայմանագիր, որով երաշխավորողը պարտավորվում է լրիվ կամ մասնակի չափով պատասխանատվություն կրել երաշխավորյալի ճշտակատարության խախտման դեպքում (տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, հո. 375), քրեաիրավական բառապաշարում գործածվում է այլ նշանակությամբ՝ «խախտման միջոց, որը կիրառելիս քրեական գործի քննության ընթացքում կասկածյալի, մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովումն իրականացվում է քաղաքացիների և կազմակերպությունների մասնակցության միջոցով»¹¹¹: Չմասնավորված այս տերմինի արտահայտած նշանակությունները՝ մեծ հավանականությամբ ՀՀ ցանկացած քաղաքացի այն կկիրառի կամ պատահական ճշգրտությամբ, կամ մեկ բառի իմաստի խեղաթյուրմամբ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը 42-րդ հոդվածի առաջին կետում ամրագրում է. «Եթե նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նոր կամ **բազմիմաստ** (ընդգծումը հեղինակինն է - Ա. Ղ.) կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ իրավական ակտով պետք է տրվեն դրանց սահմանումները»: Բազմիմաստ իրավաբանական տերմինները, համաձայն սույն կանոնի, իրենց գործառական դաշտում կիրառվում են համապատասխան սահմանումներով:

Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարում ներհամակարգային բազմիմաստություն են արտահայտում նաև՝

¹¹⁰ **Կոբալյան Ա.**, Իրավաբանական համառոտ բացատրական բառարան, Երևան, 2006, էջ 50:
¹¹¹ **Ոսկերչյան Ա.**, Քրեաիրավական տերմինների արդի համառոտ բացատրական բառարան, Երևան, 2004, էջ 47:

դատախազություն – 1. օրինականության պահպանման հսկողությունն իրականացնող պետական մարմին, 2. դատախազների կազմը,

պաշտպանություն – 1. դատավարական գործունեություն, որն իրականացնում է պաշտպանության կողմը՝ նպատակ ունենալով հերքել մեղադրանքը կամ մեղմացնել պատասխանատվությունը, պաշտպանել այն անձանց իրավունքները և շահերը, որոնց վերագրվում է քրեական օրենսգրքով արգելված արարքի կատարումը, ինչպես նաև նպաստել ապօրինաբար քրեական հետապնդման ենթարկված անձանց իրավունքների վերականգնմանը (տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հդ. 6): 2. Դատապաշտպանների կազմը կամ պաշտպանող կողմը դատարանում¹¹²,

հայ կական քրեական իրավունք - «1) իրավունքի ճյուղ, 2) օրենսդրության ճյուղ, 3) քրեական իրավունքի գիտություն և համանուն դասընթաց»¹¹³,

վնաս – 1. «տնտեսության ճյուղին հասցված նյութական վնաս կամ տնտեսության ճյուղին նյութական վնասի վտանգ, կամ տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցում» (ՀՀ օրենքը հակազնազգման (հակադեմփինգային) և փոխհատուցման միջոցների մասին, հդ. 3), 2. «դրամական չափման ենթակաբարոյական, ֆիզիկական, գույքային վնասը» (ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հդ. 6),

դատակոչ – 1. դատարան ներկայանալու ծանուցագիր, 2. դատական ծանուցագիրը ներկայացնող պաշտոնյա,

դատաքինը - 1. դատը ջնջող, 2. դատավարության ջնջում»,

տուժանք – 1. տուգանք, 2. սահմանված գումար, որը պարտավոր է վճարել պայմանը խախտողը,

պատժապարտ– 1. պատժի արժանի՝ մեղապարտ, 2. պատժի ենթարկված՝ պատժակիր,

օրինել – 1. օրենք դնել, 2. օրենքով հաստատել և այլ տերմիններ:

¹¹² Տե՛ս **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1976, էջ 1181:

¹¹³ «**Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք**», ընդհանուր մաս, Երևան, 2003, էջ 10:

Հավելել ենք, որ *տուժանք* տերմինը առավել ապես արևմտահայերենին բնորոշ բառ է, իսկ *դատակոչ*, *դատաքիչ*, *պատժապարտ*, *օրինել* տերմինները¹¹⁴ զուտ արևմտահայերեն բառեր:

Ներհամակարգային բազմիմաստու թյուրու նը տերմինաբանությունից վերացնելու լավագույն ուղի է այն, երբ բազմիմաստ բառի յուրաքանչյուր իմաստին տրվի կա՛մ լեզվում արդեն գոյություն ունեցող, կա՛մ էլ բոլորովին նորաստեղծ լեզվական արտահայտություն (լինի բառ թե կայուն կապակցություն):

Իրավական խոսքը պարզորոշ, հստակ արտահայտելու, հասարակական մեծ գանգվածներին հասնելի դարձնելու կարևոր նախապայմաններից է նրանում առկա տերմինային բազմիմաստու թյուրու նվագագույնին հասցնելը, քանի որ այն խանգարիչ ազդակ կարող է դառնալ ինչպես հանրային օրենքի համապարփակ բովանդակության արտահայտման, այնպես էլ օրենսդիր մարմնի ճշգրիտ նորմեր սահմանելու պարագայում¹¹⁵:

Տերմինային հոմանիշություն: Տերմինաբանության մեջ իմաստաբանական ոչ ցանկալի դրսևորում է նաև տերմինային հոմանիշությունը (կամ նույնանիշությունը), որը չպետք է շփոթել բառային հոմանիշության հետ: Եթե բառերի հոմանիշային խմբի անդամները ոչ բոլոր դեպքերում կարող են միմյանց փոխարինել՝ կախված բառի կիրառման ոլորտից, ապա տերմինային հոմանիշները բացարձակապես նույնիմաստ բառեր են, որոնք արտահայտում են միևնույն հասկացությունը տվյալ տերմինահամակարգում, և առանց որևէ սահմանափակման կարող են փոխարինել միմյանց մասնագիտական խոսքում¹¹⁶:

Իրավաբանական տերմինահամակարգում հանդիպում են **տերմինների հոմանիշային (նույնանիշային կամ համանիշային) խմբեր**, որոնք թերևս մասնագետի համար նույն, բայց մասնագիտական

¹¹⁴ Նշված տերմինների բացատրությունը տե՛ս **Սարաֆտյեան Ռ.**, Արել մտահայերեն-արելելահայերեն նոր բառարան, Երեւան, 2011:

¹¹⁵Տե՛ս **Черекаев А. В.**, Юридическая терминология в Российском публичном праве, Москва, 2004 // http://www.fpa.su/biblioteka/izdaniya/problemy-teorii-gosudarstva-i-prava/yuridicheskaya-terminologiya-v-rossijskom-publichnom-prave-a-v-cherekaev/?SECTION_CODE=problemy-teorii-gosudarstva-i-prava&ELEMENT_CODE=yuridicheskaya-terminologiya-v-rossijskom-publichnom-prave-a-v-cherekaev&PAGEN_1=4:

¹¹⁶ Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 355:

հմտություններ չունեցող անձի համար կարող են ընկալվել տարբեր հասկացություններ արտահայտող բառեր, ինչպես՝ *դատապաշտպան – պաշտպան, ենթադատ – ընդդատյա, մեղադրող – դատախազ, կալ անք – կալ անավորում, հանցանք – հանցագործություն, ձեռնաշղթա – ձեռնակապանք, անօրինական – ասորինի, տուգանք – տուժանք – տույժ և այլն:*

Իրավաբանական տերմինահամակարգում և առհասարակ տերմինաբանության մեջ նույնանիշ տերմինների՝ որպես նույն հասկացությունների համար գուգահեռ նշանակությունների գործածությունը պայմանավորված է արտալեզվական և ներլեզվական գործոններով¹¹⁷:

ա) Ներհամակարգային հոմանիշության առաջացման արտալեզվական գործոնը գիտական հասկացությունների անընդհատ ճշգրտման գործընթացն է, երբ հին տերմինն այլևս չի համապատասխանում գիտության առաջընթացին համաբայլ ճշգրտված հասկացության սահմանմանը, և առաջ է գալիս հասկացությունը նորովի տերմինավորելու անհրաժեշտություն, ինչպես՝ *գանգատ – բողոք, գանգատող – բողոք բերող անձ, դատաստանագիրք – օրենսգիրք, դատաստան – վճիռ:*

բ) Ներհամակարգային հոմանիշության առաջացման ներլեզվական գործոնը տերմինի արտահայտության պլանի կատարելագործման ձգտումն է, ինչպես՝ *ապրուստավճար – ապրուստադրամ, պահանջատեր – հայցվոր, գրավապահ – գրավառու, գրավադիր – գրավատու:*

գ) Ներհամակարգային հոմանիշության առաջացման ներլեզվական գործոն է փոխառյալ տերմինների և դրանց հայերեն համարժեք տարբերակների առկայությունը, ինչպես՝ *ամնիստիա – համաներում, ապելյացիա – բողոքարկում, նորմ – կանոն, ինդոսամենտ – փոխանցագիր, պատրոն – օգնական, օֆերտա – առաջարկ և այլն:*

դ) Ներհամակարգային հոմանիշության առաջացման ներլեզվական գործոն է նաև հայերենի երկփեղկվածությունը, ինչի հետևանքով քիչ չեն արևմտահայերեն-արևելահայերեն

¹¹⁷ Տե՛ս **ՊԵՏՐՈՍյ ԱՆ Զ.**, Զայերեն տերմինաբանություն, մաս 2, Երևան, 2010, էջ 68:

բառակազմական տարբերակները՝ պայմանավորված բաղադրիչների բազմաբնույթ կազմությամբ, օրինակ՝ *խնդրագիր – հայցադիմում, ամբաստանություն – մեղադրանք, դատաբեկ – վճռաբեկ, եղեռնախորժ – մահախորժ, հարցախորժել – հարցաքննել* և այլն:

Իրավաբանական տերմինահամակարգում ներհամակարգային հոմանիշության առաջացման ուշագրավ երևույթ է, երբ միևնույն բառը կամ բառաձևը, լեզվի երկու տարբերակներում ձեռք բերելով տարբեր իմաստներ, դառնում է բազմիմաստ բառ, որը իմաստային անցումների հետագամթազնումով ստեղծում է համանուն բառերի շարք¹¹⁸: Չավելենք, որ նման բառերը մեծ մասամբ պատկանում են տարբեր խոսքի մասերի: Այսպես՝ եթե արևելահայերենում **մեղք** բառը գոյական է և նշանակում է *հանցանք*, ապա արևմտահայերենում այն ձայնարկություն է՝ արտահայտելով **ախոս** բառի իմաստը: Չամանունություն նույնախսի օրինակ է **քննիչ** բառը: Արևելահայերենում այն իրավաբանական տերմին է՝ *նախաքննությունն իրականացնող պաշտոնական անձ* նշանակությամբ, իսկ արևմտահայերենում չունի համապատասխան մասնագիտական տերմինային արժեք և նշանակում է «1. Քննող: 2. Գործերը ստուգող պաշտոնական անձ: 3. Ուսումնական հաստատություններում կարգապահությանը հսկող վերակացու: 4. Գրաքննիչ»¹¹⁹: Ի տարբերություն **մեղք** և **քննիչ** բառերի, որոնք իբրև իրավաբանական տերմիններ գործածական են արևելահայերենում, ճիշտ հակառակ դրսևորումն ունի **անբռնաբարելի** բառը: Արևելահայերենում այն չունի տերմինային արժեք և նշանակում է *ինչը չի կարելի բռնաբարել*, արևմտահայերենի իրավական աղբյուրներում բառը գործածվում է *անձեռնմխելի* նշանակությամբ:

Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարում հանդիպում ենք բառակազմական նույն կաղապարներով կամ նույն նախադասի հիմքով և հոմանիշ ածանցներով կազմված բառերի, որոնք իրենց նման կազմությամբ խթանում են տերմինային հոմանիշության

¹¹⁸ Տե՛ս **Սարափտյան Ռ.**, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, 2004, էջ 77:

¹¹⁹ **Սարափտյան Ռ.**, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երեւան, 2011, էջ 369:

տարածմանը, ինչպես՝ *հարցաքննություն* – *հարցաքննում*,
ծերբակալություն – *ծերբակալում*, *լիազորություն* – *լիազորում*,
կազմալուծություն – *կազմալուծում*, *կարգադրություն* –
կարգադրում, *վարձակալություն* – *վարձակալում*, *տեղազննություն* –
տեղազննում, *հախճ տակություն* – *հախճ տակում* և այլն:

Համաձայն Աշոտ Սուքիասյանի տեսակետի՝ տերմինային հոմանիշությունը «ժամանակավոր երևույթ է տերմինաբանության զարգացման տվյալ փուլի համար: Նույնանիշներից մեկը հոմանշային մրցակցության մեջ հաղթելով, դառնում է այդ հասկացության միակ անվանումը, մյուսները կամ դուրս են մնում լեզվից, կամ էլ ձեռք բերելով նոր իմաստ, օգտագործվում են իբրև նոր տերմին՝ այլ հասկացության համար»¹²⁰:

Բազմիմաստ և հոմանիշ տերմինների վերաբերյալ լեզվական քննությունը փաստում է, որ արդի հայ իրավական խոսքի, այն արտահայտող տերմինահամակարգի կանոնավոր զարգացման արգելիչ ազդակներից են տերմինային բազմիմաստությունն ու հոմանիշությունը: Դրանց առկայությունը ստեղծում է իրավական իրականությունների իմաստային երկվություններ, ավելորդ զուգահեռություններ, որոնց կիրառումը իրավական խոսքում կարող է առաջացնել տերմինների սահմանումների խախտումներ, իմաստային շփոթ, մարդկանց իրավական փոխհարաբերությունների անառողջ զարգացում՝ դառնալով նաև մի շարք այլ բացասական երևույթների հետևանք: Եթե արտահամակարգային բազմիմաստությունը գիտության, տեխնիկայի, արտադրության և այլնի զարգացման օրինաչափ և անխուսափելի երևույթ է, որն ընդհանրապես տերմինաբանության մեջ շփոթ չի առաջացնում, ապա ներհամակարգային բազմիմաստությունն ու տերմինային հոմանիշությունը տերմինաբանության համար վնասարար և մերժելի լեզվական երևույթներ են:

Մասնագիտական բանավոր թե գրավոր խոսքում տերմինային բազմիմաստության և հոմանիշության անցանկալի երևույթներից հնարավորինս խուսափելու համար անհրաժեշտ է կիրառել իրավական լեզվի տեխնիկական կանոններ, քանի որ իրավաբանական տեխնիկան

¹²⁰ **Սուքիասյան Ա.**, ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2008, էջ 175:

ընդգրկում է այն բոլոր հնարավոր մեթոդներն ու միջոցները, որոնք, կատարելով մասնագիտական խոսքի ճշգրիտ կառուցման գործառույթ, ինչպես թարմացնում են իրավական խոսքի կոնոտատիվ իմաստներն ու արժեքները, այնպես էլ «բեռնաթափման» միջոցով իրավական խոսքը զերծ են պահում լեզվական և ոչ լեզվական անցանկալի երևույթներից¹²¹:

Համաձայն Էդուարդ Աղայանի տեսակետի՝ «Տվյալ տերմինահամակարգի 1 հասկացողությանը 1 բառային ձև սկզբունքը տերմինագիտության համար անխախտելի է, և բազմիմաստության, համանունության և համանիշության հարցերը պետք է լուծել այդ սկզբունքի համաձայն»¹²²:

Հայ իրավական խոսքում ակամայից իմաստային շփոթ են ստեղծում նաև այնպիսի տերմիններ, որոնք հաճախ իրենց կազմության մասն (հարանուններ) կամ իմաստային նուրբ կապվածություն ունենցող բառեր են, որոնք ոչ մի դեպքում չպետք է նույնացնել կամ ընկալել որպես հոմանիշներ և գործածել մեկը մյուսի փոխարեն: Դրանք անկախ տերմիններ են և հայ իրավաբանության մեջ¹²³ արտահայտում են առանձին հասկացողություններ և երևույթներ:

Այսպես՝ **իրավաբան** և **իրավագետ** տերմինները հաճախ նույնացվում և գիտակցվում են իբրև միևնույն հասկացողության անուն, այնինչ դրանք տարբեր եզրեր են: Ավելի վաղ ժամանակներում **իրավաբան** նշանակել է «Ստուգաբան. իրաւախօս, արդարախօս, և իրաւամբք կամ արդար դատախազ»¹²⁴: ժամանակակից հայերենում տերմինն ունի ավելի ընդհանրական նշանակություն՝ «իրավաբանության մասնագետ: 2. իրավաբանական կրթություն և ստացած և իրավունքի բնագավառում աշխատող»¹²⁵: **իրավագետ** տերմինը որպես ածական նշանակել է «Որ գիտէ գիրաւ և և զճմարիտն. «գիտակ իրաց», որպես գոյական նշանակել է «օրէնսգետ, «գիտակ

¹²¹ Տե՛ս **Болдырев С. Н.**, Юридическая техника: Теоретико-правовой анализ /диссертация/, Ростов-на-Дону, 2014, էջ 28:

¹²² **Աղայան Էդ.**, Տերմինագիտություն, Երևան, 1978, էջ 51:

¹²³ Ինչու ենք նշում **իրավաբանություն մեջ**, որովհետև ստորև բերված օրինակներում կան տերմիններ, որոնք բառագիտության մեջ կազմում են հոմանիշային զույգեր:

¹²⁴ «Նոր բառգիրք հայ կազեան լեզուի», հ. 1, Երևան, 1879, էջ 871:

¹²⁵ **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, հ. 1, էջ 507:

իրաւանց և օրինաց, միանգամայն և Պաշտպան»¹²⁶: Ժամանակակից հայերենում բառը կիրառվում է գոյականական իմաստով՝ *իրավագիտության մասնագետ, իրավունքի, օրենքի գիտակ, մասնագետ-գիտնական*¹²⁷:

Լ ու ծ ե լ , լ ու ծ ա ր ե լ տերմինները նույնպես անկախ բառեր են, թեև ծագումնաբանորեն սերում են միևնույն *լ ո յ ծ* արմատից («*ծորելի. հեղուկ. հոսանուտ. հալեալ. ցնդելի. սփռ. անգայտ. անօսր. թոյլ. մեղմ. մեղկ*»¹²⁸):

Լ ու ծ ե լ բառը բազմիմաստ է: Էդ. Աղայանը իբրև հնացված իմաստ նշում է «8. (հնց.): Վերացնել (արգելքը, պայմանը ևն)»¹²⁹, այնինչ այսօր իրավական ոլորտում սույն իմաստը «վերածնվում է» և կիրառվում այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է պայմանագրերի դադարեցմանը, վերացմանը: Օրինակ՝ «*Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լ ու ծ վ ե լ ո չ միայն կողմերի համաձայնությամբ, այլ և կողմերից մեկի պահանջով*»¹³⁰: Պայմանագիրը դադարեցնել, վերացնել նշանակությամբ **լ ու ծ ե լ** բառը ձեռք է բերել իրավաբանական տերմինի արժեք:

Լ ու ծ ա ր ե լ ը և՛ որպես բառ, և՛ որպես իրավաբանական տերմին ունի միևնույն նշանակությունը՝ *լ ու ծ ա ր ք ի ե ն թ ա ր կ ե լ* (*ձեռնարկությունը, կազմակերպությունը, հիմնարկը և այլն*):

Գրաբարում և միջին հայերենում **լ ու ծ ե լ** և **լ ու ծ ա ր ե լ** տերմինների փոխարեն գործածվել են գրաբարի ձևաբանության մեջ բայերին բնորոշ սեռային տարբերությամբ կիրառվող *լ ու ծ ա ն ե լ* (*լ ու ծ ե լ*) և *լ ու ծ ա ն ի լ* (*լ ու ծ ա ր ե լ*) բազմիմաստ բառերը: Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» աշխատությունում այս բառերի կիրառելի իմաստներն են՝ 1. *լ ու ծ ա ն ե լ*՝ «Աւերել զկանոն, կամ եղծանել զհրամանս», 2. *լ ու ծ ա ն ի լ*՝ «Անկանիլ յիշխանուէ և ի պատուոյ»¹³¹: Մեջբերենք.

¹²⁶ «Նոր բառգիրք հայ կազեան լ եզուի», հ. 1, Երևան, 1879, էջ 871:

¹²⁷ Տե՛ս Ավետիսյան Յու., Պաշտոնական ոճ, Երևան, 2011, էջ 79:

¹²⁸ «Նոր բառգիրք հայ կազեան լ եզուի», հ. 1, Երևան, 1879, էջ 892:

¹²⁹ Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 542:

¹³⁰ Բարսեղյան Տ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս 1, Երևան, 2004, էջ 400:

¹³¹ «Նոր բառգիրք հայ կազեան լ եզուի», հ. 1, Երևան, 1879, էջ 895:

1. «Եւ զայս ահա զառաքելական զիրաման այսպէս դատել պարտին առաջնորդք, զի զսովորութիւնն չար **լ ու ծցեն...**»¹³²:

2. «Եպիսկոպոս, կամ երէց, կամ սարկաւազ երկրորդ ձեռնադրութիւն ընկալեալ յ ուրմեքէ, **լ ու ծցի** նա...»¹³³:

Իրավաբանական տերմինահամակարգում և առհասարակ հայերէնում բառակազմութեամբ նման, բայց միանգամայն տարբեր բառեր են նաև՝

- **իրավաբանութիւն** – իրավաբանի զբաղմունքը և մասնագիտութիւնը,

իրավագիտութիւն - իրավունքի մասին գիտութիւնների ամբողջութիւնը,

- **քրեաբանութիւն** – գիտութիւնն հանցագործութեան՝ որպէս սոցիալական երևույթի մասին (կրիմինոլոգիա),

քրեագիտութիւն - դատական ապացույցների հավաքման, բացահայտման ու հետազոտման հատուկ (տեխնիկական ու տակտիկական) եղանակների ու միջոցների ուսումնասիրութեամբ զբաղվող գիտութիւն (կրիմինալիստիկա),

- **հայց** – քաղաքացիական իրավունքների պաշտպանութեան պահանջով

դատարանին ներկայացվող գործ,

հայցադիմում – հայցի բովանդակութիւնը պարունակող դիմում, հայց հարուցելու համար տրվող դիմում:

Հայկական իրավական ակտերում հանդիպում են իմաստային նուրբ կապվածութիւնն ունեցող տերմինախմբեր, որոնք, հետապնդելով միևնույն գաղափարը կամ նշանակելով տվյալ տերմինախմբի համար ընդհանուր հասկացութիւն, դրսևորում են հոմանիշ բառերի իմաստային տարբերութիւններ՝ տեսակային, աստիճանական և ծավալային:

Այսպէս՝ **վճիռ** և **դատավճիռ** տերմինները բառագիտութեան մեջ թեպէտ հոմանիշներ են, սակայն իրավատերմինահամակարգում դրանց մեկը մյուսի փոխարեն գործածելը խիստ արգելվում է: Տերմինները, պայմանավորված իրավունքի տարբեր ճյուղերի որոշակի

¹³² **Գոշ Մ.**, Գիրք դատաստանի, Երևան, 1975, էջ 49:

¹³³ Նույն տեղում, էջ 52:

պահանջներով, ու նենալով առանձին սահմանումներ, արտահայտում են մեկ ընդհանուր *դատական ակտ* նշանակությունը: Ուստի դրանք իրավական լեզվում իմաստաբանական տեսանկյունից դրսևորում են հոմանիշ բառերի **տեսակային տարբերություններ**, այսինքն՝ ցույց են տալիս նույն երևույթը, սակայն նրանցից յուրաքանչյուրը վերաբերում է նույն երևույթի տարբեր տեսակին¹³⁴: **Վճիռ** տերմինը գործածվում է քաղաքացիական և վարչական դատավարության իրավունքում, նշանակում է *դատարանի կողմից կայացված գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտ, որով վճռվում է քննվող գործի ելքը*: **Դատավճիռ** տերմինը կիրառվում է քրեական իրավունքում՝ «*դատական վճիռ, որ կայացվում է դատական նիստում քրեական գործով ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության և նրան կատմամբ պատիժ կիրառելու կամ չկիրառելու հարցով*»¹³⁵ նշանակությամբ:

Լինելով իրավական ակտի տեսակներ՝ **ներում** և **համաներում** տերմինները գործածվում են միևնույն նպատակով. երկուսն էլ ներում շնորհելու գործառույթ են իրականացնում: Սակայն տերմինների արտահայտած իմաստների միջև առկա են տեսակային տարբերություններ, որոնք պարզորոշ ներկայացված են սույն տերմինների սահմանումներում: **Ներումը** իրավունքի կիրառման անհատական ակտ է, որ իրականացվում է անհատապես որոշված անձի նկատմամբ: Իսկ **համաներում**՝ իրավունքի կիրառման նորմատիվ ակտ, որը հայտարարվում է անհատապես չորոշված անձանց շրջանակի նկատմամբ:

Իմաստաբանական տեսանկյունից նույնպիսի բնորոշում ենք տալիս **հանցանք** և **զանցանք** տերմիններին: Երկու բառերի բովանդակային դաշտերն արտահայտում են *իրավախախտում* հասկացությունը, սակայն դրանցից յուրաքանչյուրը այդ հասկացության մի տեսակի անվանում է: Այսպես՝ **հանցանք (հանցագործություն)** տերմինը գործածվում է քրեաբանության մեջ, նշանակում է *մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այնպիսի արարք, որ նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքով* (հդ. 18): **Չանցանք** տերմինը *վարչական իրավախախտում է*,

¹³⁴ Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 68:

¹³⁵ **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 280:

այն պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողություն կամ անգործություն է, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն (տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հդ. 9):

Հանցանք և **զանցանք** տերմինների միջև տեսակային տարբերությունից զատ առկա է նաև **աստիճանական տարբերություն**, այսինքն՝ տերմիններից յուրաքանչյուրը ցույց է տալիս միևնույն երևույթի «մի տարբեր աստիճանը, ուժգնությունը և այլն»¹³⁶: Հանցանքը հանրության համար առավել վտանգավոր իրավախախտում է, քան զանցանքը:

Բացի իրենց հստակ սահմանումներից՝ աստիճանական տարբերություններ են դրսևորում **կասկածյալ**, **մեղադրյալ**, **ամբաստանյալ**, **դատապարտյալ** և **ձերբակալում**, **կալ անալորում** տերմինախմբերը:

Այսպես՝ **կասկածյալ** տերմինը անվանումն է այն անձի, որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով, **մեղադրյալը**, որի դեմ ներկայացվել են հավաստի փաստեր, որնա է կատարել հանցագործությունը, **ամբաստանյալը**, որի մեղքը ապացուցվելու համար իրականացվում է դատավարություն, իսկ **դատապարտյալը**, որի հանցանքը ապացուցված է, և դատարանը դատալծիռ է կայացրել (տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հդ. 62, 64):

Ձերբակալում և **կալ անալորում** տերմինները օրենքով սահմանված կարգով անձին անազատության մեջ պահելու գործողության անուններ են, որոնք, կախված սույն գործողության տվյալ և հետագա ընթացակարգից, դրսևորում են աստիճանական տարբերություն: **Ձերբակալումը** անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է: Այն իրականացնում է քրեական հետաքննության մարմինը՝ կասկածյալին անազատության

¹³⁶ **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական քաղաքացիություն, Երևան, 1984, էջ 69:

մեջ պահելով արգելանքի վերցնելու պահից 72 ժամվա ընթացքում: Եթե նշված ժամկետում կասկածյալին մեղադրանք առաջադրվի, ապա կարող է կիրառվել **կալ անավորում**: Վերջինս խափանման միջոց է և կիրառվում է քրեական գործով վարույթի ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով: Հավելենք, որ կալ անավորումը և դրա այլ ընտրանքային խափանման միջոցը (գրավ, հսկողության հանձնելը) մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության դեպքում, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է՝ 1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, 2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, 3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, 4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց, 5. խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը (տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հդ.128, 135):

Հայ իրավական լեզվի բառապաշարն ընդգրկում է տերմինների խմբեր, որոնք թեև արտահայտում են միևնույն գաղափարը, այնուամենայնիվ դրսևորում են իմաստների **ծավալ ային տարբերություններ**, որոնց հստակ սահմանմամբ էլ դրանք իրավատերմինահամակարգում ներկայանում են որպես անկախ բառեր:

Այսպես՝ բառարանային բացատրությամբ **նախավճար** և **կանխավճար** բառերը հոմանիշներ են, նշանակում են՝ «նախապես տրված գումար (վարձատրություն)՝ ամբողջ պարտավորության կատարումն ապահովելու համար»¹³⁷: Իրավական լեզվում թեև սույն տերմիններն արտահայտում են միևնույն գաղափարը, սակայն նրանցից յուրաքանչյուրն անվանում է տարբեր երևույթներ: Ինչպես՝ **նախավճարը դրամական գումար է, որ պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով հասանելիք վճարների հաշվին տալիս է մյուս կողմին՝ իբրև պայմանագրի կնքման ապացույց և դրա կատարման ապահովում: Կանխավճարը վաճառվող ապրանքի գումարի որոշակի մասն է, որ գնողը կանխավ տալիս է վաճառողին:**

¹³⁷ **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 688:

Սահմանու մներն առավել հասկանալի դարձնելու նպատակով տերմինները բացատրենք օրինակներով:

Բնակարանի առուվաճառք անելիս, երբ կողմերը համաձայնության են գալիս բոլոր պայմանների շուրջ, գնորդը որպես առաջիկայում իր կողմից պայմանագրի կնքման երաշխիք վաճառողին է հանձնում գումար (**նախավճար**), որը պայմանագիրը կնքելիս հաշվանցվում է գումարի ընդհանուր թվին:

Մատակարարման պայմանագրով ապրանք ստացողը մատակարարին գումար է վճարում ապրանքը ստանալուց հետո, սակայն կողմերը կարող են նախապես համաձայնության գալ, և ստացողը մինչև իր կողմից ապրանք ստանալը մատակարարին վճարի ապրանքի գնի մի փոքր մասը, որն էլ կոչվում է **կանխավճար**: Այս նշանակությամբ է նաև գործածվում **նախնական վճար** տերմինը:

Արդի հայերենի իրավական լեզվում միևնույն գաղափարային հիմքով, սակայն իմաստների ծավալային տարբերությամբ գործածվող տերմիններ են **գողություն, կողոպուտ, ավազակություն** բառերը, որոնք, չկանոնարկված խոսքում լինելով հոմանիշներ, ինչպես՝ «ԳՈՂՈՒԹՅՈՒՆ. 1. Կողոպուտ, թալան, կողոպտություն, հափշտակություն, ավազակություն»¹³⁸, և իրավաբանական տերմինահամակարգում արտահայտելով *հանցագործության տեսակ* ընդհանուր նշանակությունը, ՀՀ քրեական օրենսգրքում սահմանվում են իբրև առանձին տերմիններ՝ **ավազակությունը՝ որպես ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակում (հդ. 175), կողոպուտը՝ որպես ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն (հդ. 176), և գողությունը՝ որպես ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն (հդ. 177)**:

Բառագիտության մեջ իբրև հոմանիշներ գործածվող **հաստատել** և **վավերացնել** բառերը իմաստային հստակ տարբերակմամբ կիրառվում են իրավական լեզվի բառապաշարում: **Հաստատել** նշանակում է *մի բան իբրև ստույգ՝ ուղիղ ընդունել կամ դրա ստուգությունը վկայել*: Օրինակ՝ նոտարը հաստատում է որևէ փաստաթղթի հայերեն թարգմանությունը կամ փաստաթղթի պատճենը բնօրինակին համապատասխանելը: **Վավերացնել** տերմինը արտահայտում է

¹³⁸ **Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2009, էջ 210:

գնահատելով ով ու ճանաչելով օրինական ուժ տալ նշանակությունը: Տվյալ գործառույթն իրականացնելու իրավասություն ունի ՀՀ Ազգային ժողովը, որը ՀՀ Նախագահի առաջարկությամբ վավերացնում է միջազգային պայմանագրեր (տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հդ. 81):

Առաջին հայացքից նույնիմաստ թվացող **հանցագործության սուբյեկտ** և **հանցագործի անձ** հասկացությունները թեև «վերաբերում են միևնույն անձին՝ հանցանք կատարողին, բայց նրանց բովանդակությունները և ամենակարևորը՝ իրավաբանական (քրեաիրավական) նշանակությունը չեն համընկնում: ... Հանցագործության սուբյեկտն այն հատկանիշների ամբողջությունն է, առանց որի չկա և չի կարող լինել որևէ հանցակազմ (պարտադիր հատկանիշներ) կամ որոշակի հանցակազմ (ոչ պարտադիր հատկանիշներ):

Հանցագործի անձն ավելի լայն հասկացություն է: Այն ընդգրկում է մարդկային հատկանիշների բազմազանությունը (բնավորությունը, հակումները, խառնվածքը, կրթությունը և այլն)»¹³⁹: Հանցագործի անձը հաշվի է առնվում դատարանի կողմից պատիժ սահմանելիս, քրեական պատասխանատվությունից ազատելիս, նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կիրառելիս և այլ դեպքերում:

Նման կամ իմաստային նուրբ կապվածություն ունեցող տերմինների առկայությունը իրավական լեզվում **«իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում** թելադրում է օրենսդրական տեխնիկայի հետևյալ կանոնը. *«Նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով»* (հդ. 36, կետ 4):

Իմաստային շփոթություններ չեն առաջանա, եթե ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի ընդհանուր պատկերացում ունենա վերոնշյալ տերմինների վերաբերյալ, քանի որ դրանց որոշակի

¹³⁹ «Հայ աստանի Հանրապետության քրեական իրավունք», ընդհանուր մաս, Երևան, 2003, էջ 175-176:

մասը գրաբարից, միջին հայերենից ժառանգած և որոշ բառեր էլ նոր ժամանակներում կազմված բավականին հաջողված տերմիններ են:

Իրավաբանական տերմինահամակարգում հանդիպում են իրավական խոսքում մի տերմինի առկայությունը մյուսի ներկայությունը հավաստող, սահմանվող հասկացության բովանդակային դաշտը ամբողջացնող տերմինային խմբեր, օրինակ՝ *օֆերտա - ակցեպտ, ռեզրեսանտ - ռեզրեսատ, ինդոսանտ - ինդոսատ, կոմիսիոներ - կոմիտենտ* փոխառությունները, *լիցենզատու - լիցենզառու, փոխատու - փոխառու, նվիրատու - նվիրառու, վարձատու - վարձակալ, պահառու - պահատու, պարտատեր - պարտապան* հայերեն կազմությունները:

§2. Իմաստափոխությունը արդի հայերենի իրավաբանական տերմինահամակարգում

Իրավաբանական տերմինների ծագումնաբանական քննությունը ցույց է տալիս, որ իրավական լեզվի բառապաշարի հիմնադրող կազմում են մեծ մասամբ այն տերմինները, որոնք մեզ են հասել ոսկեդարյան և միջնադարյան իրավական գրականությունից: Ինչպես սույն տերմինների, այնպես էլ առավել նոր ժամանակներում իրավատերմինահամակարգ ներթափանցած բառերի մի որոշակի խումբ լեզվի զարգացման ընթացքում, պայմանավորված տարբեր սոցիալական գործոններով, ձեռք է բերել իմաստային երանգներ, որոնք էլ դառնում են տերմինների **իմաստային փոփոխություններ**ի առաջացմանը նպատող ազդակներ: «Բարը, նրա արտահայտած իմաստն և հասկացությունը այնքանով են փոխկապակցված, որ դրանցից մեկի փոփոխությունը գրեթե միշտ հանգեցնում է մյուսի փոփոխությանը»¹⁴⁰: Յետևաբար, ինչպես իրավաբանական, այնպես էլ ցանկացած գիտության տերմինահամակարգում, **իմաստափոխությունը** ներկայացնում է հասկացության և այն անվանող տերմինի գենետիկ և պատմական բնույթը՝ լեզվի զարգացման այն

¹⁴⁰ **Смаль Л. Д.**, Некоторые вопросы семантики юридических наук, «Право и демократия»: Вып. №8, Минск, 1997, էջ 34:

ժամանակաշրջաններին համապատասխան, որոնցում բառը կրել է իմաստային փոփոխություններ:

Ըստ Անտուան Մեյեի՝ իմաստափոխության պատճառներն ունեն սոցիալական բնույթ, այսինքն բառը, պայմանավորված հասարակության զարգացմամբ, նրա՝ կյանքի վերաբերյալ փոփոխվող պատկերացումներով, ենթարկվում է իմաստային փոփոխությունների: Արդյունքում բառը գործառական ընդհանուր ոլորտից անցում է կատարում առավել նեղ ոլորտ, ինչի հետևանքով նրա իմաստը նեղանում է, իսկ հակառակ երևույթի դեպքում բառի իմաստը ընդլայնվում է¹⁴¹:

Իմաստափոխությունը ցանկացած գիտության, այս պարագայում՝ իրավաբանության տերմինահամակարգում, իբրև բառիմաստի և բառի բովանդակության զարգացման հետևանք, առաջացնում է առավել ասես **բառիմաստի նեղացում և մասնավորում, իմաստների փոխազորում, բառիմաստի ընդլայնում**:

1. Իմաստի նեղացում տեղի է ունենում հասկացության ծավալի փոքրացմամբ՝ պայմանավորված բառի գործածության ոլորտի նեղացմամբ և մասնավորմամբ¹⁴²: Իմաստի նեղացման օրինակները առավել մեծ թիվ են կազմում գիտական լեզվում՝ պայմանավորված տերմինների ստույգ, որոշակիացված իմաստով հասկացությունների արտահայտելու պահանջով: Այսպես՝ **գրավ** տերմինը, որ գրաբարյան և միջինհայերենյան իրավական աղբյուրներում գործածվել է հետևյալ նշանակություններով՝ «1. Շարժական կմ անշարժ իր, որ փոխառուն տալիս է փոխատուին իբրև ապահովութիւն իւր ստացած գումարի վճարման. գրաւ ական...4. Պայման տարբեր բաներ պնդող երկու անձի մէջ որևէ գումարով կմ իրով, ըստ որում պայմանաւ որված գումարը կմ իրը կստանայ նա, որի ասածը ճշմարիտ դուրս կգայ: Գրաւ ս դնել, ի գրաւ ս գալ, Այդպիսի պայման կապել. գրազ գալ (որ առաջ է եկել «ի գրավս գալ» խօսքից)»¹⁴³, ժամանակակից իրավական լեզվում կիրառվում է միայն առաջին նշանակությամբ, ինչի հետևանքով բառի արտահայտած հասկացության ծավալը նեղանում է:

¹⁴¹ **Мейе А.**, Введение в сравнительное изучение индоевропейских языков, Москва, 1938, էջ 18-20:

¹⁴² Տե՛ս **Աղայան Է.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 103:

¹⁴³ **Մալխաեանց Ստ.**, Յայերեն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1944, էջ 475:

Գրաբարում որպես իրավաբանական նշանակություն և արտահայտող բառ՝ **հանցավոր** տերմինը գործածվում էր հատկանիշ արտահայտող առաջնային նշանակությամբ՝ *հանցանք գործած կամ գործող, մեղավոր, օրինազանց*: Միջինհայերենյան իրավական աղբյուրներում ցանկացած հանցագործություն կատարած անձ կոչվում էր **յանցաւ որ** (կամ **մեղաւ որ**) տերմինով, այսինքն՝ **հանցավոր** բառը կիրառվում էր առարկայական նշանակությամբ: Մեջբերենք.

«Առանց դատաստանի մի՛ տուժեսցի կամ տուգանիցէ, այլ ըստ կարի լիցի՝ **յանցաւ որ** ի տէրունիսն գտեալ, իսկ այլ **յանցաւ որ** գտեալ՝ դատաւ որաւ ք վճարեսցի»¹⁴⁴:

Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարում **հանցավոր** բառը, չպահպանելով իր առարկայական նշանակությունը և նեղացնելով արտահայտած հասկացության ծավալը, գործածվում է իբրև ածական՝ հավատարիմ մնալով գրաբարյան նշանակությամբ: Ժամանակակից իրավական ակտերում այս բառն առկա է մի շարք տերմին բառակապակցությունների կազմության մեջ, ինչպես՝ *հանցավոր ճանապարհ, հանցավոր նպատակ, հանցավոր համագործակցություն, հանցավոր արարք* և այլն:

Այսօրվա իրավատերմինահամակարգում **հանցավոր** բառի առարկայական նշանակությունն արտահայտում են **հանցագործ, հանցագործություն սուբյեկտ, հանցանք կատարած անձ, դատապարտյալ, հանցագործություն մեջ մեղադրվող անձ** և այլ տերմիններ¹⁴⁵:

Իմաստի նեղացում է դիտվում նաև **գրավական** բառում: Այն գրաբարում գործածվել է *գրավ դրված իր, գրավ* նշանակությամբ՝ «Իրն եղեալ ի գրաւի. տուեալ որպէս գրաւ...»¹⁴⁶, այժմ ՀՀ օրենսդրության մեջ սույն տերմինը կիրառվում է իր առարկայական իմաստի նեղացմամբ, այսինքն՝ որպես գրավի տեսակ՝ «այն գրավը, որի առարկան անցնում է գրավատուի տիրապետմանը» (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հդ. 254):

¹⁴⁴ **Գոշ Մ.**, Գիրք դատաստանի, Երևան, 1975, էջ 32:

¹⁴⁵ «**Հայ աստանի Հանրապետության քրեական իրավունք**», ընդհանուր մաս, Երևան, 2003, էջ 171:

¹⁴⁶ «**Նոր բառգիրք հայ կազեան լեզուի**», հ. 1, Երևան, 1979, էջ 585:

Ընթերակա բառը գրաբարյան կազմություն է, արտահայտում է «Առընթեր՝ կողքը՝ մօտը գտնուող, մերձակայ, առաջիկայ, ներկայ» ընդհանուր նշանակությունը: Գործածվելով գիտական տարբեր բնագավառներում՝ բժշկություն, կրթություն, իրավաբանություն, հետևաբար ենթարկվելով իմաստային նեղացման՝ բառը ձեռք է բերել տերմինային արժեք: Իրավական խոսքում **ընթերակա** տերմինը նշանակում է *օրենքով նախատեսված դեպքերում քննում՝ զննում՝ խուզարկություն կամ ազդարկում կատարելու և մասնակից դարձվող անձ՝ քաղաքացի:*

Իմաստի նեղացման օրինակներ են մի շարք համագործածական բառեր, որոնք, գործածվելով իրավագիտության մեջ և ստանալով մասնագիտական սահմանումներ՝ մասնավորելով իրենց իմաստները, տերմինացվում և գործածվում են իբրև տերմիններ: **Օգնական** բառը, *մեկին օգնող՝ սատարող* ընդհանուր իմաստից զատ, այսօր իրավական լեզվում բառիմաստի մասնավորմամբ գործածվում է *վատառողջ լինելու պատճառով չափահաս գործունակ քաղաքացու դիմումի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ քաղաքացուն օգնելու նպատակով նշանակած անձ (եթե համաձայն է քաղաքացին)* (տե՛ս **ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հդ. 43**) նշանակությամբ:

Նմանատիպ օրինակ է **ամրություն** տերմինը: Այն՝ իբրև համագործածական բառ, արտահայտում է անհամեմատ մեծ ծավալով հասկացություն, որն իրավական լեզվում սահմանվելիս սահմանափակում է իր բովանդակային դաշտը՝ *«շինանյութի, շինվածքի, կոնստրուկցիայի, դրանց հանգույցների, հիմքերի ու հիմնատակերի ունակություն, որը թույլ է տալիս առանց քայքայվելու կրել հաշվարկային բեռներ ու ազդեցություններ»*¹⁴⁷:

Իրավաբանական տերմինահամակարգում համագործածական բառերի տերմինացման երևույթը պայմանավորված է իրավունքի՝ հասարակական տարբեր ոլորտներ կարգավորելու գործառնությունով: Յետևաբար այսպիսի տերմինների մի որոշակի բառացանկ ներկայացնենք թեմատիկ խմբավորմամբ՝ հիմք ընդունելով այն օրենսգրքերը, առանձին օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը,

¹⁴⁷ «ՀՀ օրենքը քաղաքացիության բնագավառում իրավափաստումների համար պատասխանավորության մասին», 28.04.1999, ՀՀ ՊՏ 1999.06.11/15(81), հդ. 2:

որոնցում դրանք գործածվում են՝ ստանալով մասնագիտական սահմանում: Այսպես՝

- *աշխատավարձ, երաշխիք, հատուցում, գործադրում* (տե՛ս ԶՅ աշխատանքային օրենսգիրք, գլուխ 9, 11, 20),

- *բնակարան, այգետնակ* (տե՛ս ԶՅ օրենքը գույքահարկի մասին, հդ. 4),

- *գործատու, աշխատող* (տե՛ս ԶՅ օրենքը արհեստակցական միությունների մասին, հդ. 2),

- *երեխա, մարդկանց շահագործում, գոհ* (տե՛ս ԶՅ օրենքը մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին, հդ. 4),

- *խարդախություն, կողոպուտ, հափշտակություն, շորթում* (տե՛ս ԶՅ քրեական օրենսգիրք, գլուխ 21),

- *կայունություն, հոսալիություն* (տե՛ս ԶՅ օրենքը քաղաքացիության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին, հդ. 2),

- *հանձնակատար, հանձնարարող, գնորդ, վաճառող* (տե՛ս ԶՅ քաղաքացիական օրենսգիրք, գլուխ 31),

- *հետադարձ, շրջադարձ, վազանց, արգելք, վերադասավորում* (տե՛ս ԶՅ կառավարության որոշումը ԶՅ ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին, ընդհանուր դրույթներ) և այլն:

Իմաստային փոփոխությունների հետևանք է իրավական մտքի զարգացման ընթացքում որոշ տերմինների սխալ ընկալումը:

Չակոբ Ծահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունում հանդիպում են գրաբարից ժառանգված իրավաբանական տերմիններ, որոնք, չգործածվելով իրենց բուն նշանակությամբ, ենթարկվել են իմաստային որոշակի փոփոխությունների կամ ստացել նոր իմաստ: Իհարկե այս երևույթն ունի անհատական բնույթ, և տերմիններն իրենց արտահայտած թյուր նշանակությամբ տեղ չեն գտել ոչ մի բնույթի բառարանում:

Այսպես՝ արմատի կրկնությամբ կազմված **գանգառ** բառը գրաբարում և միջին հայերենում իրավաբանական իմաստային

շեշտվածությունն չի ունեցել, նշանակել է «Տրտունջ, բողոք, դժգոհություն»¹⁴⁸: Շահամիրյանը, սույն բառին տալով իրավական նշանակություն, գործածում է *դատարան ներկայացրած գրավոր խնդրանք, պահանջ* իմաստով՝ հաճախ այս բառի փոխարեն որպես հոմանիշ գործածելով **հայ ցուածկն, հայ ցմու նք** բառերը: Մեջբերենք. «Ներքոյ դատախազն ընթերցաւ **գանգառն** գանգատողի ընդ դեմ իւր, գիտաց զամենայն զորինչ ի նմա, և այժմոյս խոնարհաբար պատասխանէ ընդ դեմ գանգատողին իւրոյ և վկայ իւք հաստատել կարէ անիրաւ արար **հայ ցուածքն** գանգատողին...»¹⁴⁹:

Այսօրվա հայ իրավական լեզվի բառապաշարում **գանգառ** տերմինը չի գործածվում վերոնշված իմաստով, այլ փոխարինվելով հոմանիշ **բողոք** տերմինով՝ կիրառվում է իր արտահայտած սկզբնական ընդհանուր իմաստի նեղացմամբ՝ *հայ ցադիմում, որը ներկայացվում է վերադաս ատյան (վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան)՝ բողոքարկելու ստորադաս ատյանի կայացրած դատական ակտը*:

Գանգառ բառի նույն իմաստային սկզբունքով Շահամիրյանը **գանգառող** տերմինը գործածել է *որևէ պահանջով դատարան դիմած անձ* նշանակությամբ (այս իմաստով ժամանակակից իրավական ակտերում կիրառվում է **հայ ցվոր** տերմինը): Ներկայիս օրենսդրության մեջ **գանգառող** բառը փոխարինվել է **բողոք բերող անձ** տերմին բառակապակցությամբ՝ հետևյալ նշանակությամբ՝ *ստորադաս ատյանի կայացրած դատական ակտը վերադաս ատյանում բողոքարկող անձ*:

Գանգառ, գանգառող բառերում առկա է իմաստի նեղացում, այսինքն՝ բառը, ունենալով իր առաջնային իմաստը, ձեռք է բերում մեկ այլ իմաստ, որը շատ շուտ մթազնում է, և արդեն ներկայիս իրավական լեզվում տվյալ բառը գործածվում է առաջնային իմաստի նեղացմամբ՝ տերմինացմամբ:

2. Իմաստափոխության հաջորդ տեսակը **իմաստների փոխաջորդումն է**, երբ կատարվում է «բառի հին իմաստի կորուստ, «մահացում» և նոր իմաստի ձեռքբերում, այլ կերպ ասած՝ բառի նախկին իմաստի փոխարինումը նոր ուղղակի իմաստով»¹⁵⁰: Արդի

¹⁴⁸ **Ղազարյան Ռ.**, Գրաբարի բառարան, հ. 1, Երևան, 2000, էջ 308:

¹⁴⁹ **Շահամիրյանց Յ.**, Որոգայթ փառաց, Թիֆլիս, 1913, էջ 226:

¹⁵⁰ **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 106:

հայ երեւնի իրավաբանական տերմինահամակարգում իմաստների փոխադրորդման օրինակները սահմանափակ են:

Դատախազ բառը հին և միջնադարյան ժամանակներում բացատրվում էր «*Ոսոխ. հակառակորդ ամբաստանօղ ի դատաստանի*»¹⁵¹ նշանակությամբ: Այս բառն անգամ առկա էր *ամբաստան* բառի բացատրությունում՝ «*դատախազ, համայն՝ իրաւացի կամ անիրաւ փաստբերելով յատենի ընդդեմ այլոյ. չարախօս, ոսոխ*»¹⁵²: Ինչ խոսք, շարադրանքը փաստում է այն, որ **դատախազ** բառը և եզրվի զարգացման վաղ շրջանում ունեցել է բացասական երանգ:

18-րդ դարում Յակոբ Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատության երկրորդ հատորում **դատախազ** բառը կիրառվեց բոլորովին այլ նշանակությամբ՝ իբրև **ամբաստանյալ, մեղադրյալ**: Մեջբերենք.

«Առ Պատուելի Դատաւորքն Յապարանի Դատաստանի ի մէջ Երևան քաղաքին:

Ձերոյ գանգատող Սարգիս Բամբակայ ձորու հողագործ ընդ դէմ **Դատախազ** (*ամբաստանյալ* նշանակությամբ) Միքայել ձկնորս վահանու, երկայնամիտլերուք»¹⁵³:

Ժամանակակից իրավաբանական տերմինահամակարգում **դատախազ** տերմինը «բեռնաթափված է» վերոնշյալ իմաստներից և գործածվում է «Օրենքի ճիշտ կենսագործման հսկողությունն իրականացնող պաշտոնյա: 2. Պետական մեղադրող դատական պրոցեսում (պրոկուրոր)»¹⁵⁴ նշանակություներով:

Գրաբարում «*Կապեալ տուրք՝ որպէս կաշառ, և սիմոնականութի. վճարք. բաժ. վարձք պաշտաման իշխանութեն առելոյ*»¹⁵⁵ իմաստով կիրառվող **կապալ** տերմինը, համապատասխան ժամանակի նոր պահանջներին, ներկայիս ՀՀ օրենսդրությունում ձեռք է բերել իրավաբանական այլ նշանակություններ՝ «1. Որևէ աշխատանք կատարելու հանձնառությունն պայմանագրային հիմունքներով՝ համապատասխան վարձատրությամբ: 2. Կալվածքի՝ շինության և այլ անշարժ գույքի ժամկետային օգտագործում պայմանագրային

¹⁵¹ «Նոր բառգիրք հայ կազեան և եզուլի», հ. 1, Երևան, 1979, էջ 600:

¹⁵² Նույն տեղում, էջ 53:

¹⁵³ **Շահամիրեանց Յ.**, Որոգայթ փառաց, Թիֆլիս, 1913, էջ 224:

¹⁵⁴ **Աղայան Էդ.**, Արդի հայ երեւնի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 279:

¹⁵⁵ «Նոր բառգիրք հայ կազեան և եզուլի», հ. 1, Երևան, 1979, էջ 1053:

հիմունքներով, վարձակալության»¹⁵⁶՝ իր արտահայտած նախկին իմաստը փոխարինելով նոր իմաստներով:

Իմաստների փոխառությունների օրինակներ են նաև ոսկեդարյան և միջնադարյան իրավական աղբյուրներում մասնագիտական նշանակությամբ գործածված մի շարք գրաբարյան տերմիններ, որոնք, ոչ միայն այսօրվա իրավական ակտերում, այլ և առհասարակ ժամանակակից հայերենում չգործածվելով տվյալ իմաստով (ինչն էլ նշանակում է իմաստի կորուստ), նոր իմաստների ձեռքբերմամբ կիրառվում են լեզվի այլ ոլորտներում, ինչպես *առե նախաւ ս, պահեստ, գրաւ ել, մահապարտք* արտերը:

5-13-րդ դարի հայ իրավական գրականության մեջ իր հաճախակի գործածությամբ առանձնացրել ենք **առե նախաւ ս** տերմինը¹⁵⁷՝ «Որ խօսի զբանս յառենի»¹⁵⁸ նշանակությամբ: Մխիթար Գոշը «Գիրք դատաստանի»-ում այսպես էր անվանում այն անձանց, որոնք, լինելով դատավորի կողքին, նրա հետ պետք է արդար վճիռ կայացնեին¹⁵⁹:

Ժամանակակից հայերենում բառի այս իմաստը հնացած է և ունի պատմական արժեք, քանի որ այն հասկացությունը, որ անվանում է բառը, բացակայում է ներկայիս իրավական դաշտում: Փոխարենը **առե նախոս** բառը ստացել է նոր իմաստ, որն է՝ *գիտական աշխատանք գրող ասպիրանտկամ հայ ցորդ*:

Եթե գրաբարում **պահեստ** բառի հիմնական իմաստն ունի իրավաբանական նշանակություն՝ «Պահումն. պահելն և իլն զգուշութ. և իրն պահելի կամ պահեալ ...»¹⁶⁰, ապա ժամանակակից հայերենում տվյալ բառի հիմնական իմաստը բոլորովին էլ չի առնչվում իրավաբանությանը՝ «1. Ապրանքներ՝ նյութեր՝ մթերքներ ևն պահելու շենք՝ սենյակ՝ շենքի բաժանմունք ևն»¹⁶¹: Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարում **պահեստ** բառը փոխարինվում է **պահամվություն** տերմինով և իբրև մասնագիտական բառ՝ դուրս մղվում հայ իրավաբանական համակարգից:

¹⁵⁶ Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 691:

¹⁵⁷ Իբրև **առե նախոս** բառի նույնանիշ՝ միևնույն ժամանակահատվածում կենսունակ գործածություններ **առե նաբան** տերմինը:

¹⁵⁸ «Բառգիրքի բարբառ հայ եւ իտալ ակամ», Վենետիկ, 1937, էջ 221:

¹⁵⁹ Տե՛ս Գոշ Մ., Գիրք դատաստանի, Երևան, 1975, էջ 10:

¹⁶⁰ «Նոր բառգիրք հայ կազեան լեզուի», հ. 2, Երևան, 1981, էջ 588:

¹⁶¹ Աղայան Էդ., նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1976, էջ 1171:

5-րդ դարից սկսած մինչ ուշ միջնադար **գրաւել** բառն իր առաջնային իմաստով՝ «1. *Գրաւ առնել՝ վերցնել մի բան*»¹⁶² և այնուհետև կիրառվել է այդ ժամանակների իրավական աղբյուրներում: Բառն արդի հայերենի բառապաշարում խիստ կենսունակ է, սակայն ոչ թե վերոնշյալ իմաստով, որն այսօր ընկալվում է իբրև հնացած իմաստ, այլ իր ունեցած և հետագայում ձեռք բերած և իրավաբանությանը չառնչվող նշանակություններով՝ «1. Իր տիրապետության տակ գցել, տիրել, տիրանալ: 2. Պետականացնել, բռնագրավել ...»¹⁶³ և այլն:

Ուշագրավ օրինակ է **մահապարտ** տերմինը: Այն 5-րդ դարից սկսած մինչ մեր օրերը հայ իրավական աղբյուրներում գործածական է *մահվան դատապարտված, մահապատժի ենթարկված* նշանակությամբ¹⁶⁴: Սակայն 2003 թվականին, երբ ՀՀ Ազգային ժողովը պատժամիջոցներից դուրս մղեց մահապատժը, սույն երևույթի հետ կապված ցանկացած բառ և արտահայտություն իրավաբանական տերմինահամակարգում կորցրեց իր տերմինային արժեքը, ինչպես **մահապարտ** բառը, որը՝ իբրև իրավաբանական տերմին, գործածվում էր որպես հատկանիշ արտահայտող բառ՝ *մահապատժի դատապարտված* նշանակությամբ: 21-րդ դարում որոշակի նպատակամղվածությամբ իրականացվող, պարբերական բնույթ կրող որոշ ահաբեկչական գործողություններ՝ հանցագործություններ, ազդակ դարձան, որ **մահապարտ** բառը վերաիմաստավորվի և կիրառվի *հանցագործ՝ իբրև ահաբեկիչ, որ դրությունն իր կախված կամ հատուկ նպատակադրված՝ պատրաստ է սեփական անձը մահվան դատապարտել* նշանակությամբ: Սույն իմաստով **մահապարտ** բառը նաև կիրառվում է **մահապարտաահաբեկիչ** բաղադրյալ կազմությամբ: Այս բառերի ակտիվ կիրառությունը հանդիպում ենք ժամանակակից և րատվական աղբյուրներում: «News.am» էլեկտրոնային թերթից կատարենք

¹⁶² Ղազարյան Ռ., Գրաբարի բառարան, հ. 1, Երևան, 2000, էջ 343:

¹⁶³ Աղայան Էդ., նշվ. աշխ., հ. 1, Երևան, 1976, էջ 262:

¹⁶⁴ 1992 թվականի օգոստոսի 16-ին Երևանում Վազգեն Սարգսյանի գորակոչով և նախաձեռնությամբ ՀՀ տարբեր շրջանների ազատամարտիկներից կազմվում է «Արժիվ-մահապարտներ» հատուկ նշանակության ջոկատը: Նշանակալից երևույթն իր արտացոլումն է գտնում նաև մայրենի լեզվում. **մահապարտ** բառը, ընդլայնելով իմաստային դաշտը, ձեռք է բերում նոր նշանակություն՝ «մարդ, որը հանուն հայրենիքի պաշտպանության պատրաստ է զոհելու կյանքը, գնալու գիտակցված մահվան»:

մեջ բերում. «Ոստիկանությունը հայ տնաբերել է Փարիզում իրեն պայ թեցրած մահապարտի բնակարանը»¹⁶⁵:

Այս իմաստային նորաբանությունը դեռևս ընդգրկված չէ ժամանակակից հայերենի ոչ մի տիպի բառարանում: **Մահապարտ** բառն իր նոր նշանակությամբ չի գործածվում որևէ իրավական ակտում: Փոխարենը ՀՀ օրենսդրությունում արտահայտվում է **ահաբեկիչ** իրավաբանական տերմինով (տե՛ս ՀՀ օրենքը ահաբեկչության դեմ պայքարի մասին, հդ. 5):

3. **Բառիմաստի ընդլայնումը** իմաստափոխության այն տեսակն է, երբ «որևէ առարկայի (երևույթի, գործողության և այլնի) հասկացությունն արտահայտող բառն իր բովանդակության մեջ է առնում նորանոր առարկաներ (հատկանիշներ, գործողություններ և այլն), որով և ընդարձակվում է հասկացության ծավալը կամ նոր իմաստներ են առաջանում»¹⁶⁶: Այսպես՝ **կարճել** բառը, ժամանակակից հայերենում պահպանելով 1. *կարճացնել*, 2. *կրճատել*, *համառոտել* նշանակությունները, իրավաբանական տերմինահամակարգում ձեռք է բերել **գործի վարույթը ավարտել**, **վերջացնել**, **դադարեցնել** նոր իմաստը: Մեջբերենք. «Հարկադիր կատարողը կատարողական վարույթը **կարճում է**, եթե՝ ...10) *հայցը թողնվել է առանց քննության կամ մերժվել է....*» (ՀՀ օրենքը դատական ակտերի հարկադիր կատարման մասին, հդ. 42):

Նույնպիսի օրինակ է **նոստր (նոստր)** տերմինը: Այն գրաբարում գործածվել է «*Նշանադիր. գրիչ. դպիր արքունի կամ եկեղեցական. գրագիր*»¹⁶⁷ իմաստով, ժամանակի ընթացքում տեղի է ունենում իմաստային զարգացում, և աշխարհաբարում **նոստր** բառը իր արտահայտած հասկացության ծավալի ընդլայնմամբ նոր նշանակություն է ձեռք բերում՝ «*Պաշտոնեայ, որի պարտաւ որոն թիւ նն է վաճառման, գրաւի, կտակի և նման իրաւ քանական ակտեր կատարել, իւր մատենի մէջ մոլծել և նրանցից ընդօրինակութիւ ններ տալ, վաւերացնել ակտերը, ստորագրութիւ ններ, աւ անդի դրված փաստաթղթերը պահել և ն*»¹⁶⁸:

¹⁶⁵ <http://news.am/arm/news/296674.html>:

¹⁶⁶ **Աղայ ան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն և, Երևան, 1984, էջ 102:

¹⁶⁷ «**Նոր բառգիրք հայ կազեան և եզունի**», հ. 2, Երևան, 1981, էջ 441:

¹⁶⁸ **Մալ խառեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 498:

Հայ իրավական լեզվի բառապաշարի զարգացման ընթացքում իրավական որոշ հասկացություններ «հասարակայնացվելով» ընդլայնում են իրենց արտահայտման ծավալը և վերածվում համագործածական բառերի: Տվյալ բառը՝ իբրև տերմին շարունակում է իր իմաստային եզակի գործառնություն կիրառվել իրավաբանական տերմինահամակարգում, իսկ որպես հայերենի ընդհանուր բառ՝ լեզվի համագործածական բառապաշարում ձեռք է բերում հոմանիշային, հակահիշային, այլ կերպ ասած՝ իմաստաբանական այլ հատկանիշներ: Այսպես՝ **օրենք** բառը դեռևս հայերենի զարգացման վաղ փուլերում (նախագրային և ոսկեդարյան շրջաններ) գործածվել է որպես բոլորի համար անխախտելի հասկացությունների անվանում, ինչպես՝ «կարգ ու կանոն, հին և անդուր թիւն, իրաւ ունք, օրինագիրք, բարք, կրօն»¹⁶⁹: Ժամանակակից հայերենում **օրենք** բառը, ունենալով իր մասնագիտական հստակ սահմանումը՝ *առավել կարևոր, բնորոշ և կայուն հասարակական հարաբերություններ կարգավորող, իրավական ուժ ունեցող ակտ՝ ընդունված ՀՀ Սահմանադրությանը համապատասխան՝ հանրաքվեի միջոցով կամ ՀՀ Ազգային ժողովի կողմից (տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հդ. 9)*, առօրյա-խոսակցական լեզվում հասկացության ծավալի ընդլայնմամբ ձեռք է բերել առավել ընդհանուր իմաստներ՝ 1. *անառարկելի կարգադրություն՝ հրաման՝ հանձնարարություն*, 2. *բոլորի կողմից ընդունված կարգ՝ կանոն*:

Իրավունք բառը գրաբարում նշանակել է «Որպես արդարութի. արդար և ուղիղ դատաստան. իրաւացի և արդարացի ինչ. կանոն և օրենք ուղղութե»¹⁷⁰: Արդի հայերենի իրավաբանական տերմինահամակարգում բառը գործածվում է մասնագիտական հետևյալ նշանակությամբ՝ «Պետության կողմից սահմանվող ու պաշտպանվող և հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմաների ամբողջություն»¹⁷¹: Ներթափանցելով լեզվի գործառնական տարբերություններ՝ **իրավունք** բառը ընդլայնում է իր բովանդակային դաշտը և ժամանակակից հայերենի բառապաշարում ընկալվում նաև որպես համագործածական բառ 1. *որևէ ձևով*

¹⁶⁹ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 617:
¹⁷⁰ «Նոր բառգիրք հայ կազեան լեզունի», հ. 1, Երևան, 1979, էջ 872:
¹⁷¹ Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 509:

գործելու ազատություն՝ արտոնություն, 2. հիմք, օրինական պատճառ, հիմունք, 3. թույլ տվողություն նշանակություններով:

Իմաստի ընդլայնման նույնաբնույթ օրինակ է **դատքառը**: Լեզվի զարգացման վաղ ժամանակներից սկսած՝ այն գործածվել է իբրև հայ իրավունքի հասկացության անվանում՝ *դատավարություն* նշանակությամբ: Բառը, աստիճանաբար մտնելով հասարակության առօրյա-խոսակցական բառապաշար, ձեռք է բերել նաև 1. *դատաստան*, 2. *արդարացի հատուցում* նշանակությունները:

Իրավական լեզվի բառապաշարի բավականին տևական գործածություն ունեցող բառերից է **պարիժ** տերմինը: Այն գրաբարում կիրառվում էր իբրև մենիմաստ բառ՝ «*Յանցանքի համար մեղաւորի նկատմամբ կիրառուող միջոց, որևէ արարքի՝ մեղքի ծանր հատուցում, պատուհաս, տանջանք*»¹⁷²: Ժամանակակից հայերենի իրավական լեզվում **պարիժ** բառը շարունակում է գործածվել տվյալ ժամանակների իրավական մտածելակերպին համապատասխան գիտական սահմանմամբ՝ «*պետական հարկադրանքի միջոց, որը դատարանի դատավճռով պետության անուսից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ սահմանափակմամբ*» (ՀՀ քրեական օրենսգիրք, հդ. 48): Այն, գործածվելով նաև առօրյա-խոսակցական լեզվում, հետևաբար ընդլայնելով իմաստային դաշտը, ձեռք է բերում նոր՝ փոխաբերական իմաստներ՝ 1. *զրկանք, ձախորդություն*, 2. *զլ խացավանք, փորձանք*¹⁷³:

Փաստորեն իրավաբանական տերմինների մի որոշակի խումբ, ենթարկվելով հասարակության և լեզվի փոխհամաձայնեցված պահանջներին, ձեռք է բերում նորանոր ընդհանրական իմաստներ, որի արդյունքում տերմինները ժողովրդախոսակցական լեզվում ստանում են համագործակցական բառի արժեք: Իմաստափոխության այս երևույթը մասնավորապես պայմանավորված է իրավաբանական հասկացությունը փոխաբերական իմաստով ընկալելու հիմունքով,

¹⁷² **Ղազարյան Ռ.**, Գրաբարի բառարան, հ. 2, Երևան, 2000, էջ 393:

¹⁷³ Տե՛ս **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1976, էջ 1189:

ինչի հետևանքով մասնագիտական բառն ստանում է իմաստային և ոճական նոր որակներ¹⁷⁴:

Ամփոփելով արդի հայերենի իրավաբանական տերմինների իմաստագործառական առանձնահատկությունների վերաբերյալ շարադրանքը՝ կատարենք հետևյալ եզրահանգումները.

1. Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարը, պայմանավորված այլ գիտությունների մասնագիտական բառերի որոշակի օգտագործմամբ, հասարակական տարբեր ոլորտներում իր ներկայությունամբ՝ իբրև դրանք կարգավորող գործոն, ընդգրկում է բազմառոտ և բազմաբովանդակ տերմիններ, որոնք արտահայտում են կյանքի տարբեր բնագավառներ ներկայացնող հասկացություններ:

2. Արդի հայերենի իրավաբանական տերմինահամակարգում առկա են բազմիմաստ և հոմանիշ տերմիններ, որոնց նպատակային գործածման համար ՀՀ օրենսդրությունում սահմանվել են համապատասխան կանոններ: Եթե հարցը մասնագետների համար լուծված է, ապաստվորական քաղաքացու համար շարունակում է մնալ խնդիր, քանի որ նա մասնագետի պես պարբերաբար չի առնչվում սույն տերմինների հետ կապված խնդիրների: Հետևաբար բազմիմաստ և հոմանիշ տերմինների ոչ ճիշտ կիրառումը հաճախ է պատճառ դառնում իմաստային խախտումների, սահմանումների աղավաղումների, գուճահեռությունների, կրկնաբանությունների և այլ բացասական երևույթների: Խնդրի լուծման համար տերմինաբանությունը տալիս է **1 հասկացությունը 1 բառային ձև սկզբունքը**:

3. Ժամանակակից իրավական ակտերում ակտիվ կիրառություն ունեն իմաստով կամ ձևով նման տերմիններ, որոնց մեկը մյուսի փոխարեն գործածելը ստեղծում է իրավական խոսքի անճշտություն: Այդ տերմինները ինչպես գրաբարից, միջին հայերենից ժառանգած, այնպես էլ նոր ժամանակներում կազմված բավականին հաջողված բառեր են: Ուստի խնդրի լուծման ճիշտ տարբերակ է, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի օրենսգրքերի, մասնագիտական

¹⁷⁴ Сичинава Н., Переносное употребление юридических терминов в общелитературном языке, «Язык и право: актуальные проблемы взаимодействия» II Международная научно-практическая Интернет-конференция, 2012 // <http://www.ling-expert.ru/conference/langlaw2/sichinava.html>:

դասագրքերի, ամսագրերի, հաղորդումների, համացանցի պաշտոնական կայքերի և այլ աղբյուրների միջոցով գոնե որոշակի պատկերացում ունենադրանցով արտահայտված հասկացությունների վերաբերյալ :

4. Իրավաբանական տերմինահամակարգը և հայերենի համագործածական բառապաշարը գտնվում են փոխադարձ կապի և փոխներթափանցման գործընթացում: Մի կողմից ընդհանուր լեզվի բառը վերածվում է իրավաբանական տերմինի՝ ենթարկվելով տերմինացման, մյուս կողմից կատարվում է ապատերմինացում, այսինքն՝ իրավաբանական տերմինը վերածվում է համագործածական բառի: Յետևաբար առաջին դեպքում տեղի է ունենում բառի գործածության ու որտի նեղացում (բառիմաստի նեղացում), երկրորդ դեպքում՝ բառի գործածության ընդլայնում (բառիմաստի ընդլայնում):

5. Արդի հայերենի իրավաբանական բառապաշարում հիմաստափոխությունը ներկա է իր երեք տեսակներով, առավել ապես հիմաստային նեղացմամբ. երևույթ, որ բնորոշ է ցանկացած գիտության տերմինահամակարգի, քանի որ տերմինաբանության պահանջով տերմինները պետք է արտահայտեն հասկացության որոշակիացված և ոչ ընդհանուր հիմաստ:

Իմաստափոխության ենթարկված իրավաբանական տերմինները հիմնականում գրաբարից և միջին հայերենից մեզ իբրև ժառանգություն անցած, ինչպես նաև համագործածական բառաչերտից համալրված, տերմինային արժեք ձեռք բերած բառեր են:

ԳԼՈՒԽ 3.

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՇԵՐՏԱԲԱՆԱԿԱՆ և ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1.

Արդի հայերենի իրավաբանական տերմինների շերտաբանական վերլուծություն

Հայ իրավական լեզվի բառապաշարը հայերենի զարգացման փուլերում (հին, միջին և նոր գրական հայերեն) ձևավորված բառաշերտերի միասնական և կոռն համակարգ է: Իր անցած յուրաքանչյուր շրջափուլում բառապաշարը համալրվում է իրավական նորանոր հասկացությունների անուններով: Հետևաբար ներկայիս իրավաբանական տերմինները իրավական մտքի զարգացման տարբեր փուլերի և լեզվական տարբեր շերտերի բառային միավորներ են, որոնք դասակարգում ենք հետևյալ բառաշերտերով՝

1. **Ընդհանուր հայերեն տերմինների շերտ**
2. **Հին կամ գրաբարյան բառերի շերտ**
3. **Միջինհայերենյան բառերի շերտ**
4. **Աշխարհաբարյան բառերի շերտ**

§1. Ընդհանուր հայերեն տերմինների շերտ

Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարի հիմնաշերտը մեծ մասամբ գրաբարից ժառանգած բառեր և բառաձևեր են, որոնք մեզ են հասել ոսկեդարյան և միջնադարյան իրավական գրականությունից¹⁷⁵ և այսօր մնայուն ու անփոխարինելի արժեքներ են հայ իրավական մտքի զարգացման գործընթացում: Այս բառերը նույն կամ իմաստային աննշան փոփոխմամբ գործածվել են իրավաբանական տերմինների բառապաշարի զարգացման բոլոր շրջափուլերում՝ ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում, ժամանակակից գրական հայերենի՝ արևելահայերեն և արևմտահայերեն տարբերակներում, օրինակ՝ *ժառանգ*, *կտակ*, *վկա*, *վճիռ*, *վնաս*, *գանձ*, *դատ*, *դատավոր*, *դատախազ*, *գանձ*, *գրավ*, *տոյան* և այլն:

Առարկայական իմաստ արտահայտող տերմիններից բացի՝ գրաբարը ժառանգություն է թողել նաև գործողություն անվանող բայական տերմիններ, ինչպես՝ *դատել*, *վճռել*, *դատապարտել*, *ժառանգել*, *քննել*, *սպացուցել*, *վկայել* և այլն:

¹⁷⁵ Տե՛ս եկեղեցական կանոններ, **Դավիթ Ալակատրդի**, «Կանոնագիրք», **Միխայր Գոշ**, «Դատաստանագիրք», **Սմբատ Սպարապետ**, «Դատաստանագիրք», **Ներսես Շնորհալի**, «Թուղթընդհանրական» և այլն:

Ընդհանուր իրավաբանական տերմիններում քիչ չեն բաղադրյալ կազմությունները, որոնցից են՝ *սպանություն, վկայություն, հանցավոր, դատապարտություն, իրավարար, փոխառու, փոխատու* և այլն:

Այս խմբի բառերը լայն կիրառություն ունեն ՅՅ իրավաբանական ցանկացած գրությունում, փաստաթղթում և օրենսգրքում, անգամ դրանց մի մասը հիմք է հանդիսանում բառային նորմիավորների կազմությանը:

Ընդհանուր հայերեն տերմինների բառաչերտն ընդգրկում է նաև գրաբարյան քարացած ձևեր, որոնք ժամանակակից հայերենում ընդունվում են իբրև ինքնուրույն բառեր:

Իրավաբանական տերմինահամակարգում գրաբարյան քարացած ձևերից պահպանվել են.

1. **առ, զ** նախդիրներով կազմված մի քանի տերմիններ, ինչպես՝ *առերես, առարկել, օրինազանցություն*,

2. տերմիններ՝ կազմված գրաբարյան որոշ հոլովածներից՝ մեծ մասամբ արտահայտված հոգնակի թվով՝ որպես բառակազմական հիմք.

ա) եզակի գործիական հոլովը **բ** վերջավորությունամբ՝ *ծերբակալել, ծերբազատել*,

բ) հոգնակի ուղղական հոլովը **ք** վերջավորությամբ, որը դարձել է ժամանակակից հայերենի կենսունակ ածանցներից մեկը՝ *օրենք, բաժանմունք, իրավունք, մեղք, հանցանք, կաշառք, տուգանք*,

գ) հոգնակի հայցական հոլովը **ս** վերջավորությամբ՝ *օրենսդիր, օրենսգետ*:

Յարկ է նշել, որ իրավական լեզվի զարգացման աշխարհաբարյան բառաչերտում այս և նման այլ բառերի համաբանությունամբ կազմվել են նորանոր իրավաբանական տերմիններ, ինչպես *մեղսակցել* և *մեղսագիտակ* բառերը, որոնք իրենց բացատրություններով չենք գտնի գրաբարյան և միջինհայերենյան ոչ մի բառարանում:

դ) եզակի գործիական և հոգնակի ուղղական հոլովների վերջավորությամբ կազմված *իրավունք* բառը¹⁷⁶,

¹⁷⁶ Հոգնակի գործիական հոլովածնի մեկ օրինակի ենք հանդիպել, որը գործածվում է հայերենի միայն արևմտահայերեն տարբերակում. այն է՝ **օրինօք**՝ «*Օրենքով, ըստ օրենքի*» նշանակությամբ (տե՛ս **Սարափտյեան Ռ.**, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երեւան, 2011, էջ 374):

3. Գրաբարի անցյալ, ենթակայական դերբայների **-եալ** և **-ող** վերջավորություններով կազմված բառեր, ինչպես՝ *կասկածյալ, մեղադրյալ, ամբաստանյալ, դատապարտյալ, մեղադրող, տուժող* և այլն:

Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում գրաբարի անցյալ դերբայի **եալ** վերջավորությունը կիրառելի է և արևելահայերենում արտահայտվում է հարակատար դերբայի **-ած** քերականական ձևությամբ: Մեջբերենք. «Ֆրանսիացի դատախազ մը ԲԱԿ-ի գործիչներուն սպանութեան հարցով **ձերբակալ եալ ին** ինքնութիւնը կը հրապարակէ» («Ազդակ» օրաթերթ, Բեյրութ, հունվարի 23, 2013):

§2. Հին կամ գրաբարյան բառերի շերտ

Իրավական լեզվի բառապաշարում այս բառաշերտի առկայությունը պայմանավորված է երևույթների վերացման կամ հասկացությունների հնացման հանգամանքով, ուստի դրանք լեզվական քննության ենթ ենթարկում՝ հիմք ընդունելով ակադեմիկոս Էդ. Աղայանի տարբերակած հնաբանությունների երկու տեսակները՝ **սպառնաբառեր** և **հնացած բառեր**¹⁷⁷: Հավելենք, որ գրաբարյան շերտի բառերը գործածվել են նախաաշխարհաբարյան ժամանակաշրջանում, այսինքն՝ դրանք զետեղված են ինչպես ոսկեդարյան, այնպես էլ միջնադարյան իրավական աղբյուրներում:

Գրաբարյան բառաշերտի իրավաբանական սպառնաբառեր անվանում են մինչև 11-12-րդ դարերին հատուկ, սակայն ներկայումս գոյություն չունեցող իրույթներ, սովորույթներ, գաղափարներ և այլն:

Հայ իրավունքը նախաաշխարհաբարյան շրջանում դրսևորվում էր հիմնականում իր երկու ճյուղերով՝ քաղաքացիական և քրեական, որոնք դեռևս տարբերակված չէին, ուստի գրաբարյան (նաև միջինհայերենյան) բառաշերտի տերմինները, այս դեպքում՝

¹⁷⁷ **Պառնաբառ** և **հնացած բառ** անվանումները մեր քննարկվելիք նյութում պայմանական են, քանի որ այդ խմբերը ընդգրկում են ոչ միայն բառեր, այլև կայուն բառակապակցություններ:

պատմաբառերը այդ ճյուղերը և դրանց ենթաճյուղերը ներկայացնող հասկացողությունների անվանումներ են, ինչպես՝ **վարձանք, տուայր**¹⁷⁸, **պռոյգ** (օժիտ), **ժառանգապահ** (հայրական ժառանգությունը պահող ժառանգները՝ որդիները), **հայրենիք** (հայրական կալվածք՝ սեփականություն), **սիմոնակամուխիլ և, աստուածամարտուխիլ և, անասնագիտուխիլ և** (հանցագործության անվանումներ), **ձեռնատումն, հատանել առականք, նշան դնել** (պատժի անվանումներ)¹⁷⁹, **առենաբան** (այն անձը, «1. որ խօսի գբանսյ առենի: 2. Որյ առենի վարէ գդատուրուք»¹⁸⁰) և այլն:

Լեզվաբան Էդուարդ Աղայանը այսպիսի պատմաբառերը անվանում է *պատմագիտական նշանակություն ունեցող գրաբարյան բառեր*¹⁸¹:

Յնացած են գրաբարյան իրավաբանական նշանակություն ունեցող այն բոլոր բառերը, որոնք, գործածվելով իրավական մտքի զարգացման 5-16-րդ դարերում, այսօր դուրս են եկել գործածությունից՝ փոխարինվելով այլ բառերով կամ բառային այլ ձևերով: Յնացած բառերի այս տեսակը լեզվաբան Լևոն Եզեկյանը անվանում է **բուև հնաբանություններ**¹⁸²:

Յամաձայն Էդուարդ Աղայանի տեսակային տարբերակմանը՝¹⁸³ իրավաբանական հնացած տերմիններն առանձնացնում ենք հետևյալ տեսակներով.

¹⁷⁸ **Տուայր** տերմինի ծագումնաբանությունը Յրաչյա Աճառյանը կապում է ֆրանսերեն *douaire* բառի հետ, որը նշանակում է «այրիության ժամանակ ապրուցելու համար ամուսնու տուած ինչքը իր կնոջ», այնուհետև ավելացնում, որ վերջինիս նախահիմքը եղել է լատիներեն «dos, dotis «նուէր, օժիտ» բառը: Յայերենում **տուայր** տերմինը նշանակում է «վարձանք, փեսի տուած օժիտը հարսին» (տե՛ս **Աճառյան Յր.**, Յայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 423-424):

Սմբատ Սպարապետն այս տերմինին զուգահեռ նույն նշանակությամբ գործածում է արաբերենից փոխառված **մահր** բառը, որը բառարանում բացատրվում է «զտուայրն, որ է մահր» (տե՛ս «**Նոր բառգիրք հայ կազեան և եզուխ**», հ. 2, Երևան, 1981, էջ 198: **Սպարապետ Ս.**, Դատաստանագիրք, Երևան, 1958, էջ 86):

¹⁷⁹ **Ձեռնատումն** տերմինով արտահայտված պատիժը կիրառվում էր անվայել պահվածք ցուցաբերած կնոջ, տուն հրդեհողների նկատմամբ, իսկ անասնապիղծներին ու արվամուլներին պատժում էին սեռական օրգանների հատումով (**հատանել առականք**): Մահացածներ կողոպտող անհավատների վրա **նշան (խարան) էին դնում**, որ հանցանքի կրկնման դեպքում ենթարկվեին մահապատժի. «Ու **դնեն ի յինք նշան**, որ՝ թե այլ այն է՝ նամեռնի, եւ կամ զինք կենդանի թաղեն, ու կամ ի զընդան կենայ ու մեռանի» (տե՛ս **Սպարապետ Ս.**, Դատաստանագիրք, Երևան, 1958, էջ 144):

¹⁸⁰ «**Բառգիրք ի բարբառ Յայ եւ Իսպական**», Վենետիկ, 1837, էջ 221:

¹⁸¹ Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 138:

¹⁸² Տե՛ս **Եզեկյան Լ.**, Ոճագիտություն, Երևան, 2006, էջ 129:

¹⁸³ Տե՛ս **Աղայան Էդ.**, նշվ. աշխ., էջ 205:

ա) Ձևական – ձևաբանական հնացած բառեր, որոնց մեջ փոխվել է բառի ձևը՝ հնչյունական զանազան փոփոխություններով՝ *հատուցանել (հատուցել)*, *ծանուցանել (ծանուցել)*, կամ բառի ձևաբանական կառուցվածքը, ինչպես՝ *դատաստանագիրք – օրենսգիրք*, *դատակնիք - դատավճիռ*, *վաճառ*, *տուրելառ - առուվաճառք*, *դատան/ք/ - դատ*, *դիակողոպուտ - դիակապտություն*, *փոխ - փոխառություն*, *դատակնքել - դատավճիռ կայացնել* և այլն:

բ) Բառային հնաբանություններ, որոնք փոխարինվել են բոլորովին այլ բառերով, ինչպես՝ **ազատութեան թուղթ** կամ **գիր ապահարզանի** - *ամուսնալուծության վկայական*, **արենագիր** - *դատական արձանագրություն*, **արենադար** - *դատական նիստերի քարտուղար*:

գ) Իմաստաբանական հնացած բառեր, որոնց արտահայտած իրավաբանական իմաստն այլևս չի պահպանվել, սակայն այսօր իրենց այլ նշանակություններով գործածական են կյանքի տարբեր ոլորտներում, ինչպես՝ **ապաշխարություն**, **նզովք** բառերը, որոնք գրաբարյան և միջինհայերենյան իրավական աղբյուրներում գործածվել են *եկեղեցական պատիժ* իմաստով, **դատողությունը**՝ *դատավարություն*, **երդումը**՝ *դատարանում ծայրահեղ դեպքերում անձի խոսքը ճշտելու և հավատալու միջոց*¹⁸⁴, **կնաթողությունը**՝ *ամուսնալուծության հանցագործություն*, **կանոնը**՝ 1. *եկեղեցական օրենք*, 2. *վճիռ*, **անասնաբույությունը**, **արվամուլությունը**՝ *հակաբնական ձևով բավարարություն* *պատճառող հանցագործություններ* իմաստներով:

Իմաստաբանական հնաբանության լավագույն օրինակ է **դատաստան** բառը, որի 1. *դատ*, *դատավարություն*, 2. *դատավճիռ*, 3. *դատապարտություն*, *պատիժ* իրավաբանական նշանակությունները այլևս կիրառելի չեն ներկայիս ՀՀ օրենսդրության մեջ: Փոխարենը բառը գործածվում է ժողովրդախոսակցական լեզվում *երկնային դատաստան*՝ *պատիժ* նշանակությամբ:

Իմացաբանական հնաբանությունները որպես այդպիսին դիտվում են միայն արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարում: Հավելել է նաև, որ բառերի հնացած իմաստները կարող են

¹⁸⁴ Երդվելուց հետո անպայման կատարվում էր **ապաշխարություն**:

նաև պատմական իրողություններ ցույց տալ : Այդ դեպքում տվյալ իմաստով բառը ընկալվում է նաև պատմաբան :

§3. Միջինհայերենյան բառերի շերտ

Չայ իրավական լեզվի բառապաշարը միջինհայերենյան փուլում համալրվում է բավականին ընդգրկուն բառաշերտով : Երևույթը պայմանավորված էր հզոր Կիլիկյան թագավորության գերակայությամբ, որի օրենսդրական կյանքը կարգավորվում էր Սմբատ Սպարապետի օրենքների ժողովածուով՝ «Դատաստանագրքով» :

Միջինհայերենյան իրավաբանական տերմինները ստեղծվել և փոխառվել են 12-16-րդ դարերում և կիրառվել տվյալ ժամանակաշրջանում գրված հայկական իրավական աղբյուրներում :

Այս բառաշերտի տերմինները չեն գործածվում ներկայիս իրավական լեզվի բառապաշարում և դիտվում են որպես հնացած բառեր, որոնք, ինչպես գրաբարյան բառաշերտի բառերը, բաժանվում են **սպառնաբառերի և հնացած բառերի** :

Միջինհայերենյան պատմաբառերը առավել ապես արտահայտում են այնպիսի հասկացություններ, որոնք բնորոշ են իրավունքի **ա) քաղաքացիական ճյուղին և նրա ենթաճյուղերին**, ինչպես՝ **ապրեր, բաժ, նեհ** (հարկի տեսակներ), **բերանբացուկ** (ամուսնության առաջին գիշերը փեսայի՝ հարսնացուին տված որևէ թանկարժեք իր, որպեսզի կինը բարեհաճեր խոսել ամուսնու հետ), **կոգնատ** (արական գծով ժառանգում), **ագնատ** (իգական (մայրական) գծով ժառանգում), և **բ) քրեական ճյուղին**, ինչպես՝ **ասուլածածափուլթիլն, երկրորդ ձեռնադրուլթիլն** (հանցագործության անվանումներ), **արեան գին** (աշխարհիկ պատժի անվանում), **արբանեակ վկայի**¹⁸⁵ և այլն :

Միջինհայերենյան իրավաբանական հնացած տերմինները, ինչպես գրաբարյան հնացած բառերը, բաժանվում են հետևյալ տեսակների՝

¹⁸⁵ Դեռևս վաղ ժամանակներում, միջնադարում ևս կանայք գրկված էին դատարանում վկայություն տալու իրավունքից, նրանց վկայությունը հաղորդվում էր վստահելի անձանց միջոցով, որոնց դատավարության ժամանակ անվանում էին **արբանեակ վկայի** :

ա) Ձևական - ձևաբանական հնացած բառեր, ինչպես՝ *պոման - պայման, դատաստանել - դատել, գրաւ կան - գրաւ, գրաւ կնել - գրաւ դնել՝ տալ՝ վերցնել, սուտ վկայ ու թիւն տալ - սուտ ցուցմունք տալ, ատեան դատաստանի - դատական ատյան, դատաստան դատաստանի - դատավճիռ և այլն:*

Մի շարք հարադիր հնաբանություններ այսօր արտահայտվում են 1 բառով, օրինակ՝ *երաշխաւ որու թիւն տալ - երաշխավորել, կալ անաւ որ առնել - կալ անավորել, մուծանել ի բանտ - բանտարկել, ազատագրկել:*

Ձևաբանական հնացած բառեր են գրաբարյան **դատապարտել ի մահ** և միջինհայերենյան **մահուամբ դատել, մահով մեռանիլ** կամ **մահու դատաստան լինել** բայական կազմությունները, որոնք այսօր արտահայտվում են մեկ բառով. այն է՝ **մահապարիժ**¹⁸⁶:

բ) Բառային հնաբանություններ: Միջինհայերենյան հնացած բառերի այս խումբը բավականին ծավալուն է, այն ընդգրկում է ինչպես բառեր՝ **դատաստնվոր - հայցվոր, դարպա, ապրան - դատարան**¹⁸⁷, **դիպթեկ** կամ **տիպթիկ - կտակ, ըռըջ ֆաթ - կաշառք, մեղացու, մեղկան, արեւապարտ - հանցագործ, անընկմահ - ոչ բնական մահով մահացած, ինքնասպան, սազայ - գույքի բռնագրավում**, այնպես էլ բառակապակցություններ և հարադրություններ՝ **զնայ ու նիրք - շարժական գույք, դիպթեկ այնել - կտակել, զօրութիւն ու նենալ - իրավասություն ու նենալ, իրաւ ու նք այնել - դատավճիռ կայացնել, դարպա բռնել - դատ բացել, կանոնական դատաստան - վճիռ**¹⁸⁸, **կամայ յանցանք - դիտավորությամբ կատարված հանցագործություն**,

¹⁸⁶ **Մահապարիժ** տերմինը ներկայիս իրավաբանական գիտություններում կորցրել է իր տերմինային արժեքը, քանի որ բառը և երևույթը այլևս կիրառելի չեն ՀՀ օրենսդրությունում սկսած 2003 թվականից: Քրեական նոր օրենսգրքի համաձայն՝ մահապարիժն փոխարինել է ցմահ բանտարկությունը:

¹⁸⁷ Միջին հայերենում **դարպա (դարապա)** բառը իր այլ իմաստներին զուգահեռ գործածվել է նաև **դատարան** նշանակությամբ: Այս բառը, ըստ ծագման, պահլավական փոխառություն է, որի բացատրության մեջ նշվում է «պալատ, ապարանք» նշանակությունը: Հնագույն ժամանակներում հայ կական դատավարությունը տեղի էր ունենում հիմնականում թագավորական պալատներում: Դատավորը պետք է լիներ թագավոր կամ իշխան: Ուստի այս հանգամանքն էլ հիմնավորում է **դարպա-ապրան-դատարան** բառերի նույն իմաստկիրառությունը:

¹⁸⁸ Միջնադարում հոգևոր և աշխարհիկ դատավորների արձակած վճիռները արտահայտված են տարաբնույթ տերմիններով: **Կանոն, կանոնական դատաստան** տերմիններով են կոչվում հոգևոր դատարանի ընդունած վճիռները, իսկ աշխարհիկ դատարանի վճիռները՝ **դատաստան, վճիռ դատա որի** տերմիններով (տե՛ս **Սպարապետ Ս.**, Դատաստանագիրք, Երևան, 1958, էջ 163: **Գոշ Մ.**, Գիրք դատաստանի, Երևան, 1975, էջ 149):

ակամայ յանցանք - *անզգուշու թյամբ կատարված հանցագործությունն, ըմբռնել անձն կամ ըստացուածքն [պարտականին] - կալ անքի տակ պահել [պարտապանի] անձը կամ ունեցվածքը և այլն:*

Միջինհայերենյան իրավական լեզվի բառաշարտում նկատվում է հոմանիշ բառերի ակտիվ գործածությունն: Այսպես՝ հոմանիշային շարք են կազմում **ազտել, արծազել, ապահարզել, բաժնվել, ի վորթման թողուլ** տերմինները, որոնք արտահայտում են *ամուսնալուծվել* բառի իմաստը, կամ **քիթ լինիլ** և **չմռել** բառերը՝ *դատական պատասխանատվություննից ազատվել* նշանակությունը: Հոմանիշ բառերի շարք են կազմում նաև **օրենք - անսիզ, գանկատ - ջալ ունջ** բառերը:

Իրավաբանական տերմինների միջինհայերենյան բառաշարտում առանձնացրել ենք նաև մի քանի հականիշ բառեր, որոնք կարելի է դիտել որպես հակադրական հականիշներ, օրինակ՝ **բլայթել «դատվարել» - ֆայլել «դատը տանուլ տալ», հառնեզ «անշարժ գույք» - գուժազ «շարժական գույք», ջատել «պառժել» - չմռել «դատական պատասխանատվություննից ազատմնալ»¹⁸⁹:**

գ) Իմացաբանական հնաբանություններ. այսպիսի հնաբանություններ են միջնադարում *կրոնական հանցագործությունն* իմաստով գործածված **աստուածանարգում** բառը, ինչպես նաև՝ **չկարել այլ պատարագ այնել, ձգել ի կարգէն** կապակցությունները՝ *եկեղեցական պատիժ* նշանակությամբ: Ներկայիս իրավական լեզվի բառապաշարում այս լեզվական միավորները այլևս կիրառելի չեն: **Չկարել այլ պատարագ այնել, ձգել ի կարգէն** կապակցությունները, ժամանակակից հայերենում փոխարինվելով համապատասխան բառային միավորներով, **աստվածանարգում** բառի հետ գործածվում են լեզվի այլ ոլորտներում:

§4. Աշխարհաբարյան բառերի շարտ

¹⁸⁹ Տե՛ս **Մուշեղյան Ա.**, Հայ կական դատաստանագրքերի բառապաշարը միջնադարում, «Լեզու և լեզվաբանություն», 1-2(13), 2015, էջ 48:

17-18-րդ դարերում կատարված անգլիական և ֆրանսիական հեղափոխությունները դարձան մարդկային իրավաբաղադրյալ գիտակցության նոր կարծրատիպեր: «Յենց այս ժամանակաշրջանից է սկսվում ժամանակակից իրավական պետության հաստատման գործընթացը, որը հենվում է դեմոկրատիայի, օրինականության, ներկայացուցչական կառավարման, ազատ ձեռներեցության չափանիշներով առաջնորդվող քաղաքացիական հասարակության վրա»¹⁹⁰:

Հայ իրավական մտքի զարգացումը 18-րդ դարում, որը նաև իրավաբանական տերմինների աշխարհաբարյան բառաչերտի ձևավորման շրջափուլն էր, շարունակվում է հայկական գաղթօջախներում, մասնավորապես Մադրասում լույս տեսած, գրաբարյան հայերենով շարադրված Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» (1772 թ.) և Հակոբ Ծահամիրյանի «Տետրակ որ կոչի նշավակ», «Որոգայթ փառաց» աշխատություններում: Սրանք ազգային-ազատագրական շարժման հայ գործիչների իրավաբաղադրյալ մտքի արտացոլանքն են՝ ուղղված հայկական պետականության վերականգնմանը:

Հայ իրավունքի պատմության մեջ հատկանշանակ է «Որոգայթ փառաց» իրավական նորմերի ընդարձակ ժողովածուն, որն ընթերցողին է ներկայանում ինչպես նոր իրավամտածողությամբ, այնպես էլ իրավական խոսքի գիտական ոճի շեշտվածությամբ: Վերջինս պայմանավորված է օրենքներն ու հոդվածները հստակ շարադրելու, պայմանագրերի՝ մշակված կաղապարային ձևերի և իրավաբանական տերմինների որպես մասնագիտական արժեքներ ներկայացնելու հանգամանքով: Ի տարբերություն միջնադարյան իրավաբանական գրականությանը՝ գիրքը զերծ է բարբառային տարրերից: Հակոբ Ծահամիրյանը, ստեղծագործելով հայրենիքից դուրս, իր խոսքում խուսափել է օտարաշունչ բառերի կիրառումից՝ ձգտելով անաղարտ պահել մայրենի լեզուն:

Ըստ Հակոբ Ծահամիրյանի՝ ապագա դեմոկրատական պետությունը կազմվելու էր օրենքներ ընդունող, երկիրը կառավարող և արդարությունը պաշտպանող այնպիսի պետական մարմիններից,

¹⁹⁰ Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, հ. 2, Երևան, 2002, էջ 3-4:

որոնք պիտի անվանվեին **օրենսդիր, գործադիր և դատական** տերմիններով: Հայ իրականության մեջ ճահամիրյանն է առաջին անգամ խոսել այս կառույցների մասին և ներկայացնելով իր գրքում Հայոց տան ստեղծման, նրա գործառույթի և անդամների մասին՝ մեզ հուշում է, թե որտեղ փնտրենք **օրենսդիր մարմին (Ազգային ժողով), գործադիր մարմին (Կառավարություն), դատական մարմին** և այս անունների հետ կապված այլ տերմինների առաջացման արմատները:

Ճահամիրյանի աշխատությունում առկա են դատական համակարգը ներկայացնող մարմինների այնպիսի աստիճանական տեղաբաշխում և նրանում պաշտոններ զբաղեցնող անձինք, որոնք, հնարավոր է, որ հուշարարի դեր են խաղացել ներկայիս դատական շատերևույթների, անձանց և դրանք անվանող տերմինների ստեղծման հարցում:

Հեղինակը դատական համակարգի բարձրագույն մարմինն է անվանում **ծայրագոյն յապարանն դատատանի**, որի գործառույթն է երկրի գլխավոր քաղաքներում գործող թվով 60 դատարանների ընդունած վճռի բողոքարկման դեպքում գործը քննելն ու վերջնական որոշում կայացնելը: Որպես պաշտոնի անվանում՝ գործածվում է **ծայրագոյն դատաորոլթիւն** կամ **մայր դատաորոլթիւն** կապակցությունը: Այս պաշտոնը զբաղեցնողին հեղինակը անվանում է **մայր դատաոր**, որը գործածվում է ինչպես բարձրագույն դատարանի դատավորի, այնպես էլ գլխավոր քաղաքների դատարանների դատավորների համար: **Մայր դատաոր** տերմինին գուցա հեռ բնագրում կիրառվում է նաև **աֆտ դատաոր** անվանումը: Ներկայիս օրենսդրական դաշտում սույն տերմիններին համապատասխանում են *վճռաբեկ դատարանի պալատ (ծայրագոյն յապարանն դատատանի)*, *վճռաբեկ դատարանի նախագահ (մայր դատաոր, աֆտդատաոր)*¹⁹¹ կապակցությունները:

Ներկայացնենք դատավարության մի հատված:

«Օրն **դատողութեան քրեական մեղաորի** ելիցէ իշխան խորհրդակցօք հանդերձ գուևտմի գօրօք երկուս դրօշակօք և մտցէ՝ **ի յապարանն դատատանի**, և բազմեսցի **վերին աստիճան, և ի ներքոյ աստիճանի** նստցի **դատաոր** քաղաքին ընդ խորհրդակցօք, և **ի վայր**

¹⁹¹ Տե՛ս **Ճահամիրեանց Յ.**, Որոգայ թ փառաց, Թիֆլիս, 1913, էջ 153-154:

աստիճանի դպիրք և ատենաբանք, և ի ատենի սոցա 94 նշանաւոր անձիւքն, եթէ **որոնողք**, և եթէ **դատողք**»¹⁹²:

«Քրեական հանցագործի դատավարութեան օրը իշխանը՝ խորհրդակիցներով հանդերձ, մի գորագնդով և երկու դրոշակով պետք է դուրս գա և մտնի դատաստանի պալատու բազմի **վերին աստիճանին, ներքևի աստիճանին** պետք է նստի քաղաքի դատավորն իր խորհրդակիցներով, իսկ ավելի **ցածր աստիճանին**՝ դպիրներն ու ատենաբանները: Եվ սրանց առջևնում պետք է լինեն 94 նշանավոր անձիւք՝ թե՛ որոնողներ և թե՛ դատողներ»¹⁹³:

Նախ վերհիշենք, որ Յայաստանի Յանրապետութեան դատական համակարգը եռաստիճան է՝ Առաջին առյանի, Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններ: Շահամիրյանի ներկայացրած դատական մարմինների տեղաբաշխումը («վերին աստիճան», «ներքին աստիճան», «ի վայր աստիճան»), հավանական է, որ հիմք է ծառայել Յայաստանի Յանրապետութեան դատարանակազմութեան հիերարխիկ կառուցվածքի ստեղծմանը: Ինչպե՞ս հիմնավորել այս համեմատությունը: Քրեական մեղավորին դատելիս դատարանում առաջին վճիռն ընդունում են 70 որոնողները, իսկ բողոքարկման դեպքում ատենաբանի՝ «քրեական մեղավորին» հարցաքննումից հետո 24 դատողները նույն կամ նոր վճիռ են կայացնում: Ե՛վ որոնողների, և՛ դատողների վճիռները հաստատում է և կամ հակառակը՝ մերժում է իշխանը¹⁹⁴:

Որոնող և դատող («որոնողք» և «դատողք») անվանումներով արտահայտված իրավական ծառայությունն կատարող պաշտոնյաները իրենց այսպիսի գործառույթով արդի դատարանակազմութեան մեջ համապատասխանում են *Առաջին առյանի (որոնողներ) և Վերաքննիչ դատարանի (դատողներ)* դատավորներին, քանի որ ինչպես բնագրում, այնպես էլ ներկայիս օրենսդրությունում շարադրված է, որ Առաջին առյանի դատավորների վճիռը բողոքարկելուց հետո դատավարությունը շարունակում է Վերաքննիչ դատարանը: Իսկ այն, որ դատավճռի հաստատման կամ ժխտման վերջնական որոշումը տրվում է իշխանին, որոշակիորեն նման է ՅՅ վճռաբեկ դատարանի

¹⁹² Նույն տեղում, էջ 397:

¹⁹³ «Որոգայթ փառաց», Երևան, 2002, էջ 210:

¹⁹⁴ Տե՛ս **Շահամիրեանց Յ.**, Որոգայթ փառաց, Թիֆլիս, 1913, էջ 398-399:

նախագահի այն գործառնություն, որ դատարան ներկայացված բողոքի վերջնական վճիռը նաեւ ընդունում:

Դատարան բառի իմաստն արտահայտելու նպատակով Շահամիրյանը կազմում է **առեան դատատանի, յապարանն դատաւորաց, յապարանն դատատանի, տունն դատատանի, դուռն պատուելի յապարանի դատատանի** բառակապակցությունները (տե՛ս գլուխներ ԾԽԱ, ԾԳ, ԸԴ, ՄՅԳ, Գ):

Հայ իրավական կյանքում Շահամիրյանի բերած հաջորդ կարևոր նորությունը քաղաքացիական հարաբերություններ կարգավորող կարգադրությունների, հրամանների, որոշումների, պայմանագրերի և այլ պաշտոնական փաստաթղթերի օրինակներն են՝ յուրաքանչյուրը շարադրելով միօրինակ կաղապարով: Մինչ այս գիրքը հայ իրավաբանական գրականության մեջ չկար մի նմուշ, որում առկա լինեին իրավաբանական փաստաթղթերի մշակված օրինակներ իրենց հստակ անվանումներով: Վերջիններս կարող էին հիմք հանդիսանալ ոչ միայն ՀՀ օրենսդրությամբ կարգավորվող պայմանագրերի, վճիռների, որոշումների և այլ փաստաթղթերի ձևավորման, այլ և հետագայում այդ անվանումների վերանայման և որոշակի փոփոխման հետևանքով նորերը կազմելու պարագայում: Ներկայացնենք սույն փաստաթղթերի օրինակների վերնագրերը՝ նշելով դրանց ժամանակակից անվանումները:

1. **Օրինակ Տուն կամ Երկիր**¹⁹⁵ **գնել ոյ** – հողամասի առուվաճառքի պայմանագրի օրինակ, ըստ որի՝ վաճառողը գնորդին որոշակի գումարի դիմաց որպես սեփականություն հողամաս է հանձնում (տե՛ս «Որոգայթ փառաց», գլուխ ԽՅԹ):

2. **Օրինակ Դաշնադրութեան վան Յարսանեաց** - ամուսնական պայմանագրի օրինակ, ըստ որի՝ ամուսնացող կողմերի միջև որոշակի պայմանավորվածությամբ կնքվում է պայմանագիր (տե՛ս գլուխ ԽԶԲ):

3. **Օրինակ թղթոյ Երաշխաւորութեան անձանց, օրինակ թղթոյ Երաշխաւորութեան ընչից** - Երաշխավորության պայմանագրի օրինակ, ըստ որի՝ երաշխավորը իր անձով կամ անձով և

¹⁹⁵ **Երկիր** բառի նշանակություններից մեկն է *գետին, հող*, ուստի բնագրի աշխարհաբարյան տարբերակում **Երկիր** բառի փոխարինումը **հող**-ով տրամաբանական է:

ուև նեցվածքով այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար (տե՛ս գլուխՁԸ, ՁԹ):

4. **Օրինակ թղթոյ վճռոյ որ ելանէ դատատանէ** - դատավճիռի՝ դատարանի կողմից ընդունած դատական ակտի օրինակ (տե՛ս գլուխ ՁԵ):

5. **Օրինակ թղթոյ ստացեալ իրաց յաղագաւ** – ստացականի՝ ստորագրությամբ վավերացված փաստաթղթի օրինակ՝ որևէ բան ստանալու՝ ընդունելու մասին (տե՛ս գլուխՁԶ):

6. **Օրինակ թղթոյ ազատութեամբ բանալոյ շուկայ մէջ քաղաքաց** – թույլ տվող ան օրինակ, ըստ որի՝ լիազոր մարմինը կամ անձը իրեն դիմողին տալիս է որևէ գործողություն իրականացնելու արտոնություն՝ իրավունք (տե՛ս գլուխՂԱ):

7. **Վաշխապարտի օրինակ** - փոխառության պայմանագրի օրինակ, երբ պարտատերը տոկոսով դրամ է տալիս պարտապանին սահմանված ժամկետում վերադարձնելու պայմանով (տե՛ս գլուխՂԵ):

8. **Օրինակ Ձերծա պարտուց** - նպատակային փոխառության պայմանագրի օրինակ, որը կնքված է փոխառուի կողմից ստացված միջոցները որոշակի նպատակների համար օգտագործելու պայմանով (տե՛ս գլուխՂԸ):

9. **Օրինակ Գանգատագրի առ յապրանն Դատատանի** – հայցադիմումի օրինակ, ըստ որի՝ անձը որոշակի պահանջով դիմում է դատարան (տե՛ս գլուխՁԳ):

10. **Օրինակ Յանդիմանելոյ դատախազին ընդ դեմ գանկատողին** – հայցադիմումի պատասխան կամ առարկություն, համաձայն որի՝ պատասխանողը առարկում է հայցվորի պահանջը (տե՛ս գլուխՁԴ):

Շահամիրյանը պայմանագրերը ներկայացնում է միևնույն կառուցվածքով, ինչը բնորոշ է մեր այսօրվա պայմանագրերին: Դրանք վերնագրված են, սկսվում են «Յայ տնի լինի ամենեցուն որ...» և վերջանում «Վկայ եմք որ...» նախադասություններով¹⁹⁶:

19-րդ դարում հայ իրավական միտքը շարունակում է զարգանալ Արևելյան և Արևմտյան Յայաստանում՝ լավագույնս

¹⁹⁶ Շահամիրեանց Յ., նշվ. աշխ., էջ 233-234:

արտահայտվելով Ռուսաստանի և Օսմանյան կայսրության հայերի ազգային կանոնադրություններում, որոնք հայկական պետականության ստեղծման ճանապարհի առաջին քայլերն էին:

Այս ժամանակաշրջանից սկսած հայ իրավական լեզվի բառապաշարի աշխարհաբարյան բառաչերտը (առհասարակ հայերենը) զարգանում է գրական հայերենի երկու տարբերակներում, ուստի այն քննության ենթ ենթարկում՝ տարբերակելով իրավաբանական տերմինների **արևմտահայերեն և արևելահայերեն ենթաչերտերը:**

ա) Արևմտահայերեն իրավաբանական տերմիններ: Տարիներ շարունակ արևմտահայերենը, չունենալով տարածքային միասնական կիրառություն, հետևաբար լեզվի միևնույն կրողները, ցավոք չունի զարգացման և կիրառման կանոնավոր մակարդակ: Նրանով հաղորդակցվում են աշխարհի չորս կողմերում հանգրվանած հայեր, որոնք, ապրելով տարանջատ՝ առանձին համայնքներով և միմյանց հետ չունենալով անմիջական շփում, ակամայից պատճառ են դառնում, որ արևմտահայերենը զարգանա հայկական տարբեր գաղթօջախներում՝ յուրաքանչյուրում ցուցաբերելով առանձին դրսևորումներ: Անխուսափելի հետևանք է նաև տվյալ համայնքում իշխող պետական լեզվի ազդեցության գերակայությունը մայրենի լեզվի վրա: Օրինակ՝ նոր հասկացության արտահայտման պահանջով երբեմն կազմվում են արևմտահայերեն բառեր՝ տիրապետող օտար լեզվի բառակազմական կանոնների համաձայն: Ինչ խոսք, այս երևույթն իր ազդեցությունն ունի արևմտահայերենի բոլոր բառաչերտերի, այդ թվում՝ իրավական լեզվի բառաչերտի վրա:

Քանի որ սփյուռքահայերի իրավունքները պաշտպանվում են այն երկրի օրենսդրությամբ, որի քաղաքացիներն են, ուստի արևմտահայերենի բառապաշարում իրավաբանական տերմինների պարտադիր կազմության պահանջ չկա: Արևմտահայերեն իրավական խոսքում մասնագիտական բառերը սակավաթիվ են և մեծ մասամբ դրսևորվում են Սփյուռքի զանգվածային լրատվական միջոցներում:

Արևմտահայերեն իրավաբանական տերմինները բաժանում ենք 2 խմբի՝ **1. միայն արևմտահայերենին բնորոշ և 2. առավել քան արևմտահայերենին բնորոշ տերմիններ:**

1. Այս խմբի իրավաբանական տերմինների գործածությունը դուրս չի գալիս արևմտահայերենի սահմաններից, այլ կերպասած՝ արևելահայերենի իրավական լեզվում կիրառելի չեն: Սրանք ինչպես գրաբարից և միջին հայերենից ժառանգած բառեր են, այնպես էլ՝ նոր ժամանակների կազմություններ:

«Յայրենիքի կորստից հետո արևմտահայերենը վերածվեց Սփյունռքի հայություն հաղորդակցման միջոցի, ուր գերակա դարձավ հայապահպանության գործունը»¹⁹⁷, ուստի արևմտահայերենի բառապաշարում պահպանվեցին այնպիսի իրավաբանական տերմիններ, որոնք կիրառելի էին նաև գրաբարյան և միջինհայերենյան իրավական աղբյուրներում՝ իբրև ազգային սովորույթների, ծեսերի հիմունքով քաղաքացիական տարբեր հարաբերություններ կարգավորող երևույթների անվանումներ, ինչպես՝ **դրամօժիտ** (որպես օժիտ կամ օժիտի փոխարեն տրված դրամական փոխատուցում), **օժիտագիր** (օժիտի մասին գրավոր պայմանավորվածություն), **անարույզ** (օժիտ չունեցող, անօժիտ), **առենաբանել** (ատյանի մեջ խոսել՝ ճառել), **տվայր** (1. փեսայից հարսին տրվող օժիտ, 2. ամուսնու մահից հետո կնոջն անցնող ունեցվածք) և այլն:

Լեզվի զարգացման առավել նոր ժամանակներում կազմված միայն արևմտահայերենին բնորոշ իրավաբանական տերմիններ են՝ *եղեռնափորձ, դատաբեկ, դատաքինջ, թղթածրար, չերևեկ, հայցարկու, կապանատուն, օրինագիր, գործողչեք, պահողչեք, ուղարկողչեք, պատժակիր, գողանք* և այլն¹⁹⁸:

2. Առավելաբար արևմտահայերենին բնորոշ իրավաբանական տերմինները գործածական են հայերենի երկու տարբերակների իրավական լեզվում, սակայն արևմտահայերենում ունեն կիրառության ավելի մեծ հաճախականություն, ինչպես՝ *մեղսագործ, մեղսակից, հանցագիտակ, բաժնեթուղթ, բողոքարկու, հայցատեր, մեղադրագիր, օրինագետ, օրինադիր, տուժանք* և այլն:

բ) Արևելահայերեն իրավաբանական տերմիններ: Յայ իրավական գիտակցության և բառապաշարի զարգացման բեկումնային

¹⁹⁷ **Սարաֆտյան Ռ.**, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, 2004, էջ 39:

¹⁹⁸ Այս և ներքոշարադրյալ արևմտահայերեն տերմինների արևելահայերեն բառակազմական տարբերակները տե՛ս սույն աշխատության 127-134-րդ էջերում:

շրջափոխություններ են 20-21-րդ դարերը: Յայաստանի առաջին հանրապետության հռչակամամբ (1918թ.) հայ իրավական կյանքում շրջադարձային փոփոխություններ եղան (ժողովրդավարական պետություն, իրավունքի ճյուղերի տարբերակում, օրենսգրքերի կազմում և այլն), որոնք իրենց լեզվական արտահայտությունները գտան նոր շարադրված իրավական ակտերում և 1919 թվականին Թիֆլիսում լույս տեսած «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարանում», որը եղավ հայ իրավական մտքի պատմության մեջ իրավաբանական տերմինների համակարգման առաջին փորձը՝ կազմված հայ լեզվաբանների և իրավաբանների խմբային աշխատանքի շնորհիվ: Բառարանի հապճեպ կազմելու անհրաժեշտությունը պայմանավորված էր անկախ պետության համար օրենսգրքեր թարգմանելու, հայերեն իրավական խոսք ստեղծելու պահանջարկով:

Բառարանում տեղ գտած իրավաբանական տերմինները քաղաքացիական, քրեական, առևտրական և մուրհակային իրավունքին վերաբերող, դատավարության մեջ հաճախ գործածվող հասկացությունների անուններ են¹⁹⁹, որոնցից մեծ թվով տերմիններ մինչ այժմ իրավական լեզվի կենսունակ բառային միավորներ են:

Նախապես ընտրված ռուսերեն 1100 իրավաբանական տերմինների հայերենացման ճանապարհին թարգմանվեցին այնպիսի բառեր, որոնք իրավաբանական բառապաշարում և առհասարակ մայրենի լեզվում տվյալ ժամանակահատվածի համեմատությամբ նորաստեղծ կազմություններ էին՝ արտահայտված ինչպես բառերով՝ **իրավախախտում, ինքնիրավչություն, իրավազորություն, անդամավճար, ենթավարձույթ, կտակարար, ընդդատություն, օտարել, հանցախորձ, հավաստագիր, հայցվոր, իրավունակ, անմեղսունակ, վարչակարգ, ցուցմունք** և այլն, այնպես էլ բառակապակցություններով՝ **հեղինակային իրավունք, իրեղեն ապացույց, անժառանգ գույք, գրավոր ապացույց, ձեռքբերման վաղեմություն, իրավունքի տեսություն, միջնորդ դատարան, մարմնական պարիժ, քրեական հետախույզում** և այլն:

¹⁹⁹ Տե՛ս «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան», Թիֆլիս, 1919, էջ 4:

Երբեմն ռուսերեն բառերի դիմաց տրվում են 20-րդ դարի առաջին տասնամյակում կազմված բաղադրություններ, ինչպես՝ **անվանարկություն, մեղադրանք, մեղսակից, փոխառություն, դատավարություն, վկայագիր**²⁰⁰:

Բառարանում իրավաբանական տերմինի արժեք են ստանում նախաաշխարհաբարյան շրջանում գործածված մի շարք բառեր, որոնցից են՝ **յուրացում, ոճիր, ընթերակա, հոգաբարձու, իսկություն, փոխադրություն**: Չգալի թիվ են կազմում դեռևս գրաբարյան և միջինհայերենյան իրավական աղբյուրներում կիրառված տերմինները՝ **պարիժ, վկա, ժառանգ, հրիտակ, պարտաեր, սպանություն** և այլն:

Բառարանում գետեղված են նաև օտարալեզու տերմիններ՝ **կոմիսիոներ, կոմիտենտ, ֆրախտ սերվիտուտ, պրեզումպիա, ցեսիա**

Ինչպես ցանկացած նոր երևույթ, այնպես էլ այս բառարանի տերմինապաշարի մի զգալի մասը կարիք ուներ մշակման և կատարելագործման: Բառարանի հնարավոր թերությունների մասին նախատեսում էին նաև հեղինակները՝ գրելով, որ «սամի փորձ է միայն, որին հետևելու են անշուշտ ավելի ու ավելի կատարելագործեր»²⁰¹:

1920 թվականին խորհրդային կարգերի հաստատումը Չայաստանում իրավական մտքի արտահայտման մի նոր ակիք բարձրացրեց: Ստեղծվեց իրավաբանական խորհրդային գրականություն՝ հագեցած նոր գաղափարներով և նոր բառապաշարով:

Խորհրդային տարիներին ստեղծված իրավական լեզվի ողջ բառապաշարը գետեղված է նույն վերտառությամբ կոչվող, տարբեր ժամանակներում տարբեր հեղինակների կողմից հրատարակված «Ռուս-հայերեն իրավաբանական բառարան»-ներում²⁰²:

Ինչպես երկրում տիրող նոր կարգերը, այնպես էլ դրանց հիման վրա ստեղծված իրավական նոր համակարգը՝ իր արտահայտման բոլոր դրսևորումներով, ունեին կաղապարային պարփակ բնույթ: Այդ

²⁰⁰ Տե՛ս **Գաբամանեան Ս.**, Նոր բառգիրք հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1910:

²⁰¹ «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան», Թիֆլիս, 1919, էջ 18:

²⁰² Տե՛ս «Ռուս-հայերեն իրավաբանական բառարան», Երևան, 1924: **Փոթեյան Վ.**, Ռուս-հայերեն իրավաբանական բառարան, Երևան, 1972:

պատճառով խորհրդային Միության փլուզումից հետո դրանք դարձան պատմության էջեր, իսկ լեզվական արտահայտումները մեծ մասամբ վերածվեցին հնաբանության նկերի՝ պատմական և հնացած բառերի:

Խորհրդային շրջանի իրավական լեզվի բառապաշարի մի զգալի մաս այլևս չկիրառվեց Չայաստանի երրորդ հանրապետության օրենսդրության նում, քանի որ նոր իրականությանը չընդունեց հնում առկա երևույթներից շատերը: Դրանք այսօր իրավական լեզվի բառապաշարում ընկալվում են որպես պատմաբանություն, որոնք թվային գերազանցությունը ուսերենից արված պատճենումներ են, օրինակ՝

աշխատանքի ուղղիչ տուն – исправительно – трудовой дом,

դաստիարակիչ – ուղղիչ տուն – воспитательно – исправительный дом,

հողի խմբական օգտագործումը – групповое землепользование,

բանվորական ույժի շարժումը – движение рабочей силы,

պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրա – диктатура пролетариата и крестьянства,

պրոլետարական իրավագիտակցություն – пролетарское правосознание,

հեղափոխական առյուծ – революционный трибунал,

հեղափոխական խիղճ – революционная совесть,

ժողովրդական կոմիսարների խորհուրդ – совет народных комиссаров,

հեղափոխական կարգի պաշտպանության արտակարգ միջոցներ – чрезвычайные меры охраны революционного порядка և այլն:

Խորհրդային տարիներին ստեղծված մի խումբ իրավաբանական տերմիններ էլ, չհամապատասխանելով նորաստեղծ օրենսդրության և պետիրավական կառուցվածքի պահանջներին, դիտվելով որպես հնացած բառեր, ստացան նոր անվանումներ, օրինակ՝

ընչական իրավունք – գույքային իրավունք,

բերանացի պայմանադրություն – բանավոր պայմանագիր,

հավաքական պայմանագիր – կոլեկտիվ պայմանագիր,

հակահեղափոխական հանցանք – պետական իշխանության դեմ ուղղված հանցագործություններ (պետական դավաճանություն, իշխանության յուրացում, սահմանադրական կարգի տապալում),

առաջին աստիճանի դատարան, նախադատ առյուծ – առաջին առյուծի դատարան,

երկրորդ աստիճանի դատարան – վերաքննիչ դատարան,
թերևս ²⁰³ - դեմ և կողմնային:

Սակայն այս հնարանություններից զատ՝ խորհրդային տարիներին իրավաբանական բառապաշարը ընդգրկեց այնպիսի տերմիններ, որոնք շարունակում են իրենց ակտիվ գործածությունը ներկայիս իրավական ակտերում: Դրանք ինչպես բառեր՝ **այլ ուրեքություն, անգործուհի, դատակոչ, դատապաշտպան, իրավապաշտպան, իրավագիտակցություն, իրավահաջորդում, իրավահավասարություն, հանցադատ, հանցակցություն, նախքննություն, փորձաքննություն, հարցաքննություն, փոխադրված, այնպես էլ տերմին բառակապակցություններ են՝ հանցավոր անփութություն, սուժող կողմ, դատական կատարածու, վիճակագիրն հայց** և այլն:

20-րդ դարի վերջին՝ խորհրդային Միության փլուզումից հետո, երկրի պետիրավական կառուցվածքը, պայմանավորված Հայաստանի երրորդ անկախացմամբ, ենթարկվեց նորանոր փոփոխությունների: ՀՀ-ի այլ պետությունների հետ միջազգային նոր հարաբերությունները, նրանց միջև կնքված կոնվենցիաներն ու դաշնագրերը, երկրում ձևավորված իրավական նոր կառույցներն ու այլ իրավական բնույթի նորընթաց երևույթներ ստացան իրենց լեզվական անվանումները, որոնք արտահայտվեցին ինչպես միջազգային նշանակություն ունեցող օտարալեզու տերմիններով (նոր և նորագույն փոխառություններ), այնպես էլ հայերենի բառակազմական միջոցներով կազմված նորաստեղծ բառերով (նորակազմություններ): Հայերենի բառապաշարում գործածվող որոշ բառեր, իրավական լեզվում ձեռք բերելով տերմինային նորիմաստներ (իմաստային նորաբանություններ), փոխառյալ և նորաստեղծ բառերի հետ կազմում են արդի հայերենի բառապաշարի նորաբանություններ բառաշարը ²⁰⁴:

²⁰³ **Թերևս** բարդություն բաղադրիչները՝ իբրև առանձին բառեր, գործածական են արևմտահայ իրավական աղբյուրներում: Մեջբերենք.

«Ուսլ թըրի նախագիծը մերժուեցաւ 66 թեր, 70 դէմ եւ 45 ձեռնպահ քուէներով» («Հայրենիք» շաբաթաթերթ, հունվարի 27, 2016):

²⁰⁴ Սույն պարագրաֆի իրավաբանական բոլոր նորակազմ տերմինները և նրանց բացատրությունը տե՛ս **Կոբալյան Ա.**, Օպերատիվ հետախուզության տերմինների բացատրական բառարան, Երևան, 2007: **Կոբալյան Ա.**, Իրավաբանական համառոտ բացատրական բառարան, Երևան, 2006: **Քուլին Փ.**, Իրավաբանության բացատրական

Քանի որ իբրև նորաբանություններ՝ նոր և նորագույն փոխառություններն արդեն քննել ենք 1-ին գլխում, այս պարագրաֆում լեզվական քննության ենք ենթարկում նորաստեղծ բառերն ու իմաստային նորաբանությունները՝ ներկայացնելով նրանց բառակազմական և գործառական առանձնահատկությունները: Հավելենք, որ ուսումնասիրել ենք մոտ 90 և ավելի իրավաբանական նորակազմություններ²⁰⁵:

Իրավաբանական նորակազմ տերմիններ: Իրավաբանական նորակազմ բառերի առաջացումն ընթանում է առավելապես բառակազմական երկու եղանակով՝ **ածանցմամբ և բառաբարդմամբ**²⁰⁶:

Ածանցման հիմնակաղապարը մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևույթի՝ ածանցի բաղադրությունն է, իսկ ըստ հիմնական ձևույթի նկատմամբ ածանցի գրաված դիրքի՝ ածանցման կաղապարները բաժանվում են նախածանցավորների և վերջածանցավորների: Ինչպես գրաբարում, այնպես էլ այսօր ածանցման վերջածանցավոր կաղապարները զգալիորեն գերակշռում են նախածանցավորներին: Սակայն դա չի նշանակում, որ նախածանցավոր կաղապարները հայերենի զարգացման որոշակի փուլում բառակազմական ակտիվություն չեն դրսևորել²⁰⁷:

➤ **Իրավաբանական նախածանցավոր տերմինների կաղապարներ**

Սույն տերմինների սերող հիմքերը լինում են ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ կազմություններ: Սակայն այս կաղապարով եզրերը սակավաթիվ են:

Պարզ հիմքով տերմիններն ունեն **նախածանց + սրմատ** կաղապարը, ինչպես՝ *հակ(ա) – հակահայց, փոխ – փոխհայց (դատական գործ, որ հարուցել է իրեն չպատկանող գույքը տնօրինող անձը, որի*

բառարան, անգլերեն-հայերեն-անգլերեն, Երևան, 2005: **Ռսկերչյան Ա.**, Քրեաիրավական տերմինների արդի համառոտ բացատրական բառարան, Երևան, 2004: **Էլոյան Ս.**, Արդի հայերենի նորաբանությունների բառարանը, Երևան, 2002:

²⁰⁵ Նորաստեղծ տերմինները չենք գտնի խորհրդային տարիներին ստեղծված իրավական գրականությունում, ուստի նաև այդ ժամանակների ցանկացած բնույթի բառարանում (տե՛ս **Փոթեյան Վ.**, Ռուս-հայերեն իրավաբանական բառարան, Երևան, 1972: «**Ռուս-հայերեն իրավաբանական բառարան**», Յերեվան, 1924):

²⁰⁶ Իրավաբանական տերմինների կազմությունը որոշելիս հիմք ենք ընդունում բառամիավորին ավելացած բառակազմական վերջին քայլը:

²⁰⁷ Հմմտ. **Զահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 152:

նկատմամբ պահանջ են ներկայացրել երկու կամ ավելի այլ անձինք: Հայ ցի նպատակն է պարզել գույքի տիրոջը)²⁰⁸, համ – համիրավ:

Բաղադրյալ հիմքով նորակազմ տերմինները կազմվում են **նախածանց + վերջածանցավոր բառեր, նախածանց + բարդ կամ բարդածանցավոր բառեր** մանրակազմարներով, օրինակ՝ *հակ(ա) – հակահրավականու թյուկ*, *ան – անժամկետանց, անհրավու նակ, անժամանցելի (վաղեմու թյան ժամկետ չու նեցող)*, *ենթ(ա) – ենթաօրենսդրական (օրենքը լրացնող և մանրամասնող), ենթապարտավորագիր, համ(ա) – համապարտադիր, համիրավախախտ:*

➤ **Իրավաբանական վերջածանցավոր տերմինների կաղապարներ**

Համեմատաբար առավել հաճախեալ են իրավաբանական վերջածանցավոր տերմինների կաղապարները, որոնք են՝ **ածանցավոր բառ + վերջածանց, բարդ կամ բարդածանցավոր բառ + վերջածանց, օրինակ՝**

-ու թյուկ – իրավականու թյուկ, անհրավու նակու թյուկ, իրավասու բյուկտու թյուկ (իրավու նքի սու բյուկտու լինելը), հանցագործաբանու թյուկ (քրեագիտու թյուկ, ոճրագործու թյան վերաբերյալ մասնագիտու թյուկ),

-ում – սահմանադրականացում (սահմանադրական դարձնելը՝ սահմանադրականացնելը: Օրենքի, օրինականու թյան ու ժով օժտելը), սեփականաշորթում (սեփականաշունորհման անվան տակ ազգային ու նեցվածքի զավթելը, թալանելը), վարձագնում (որևէ բանի գնում՝ կանոնավոր ամսական վճարումներ կատարելու միջոցով),

-ային – մատնադրոշմային (մատնադրոշմին վերաբերող),

-(ա)գետ – սահմանադրագետ, դատարանագետ,

-յալ – օրինադրյալ, խնամարկյալ և այլն:

Իրավաբանական անցանցավոր բառերի կազմության կենսունակ անց է **-ու թյուկ** բառակազմական ձևույթը:

Ինչպես անցման, այնպես էլ **բառաբարդման բառակազմական եղանակը** ակտիվ մասնակցություն ունի իրավաբանական նոր տերմինների կազմության հարցում:

Լեզվաբան Արտաշես Մարտիրոսյանը «Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները»

²⁰⁸ Տե՛ս Քոլին Փ., Իրավաբանության բացատրական բառարան, անգլերեն-հայերեն-անգլերեն, Երևան, 2005, էջ 139:

աշխատության ունում հանգամանալից անդրադարձել է բառաբարդմանը տրված լեզվական բնորոշումներին²⁰⁹: Համաձայն Հրանտ Պետրոսյանի տեսակետի՝ բառաբարդման դրսևորումներից է, երբ «պարզ, ածանցավոր բառերի կամ արմատների համակցումով ստեղծվում են բառեր կամ նոր բառեր»²¹⁰:

Իրավաբանական նորակազմության ներքին առավել ապես համադրական տիպի բարդության ներքին, որոնց կազմության առավել գործունե կաղապարներն են՝

➤ **արմատական կամ բարդ բառ (սերող հիմք) + ածանցավոր բառ (բաղադրող հիմք)** – *օրինախախտագիծ, իրավախայրում (իրավական կողմի դիտումը՝ ստուգումը), քրեաիրավական, քրեակատարողական (քրեական տարրերի պատիժների, պատժամիջոցների կատարողականությանը վերաբերող), երկփառաբացիության (երբ որևէ անձ, տվյալ պետության քաղաքացիության կամ քաղաքացիության կողմից բացի, ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիության), օրենսդրաորոշումային (օրենսդրության ներքին օրոշումներ պահանջող),*

➤ **արմատական կամ բարդ բառ (սերող հիմք) + բարդածանցավոր բառ (բաղադրող հիմք)** – *քրեադատավարական (քրեական դատավարությանը վերաբերող), իրավապայմանագրային, դատաձգարանության (դատը արհեստական կերպով երկարեցնելը, ձգձգելը), դատաբժշկափորձաքննության, դատափետրաբանական (դատական գործընթացին առնչվող փետրաբանական քննությանը),*

➤ **արմատ (սերող հիմք) + արմատական կամ բարդ բառ (բաղադրող հիմք)** – *հանրավտանգ, արգելաքվե (օրենք դառնալու արգելափաստաթղթին, նույնիսկ եթե դաընդունվել է խորհրդարանի կողմից), հանցափորձ, թմրաբիզնես, քրեածին, իրավակիրառ, իրավապահպան:*

Իրավաբանական բարդության ներքին բաղադրիչները կապակցված են **համադրական** (երբ բաղադրիչները միմյանց նկատմամբ համազոր են, ինչպես՝ *իրավաքաղաքական - իրավական և քաղաքական, պետաիրավական - պետական և իրավական*) և մեծ մասամբ

²⁰⁹ Տե՛ս **Մարտիրոսյան Ա.**, Արդի հայ երեկի նորաբանության ներքին բառակազմական կաղապարները, Երևան, 2007, էջ 72-128:

²¹⁰ **Պետրոսյան Հ.**, Հայ երեկագիտական բառարան, Երևան, 1987, էջ 109:

ստորադասական (երբ բաղադրիչները կապված են լրացական հարաբերությամբ, ինչպես՝ *հանրավտանգ - հանրության համար վտանգավոր, օրինանախագիծ – օրենքի նախագիծ*) հարաբերությամբ:

Կան տերմիններ, որոնց բաղադրիչների շարահյուսական հարաբերության ընկալումը կախված է բառի կապակցական դաշտից, ինչպես՝ *դատահոգեբանական փորձաքննություն = դատական ու հոգեբանական (համադասական) և դատահոգեբանական փորձագետ = դատական հոգեբանություն ամբ զբաղվող (ստորադասական)*²¹¹:

Բառակազմական վերլուծական եղանակով կազմված իրավաբանական նորակազմությունները հարադրություններ, մասնավորապես **հարադիր բայեր** (*ճանաչման ներկայացնել, լսումներ անցկացնել, արգելանքի վերցնել*) և **կայուն կապակցություններ են** (*լուծարման հայց, վճռաբեկ վարույթ, օրինադրյալ հայտարարություն, ավանդի ապահովագիր*), որոնց բաղադրիչները կապակցված են ստորադասական հարաբերությամբ:

Իրավատերմինահամակարգը, նորաստեղծ տերմիններից զատ, ընդգրկում է նաև **իմաստային նորաբանություններ**, որոնց հիմքում ընկած է իմաստափոխությունը, որը, ի թիվս բազմաթիվ դրսևորումների (ընդլայնում, նեղացում, գործառական անցում և այլն), պայմանավորված է երկու հիմնական գործոններով՝ ա) երբ տվյալ լեզվի ներքին զարգացումներն են բերում իմաստափոխության, բ) երբ օտար լեզվական միավորի իմաստի ազդեցությամբ բառն ստանում է իմաստային ճյուղավորում, այսինքն՝ կատարվում է իմաստային պատճենում²¹²:

Իմաստային նորաբանությունն է **նիստ** տերմինը, որի իրավաբանական նշանակությունը դեռևս շարադրված չէ հայերենի որևէ մասնագիտական, բացատրական կամ այլ բնույթի բառարանում: Այսպես՝ **նիստ** տերմինը իր հիմնական իմաստներին կից գործածվում է տերմինային հետևյալ նշանակությամբ՝ *դատական ընթացակարգ, որում գործի քննությունը, դատավարական գործողությունները իրականացվում են գործին մասնակցող անձանց անմիջական ներգրավվածությամբ*: Ինչպես՝

²¹¹ Տե՛ս **Մարտիրոսյան Ա.**, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Երևան, 2007, էջ 123:

²¹² Տե՛ս նույն տեղը, էջ 167-168:

«Նախագգուշացու մը և նիստերի դահլիճից հեռացնելը կիրառվում է նույն դատական **նիստում** կայացվող դատարանի արձանագրային որոշմամբ» (ՀՀ դատական օրենսգիրք, հդ. 63):

Վարձկանություն բառը հայերենի բառապաշարում գործածվել է դեռևս ոսկեդարյան ժամանակներից «1. Վարձկան լինելը, վարձով ծառայելը: 2. Վարձկան զօրք»²¹³ նշանակությամբ: Բառը *վարձկան լինելը* նշանակությամբ գործածվում է Մխիթար Գոշի և Սմբատ Գուկասյանի դատաստանագրքերում: Ներկայիս իրավական բնագավառում այն կիրառվում է նոր նշանակությամբ, այն է՝ *խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների մեջ մտնող՝ պատերազմական հանցագործությունների խմբին պատկանող, հանցագործության կոնկրետ տեսակ, ինչն իրենից ներկայացնում է վարձկան հավաքագրել, ուսուցանել, ֆինանսավորել կամ այլ ձևով նյութապես ապահովել, ինչպես նաև՝ զինված ընդհարումներում կամ ռազմական գործողություններում նրան օգտագործել*²¹⁴:

Իմաստային նորաբանություններ են նաև **անզգուշություն, բացառություն, դեպ, դրդիչ (սադրիչ), մանագետ միջնորդություն, օգնական**²¹⁵ և այլ տերմիններ:

Անզգուշություն - *մեղքի ձևի դրսևորում, ինչի արդյունքում վնաս է պատճառվում անձին կամ գույքին*²¹⁶:

Բացառություն - *բանավոր կամ գրավոր փաստարկումներ, որոնք բերում են դատավարության մասնակիցները և դիմողները՝ հիմնավորելու համար իրենց կամ ներկայացվող անձի պահանջները, ինչպես նաև այլ անձանց բանավոր կամ գրավոր հաղորդումները, որոնք տրվում են մինչև քրեական գործ հարուցելը (տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հդ. 6):*

Դեպ - *հանցագործության հատկանիշներ պարունակող իրադարձություն, որի կապակցությամբ իրականացվում է քրեական դատավարություն (տե՛ս նույն տեղը):*

²¹³ **Ղազարյան Ռ.**, Գրաքարի բառարան, հ. 2, Երևան, 2000, էջ 509:

²¹⁴ Տե՛ս **Ոսկերչյան Ա.**, Քրեաիրավական տերմինների արդի համառոտ բացատրական բառարան, Երևան, 2004, էջ 142:

²¹⁵ **Օգնական** իրավաբանական տերմինի նշանակությունը տե՛ս նույն աշխատության 67-րդ էջում:

²¹⁶ Տե՛ս **Քոլին Փ.**, Իրավաբանության բացատրական բառարան, անգլերեն-հայերեն-անգլերեն, Երևան, 2005, էջ 175:

Դրդիչ (սադրիչ) - հանցագործությունն կատարելուն դրդող անձ, հանցագործության հանցակցի տարատեսակ²¹⁷:

Մասնագետ – քրեական գործի վարույթով չշահագրգռված այն անձը, որին վարույթն իրականացնող մարմինը նշանակում է իր նախածեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ՝ նպատակ ունենալով գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառներում նրա ունեցած մասնագիտական հմտություններն ու գիտելիքներն օգտագործելու միջոցով օգնել քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարող անձին:

Միջնորդություն - կողմի կամ դիմողի խնդրանքը՝ ուղղված քրեական վարույթն իրականացնող մարմնին, ինչպես նաև դատարանին:

Թվարկված իմաստային նորաբանությունների իմաստափոխությունը հայերենի ներքին զարգացումների հետևանք է:

Ոչ միայն իմաստային պատճենման, այլև իմաստային նորաբանության օրինակներ են **վարել**, **մարել**, **հանել** բայերը²¹⁸, որոնց իմաստափոխությունը նկատելի է միայն կայուն կապակցության մեջ, և **սայան**²¹⁹, **լսում** բառերն ու **գործը կարճել**²²⁰ հարադրական բարդությունը:

Տերմինային արժեք ստացած **լսում** բառը²²¹, մասամբ պատճենելով անգլերեն **hearing** բառի կամ **hear a case** արտահայտության **գործի լսելը դատարանում, հանձնաժողովում կամ դատակազմում**²²² նշանակությունը, այսօր ակտիվորեն կիրառվում է իրավական լեզվի բառապաշարում: Ինչու մասամբ, քանի որ **լսում** բառը՝ որպես իրավաբանական տերմին, սահմանվում և կիրառվում է միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքում»՝ իբրև վարչական վարույթի առանձին գործողություն,

²¹⁷ Տե՛ս **Կոբալյան Ա.**, Օպերատիվ հետախուզության տերմինների բացատրական բառարան, Երևան, 2007, էջ 15:

²¹⁸ Տե՛ս սույն ատենախոսությունը, էջ 38-39:

²¹⁹ Տե՛ս սույն տեղը, էջ 38:

²²⁰ Տե՛ս սույն տեղը, էջ 72:

²²¹ **Լսում (ներ)** բառը նաև քաղաքական ոլորտի նորաբանությունն է՝ «քննարկում» նոր իմաստով, ինչպես՝ **խորհրդարանական լսումներ, երկկողմանի լսումներ** և այլն (տե՛ս **Մելքոնյան Լ.**, Բառապաշարային տեղաշարժերը արդի հայերենում/ատենախոսություն/, Երևան, 2014, էջ 38):

²²² Տե՛ս **Քոլին Փ.**, Իրավաբանության բացատրական բառարան, անգլերեն-հայերեն-անգլերեն, Երևան, 2005, էջ 124:

որն իրականացնելիս «Վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ» (ՀՀ օրենքը վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին, հդ. 38):

Իրավաբանական նորաստեղծ բառերը, որոնք լայն իմաստով կոչվում են նորաբանություններ, ըստ գործածության հաճախականության, ունեն ընդհանրացող բնույթ, այսինքն՝ կարճատև կամ երկարատև ժամանակահատվածում պարբերաբար գործածվելով՝ անցնում են բառապաշարի գործունե շերտ և հենց դրանով էլ դադարում նորաբանություն լինելուց²²³, ինչպես՝ **ապսրեականացնել (դադարել հանցագործություն համարել ինչ-որ բանի (օրինակ՝ թմրադեղի) ունենալ և ու օգտագործելը), Եվրադատարան, կամահայտնություն (կամքի ազատ արտահայտում) և այլն:**

Այսօր իրենց ակտիվ գործածության հետևանքով իրավաբանական տերմինների որոշակի խումբ այլևս չի ընկալվում որպես նորաբանություն: Դրանք դարձել են արդի իրավատերմինահամակարգի գործունե շերտի բառեր, օրինակ՝ **բռնադատված (քաղաքական բռնության, հարկադրանքի ենթարկված, անարդար դատված), դատավարություն (դատավարության ընթացքը), իրավանորմ (իրավունքի՝ իրավական նորմ), հանցաշխարհ (հանցագործների աշխարհը՝ շրջապատը), հանցաբեռ, հեռախոսավար (հեռախոսային խոսակցությունների գաղտնի լսում) և այլն:**

Ներկայումս նորակազմությունների ակտիվ «հեղինակներ» են **զանգվածային լրատվական միջոցները**, հատկապես քաղաքաիրավական բնույթի թերթերը, ամսագրերը, հաղորդումները: Վերջիններիս նպատակն է, ստեղծելով հեղինակային նորաբանություններ՝ դրանցով իրենց խոսքին ոճական որոշակի երանգ հաղորդելը, տպավորիչ դարձնելն ու մեծ լսարան ձեռք բերելը: Այսպիսի նորակազմություններ են՝ *դատախազարար (իրավունք, 26-1, 5.97),*

²²³Հմմտ. **Սդայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, Էջ 169-170:

դատախազակոխություն (հրավումնք, 6-12, 3.2001), դատավորուհի (Լրագիր, 23.12.94), հանցագործանալ (ԳՔ, 02, 27.5.95), օրենսգրքաստեղծ (Մոլորակ, 2.4.97), օրենսդատ (Յեռ., 20.2.99), օրենքամետ (Մոլորակ, 8.10.96), օրինախուս (Շրջան, 3.3.95), սահմանադրապաշտական (ՀԱ, 7.3.98), քրեաբանություն (ՌՄ, Մոլորակ, 20.3.97), քրեալուր (ՀՀ, 21.2.92), քրեականացվել (հրավումնք, 24-30, 10.97), քրեախոս (ՀՀ, 13.7.94), քրեապետ (ՀՀ, 6.11.93) և այլն²²⁴:

Բուռն զարգացում ապրող Լրագրողական աշխարհը չէր կարող չստեղծել **դիպլոմային (օկագիոնալ) նորաբանություններ**, որոնք «հեղինակային այն նորակազմություններն են, որ գործ են ածվում բանավոր – խոսակցական և եզրվում, հրապարակախոսության մեջ, գեղարվեստական ոճում և հատկապես մամուլում, խոսքային տվյալ իրավիճակում նյութի թելադրանքով կամ հեղինակի ոճական որոշակի նպատակադրումով՝ խոսքն ավելի համոզիչ, պատկերավոր դարձնելու համար»²²⁵: Այս կարգի նորաբանություններն ունեն մեկանգամյա գործածություն խոսքային տվյալ միջավայրում, իսկ հետագայում դուրս են մնում բառապաշարից: Սեդա Էլոյանի նորաբանությունների բառարանից առանձնացրել ենք 4 հեղինակային - դիպլոմային հեղինակական բնույթի նորաբանություններ, որոնք են՝

դատավորուխազ - դատավորներ և դատախազներ,
իրավաբաններեն – իրավաբանություն և եզրվով,
քրեաթերթիկ - անօրինական՝ կեղծ քվեաթերթիկ,
հայցուհի – կին հայցվոր

Մեջբերենք. «Եվ միամիտ մարդիկ (օրենքի հետ շփվող քաղաքացիներ ու օրենքի դռնապան **դատավորուխազներ**) չեն Էլ հասկացել, թե այս կամ այն գործով գրած դիմումով, նամակով ինչ հրաշալի ծառայություն են մատուցում հայ երգիծական գրականության զարգացմանը» («Հայաստան», 6.3.97):

Դիպլոմային նորակազմության օրինակ են առ **հայցամուկական** բառը²²⁶, որը թեև ընդգրկված է Փ. Քոլինի իրավաբանական

²²⁴ Տե՛ս **Էլոյան Ս.**, Արդի հայ երենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002:
²²⁵ **Եզեկյան Լ.**, Ոճագիտություն, Երևան, 2006, էջ 140:
²²⁶ Տե՛ս **Քոլին Փ.**, Իրավաբանության բացատրական բառարան, անգլերեն-հայերեն-անգլերեն, Երևան, 2005, էջ 279:

բառարանում՝ արտահայտելով պատասխանողին նեղություն տալու նպատակով հայց հարուցելու մոլուցք ու նեցող նշանակությունը, այն, ինչպես նաև վերոնշյալ նորակազմությունները, որոնք իրավական բառաչերտի հիման վրա կառուցված բառեր են, այնուամենայնիվ չեն կարող լինել իրավաբանական տերմիններ, քանի որ նախարտահայտում են հեզնական իմաստ, ապա այս ոլորտում չունեն իրենց համարժեք սահմանումներն ու անհրաժեշտ գործածությունը:

Ամփոփելով արդի հայերենի իրավաբանական տերմինների շերտաբանական քննությունը՝ կարող ենք եզրակացնել .

1. Ներկայիս իրավական լեզվի բառապաշարը իրավական մտքի ձևավորման և զարգացման շրջափուլերում կազմված բառաչերտերի ամբողջական համակարգ է: Նրա հիմնադրերն ընդգրկող բառերը ընդհանուր հայերենյան իրավաբանական տերմիններ են, որոնք մեծ մասամբ գրաբարյան փոխառություններն ու հայերեն կազմություններն են:

2. Հայ իրավական լեզվի հին կամ գրաբարյան և միջինհայերենյան բառաչերտերը, ինչպես նաև աշխարհաբարյան բառաչերտի խորհրդային շրջանում կազմված մի շարք տերմիններ այսօր դիտվում են որպես հնաբանություններ, քանի որ հայ իրավական մտքի զարգացման գործընթացում որոշ հասկացություններ իրենց անվանումներով, չհամապատասխանելով ժամանակի պահանջներին, հնանում են և դառնում պատմական երևույթներ, իսկ որոշ հասկացություններ էլ, պահպանելով իրենց արդիականությունը, փոխում են միայն անվանողական արժեքը:

3. Հայ իրավագիտակցության բարձրագույն արտահայտման ժամանակներ են ՀՀ անկախացման տարիները: Հայ իրավունքի՝ նոր գաղափարների արտահայտման և համակողմանի դրսևորման գործընթացում ձևավորվեց նոր իրակություններ արտահայտող աշխարհաբարյան բառաչերտը, որը ժառանգաբար անցած իրավաբանական այլ տերմինների հետ ձևակերպում է ներկայիս հայ իրավական խոսքը: Աշխարհաբարյան բառաչերտն ընդգրկում է ինչպես պատմական իրակություններ արտահայտող բառեր, այնպես

Էլ ներկայ իս իրավական լ եզվում ակտիվ գործածությունը ն դրսևորող տերմիններ:

Աշխարհաբարյան բառաչերտը համալրվում է փոխառություններով, մայրենի լ եզվի բառակազմական միջոցներով կազմված նորաստեղծ բառերով և իմաստային նորաբանություններով:

Իրավաբանական նորաստեղծ տերմինները գրեթե հավասար քանակություններ կազմվում են և՛ ածանցման, և՛ բառաբարդման եղանակներով, ինչի հետևանքով իրավական լ եզվի բառապաշարը համալրվում է առավել ապես գոյականներով և ածականներով:

Իրավաբանական տերմինահամակարգում բավականին գործունև դեր են կատարում իմաստային նորաբանությունները, որոնց մեծ մասն այսօր հայերենի ներքին զարգացումների արդյունք է:

Իրավական լ եզվի նորաստեղծ տերմիններն ու իմաստային նորաբանություններն այնքան հաճախադեպ են, որ դրանց զգալի մասը դեռևս չի ընդգրկված ընդհանրական բնույթ կրող բացատրական բառարաններում, և ընթերցողն այդ եզրերին կարող է ծանոթանալ միայն մասնագիտական աղբյուրներից:

4. Իրավական լ եզվի բառաչերտերը այնպիսի պատմական արժեքներ են, որոնք դարեր ապրած հայ ժողովրդի օրինականության գնահատման, անկարգություններն ու ասորիների գործողությունները չհանդուրժելու լավագույն ապացույցներն են:

Բաժին 2.

Արդի հայ երեւնի իրավաբանական տերմինների բառակազմական առանձնահատկությունները

Ինչպես գիտենք, բառերի կազմության (կառուցվածքի), բաղադրիչ մասերի, դրանց իմաստային կապերի ու հարաբերությունների, բարդությունների կազմության և նրանցում կատարված տեղաշարժերի ուսումնասիրությունը զբաղվում է **բառակազմությունը**: Բառագիտության այս ենթաճյուղի ուսումնասիրության առարկան լեզվում ինքնուրույնաբար գործածվող իմաստային միավոր բառն է:

Ատենախոսության այս բաժնի բուն նպատակն է կատարել արդի հայ երեւնի իրավաբանական տերմինների համաժամանակյա քննություն (տերմինների կազմություն, կաղապարային կառուցվածք²²⁷, բաղադրական՝ սերող և բաղադրող հիմքեր, բառակազմական տարբերակներ):

Իրավատերմինահամակարգը քննելիս պարզ է դառնում, որ հայ երեւնի բառապաշարը համալրող իրավաբանական տերմինների մի զգալի մաս մեզ է փոխանցվել հին և միջնադարյան ժամանակներից: Իսկ սույն համակարգը համալրող նոր տերմինները կա՛մ կազմվում են սեփական բառակազմական միջոցներով, կա՛մ փոխառություններ են, որոնք մայրենի լեզու են ներթափանցում միջազգային հարաբերությունների ձևավորման, իրավունքի բնագավառում

²²⁷ «Կաղապարը լեզվաբանության մեջ գործածվում է լայն և նեղ առումներով: Լայն առումով կաղապար (модель) է լեզվական ցանկացած միավոր, նեղ առումով՝ միայն տերմինային կաղապարը (терминологическое клише)՝ հասկացության պատրաստի անվանումը (արտահայտությունը), որպես տերմինային կամ բառային միավորների որոշակի կապակցություն՝ տերմինային նոր իմաստի վերարտադրությունը» (տե՛ս **Պետրոսյան Յ.**, Հայ երեւնի տերմինաբանություն, մաս 2, Երևան, 2010, էջ 9):

պետական և միջազգային այլ կառույցների համագործակցության արդյունքում:

Ըստ բառերի բառակազմական հատկանիշների՝ իրավաբանական տերմինները բաժանում ենք երկու խմբի՝ ա) **պարզ բառեր**, որոնք կազմված են միայն մեկ ձևույթից և բառակազմական ու ձևաբանական տեսակետից վերլուծելի չեն, **բ) բաղադրյալ բառեր**, որոնք իրենց կազմում ունեն մեկից ավելի ձևույթներ:

Լեզվաբան Ալ. Մարգարյանը գրում է, որ բառարանային 1000 բառերի մեջ սովորաբար 60-70 բառերն են պարզ կամ, այլ կերպասած, 6-7 տոկոսը²²⁸: Ուսումնասիրած նյութերի արդյունքների համաձայն՝ ինչպես մեր լեզվի ամբողջ բառապաշարում, այնպես էլ իրավական ոլորտում կազմույթ ամբ պարզ բառերը անհամեմատ քիչ են, ինչպես՝ *գործ, կողմ(ն), հայց, (բնիկ բառեր), ապահարգան, գանձ, դատ, կտակ, պատիժ, վեճ, վնաս, վկա, վճիռ (հին և հնագույն փոխառություններ)* և այլն:

Պարզ բառեր են նոր և նորագույն փոխառությունները, որոնք բավականին մեծաքանակ են իրավական ոլորտի բառապաշարում, ինչպես՝ **հիարթեզ, դիսարգիցիա, սանկցիա**²²⁹ և այլն:

Չնայած պարզ տերմինները սակավաթիվ են, բայց և այնպես ակտիվ մասնակցություն ունեն իրավատերմինահամակարգում մեծ թիվ կազմող բաղադրյալ բառերի կազմությանը:

Բաղադրյալ տերմինները բազմազան են թե՛ իրենց կազմության եղանակներով ու միջոցներով, թե՛ կառուցվածքով: Նրանք ստորաբաժանվում են **աճանցալոր** (առոչինչ, ապակտիվացում, համակատարում), **բարդ** (դատաբժիշկ, վճռաբեկ, հանցանշան) և **բարդ աճանցալոր** (իրավախորհրդատու, հայցադիմում, դատավիճաբանություն) բառերի:

Բաղադրյալ տերմիններ ասելով՝ հասկանում ենք ինչպես բազմաձևույթ բաղադրիչների միասին, այնպես էլ երկու և ավելի

²²⁸ Տե՛ս **Մարգարյան Ալ.**, Ժամանակակից հայոց լեզու (բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Երևան, 1990, էջ 33:

²²⁹ Նշված տերմինները իրավական նորմի կառուցվածքային անուններ են: **Չիարթեզը** (իրավաբանական փաստը) ցույց է տալիս, թե որ դեպքում է գործում իրավական նորմը, **դիսարգիցիան** սահմանում է սուբյեկտների վարքագծի կանոնը հիարթեզով առաջացող իրավահարաբերության դեպքում, իսկ **սանկցիան**՝ դիսարգիցիայով նախատեսված վարքագծից շեղվելու կամ հրաժարվելու դեպքում առաջացող անցանկալի հետևանքները վերացնելու պատժամիջոցներ:

բաղադրիչ ներքին առանձին գրու թյամբ կազմված, մեկ բառային իմաստ արտահայտող բաղադրու թյուններ:

Յիմք ընդունելով ամենաընդհանուր բառակազմական հատկանիշները՝ արդի հայերենի իրավաբանական բոլոր բաղադրյալ տերմինները բաժանում ենք երեք տիպի՝ *վերլուծական, համադրական և հասկավական*²³⁰:

§1. Արդի հայերենի իրավաբանական վերլուծական տերմինների բառակազմական քննություն

«Վերլուծական են այն բաղադրու թյունները, որոնց բաղադրիչները պահպանում են իրենց բառային ինքնուրույնությունը, այսինքն՝ արտասանվում և գրվում են որպես առանձին բառեր և մեծ մասամբ ստանում են անկախ բառային շեշտ, թեև ամբողջությամբ արտահայտում են մեկ բառային իմաստ»²³¹:

Իրավաբանական տերմինահամակարգում սովոր թիվ են կազմում վերլուծական բաղադրու թյունները, մասնավորապես **հարադրական բարդու թյուններն ու կայուն բառակապակցու թյունները**:

Իրավաբանական հարադրական բարդու թյունները բայական և անվանական կազմու թյուններ են: Բայական հարադրավորների բաղադրիչներից մեկը բայ է, իսկ մյուսը՝ որևէ անուն խոսքի մաս, օրինակ՝ **ազատագրկման դատապարտել, անազատության մեջ պահել, արգելանքի վերցնել, մեղադրանք առաջադրել, ապացույց ներկայացնել, զանցանք գործել, դատավճիռ կայացնել, հայցը մերժել, վճիռը բեկանել, օրենք խախտել, դատարան կանչել, պարիժ կրել, հանցագործությունը մեղսագրել, հայց ներկայացնել, ինքնաապնություն հասցնել, արդարադատություն իրականացնել, պարիժ կիրառել** և այլն²³²:

Առանձնացրել ենք մեկ *զուգադրական բայ* (երբ բոլոր բաղադրիչները բայեր են), այն է՝ **իմանալ – չհայտնել**

²³⁰ Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 220-221:

²³¹ Նույն տեղում, էջ 221:

²³² Բոլոր տերմինների գիտական սահմանումներն ընդգրկված են թե՛ իրավունքի դասագրքերում և օրենսդրական ակտերում, թե՛ մասնագիտական բառարաններում:

(հանցագործության հետ առնչվող հանրորեն վտանգավոր գործողություն կամ անգործություն):

Սույն օրինակի նման հանդիպել ենք մեկ անվանական հարադրություն, որն է **իրավաբան-խորհրդատու** տերմինը:

Վերլուծական **հատվածական բաղադրությունները** շատ չեն իրավաբանական բառապաշարում: Հատվածական բաղադրությունների «բաղադրիչները նույնական կամ նույնիմաստ ածականակերտ ածանցներով կազմված և իրար հետ ստորադասության, համադասության կամ փոխադարձության հարաբերությամբ կապակցված բառեր են»²³³: Հատվածական բաղադրությունների **համադասական հարաբերությամբ** կապակցված բաղադրիչները համագործեն և միմյանց չեն լրացնում, ինչպես՝ *օրինափրավական (օրինական և իրավական), իրավապայմանագրային (իրավական և պայմանագրային բնույթ կրող), դատաբննչական (դատական և բննչական), օրինախորհրդակցական (օրենսդրական և խորհրդակցական), իսկ ստորադասությամբ* կապակցված բաղադրիչներից առաջինը մյուսի լրացումն է՝ *դատաբժշկական (դատական բժշկությունը հատուկ), դատահոգեբուժական (դատական հոգեբուժությանը հատուկ), քաղաքացիափրավական (քաղաքացիական իրավունքին վերաբերող), քրեափրավական (քրեական իրավունքին վերաբերող), ռազմադատական (ռազմադատային դատարանների գործունեությանը հատուկ՝ վերաբերող):*

Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարը բավականին ընդգրկուն է վերլուծական բաղադրությունների երկրորդ տեսակով՝ **կայուն բառակապակցություններով**²³⁴:

Բառակապակցությունները երկու կամ ավելի լիիմաստ, ստորադասական հարաբերություն ունեցող, նախադասության մեջ մեկ անդամի դեր կատարող, անվանական արժեք ունեցող այնպիսի բառախումբ են²³⁵, որոնք, ըստ բաղադրիչների կապակցելիության սերտության աստիճանի, լինում են *ազատ և կայուն*: Ազատ բառակապակցությունները կազմվում են խոսելու ընթացքում,

²³³ Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 239:

²³⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 221:

²³⁵ Տե՛ս Պապյան Արտ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003, էջ 38:

դրանց համար լեզվում չկան պատրաստի կաղապարներ, բաղադրիչները կարող են հեշտությամբ բաժանվել կամ առանձին գործածվել, ինչպես նաև միանալ տարբեր բաղադրիչների հետևում ընդհանուր բառակապակցություններ կազմել, ինչպես՝ *(դիտողություններ (մեղայական, ապացույց) ներկայացնել, ծանոթանալ նյութերին (գործերին):*

«**Կայ ուն բառակապակցությունները** երկու և ավելի բառերի կապակցություններ են, որոնք անդամների միասնությամբ արտահայտում են մեկ բառային իմաստ, ունեն անվանողական դեր և նախադասության մեջ հանդես են գալիս իբրև նախադասության մեկ անդամ»²³⁶, օրինակ՝ *դատավճռի եզրափակիչ մաս, փոխառության գումար, մտավոր սեփականություն, նոտարական գործարք, անհիմն հարստացում, բանկային վկայագիր, հրապարակային պայմանագիր, ապահովագրական պարզև և այլն:*

Էդ. Աղայանը տարբերակում է կայ ուն բառակապակցության երկու տեսակ՝ **դարձվածային և բաղադրական:**

Դարձվածային բառակապակցությունները նախապես եղել են սովորական շարահյուսական կապակցություններ, որոնք, հետագայում գործածվելով փոխաբերաբար, վերածվել են կայ ուն բառակապակցությունների հենց այդ փոխաբերական նշանակությամբ, օրինակ՝ *կրակի կտոր:* Այսպիսի կայ ուն բառակապակցություններ չկան իրավաբանական տերմինահամակարգում, փոխաբերելով մեծ թիվ են կազմում բաղադրական կազմությունները, որոնք «կազմվում են խոսքից անկախ, որպես բաղադրյալ (բազմանդամ) տերմիններ և բաղադրյալ անուններ»²³⁷:

Ներկայացնելով բաղադրական կայ ուն բառակապակցությունների կառուցվածքային բնույթը՝ ընդգծենք, որ այս տերմինները շարահյուսական կայ ուն կապակցություններ են՝ գործածական միմիայն իրենց հասկացության նշանակությամբ և զերծ (ինչպես բոլոր տերմինները) հուղագրական երանգից: Նրանց բաղադրիչները թեև սերտաճած չեն, սակայն անտրոհելի են և նախադասության մեջ հանդես են գալիս որպես մեկ միասնական

²³⁶ Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 236:
²³⁷ Նույն տեղում, էջ 237:

անդամ: Բառակապակցություններն-տերմինների բաղադրիչների միջև առկա կախյալ կապը արտահայտվում է միայն որոշչային և հատկացուցչային հատկություններով²³⁸:

Իրավաբանական տերմին բառակապակցություններն առավել ապես կառուցված են **ածական + գոյական** կաղապարով, *օրինակ՝ արհեստավարժ պահառու, առնչինչ գործարք, դատական վեճ, դռնբաց նիստ, իրավաբանական անձ, համամասն պատասխանատվություն, հակընդդեմ հայց, պայմանագրային սեկվեստր, խնամատար ընտանիք, ծնողական իրավունքներ, խորթ երեխաներ, նպատակային փոխառություն, շահագրգիռ կողմ, հանցավոր արարք, քրեական հետապնդում, ֆիզիկական անձ* և այլն:

Իրավատերմինահամակարգում լայնորեն տարածված է **դերբայ** կամ **դերբայական դարձված + գոյական** կաղապարը, ինչպես՝ *անզգուշությունը կատարված արարք, գանձված գումար, պատիժը ծանրացնող հանգամանքներ, քրեական պատասխանատվություննից ազատող հանգամանքներ, ավարտված հանցագործություն, ծանրացուցիչ հանգամանքներում կատարած սպանություն, պահանջող կողմ, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում, իրավագրկում նախատեսող պատիժ, դատավորին բացարկելու հիմքեր, պատճառած վնաս, կանխամտածված սնանկություն, հաջորդող գրավ, չսպառվող գույք* և այլն:

Հանդիպում են նաև **գոյական + գոյական** կաղապարով տերմիններ, որոնց բաղադրիչները կապակցված են **հատկացուցիչ - հատկացյալ՝ գույքի անձեռնմխելիություն, դատապարտյալի ցուցմունքներ, կասկածյալի ցուցմունքներ, հանցագործության կազմակերպիչ, գործի քննություն, կողմերի հարցաքննություն, հողի վարձակալում, հանցանքների համակցություն, վարույթի պայմանագիր, փաստի վիճարկում, դատավարության մասնակիցներ, հետաքննության մարմին** և այլն, և **որոշիչ - որոշյալ** հարաբերությամբ՝ *աղքատության նպաստ, արդարացման դատավճիռ, դիմագրկմամբ պահատվություն, դուստր ձեռնարկություն, ձեռքբերման վաղեմություն, պայմանով կտակ, գործով վարույթ* և այլն:

²³⁸ Տե՛ս **Պետրոսյան Ջ.**, Հայերեն տերմինաբանություն, մաս 2, Երևան, 2010, էջ 9-11:

Լրացում + բայ անուն կաղապարով գոյականական բառակապակցությունները բավականին հաճախակի են, ինչպես՝ *գույքի բռնագրավում, վաղաժամկետ ազատում, ժամանակավոր կալանավորում, հավատարմագրային կառավարում, դատական սխալներից տուժածների իրավունքների վերականգնում, հանցագործության որակում, քաղաքացիական կացության ակտերի գրանցում, խոսքի ազատության չարաչափում, անհրաժեշտ պաշտպանություն սահմանազանցում, խուլ իգանական դրդում* և այլն:

Թվական + գոյական կաղապարով առանձնացրել ենք մեկ տերմին, այն է՝ *երրորդ անձ: Դերանուն + գոյական* կաղապարը ևս հազվադեպ է կիրառվում, ինչպես՝ *այլ տեղանք, այլ արժեքներ, այլ փաստաթղթեր:*

Իրավաբանական բառակապակցություններում ներմիներին բաղադրիչները կազմվում են *լրացում-լրացյալ* հարաբերությամբ՝ ծավալվող՝ միջուկային բառ կամ տերմին, որ *լրացյալ* է, և ծավալող՝ ծավալիչ բառ կամ տերմին, որ *լրացում* է: Ըստ ծավալիչների քանակի՝ իրավաբանական բառակապակցություններում ներմիները *լինում են երկանդամ, եռանդամ և բազմանդամ:*

Բերենք մի քանի օրինակներ իրենց իմաստային նշանակություններով:

1. Երկանդամ բառակապակցական տերմիններ՝

ինովացիոն գործունեություն - «գիտական արդյունքների օգտագործմանը, նոր արդյունքների ստացմանը, թողարկվող արտադրանքի որակի բարձրացմանը և ծախսերի նվազեցմանն ուղղված գործունեություն» գույքը կամ դրամի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության» («Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, հդ. 1),

ածանցյալ ապացույցներ - ապացույցներ, որոնցում միջնորդավորված օղակ (օղակներ) կա, և առկա է ապացուցողական ինֆորմացիայի միջանկյալ կրող,

հանցակցի սահմանազանցում - անձի կողմից այնպիսի հանցանք կատարելը, որը չի ընդգրկվում մյուս հանցակիցների դիտավորությամբ,

հիմնական հանցակազմ - ըստ արարքի հանրային վտանգավորության աստիճանի՝ հանցակազմի տեսակ, որը պարունակում է հանցագործության տվյալ տեսակի բոլոր դեպքերին հատուկ, միշտ կրկնվող, հանցագործության այդ տեսակի էությունն արտահայտող հատկանիշներ,

քրեաիրավական անգործողություն – մարդու՝ հանրորեն վտանգավոր, հակաօրինական, գիտակցված և կամային հատկանիշներով օժտված ակտիվ վարքագիծ,

քրեական տարր - հանցագործություն կատարելու հակում ունեցող անձ:

2. **Եռանդամ բառակապակցական տերմիններ՝**

ազատազրկում որոշակի ժամկետով – պատժի տեսակ, որը որոշակի ժամկետով դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից մեկուսացնելն է: Ազատազրկումը սահմանվում է երեք ամսից տասնհինգ տարի ժամկետով:

հանցագործությունից կամովին հրաժարում - «... անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելու ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը» (ՀՀ քրեական օրենսգիրք, հդ. 36),

վաղորոք ծագած դիտավորություն – դիտավորության՝ որպես մեղքի ձևի, ձևավորման ժամանակի հետ կապված՝ տեսակ, որի դեպքում հանցանքը կատարելու մտադրության և դրա իրականացման միջև որոշակի ժամանակահատված է անցնում,

դատական որոշումների կատարում – քրեական դատավարության եզրափակիչ փուլ, որը սկսվում է դատական որոշումն օրինական ուժի մեջ մտնելու պահից ու ներառում է այդ ակտի իրացումն ապահովող դատավարական գործողություններն ու որոշումները,

հանցագործության սուբյեկտիվ կողմ - անձի հոգեկան գործունեությունը՝ կապված հանցագործության հետ: Հանցագործության սուբյեկտիվ կողմը արտացոլում է հանցանք կատարողի գիտակցական և կամային ոլորտներում ընթացող ներքին

գործընթացները: Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են՝ մեղքը, շարժառիթը, նպատակը, հույզերը:

3. **Բազմանդամ բառակապակցական տերմիններ՝**

անուղղակի դիտավորություն ամբ կատարված հանցանք – երբ «անձը գիտակցել է իր գործողության (անգործության) հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել այդ հետևանքները, բայց գիտակցաբար թույլ է տվել դրանք» (ՀՀ քրեական օրենսգրքի, հդ. 29),

առանց անձնակազմի տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիր – երբ «վարձատուն վճարի դիմաց տրանսպորտային միջոցը հանձնում է վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը՝ առանց նրան կառավարման ու տեխնիկական շահագործման համար ծառայություններ մատուցելու» (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, հդ. 645),

իրավաբանական օգնություն իրավունքի ապահովում – քրեադատավարական իրավունքի սկզբունք, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունի: Համաձայն այս սկզբունքի՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել կասկածյալի և մեղադրյալի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը,

նախնական քննության տվյալների հրապարակման անթույլ արգելիչություն – նախնական քննության ընդհանուր պայմանների համակարգի մեջ մտնող իրավական պահանջ, որով նախնական քննության տվյալների հրապարակման վրա արգելք դնելով՝ օրենսդիրը հնարավորություն է տալիս քրեական հետապնդման մարմնին՝ հաջողությամբ լուծելու դատավարության այս փուլի՝ իր առջև դրված խնդիրները,

ընդհանուր տիպի հոգեբուժական հիվանդանոցում հարկադիր բուժում – բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակ, համաձայն որի՝ ընդհանուր տիպի հոգեբուժական հիվանդանոցում հարկադիր բուժում կարող է նշանակվել այն անձի նկատմամբ, ով իր

հոգեկան վիճակով հիվանդանոցային բուժման և հսկողության կարիք ունի:

Իրավաբանական բազմանդամ տերմինների ծավալիչները կարող են լինել **տերմիններ, տերմինային բառեր** կամ **ոչ տերմիններ**, այսինքն՝ **սովորական բառեր**²³⁹: Ինչպես՝

ա) տերմիններով արտահայտված ծավալիչներ – *ալիմենտի ինդեքսավորում, ամրագրված քաղաքացիներ, բռնադատվածի վկայական, գույքահարկի արտոնույթ ունեներ, դատախազության աշխատակից,*

բ) տերմինային բառերով արտահայտված ծավալիչներ – *օրինական տուժանք, դիտավորյալ հանցագործություն, ապրիլի գործողություն, մեղադրանքի կողմ, մարված դատապարտում,*

գ) սովորական բառերով արտահայտված ծավալիչներ – *առաջին հերթի ժառանգներ, փակ կտակ, կոշտ գրավ, ցմահ ազատագրկում, կեղծ ամուսնություն:*

Հանդիպում են տերմին բառակապակցություններ, որոնց ծավալիչները կամ միջուկային տերմինները փոխառյալ բառեր են, ինչպես՝ *դեբիտորական պարտք, պրինցիպալի պարտավորություն, բենեֆիցիարի պահանջ, կոմիսիոն վարձատրություն, հրապարակային օֆերտա, ուշացումով ստացված ակցեպտ, ժառանգության տրանսմիսիա, բացառիկ լիցենզիան* այլն:

Այսպիսով՝ իրավաբանության լեզուն, լինելով բազմաբնույթ, ունի նաև իմաստային հագեցվածություն: Ուստի մասնագիտական երևույթների իմաստը ճիշտ և լիարժեք արտահայտելու համար հաճախ միաբառ տերմինները իրենց տեղը զիջում են բաղադրյալ տերմիններին, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հստակ սահմանումը:

§2. Արդի հայերենի իրավաբանական համադրական տերմինների բառակազմական վերլուծություն

²³⁹ Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 341:

Հայ իրավաբանական բառապաշարն ընդգրկում է համադրական բաղադրություններով, որոնց բաղադրիչները, համադրական եղանակով միմյանց միանալով, կազմում են մեկ բառ՝ ստանալով մեկ հիմնական բառային շեշտ:

Համադրական եղանակով կազմվում են ինչպես համադրական բարդությունները, այնպես էլ ածանցումները:

Քանի որ մեր նպատակն է կատարել իրավաբանական տերմինների բառակազմության համաժամանակյա քննություն, այլ կերպ ասած՝ բուն բառակազմական վերլուծություն, ուստի մեր առջև խնդիր ենք դնում պարզելու բաղադրյալ բառը կազմող բաղադրիչների հավելման հերթականությունը, այսինքն՝ նախատիպը և աստիճանաբար դրա վրա ավելացող արմատական կամ այլ կարգի բաղադրիչները: Լեզվաբանական ուսումնասիրությունները փաստում են, որ քանի բաղադրիչներից էլ կազմված լինի բառը, բառակազմական տեսակետից ցանկացած քայլում այն երկբաղադրիչ է, այսինքն՝ միշտ ունենում ենք հիմք + 1 կամ 1 + հիմք կառուցվածքը²⁴⁰: Իրավաբանական տերմինների կազմությունը որոշելիս հիմք ենք ընդունում բառամիավորին ավելացած բառակազմական վերջին քայլը:

Ըստ կազմության՝ բաղադրական հիմքերը լինում են պարզ և բաղադրյալ: Պարզ հիմքերը բառակազմական վերլուծության չենթարկվող, միաձևույթ հիմքեր են, ինչպես՝ **դատ-ա- վճիռ, վճռ - ա-բեկ, պարտ -ա - տեր**: Սույն բառերի պարզ հիմքերն են՝ **դատ, վճռ-, պարտ-, -վճիռ, -բեկ, -տեր**:

Բաղադրյալ հիմքերը կազմված են մեկից ավելի ձևույթներից, օրինակ՝ **դատավար - ություն, սահմանադր - ական, վարչ - ական, առերես - ում**: Այս օրինակների բաղադրյալ հիմքերն են՝ **դատավար-, սահմանադր-, վարչ-, առերես-**:

Բաղադրական հիմքերը լինում են **սերող**, որին ավելանում է որևէ այլ բաղադրական հիմք կամ ածանց՝ կազմելով նոր բառ, և **բաղադրող**՝ սերող հիմքին ավելացած բաղադրական հիմքը կամ ածանցը: Հավել ենք, որ բարդություններն ունենում են երկուական բաղադրական հիմքեր, իսկ ածանցումները՝ մեկ բաղադրական հիմք

²⁴⁰ Տե՛ս **Գալ սոյ ան Ս.**, Դարոցական բառակազմական բառարան, Երևան, 2014, էջ 5:

(սերող հիմք) և դրան ավելացող ածանցը: Ածանցական բաղադրությունների բառակազմական վերլուծությունների ժամանակ երկրորդական ձևույթները (ածանցներ) չեն ընդունվում որպես բաղադրական հիմք:

Ըստ հիմքերի հաջորդականության՝ սերող հիմքը միշտ նախորդում է բաղադրող հիմքին, ինչպես՝

գրավա(սերող) – մարում (բաղադրող)

դատավճռա(սերող) – կից (բաղադրող)

դիա(սերող) – զննում (բաղադրող)

երկ(սերող) – քաղաքացիություն (բաղադրող)

իրավա(սերող) – հասկացողություն (բաղադրող)

իրավ(սերող) – առնչություն (բաղադրող)

մատնա(սերող) – հետք (բաղադրող)

մեղադրա(սերող) – վկա(բաղադրող)

կրկնա(սերող) – դատված (բաղադրող)

Երևույթը մասնակիորեն է նույնը մնում բառերի ածանցման ժամանակ: Քանի որ ածանցները կարող են դրվել ինչպես սերող հիմքի վերջում (վերջածանցներ) և սկզբում (նախածանցներ), ապա, ակնհայտ է, որ սերող հիմքը լինում է կամ ածանցին նախորդող, կամ էլ հաջորդող մաս: Իրավաբանական տերմիններին առավել բնորոշ է **սերող հիմք + վերջածանց** կաղապարը:

Սերող հիմքը նախադաս դիրքում՝

առնչակից(սերող) – ություն

բողոքարկ(սերող) – ու

ընդդատ(սերող) – յա

խնամակալ(սերող) – ություն

կալանավոր(սերող) – ում

անմեղսագիտակ(սերող) – ություն

անմեղսունակ(սերող) – ություն

Սերող հիմքը վերջադաս դիրքում՝

ան – մեղապարտ(սերող)

արտա – դատաբանական(սերող)

ենթա – օրենսդրական(սերող)

հակա – մեղադրանք(սերող)

վերա- հարցաքննել (սերոդ):

Իրավաբանական տերմինահամակարգում զգալի թիվ են կազմում **համադրական իսկական բարդությունները**, որոնց մեծ մասը հոդակապով բառեր են, ինչպես՝ *վարձ-աւլալ, պահանջ-ատեր, վճռ-ագիր, հարց -ա- փորձ* և այլն: Սրանք կազմվում են երկու բառակազմական հիմքերով, որոնց շարահյուսական կապը մթազնած է կամ ձևաբանորեն չի դրսևորված համապատասխան վերջավորություններով, երբ բաղադրիչները կորցնում են իրենց և՛ ձևական, և՛ իմաստային անկախությունը²⁴¹: Կազմվելով բառակազմության բառաբարդման եղանակով՝ իսկական բարդությունները բաղկացած են ինչպես *արմատական (բարդ բառեր)*, այնպես էլ *ածանցավոր (բարդ ածանցավոր)* բաղադրիչներից: Բարդ ածանցավոր բառերի կազմության վերաբերյալ Գևորգ Ջահուկյանը գրում է, որ սրանք «ըստ սերման՝ երկբևույթ են, այսինքն՝ ածանցավոր բառերը կարող են բարդվել (կայանատուն) և բարդ բառերը կարող են ածանցվել (գեղարվեստական)»²⁴²:

Իրավական լեզվի բառապաշարի իսկական բարդությունները առավել ասես կազմվում են հետևյալ կաղապարներով²⁴³:

գոյական + գոյական - *ապահարզանագիր, բաժնեթուղթ, իրավաւտեր, հանցախուժմբ, հանցաշխարհ, հանցատեսակ, հանցատեր, պատժած և, փաստաթուղթ, օրինականազիծ և այլն,*

գոյական + բայսահիմք - *աճուրդահան, դատակիր, ժառանգառու, իրավագանց, կտակակատար, հայցատու, հանցատես, վճռաբեկ, օրինախախտ և այլն,*

ածական + գոյական - *բազմահանցանք, դատապահանջ (դատական պահանջ), դատաժախս, իրավահայեցողություն և այլն,*

դերանուն + գոյական - *ինքնաբացարկ, ինքնիրավչություն, ինքնամեղադրում, ինքնադատատան, ինքնավերահսկողություն, ինքնագործունեություն,*

բայսահիմք + գոյական - *ծանուցագիր, արգելակալանք, աշխատաժամանակ:*

²⁴¹ Տե՛ս **Սուլքիայան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2008, էջ 246:

²⁴² **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989, էջ 228:

²⁴³ Բառերի կաղապարները քննվել են ըստ բառակազմական վերջին քայլի, ըստ այդմ՝ հիմքերում կարող են լինել նախորդ քայլերում ավելացած ածանցներ:

Մեկ-երկու օրինակներով են հանդիպում ստորև բերված կադապրները՝

- բայ ահիմք + բայ ահիմք** – *սլահ առու , սլահ առու ,*
- ածական + բայ ահիմք** - *արդարարատ, ապահովարիր,*
- մակբայ + գոյական** – *կրկնահանցանք, կրկնարատ,*
- գոյական + ածական** – *իրավագուրկ:*

Թվով քիչ չեն երկուսից ավելի արմատներից կազմված իրավաբանական բազմաբարդ բաղադրությունները, օրինակ՝ *մեղարարակա, մեղարարագիր, կրկնահանցագործ, դատաբժշկափորձաքննություն, դատաճեռագրաբան, դատալճռակից, դատիրավասու* և այլն:

Ըստ բաղադրիչների տերմինայնություն՝ համարական բարդությունները հանդես են գալիս դասակարգման չորս կադապրով՝

- **տերմին+տերմին**՝ *հանցափորձ, իրավագանց, փորձաքննություն*
- **բառ+տերմին**՝ *կրկնարատ, բազմահանցանք, ինքնաբացարկ*
- **տերմին+բառ**՝ *հանցակից, օրենսգիրք, պատճաճ*
- **բառ+բառ**՝ *հոգեզավակ, եկամուտ, արժեթուղթ:*

Հիմք ընդունելով մեր ուսումնասիրությունների արդյունքները՝ փաստենք, որ ժամանակակից իրավաբանական համակարգը բավականին ընդգրկուն է **ածանցավոր բառերով**: Վերջածանցներով կազմված բաղադրությունները գերազանցում են նախածանցավորներին. երևույթ, որը ավանդական է դարձել հայերենի բառակազմության մեջ:

Հիմք ընդունելով ածանցների գործածական բնույթը՝ Գևորգ Ջահուկյանը տարբերակում է *ընդհանրական* և *ոչ ընդհանրական ածանցներ*՝ բացատրելով, որ «ընդհանրական ածանցները, ընդունակ լինելով կապակցվելու շատ արմատների հետ, բնականաբար ավելի գործածական և ավելի արտադրողական են. նոր բառերը սովորաբար կազմվում են այս տիպի ածանցների օգնությամբ»²⁴⁴:

Հաճախակի գործածվող վերջածանցներից են՝

²⁴⁴ **Ջահուկյան Գ.**, ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989, էջ 160:

-ությ ուն - անգործ ությ ուն, անընդհատ ությ ուն, հանցավոր ությ ուն, դատախազ ությ ուն, նոտար ությ ուն, պարտավոր ությ ուն, փորձագիտ ությ ուն, փոխանակ ությ ուն, քննչ ությ ուն, վնասարար ությ ուն, լրտես ությ ուն, դիտավոր ությ ուն, օրինական ությ ուն, պատժելի ությ ուն, բռն ությ ուն,

-ոււմ - ազատում, ամրագրում, գրանցում, գանձում, մեղսագրում, ներում, պարտակում, շորթում, զննում, որոշում, խոշտանգում, կասեցում, մեկուսացում, յուրացում, դրդում, պահում, խախտում, վավերացում,

-ական - գրավական, դատական, նոտարական, փորձագիտական, քրեագիտական, քրեաբանական, քրեական, քաղաքացիական, օրինական, քննչական, վարչական,

-անք - գանցանք, արգելանք, կալանք, հանցանք, գտանք, վիրավորանք, տուժանք, տուգանք, մեղադրանք,

-յալ – խնամարկյալ, կասկածյալ, մեղադրյալ, դատապարտյալ, ամբաստանյալ, պաշտպանյալ,

-ող - լիազորող, մեղադրող, պատասխանող, տուժող, դիտող, դիմող:
Չազվադեպ են հանդիպում **-իք** (երաշխիք, կեղծիք), **-մուկք** (ցուցմուկք, բաժանմուկք), **-որդ** (գնորդ, ժառանգորդ, պատասխանորդ), **-ուլթ** (վարուլթ, վարձուլթ), **-իչ** (քննիչ, թարգմանիչ), **-ու** (կատարածու), **-ք** (արարք, դեպք, մեղք) վերջածանցներով կազմված տերմինները:

Գուրգեն Սևակը գրում է. «Ածանցում ունեն և կարող են ունենալ միայն այն լեզուները, որոնք հասել են զարգացման այնպիսի աստիճանի, որ արդեն ունեն միայն վերաբերական իմաստարտահայտող հատուկ ձևույթներ, այսինքն՝ ածանցներ (աֆիքսներ): Իսկ այս նշանակում է, որ ժամանակի ընթացքում լեզվի որոշ ձևույթներ (արմատներ) զրկվելով իրենց արտահայտած նյութական, իրային իմաստից՝ ստանձնում է սուկ վերաբերական, իրահարաբերական իմաստ արտահայտելու պաշտոն»²⁴⁵: Իրավական ոլորտի բառապաշարում որոշակի տեղ են զբաղեցնում այնպիսի տերմիններ, որոնք կազմվել են արմատների իմաստների

²⁴⁵ **Սևակ Գ.**, ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 2009, էջ 164-165:

մթագնու մով առաջացած ածանցներից, ինչպես՝ 1. իրավաբան, փաստաբան, քրեաբան՝ **-(ա)բան վերջածանցից**, 2. իրավագետ, մասնագետ, ոճրագետ, փորձագետ, քրեագետ՝ **-(ա)գետ վերջածանցից**: **-(Ա)բան**, **-(ա)գետ** ածանցները հոմանիշներ են, արտահայտում են «մի բանով զբաղվող, մի բանի մասնագետ» ընդհանուր իմաստը²⁴⁶:

Վերջածանցներով կազմված իրավաբանական տերմինների մեծագույն մասը գոյականներ են:

Ժամանակակից իրավաբանական տերմինահամակարգում մեծ է նախածանցավոր տերմինների թիվը, բառաստեղծման ածանցման եղանակով նոր տերմիններ են կազմում գրեթե բոլոր նախածանցները: Առավել գործունե է **ան-** ժխտական նախածանցը՝ *անառարկայական, անզգույշ, անիրավունակ, անկողմնակալ, անշահութաբեր, անվերապահ, անվավեր, անչափահաս, անապահով, անվիճելի* և այլն, որոնց մի մասը կիրառվում է կապակցված կազմություններում, ինչպես՝ **անհիմն ձեռքբերում**, **անօտարելի իրավունքներ**, **անժառանգ գույք**, **անգիտակից արարք**, **անհատույց օգտագործում** և այլն:

Իրավաբանական տերմինահամակարգի համալրման գործընթացում գործունե նախածանցներ են՝ **առ-**՝ *առբերել, առգրավում, առնչինչ, արտ(ա)-*՝ *արտադատաբանական, արտաշիրմում, արտամուսնական, աս(ա)-*՝ *ասպպետականացում, ասպածածկագրել, ասպակողմնորոշել, ասպակուսակցականացում, բաց-՝ *բացարկ, գեր(ա)-*՝ *գերատեսչություն, գերզնած, գերշահույթ, հակ(ա)-*՝ *հակահետազոտական, հակապահանջ, հակափաստարկ, հակափորձաքննություն, հակաօրինական, հակընդդեմ, համ(ա)-*՝ *համաիրավախախտ, համահայցվորներ, համասեփականատեր, համասեփականություն, համաժողով, համատեղ, համակատարում, համաներում, համապատասխանողներ, համապարտադիր, նախ(ա)-*՝ *նախազգուշացում, նախադեպ, նախաաշիվ, նախադատական, նախապայման, նախաքննություն, նախակալանք, նախահանցանք, ներ-*՝ *ներդնել, ներմուծում, ներպետական, վեր(ա)-*՝ *վերագրավարում, վերագնորդ, վերահետաքննություն, վերավարձակալություն, վերաքննիչ, վերաքննություն, վերգրում,**

²⁴⁶ **Հանցագործ, ոճրագործ, քրեագործ** տերմիններն ածանցավոր բառեր չեն, քանի որ դրանց բաղադրիչ **-(ա)գործ** ձևույթը չի արտահայտում համանուն ածանցի *մի բանով զբաղվող, մի բանի մասնագետ* իմաստը:

վերստուգում, վերաորակավորում, վերավճարում, վերավստահում, վերապահովագրություն, վերագնահատում, վերաֆինանսավորում, վերափոխանցել, վերահսկող, վերահաշվարկ, **ենթ(ա)-**՝ ենթաաբոնենտ, ենթաժամանակ, ենթակապալ առու, ենթավարձակալ, ենթահանձնաժողով, ենթակոմիսիա, ենթակոմիտե, **տարա-**՝ տարածայնություն, տարակարծություն, **փոխ-**՝ փոխանցագիր, փոխատուցում, փոխառու, փոխատու, փոխանցումնայլն:

Իրավական լեզվի բառապաշարում նկատվում է **չ-** նախածանցով նոր բառեր կազմելու միտում, ինչպես՝ *չապացուցվածություն, չհիմնավորվածություն* տերմինները:

Տերմինի հաստատական նշանակությամբ ժխտական իմաստ հաղորդելու նպատակով հաճախ են կիրառվում ժխտական նախածանցները, օրինակ՝ *զգուշություն - անզգուշություն, օրինական - անօրինական, օտարելի - անօտարելի, պատժելի - անպատժելի, քրեականացնել - ապաքրեականացնել, ամբաստանություն - հակամբաստանություն, հայց - հակահայց, հայցվոր - հակահայցվոր, իրավական - հակաիրավական* նայլն:

Նախածանցավոր իրավաբանական կազմությունները մեծ մասամբ գոյականներ են, քիչ չեն ածական և բայ խոսքի մասեր կազմող տերմինները:

§3. Արդի հայերենի իրավաբանական տերմինահամակարգում թույլ ադելի գործածությունը նեցող հապավումներ և համառոտագրություններ

Արդի հայերենի իրավաբանական տերմինահամակարգը ընդգրկում է հապավական բաղադրություններ, որոնք բաղադրյալ բառերի կամ անվանումների կրճատված մասերի միացումով կազմված բարդություններ են:

Իրավական խոսքում հապավումների ստեղծումն ու տարածումը սկսվում է գլխավորապես 20-րդ դարի վերջին՝ պայմանավորված Յայաստանի Յանրապետության անկախացմամբ, և շարունակվում է առայսօր: ԶԶ-ի և եվրոպական մի շարք պետությունների նորաստեղծ հարաբերությունների արդյունքում կնքվում են մի շարք պայմանագրեր, համաձայնագրեր, երկիր են մուտք գործում

իրավական նոր իրականություններ, որոնք ստանում են իրենց համապատասխան լեզվական արտահայտումները: Սրանք մեծ մասամբ բավականին ծավալուն բաղադրյալ անվանումներ են, որոնց պարտադիր կիրառությունը տվյալ խոսքում իրենց հաճախակի գործածմամբ հանգեցնում է խոսքի ծանրաբեռնվածությունը, ուստի այս խնդրի լավագույն լուծում է դրանց՝ տվյալ իրավական ակտում երկրորդ և մնացած գործածության ժամանակ որպես հապավումներ հանդես գալը:

Իրավաբանական տերմինների հապավումները առավելապես տառային տեսակին են պատկանում և անվանում են պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, պայմանագրերի, դաշնագրերի և այլ հասկացություններ, որոնք գրվում են հայերեն տառադարձությամբ²⁴⁷:

Իրավաբանական տերմինների հապավումները ներկայացնենք ըստ նրանց արտահայտած հասկացության տեսակի:

1. Միջազգային դաշնագրերի, հռչակագրերի, կոնվենցիաների անունների հապավումներ՝

ՄԱՄԿ - Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա

ՄԻՅՅ – Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

ԵԻԿ - Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա

ՌԽՎՄԿ – Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա

ՔՔԻՄԴ - Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

ՏՍՄԻՄԴ - Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր

ՄՃԲՊԿ – Միջազգային ճանապարհային բեռնափոխադրման պայմանագրի մասին կոնվենցիա:

2. Միջազգային, պետական կազմակերպությունների, մարմինների անունների հապավումներ՝

ՄԻԵԴ - Մարդու իրավունքների եվրոպական դատարան

²⁴⁷ Իրավաբանական հապավական բաղադրությունները տե՛ս «Իրավունք և առողջ ապահովություն» կայքէջում՝ <http://www.healthrights.am/practitioner-guide-arm/more/977/>:

ՄԻՊ – Մարդու իրավունքների պաշտպան

ԵՄ – Եվրոպական միություն

ԵԱՅԿ - Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ՄԻԵԿ – Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե

ՏՍԽ – ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհուրդ

ՅՈՒՆՍԻՏՐԱԼ – ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողով

ՅՈՒՆԻԴՐՈՒԱ - Միջազգային մասնավոր իրավունքի ինստիտուտ

3. ՀՀ պետական կազմակերպությունների, մարմինների, որոշումների, հարկերի, տեղեկատվական կենտրոնների անունների հապավումներ`

ԱԱԾ - Ազգային անվտանգության ծառայություն

ԱԱՀ - Ավելի ացված արժեքի հարկ

ԴԱՅԿ - Դատական ակտերի հարկադիր կատարում

ԻՐՏԵԿ – Իրավական տեղեկատվական կենտրոն

ԴՏՀ - Դատական տեղեկատվական համակարգ (Datalex)

ՀԻՏՀ - Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ

ՀԱԻԿ – Հաշմանդամ անձանց իրավունքների կոմիտե

ՀՀ ԾՈ – Հայաստանի Հանրապետության ճանապարհային ոստիկանություն

ՀՏ – Հարկային տեսչություն

ՊՈԱԿ – Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՍԴԴԿՈ – Սահմանադրական դատարանի դատական կազմի որոշում

ՍԴՈ – Սահմանադրական դատարանի որոշում:

3.1. ՀՀ դատարանների դատական ակտերում պարտադիր կիրառություն ունեցող դատական գործերի հերթական համարների սկզբնամասն ընդգրկվող ՀՀ դատարանների անունների հապավումներ`

ՎԴ - Վարչական դատարան (կիրառման օրինակ` ՎԴ/4393/05/09)

ԵԱՆԴ - Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատարան (ԵԱՆԴ/0096/01/11)

ԵԾԴ - Երևանի Շենգակիթ վարչական շրջանի դատարան
(ԵԾԴ/0125/01/13)

ԵՄԴ - Երևանի Մալ աթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատարան
(ԵՄԴ/1292/02/09)

ԵԱԴԴ - Երևանի Աջաինյակ և Դավթաշեն վարչական շրջանների
դատարան (ԵԱԴԴ/0014/11/09) և այլն²⁴⁸:

ՀՀ օրենսդրական և եզրվում հաճախ հանդիպող հապավում է **ՀՕ-ն՝
Հիմնական օրենք**, որի կիրառման օրինակ է **ՀՕ-277-Ն: Ն**
համառոտագրությունը նշանակում է *նորմատիվ*:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում մշակված են
հապավումների վերաբերյալ օրենսդրության կանոններ, որոնց
համաձայն՝ «...հապավումները, ինչպես նաև թարգմանության ոչ
ենթակա իրավական, ֆինանսական, տեխնիկական և այլ տերմինները
պետք է գրվեն հայերեն տառադարձությամբ: Առանձին դեպքերում
հայերեն հապավումների և (կամ) տերմինների հետ միաժամանակ՝
փակագծերում, կարող են կիրառվել միջազգային ճանաչում ստացած
կամ ընդունված և առիներեն կամ անգլերեն հապավումներ և (կամ)
տերմիններ» (հդ. 36): Ասվածի և ավագույն օրինակներ են անգլերեն
տառադարձությամբ գործածվող **AETR (European Agreement concerning the
Work of Crews of Vehicles Engaged in International Road Transport)**²⁴⁹՝
*Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ իրականացնող
տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին
Եվրոպական համաձայնագիր*, և **ARLIS (Armenian Legal Informetion System)**՝
Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, հապավումները:

Իրավաբանական բոլոր տառային հապավումները գրվում են
մեծատառ: Բառերով արտահայտելիս մեծատառով է գրվում
բաղադրյալ անվան միայն առաջին բաղադրիչը, եթե իհարկե մյուս
բաղադրիչները հասարակ անուններ են:

ՀՀ իրավական ակտերում, հապավումներից զատ, գործածվում են
նաև տերմինների կրճատագրություններ՝ համառոտագրություններ:
Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ ցանկացած
օրենսգրքում կամ օրենքում համառոտագրության որևէ օրինակ

²⁴⁸ Տե՛ս «**Դատական տեղեկատվական համակարգ**» կայքէջը՝

<http://www.datalex.am/?app=AppCaseSearch>:

²⁴⁹ Տե՛ս «**Միջազգային մանավոր իրավունք**», Երևան, 2005, էջ 334:

չկա, դրանք հիմնականում հանդիպում են դասագրքերում, դատական գործերում, որոշումներում և իրավական այլ աղբյուրներում: Համառոտագրվում են իրավաբանական բաղադրյալ անունների առաջին մի քանի տառերը՝ բաղաձայնից հետո ընկած մասի կրճատումով, ինչպես՝ **ՀՀ քաղ. դատ օր. – ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ՀՀ քր. դատ օր. – ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ՀՀ վարչ. դատ օր. – ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, ՀՀ ընտ օր. – ՀՀ ընտանեկան օրենսգիրք, ՀՀ Սահմ. – ՀՀ Սահմանադրություն, քաղ. գործ – քաղաքացիական գործ, քր. գործ – քրեական գործ** և այլն: Մեջբերենք.

«...վերոհիշյալ օրենսագրքերով (ՀՀ քր. դատ. օր.-ի 380.1-րդ, 406-րդ հոդվածներ և այլն, ՀՀ քաղ. դատ. օր.-ի 226, 227, 228-րդ հոդվածներ և այլն, ինչպես նաև ՀՀ վարչ. դատ. օր.-ի 117.4-րդ հոդված) գործով ըստ էության կայացված դատական ակտի բեկանման հիմք կարող է հանդիսանալ ...այ նախսի խախտումը, որն ազդել է գործի ել քի վրա»²⁵⁰:

Կրճատ գրությունը են գործածվում մեծ մասամբ օրենսագրքերի, իրավական տարաբնույթ գործերի անունները:

ՀՀ իրավական ակտերից զատ՝ իրավաբանական գանազան փաստաթղթերում, լրատվական գրավոր խոսքում հանդիպում են վերոնշյալ և այլ իրավաբանական տերմինների տարատեսակ համառոտագրություններ, ինչպես՝ *քաղ. օր., քաղօր – ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ք.օ., ՔՕ, քրօր, քր.օր. – ՀՀ քրեական օրենսգիրք, Քրդատօր, ՔրԴատՕր – ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, քաղդատօր – ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք* և այլն:

Հիմք ընդունելով համառոտագրության եղանակները՝ նշենք, որ առանց կետի են գրվում չափի և կշռի որոշ միավորներ (մ – մետր, լ – լիտր), ինչպես նաև այն դեպքում, երբ համառոտագրությունը վերջանում է բառի վերջին բաղաձայնով²⁵¹: Հետևաբար *ՔՕ, քրօր, քաղօր* և նման տիպի այլ համառոտագրություններ տերմինների սխալ կրճատումներ են:

²⁵⁰ «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը», 08.02.2011, ՀՀՊՏ 2011.02.16/9(812)Հոդ. 134:

²⁵¹ Տե՛ս **Չաքարյան Հ., Ավետիսյան Յուլ.**, Բառագիտություն, Երևան, 2007, էջ 84-85:

ՀՀ իրավական ակտերի լեգուլն չի արգելում հապավումների և համառոտագրությունների գործածումը, սակայն միևնույն ժամանակ մշակում է կանոն, ըստ որի՝ «Արգելվում է նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ» (ՀՀ օրենքը իրավական ակտերի մասին, հդ. 45):

Այսպիսով՝ իրավական ոլորտի լեգվի բառապաշարում սեփական բառակազմական եղանակների ակտիվ կիրառումը փաստում է, որ իրավաբանական խոսքը հիմնականում կառուցվում է կազմության բաղադրյալ տերմիններով, որոնց մեջ գրեթե անհնար է թվային գերազանցությամբ առանձնացնել վերլուծական (հարադրություններ և կայուն բառակապակցություններ) և համադրական (համադրական բարդություններ և ածանցավոր բառեր) բաղադրությունները:

Իրավական ակտերի հստակ, պարզ և մառչելի բնույթը թույլ չի տալիս համառոտագրությունների և հապավումների հաճախակի կիրառությունը:

*Իրավաբանության լեգուլն, լինելով բազմաբնույթ, ունի իմաստային հագեցվածություն: Ուստի մասնագիտական երևույթների իմաստը ճիշտ և լիարժեք արտահայտելու համար հաճախ միաբառ տերմիններն իրենց տեղը զիջում են բաղադրյալ տերմիններին, մասնավորապես տերմին բառակապակցություններին, որոնք, թվով գերազանցելով հարադրություններին, առավել ապես կազմվում են **ածական + գոյական, դերբայ կամ դերբայ ական դարձված + գոյական, գոյական + գոյական, լրացում + բայ անուն** կաղապարներով:*

Համադրական բաղադրությունները պահանջարկելի և կիրառելի կազմություններ են, որոնցում մասնավորապես զգալի թիվ են կազմում համադրական իսկական բարդություններն ու ածանցավոր բառերը:

*Համադրական իսկական բարդություններն առավել ապես կազմվում են **գոյական + գոյական, գոյական + բայ սիմբ, ածական + գոյական** կաղապարներով, իսկ ըստ բաղադրիչների*

տերմինայ նու թյ ան՝ **տերմին + տերմին, տերմին + բառ, բառ + տերմին, բառ + բառ** կադապար ներով:

Իրավաբանական տերմինների ածանցման բառակազմական գործընթացում կենսունակ են **-ու թյ ու ն, -ու մ, -ական, -անք, -յ ալ , -ող** վերջածանցներն ու գրեթե բոլոր նախածանցները՝ **ան-, սալ(ա)-, սրտ(ա)-, հակ(ա)-, համ(ա)-, նախ(ա)-, վեր(ա)-** և այլն:

Իրավագիտությունը, լինելով ժամանակի զարգացած գիտություններից մեկը, հասարակություն պահանջով անընդհատ թարմացնում է իր ենթածյունը, միևնույն ժամանակ բարեկարգում սեփական բառապաշարը՝ մեծ մասամբ հենվելով հայերենի բառակազմական միջոցների վրա:

§4. Արդի հայերենի իրավաբանական տերմինների արևելահայերեն-արևմտահայերեն բառակազմական տարբերակներ

Հայերենի բառապաշարի մեծ մասը թե՛ ձևով և թե՛ իմաստով ընդհանուր է երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի համար: Սակայն պայմանավորված լեզվական և արտալեզվական գործոններով (ճյունղերի զարգացման ազդեցություն ակունքները՝ գրաբար, միջին հայերեն, բարբառային հիմքերը՝ Արարատյան, Կ. Պոլիս, քաղաքական, տնտեսական կամ աշխարհագրական հանգամանքները)՝ երկու ճյունղերում իրավական լեզվի բառապաշարը դրսևորում է բառակազմական որոշակի տարբերություններ: Խոսքը վերաբերում է լեզվական այն երևույթին, երբ միևնույն հասկացության արտահայտման համար տարբերակներից յուրաքանչյուրը գործածում է բառակազմական տարբեր բաղադրիչներով (թե՛ հիմնական և թե՛ երկրորդական ձևույթներով) կազմված տերմիններ՝ կապված ինչպես մեծ մասամբ հայերենի տարբեր փուլերին կամ տարածքային տարբերակներին

նախընտրություն տալու, այնպես էլ երբեմն տարբեր լեզուներից կատարվող պատճենումների հետ²⁵²:

Արևմտահայերեն և արևելահայերեն բաղադրական բառարաններում²⁵³ բառակազմական ներքոնշյալ բոլոր տարբերակներն էլ զետեղված են: Փաստն այն է, որ ճյուղերից յուրաքանչյուրն ունի բառագործածության իր նախընտրելի տարբերակը:

Քննենք արևմտահայերեն-արևելահայերեն բառակազմական տարբերակները՝ հիմք ընդունելով լեզվաբան Ռուբեն Սաքապետյանի առանձնացրած ենթախմբերը²⁵⁴:

1. **Տարարմատ նույն ասնիչներ**, երբ հայերենի երկու ճյուղերը միևնույն հասկացությունը արտահայտելու համար գործածում են տարբեր բաղադրիչներ՝ պահպանելով մայրենիի բառակազմական ընդհանուր կանոնները: Այսպես՝ *աղերսարկուլ* – *հայցվոր*, *առնելիքվոր* – *պարտատեր*, *ամբաստանություն* – *մեղադրանք*, *խնդրագիր* – *հայցադիմում*, *կապանատուն* կամ *կապանարան* – *մեկուսարան*, *հրիտակ* – *ժառանգություն*, *շինվածապետ* – *կապալ առու*, *պատժապարտկամ տուժապարտ* – *հանցավոր*, *պատժակիր* – *դատապարտյալ* և այլն: Սկզբում տրվում են արևմտահայերեն տարբերակները:

Արևմտահայերեն տարբերակների մեծ մասը (*հրիտակ*, *ամբաստանություն*, *աղերսարկուլ*, *կապանարան* և այլն) գրաբարյան բառեր են:

Այս խմբին են պատկանում նաև միայն արևմտահայերենում գործածվող, բարբառային ծագում ունեցող **-չեք (-չէք)** ածանցով և արևելահայերենում տվյալ ածանցի իմաստն արտահայտող և հաճախ նրան փոխարինող **վարձ** հիմնական ձևույթով կազմված բառակազմական տարբերակներ, ինչպես՝ *գործողչէք* – *աշխատավարձ*, *պահողչէք* – *վարձատրություն* /*պահառուին պահատուի կողմից տրված գումար նրան հանձնված ապրանքները պահելու և դրանք պահպանված*

²⁵² Տե՛ս **Սաքապետյան Ռ.**, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, 2004, էջ 95:

²⁵³ Տե՛ս **Սաքապետյան Ռ.**, Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Երեւան, 2011: **Յայնց լեզուի նոր բառարան**, հ. 1-2, ՊԵՅՐՈԼԹ, 1992: **Ճիզմեճեան Պ.**, Յայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 1-2, Յալէպ, 1954-57: **Գաբամաճեան Ս.**, Նոր բառգիրք հայերեն լեզուի, Կ. Պօլիս, 1910:

²⁵⁴ Տե՛ս **Սաքապետյան Ռ.**, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, 2004, էջ 98:

վիճակում վերադարձնելու պահանջով, ուղարկող էք -
փոխարկավարձ:

Բառազույգերի առաջին բաղադրիչների գործածությունը դուրս չի գալիս արևմտահայերենի սահմաններից:

2. **Սերող հիմքերով իրարից տարբերվող սերմիններ**, որոնք բավականին մեծ թիվ են կազմում: Հիշեցնենք, որ ածանցավոր բառերում սերող հիմքը լինում է կա՛մ ածանցին նախորդող, կա՛մ էլ հաջորդող մաս: Օրինակ՝ *անբռնաբարություն* - *անձեռնմխելիություն*, *աշխատագուրկ* - *գործագուրկ*, *արժեգիր* - *անդորրագիր*, *դատաբեկ* - *վճռաբեկ*, *եղեռնափորձ* - *մահափորձ*, *երաշխագիր* - *երաշխավորագիր*, *իրաւութիւն* - *արդարություն*, *խնդրակատար* - *հանձնակատար*, *մեղադրակից* - *հանցակից*, *կապանակից* - *բանտակից*, *կապանապահ* - *բանտապահ*, *կապանավոր* - *կալանավոր*, *կապանավորել* - *կալանավորել*, *հանձնառագիր* - *պարտավորագիր*, *հանձնագիր* - *լիազորագիր*:

Արևմտահայ մամուլի՝ իրավունքի թեմայով գրված նյութերում կիրառական հաճախականությամբ առանձնացրել ենք իրավաբանական տերմինային արժեք ձեռք բերած **վերառեսուլթիւն** բառը, որի նույն գործառնությամբ արևելահայ իրավական գրականության մեջ իրականացնում է **վերանայում** տերմինը: Համեմատենք.

«*Եւրոպական ատենը կորոշէ քննել Փերինչեքի վճիռը վերառեսուլթեան ենթարկելու դիմումը*» («Ասպարեզ», Լոս Անջելես, հունիսի 4, 2014):

«*Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը*» (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հդ. 204.30):

Խմբում ընդգծված բառակազմական տարբերակների սերող հիմքերում մեծ մասամբ առկա է երկու ճյուղերում հոմանիշ բառերի փոխարկում: Այսպես՝ հայերենում **մեղք - հանցանք**²⁵⁵, **ոճիր - հանցանք**, **ոճիր - եղեռն**²⁵⁶ բառաչափերի հոմանիշության հետևանքով առաջացել են արևմտահայերեն - արևելահայերեն հետևյալ բառազույգերը՝ ևս սերող հիմքի տարբերությամբ՝ *հանցակցիլ* -

²⁵⁵ Տե՛ս **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 823:

²⁵⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 323:

մեղսակցել, հանցագիտակ – մեղսագիտակ, հանցագրել – մեղսագրել, ոճրակից – հանցակից, եղեռնափորձ – մահափորձ:

Սերոդ հիմքի արմատային տարբերակմամբ են կազմված հետևյալ բառազույգերը՝ *օրինագետ – օրենսգետ, օրինագիրք – օրենսգիրք, օրինադիր – օրենսդիր, մեղսակիր – մեղավոր, տուժանք – տուգանք:* Բառազույգերի առաջին բաղադրիչները արևմտահայ երեն բառեր են:

«Պետութիւններ, միութիւններ եւ հաստատութիւններ ունին իրենց օրինագիրքերը, որոնք կը ճշդեն իւրաքանչիւր անհատի իրաւունքներուն եւ պարտաւորութիւններուն չափն ու սահմանը» («Ազդակ» օրաթերթ, Բեյրութ, հուլիսի 4, 2015):

3. Բաղադրող հիմքերով տարբերվող իրավաբանական սերմիներ.

այս տարբերությամբ կազմված բառերը սակավաթիվ են, ինչպես՝ *բաժնետերուղթ - բաժնետոմս, դատակնիք - դատավճիռ, կանխադրամ – կանխավճար, հարցափորձել – հարցաքննել, մաքսադրուժ կամ մաքսախույս – մաքսանենգ:*

Սույն խումբն են դասվում բառակազմական այնպիսի տարբերակներ, որոնց բաղադրող հիմքերում երկրորդական բառակազմական ձևույթները հակադրվում են ինչպես իրար, այնպես էլ հիմնական ձևույթներին, օրինակ՝ *գողանք - գողոն (աժանց-աժանց), հայցատեր – հայցվոր (արմատ-աժանց), մաքսարան – մաքսատուն (աժանց-արմատ), մեղագիր – մեղայական (արմատ-աժանց):*

4. Իրավական որոշ իրավություններ արևմտահայ երենը անվանում է բազմաձևույթ բարդություններով, որոնց համարժեքն արևելահայ երենն արտահայտում է բառակապակցությամբ, այնպես՝ *բողոքարկու - բողոք բերող անձ, բողոքագիր - գրավոր բողոք, թղթածրար – քրեական գործ, հարցափորձ - դատական հարցաքննություն, մեղադրավկայ – մեղադրող կողմի վկա, ոճրակից – հանցագործության մասնակից, դատազանցութիւն - դատարան ներկայ անալ ու ց չարամտորեն խուսափելը, չերևել - ատյան կանչված մարդու չներկայանալը, պատժագիրք – քրեական օրենսգիրք, օրինագիր – ընդունված օրենքի հրապարակումը ներկայացնող գրավոր փաստաթուղթ:*

«Տիևքի ընտանիքի իրաւապաշտպան Հաքան Պաքըրճըօղլու եւս բողոքած էր **թղթածրարը** վերադարձնելու որոշումնին դեմ» («Ասպարեզ» թերթ, Լոս Անջելես, դեկտեմբերի 10, 2015):

Արեւմտահայ երէն նորաստեղծ **հարկախոյս** տերմինը²⁵⁷, որ միայն զետեղված է **Արեւմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի «Ուղեցոյց Ա»**-ում, արեւելահայ երէնում փոխարինվում է **հարկերը, սուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելու ցարամտորեն խուսափելը** երկարաշունչ տերմին բառակապակցութեամբ (տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, հդ. 205):

Այն կարծիքը, որ արեւմտահայ երէնի «նոր բառերի կազմումը լեզվին տալիս է մի շարք առավելութիւններ. նախ խոսքը ձեռք է բերում հակիրճութիւն և նպատակասլացութիւն, և ապա սա այն կենարար երակներից մեկն է, որից օգտվում է արեւելահայ երէնը՝ հարստացնելու համար իր բառապաշարը համապատասխան հասկացութիւններ արտահայտող նոր բառերով»²⁵⁸, լիովին ընդունելի է: Թերևս ավելացնենք, որ գերադասելի է իրավական լեզվի բառապաշարում գործածել այնպիսի տերմին, որը թեև արտահայտված է բառակապակցութեամբ, սակայն խոսուն է և հասկանալի, ինչպես՝ **այս ան կանչված մարդու չներկայանալը կամ դատական գործի կարճում**, քան մեկ բառով արտահայտված տերմին, որ կենսունակ և դյուրըմբռնելի չէ, ինչպես **չերևեկ** կամ **դատաքինչ** բառերը:

5. Բաղադրիչների հետևառաջութեամբ կազմված արեւելահայ երէն-արեւմտահայ երէն մեկ բառազույգ ենք առանձնացրել՝ *տուրելառ - առևտուր*:

6. Բառակազմական տարաբնույթ կաղապարների համալրման գործընթացում որոշակի դեր ունեն հոմանիշ ածանցները, որոնք, ձևավորելով միևնույն խոսքի մասը, միմյանց նկատմամբ գտնվում են նույնանշային հարաբերության մեջ²⁵⁹: Իրավական լեզվի բառապաշարում ևս առկա են արեւմտահայ երէն-արեւելահայ երէն

²⁵⁷ Տե՛ս «Արեւմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Ուղեցոյց Ա», Պրովանս, 1993, էջ 71:

²⁵⁸ Տե՛ս **Սաքապետյան Ռ.**, Արեւելահայ երէնի և արեւմտահայ երէնի բառապաշարային առանձնահատկութիւնները, Երևան, 2004, էջ 102:

²⁵⁹ Տե՛ս **Գալստյան Ս.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայ երէնում, Երևան, 1978, էջ 250:

հոմանիշ ածանցներով կազմված բառակազմական տարբերակներ: Լավագույն օրինակներ են **-իչ** և **-ող** ածանցների հոմանիշությամբ կազմվածները: Նախ պարզաբանենք, թե լեզվի երկու ճյուղերում իմաստային ինչ հարթության վրա են վերոնշյալ ածանցները կազմում հոմանիշ բառակազմական տարբերակներ:

Լեզվաբան Սերգեյ Գալստյանը գրում է. «Նկատվում է -իչ և հոմանիշ -ող ածանցների որոշ տեղայնացում: -իչ-ով վերջին ժամանակներս գերազանցապես գործիքների անուններ են կազմվում, -ող-ով՝ այդ գործիքը գործածող մասնագետների, ինչպես՝ զոդող (մարդ) // զոդիչ (գործիք), եռակցող (մարդ) // եռակցիչ (գործիք)... և այլն»²⁶⁰: Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում գործողություն կատարող անձի իմաստ արտահայտող բառեր կազմելիս նախապատվությունը տրվում է **-իչ** ածանցին: Այսպես՝ արևմտահայերենում **մեղադրիչ** տերմինի իրավաբանական նշանակությունն է «2. մեղադրական ճառը արտասանող՝ դատախազ»²⁶¹: Արևելահայերենում իբրև մասնագիտական բառ՝ **մեղադրող** տերմինն ունի միևնույն նշանակությունը²⁶²: Իմաստային այս հարթության վրա են հայերենի երկու ճյուղերում նշված ածանցները կազմում բառակազմական տարբերակներ: Բերենք ևս մի քանի օրինակ՝ *դատիչ - դատող, հարցաքննիչ - հարցաքննող, բռնագրավիչ - բռնագրավող*:

Իրավական լեզվի բառապաշարում բառակազմական հոմանիշ տարբերակներ են կազմում **-որդ** և **-ող** (անձերի անուններ՝ ըստ մասնագիտության կամ զբաղմունքի), **-ույն** և **-անք**, **-վածք** և **-անք** (բայանուն գոյականներ, որոնք ցույց են տալիս նախադասության գործողության առարկայացած անունը, ինչպես և կարող են ցույց տալ նախադասության արդյունքը) ածանցները, օրինակ՝ *վաճառորդ - վաճառող, զանցառութիւն - զանցանք, յանցուածք (յանցում) - հանցանք*:

Արևմտահայ մտավորական Չարություն Բյուրքճյանը, «Արևելահայերեն եւ արևմտահայերեն լեզուաճիւղեր» վերտառությամբ իր հետազոտական աշխատանքում անդրադառնալով

²⁶⁰ Նույն տեղում, էջ 140:

²⁶¹ **Սպապետյան Ռ.**, Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Երեւան, 2011, էջ 216:

²⁶² Տե՛ս **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1976, էջ 993:

արևելահայերեն-արևմտահայերեն բառակազմական տարբերակների առկայությունը խնդրին, առաջարկում է լուծման հետևյալ տարբերակը. «երկուստեք առանդել, փոխադարձաբար ծանօթացնել այդ գործածությունները կամ առումները: Թողնելով որ բնական փոխափանցում տեղի ունենայ, ինչ փոյթ՝ հաանօրէն արևելահայերենի գերակշռութեամբ: Ասոնցմէ՝ «ավանդական» գոյգերուն համար, պէտք է ապաւինել ժամանակի վճիռին:

Բայց գուգահեռ գործածող նորակերտ բարերու պարագային, ճիշդ կ'ըլլար նոյնանիշներէն ընտրել յարմարագոյնը եւ ընդհանրացնել, ու ջնջել ձախորդները...»²⁶³:

Արևմտահայերեն-արևելահայերեն բառակազմական տարբերակների քննությունը ազդակ հանդիսացավ համառոտ անդրադառնալու նաև արևմտահայերենի իրավական լեզվի բառաշերտի տերմինային հոմանիշությունը:

Արևմտահայերենը, ունենալով ոչ մեծ թիվ կազմող բառապաշար՝ մոտ հիսուն հազար և ավելին, տեղիք է տալիս կարծելու, որ յուրաքանչյուր բառային միավոր մեծ մասամբ մեկ հասկացության անվանում պէտք է արտահայտի: Սակայն սույն երևույթը սխալ կարծիք է ձևավորում, քանի որ արևմտահայերենի բառապաշարը, այս պարագայում նրա տերմինաբանությունը ևս գերծ չի մնում տերմինների հոմանիշային (կամ նույնանիշային) խմբերից: Երևույթի լավագույն արտահայտություններն են արևմտահայերենում կազմված հետևյալ իրավաբանական տերմինները՝ *իրաւ ընտիր - դատիչ - դատավար - դատաւոր*, արևելահայերենում բառիմաստն արտահայտվում է *դատավոր* տերմինով: Նույնափսի օրինակներ են՝ ամբաստան - մեղադրիչ - դատախազ, արևելահայերենում՝ մեղադրող, դատախազ, դատակոչ - հրավիրաթուղթ - հրավիրագիր - ծանուցագիր, արևելահայերենում՝ դատական ծանուցագիր, մեղսակից - ոճրակից, արևմտահայերենում՝ հանցակից, ամբաստանագիր - մեղադրագիր, արևելահայերենում՝ մեղադրական եզրակացություն, ադերսարկու - հայցարկու - հայցաւեր - պահանջաւեր, արևելահայերենում՝ հայցվոր, ուղարկող էք - փոխադրող էք - փոխադրագիր, արևելահայերենում՝

²⁶³ «Գրանիշ» գրական ակումբ, 2016 // <http://granish.org/arevelahayeren-ev-armtahayeren/>:

փոխադրավարձ տերմիններով: Ընդգծված տերմիններն արևմտահայերենում կազմված բառեր են: Համեմատելով մեջբերումները.

«Հրանդ Տինքի սպանությունն նոր **ամբաստանագիրը** վերջապես դատարան հասաւ Դեկտեմբերի 9-ին» («Ասպարեզ», Լոս Անջելես, դեկտեմբերի 10, 2015):

«**Մեղադրագիրին** մեջ արձանագրուած ամբաստանութիւնները բաւական անհանգստացնող են եւ խորշելի» («Ասպարեզ», Լոս Անջելես, փետրվարի 3, 2010):

Արևմտահայերենում տերմինային հոմանիշության գլխավոր պատճառը իրավական մտքի զարգացումն է սփյուռքահայության ոչ թե մեկ, այլ տարբեր գաղթօջախներում, ինչի արդյունքում յուրաքանչյուր նոր հասկացության առաջացում, հետևաբար օտար բառի առկայություն, պարտադրում է արևմտահայ մտավորականին պահպանել լեզվի անաղարտությունը, հետևաբար կազմել նոր բառեր՝ պայմանավորված մեծ մասամբ տվյալ գաղթօջախում իշխող լեզվի բառակազմական առանձնահատկություններով:

Այսպիսով՝ արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարում արևելահայերեն - արևմտահայերեն նույն իմաստն արտահայտող, տարբեր բաղադրիչներով (և՛ հիմնական, և՛ բառակազմական ձևույթներով) կազմված տերմինների զուգարակյան քննությունը ոչ միայն ընդգծում է մի շարք ուշագրավ օրինակափոխություններ, ինչպես՝ 1. երկու ճյուղերում տարբեր բառերի, բաղադրական հիմքերի միևնույն իմաստային գործառնությունով մեկմեկու փոխարինելն ու բառակազմական միավորներ կազմելը, 2. որոշ ածանցների հոմանիշությունը, 3. արևմտահայերենի առավել հակվածությունը միաբառ տերմինների ստեղծման հարցում, այլև մեկ անգամ ևս փաստում գրական հայերենի երկու ճյուղերի ոչ նույնաբնույթ զարգացումը և ավելի տեսանելի դարձնում երկու ճյուղերի իրավական լեզվի բառաշերտի և առհասարակ տերմինագիտության մեջ ոչ խրախուսելի երևույթի՝ ակամայից լայն տարածում ստացած հոմանիշության առկայությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Արդի հայերենի իրավաբանական տերմինների ծագումնաբանական, իմաստագործառութային, շերտաբանական և բառակազմական լեզվական քննությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները.

Ա Յայ իրավագիտական միտքը, անցնելով պատմական զարգացման որոշակի շրջափուլեր, ձևավորվել է դեռևս վաղ ժամանակներում՝ արտահայտվելով Արարայնի՝ Արամե, Սարգուրի և այլ թագավորների արձանագրություններում, ինչպես նաև Թադեոս առաքյալին, Գրիգոր Լուսավորչին և այլ մտածողներին վերագրվող կանոնական գործերում: Իրավական խոսք կառուցելու համար ինքնաբերաբար կազմվում, փոխառվում էին մտքեր, դրանք արտահայտող բառեր ու բառակապակցություններ, որոնք էլ պետք է հիմք դնեին հայ իրավական լեզվի բառապաշարի ձևավորմանը:

Յամաձայն իրավաբանական տերմինների ծագումնաբանական քննության՝

1) Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարի բառամիջուկը կազմող տերմինների զգալի մասը հնդեվրոպական նախալեզվից ժառանգած բնիկ հայերեն և հին, հնագույն փոխառյալ տերմիններ են, ինչպես նաև դրանցով կազմված բաղադրություններ, որոնց զգալի մասը՝ իբրև տերմինային արժեք ունեցող բառեր, առաջին անգամ գիտականորեն սահմանվել և գործածվել է Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» աշխատությունում:

2) Հին և հնագույն փոխառություններից հայ իրավական լեզվի բառապաշարում մնայուն արժեքներ են պահպանելուց փոխառված տերմինները:

3) Իրավաբանական բնիկ հայերեն բառերն ու հին, հնագույն փոխառությունները ոչ միայն շարունակում են գործածվել ներկայիս հայ իրավական աղբյուրներում, այլև էական նշանակություն ունեն նորակազմ տերմինների բառակազմական գործընթացում:

4) Ժամանակակից իրավական լեզվի բառապաշարի համալրման աղբյուրներ են նոր կամ նորագույն փոխառությունները, որոնք նախ լատինական, ապա հունական, անգլիական, գերմանական, ֆրանսիական ծագման բառեր են՝ փոխառված մեծավ մասամբ ռուսերենի միջնորդությամբ:

5) Իրավաբանական տերմինների մի որոշակի խումբ էլ կազմվում է փոխառության տեսակ ընդունվող պատճենման ճանապարհով: Թվային գերազանցությամբ առանձնանում են մասնավորապես կառուցվածքային պատճենմամբ կազմված իրավաբանական տերմինները:

Բ. Արդի հայերենի իրավաբանական տերմինների իմաստագործառական քննությունից պարզվում է.

1) Սույն մասնագիտական բառերը, պայմանավորված հայ իրավունքի բազմագործառությամբ հատկանիշով, բազմալորտ և բազմանշանակ բառեր են, ուստի դրանք կյանքի տարբեր բնագավառներ ներկայացնող հասկացությունների անվանումներ են: Տերմինները, առաջնորդվելով ՀՀ իրավական ակտերի լեզվի ճշգրիտ կառուցման համար սահմանված օրենսդրության և առհասարակ տերմինաբանության կանոններով, կիրառական դաշտում խտորեն պահպանում են իրենց արտահայտած հասկացության իմաստային ծավալը: Այդ կանոնները առավել ապահովում են տերմինների մենիմաստությունը:

2) Տերմինաբանության յուրաքանչյուր միավոր առհասարակ բառային միավոր է՝ դրսևորված իմաստաբանական բոլոր հատկանիշներով: Ուստի իրավաբանական տերմինահամակարգը չի կարող բացարձակապես արգելք դնել լեզվական այնպիսի

անխուսափելի երևույթների առջև, ինչպիսիք են տերմինային բազմիմաստությունն ու հոմանիշությունը: Իրավաբանական բազմիմաստ և բացարձակ հոմանիշ տերմինների դեռևս անկանխելի գործածման համար ՀՀ օրենսդրությունը սահմանել է համապատասխան կանոններ, քանի որ դրանց ոչ ճիշտ կիրառումը իրավական խոսքում հանգեցնում է տերմինների իմաստային խախտումների, սահմանումների աղավաղումների, զուգահեռությունների և այլ բացասական երևույթների: Խնդրի լուծման համար տերմինաբանությունը տալիս է **1 հասկացությունը 1 բառային ձև** սկզբունքը:

3) Ժամանակակից իրավական ակտերում ակտիվ կիրառություն ունեն իմաստով կամ ձևով նման տերմիններ, որոնցից մեկը մյուսի փոխարեն գործածելը ստեղծում է իրավական խոսքի անճշտություն: Այդ տերմինները ինչպես գրաբարից, միջին հայերենից ժառանգված, այնպես էլ նոր ժամանակներում կազմված բավականին հաջողված բառեր են: Ուստի խնդրի լուծման ճիշտ տարբերակ է, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի իրավական ցանկացած պաշտոնական տեղեկատվական աղբյուրի միջոցով գոնե որոշակի պատկերացում ունենա դրանցով արտահայտված հասկացությունների վերաբերյալ:

4) Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարում իմաստափոխությունը առկա է գրեթե իր բոլոր տեսակներով: Սակայն թվով գերակշռում են այն տերմինները, որոնք ենթարկվել են իմաստային նեղացման: Դրանք մեծ մասամբ համագործածական բառաչերտի բառեր են, որոնք ստացել են տվյալ մասնագիտության գիտական սահմանումներ:

Իմաստային ընդլայնման և իմաստների փոխհաջորդման ենթարկված բառերը հիմնականում պատմական զարգացում ապրած գրաբարյան և միջինհայերենյան բառեր են, որոնք ներկայիս իրավական ակտերի լեզվում գործածվում են բոլորովին նոր նշանակություններով:

9. Հայ իրավական լեզվի բառապաշարը հայերենի զարգացման փուլերում (հին, միջին և նոր գրական հայերեն) ձևավորված բառաչերտերի միասնական և կուռ համակարգ է: Այն ընդգրկում է իրավաբանական տերմինների ընդհանուր հայերենյան, գրաբարյան,

միջին հայերենյան և աշխարհաբարյան բառաչերտեր, որոնք ոչ միայն ներկայիս իրավական մտքի արտահայտման միջոցներ են, այլ և հայ իրավունքի վաղեմության պատմական ապացույցներ:

Արդի հայերենի իրավաբանական տերմինների շերտաբանական քննությունը նից պարզվում է.

1) Ընդհանուր հայերենյան իրավաբանական տերմինները կազմում են արդի հայերենի իրավաբանական բառապաշարի հիմնաշերտի զգալի մասը: Դրանք, ըստ ծագման, բնիկ և փոխառյալ, ըստ կազմության, պարզ և բաղադրյալ բառեր են, որոնք, գործածվելով գրաբարյան և միջին հայերենյան իրավական աղբյուրներում, ժամանակակից օրենսդրական լեզվի կենսունակ բառամիավորներ են:

2) Իրավաբանական տերմինների գրաբարյան և միջին հայերենյան բառաչերտերը ժամանակակից իրավական լեզվում դիտվում են որպես հնաբանություններ, որոնք, այլևս չգործածվելով ներկայիս օրենսդրական ակտերում, դարձել են պատմական մնայուն արժեքներ: Դրանք իրենց արտահայտած հասկացություններով այսօր իրավական լեզվում կատարում են մեկ գործառույթ. այն է՝ պատկերում են այն բոլոր պատմական դարաշրջանները, որոնցով իր ձևավորման և զարգացման ուղին է գծել հայկական իրավունքը:

3) Թվային գերազանցությամբ հատկանշական է աշխարհաբարյան բառաչերտը, որը համալրվում է հայերենի երկու տարբերակներում, մասնավորապես արևելահայերենում:

ա) Արևմտահայերեն իրավաբանական տերմինները սակավաթիվ են: Սրանք կա՛մ միայն արևմտահայերենին բնորոշ, կա՛մ էլ առավելապես արևմտահայերենին բնորոշ բառեր են, որոնք գործառական տեսանկյունից հիմնականում կիրառվում են Սփյունքի զանգվածային լրատվական միջոցներում:

բ) Աշխարհաբարյան բառաչերտում բազմաբանակ են արևելահայերեն իրավաբանական տերմինները: Դրանց գերակշռությունը հայերենի բառապաշարում պայմանավորված է երկրի անկախ պետականության հովանունները հայ իրավական մտքի ազատ արտահայտմամբ: Արևելահայերեն իրավաբանական տերմինները ինչպես միջազգային զանազան փոխարարությունների

ձևավորման արդյունքում փոխառված բառեր, այնպես էլ հայերենի բառակազմական միջոցներով կազմված նորաստեղծ տերմիններ են:

Նորակազմ բառերը գրեթե հավասար քանակությամբ կազմվում են և՛ ածանցման, և՛ բառաբարդման եղանակներով, որի հետևանքով իրավական լեզվի բառապաշարը համալրվում է առավելապես գոյականներով և ածականներով:

Իրավաբանական տերմինահամակարգում բավականին արդիական են իմաստային նորաբանությունները, որոնց մեծ մասն այսօր հայերենի ներքին զարգացումների արդյունք է:

Իրավական լեզվի նորաստեղծ տերմիններն ու իմաստային նորաբանություններն այնքան հաճախադեպ են, որ դրանց զգալի մասը դեռևս ընդգրկված չէ ընդհանրական բնույթ կրող բացատրական բառարաններում, և ընթերցողն այդ եզրերին կարող է ծանոթանալ միայն մասնագիտական աղբյուրներից:

Դ. Արդի հայերենի իրավաբանական տերմինների բառակազմական վերլուծությունը ի հայտ է բերում հետևյալ առանձնահատկությունները.

1) Իրավաբանական տերմինահամակարգը իր զարգացման արդի փուլում, պահպանելով անցած ժամանակաշրջաններից ժառանգած տերմինների զգալի մասը, համալրվում է մեծ մասամբ հայերենի բառակազմական եղանակների օգնությամբ: Գերակշռում են հատկապես բաղադրյալ տերմինները, որոնց մեջ գրեթե անհնար է թվային գերազանցությամբ առանձնացնել վերլուծական և համադրական բաղադրությունները: Իրավական ակտերի հստակ, պարզ և մատչելի բնույթը թույլ չի տալիս համառոտագրությունների և հապավումների հաճախակի կիրառություն:

2) Իրավագիտական խոսքում երբեմն միաբառ տերմինները լիարժեքորեն և ճշգրտորեն չեն կարողանում արտահայտել որոշ մասնագիտական երևույթների իմաստներ, ուստի դրանց փոխարեն գործածվում են վերլուծական բաղադրություններ, որոնցում թվային գերազանցությամբ առանձնանում են տերմին բառակապակցությունները: Սրանք առավելապես կազմվում են **ածական + գոյական, դերբայ կամ դերբայական դարձված + գոյական, գոյական + գոյական, լրացում + բայ անուն կաղապարներով:**

3) Համադրական բաղադրություններում զգալի թիվ են կազմում համադրական իսկական բարդություններն ու ածանցավոր բառերը:

Համադրական իսկական բարդություններն առավելապես կազմվում են **գոյական + գոյական, գոյական + բայ ասիմք, ածական + գոյական** կաղապարներով, իսկ ըստ բաղադրիչների տերմինայնության՝ **տերմին + տերմին, տերմին + բառ, բառ + տերմին, բառ + բառ** կաղապարներով:

4) Իրավաբանական տերմինների ածանցման գործընթացում առավել ակտիվ են **-ույություն, -ում, -ական, -անք, -յալ, -ող** վերջաձևներն ու գրեթե բոլոր նախաձևները՝ **ան-, ապ(ա)-, արտ(ա)-, հակ(ա)-, համ(ա)-, նախ(ա)-, վեր(ա)-** և այլն:

5) Բառաբարդման և ածանցման եղանակներով մեծ մասամբ կազմվում են գոյական, ածական և բայ խոսքի մասեր ներկայացնող տերմիններ:

6) Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարում արևելահայերեն - արևմտահայերեն նույն իմաստն արտահայտող, տարբեր բաղադրիչներով (և՛ հիմնական, և՛ բառակազմական ձևույթներով) կազմված տերմինների զուգադրական քննությունը ոչ միայն ընդգծում է մի շարք ուշագրավ օրինաչափություններ, ինչպես՝ 1. երկու ճյուղերում տարբեր բառերի, բաղադրական հիմքերի միևնույն իմաստային գործառնությունով մեկմեկու փոխարինելն ու բառակազմական միավորներ կազմելը, 2. որոշ ածանցների հոմանիշությունը, 3. արևմտահայերենի առավել հակվածությունը միաբառ տերմինների ստեղծման հարցում, այլև մեկանգամ ևս փաստում գրական հայերենի երկու ճյուղերի ոչ նույնաբնույթ զարգացումը և ավելի տեսանելի դարձնում երկու ճյուղերի իրավական լեզվի բառաշարի և առհասարակ տերմինագիտության մեջ ոչ խրախուսելի երևույթի՝ ակամայից լայն տարածում ստացած հոմանիշության առկայությունը:

Ե. Արդի հայերենի իրավական լեզվի բառապաշարը անընդմեջ փոփոխվող, շարժական համակարգ է, սակայն լիարժեքորեն ոչ հասկանալի հասարակության բոլոր զանգվածներին: Սա պայմանավորված է ոչ միայն իրավական խոսքի բարդաբնույթ

լինելով, այլև իրավական տերմինահամակարգում ստեղծված հետևյալ հանգույցներով.

1) Տերմինային անվանումները տարաբնույթ են՝ հագեցած փոխառություններով, որոնց զգալի մասի երկարաշունչ, անհասկանալի լինելը հասարակության համար դժվարացնում է իրավանորմերի հեշտ ընկալումը: Փոխառյալ բառերը հայացնելիս երբեմն հարցին լուծում տալու փոխարեն կատարվում է հակառակը, քանի որ արդյունքում կազմվում են ոչ պակաս երկարաշունչ ու անհասկանալի հայերեն բառեր, որոնք այդպես էլ կիրառական ակտիվություն չեն դրսևորում:

2) Իրավաբանական տերմինների նշանակությունը բացատրելիս հաճախ են հանդիպում ծավալուն ու բարդ բացատրություններ, որոնք մասնագիտական գրականության և բառարանների թերի կողմերից են:

3) Իրավական լեզվում առկա տերմինային բացարձակ հոմանիշությունն ու բազմիմաստությունը թեև լեզվական անխուսափելի երևույթներ են, այնուամենայնիվ կարող են բացասաբար ազդել իրավական մտքի ընկալմանը: Նույնը վերաբերում է այն տերմիններին, որոնք նման են կազմությամբ կամ ունեն իմաստային նուրբ կապվածություն:

Թվարկվածները իրավատերմինահամակարգի լուրջ թերություններ են, որոնք հասարակ քաղաքացուն վանում են իրավական գրականություն կարդալուց: Ուստի խնդիրը լուծելու նպատակաուղղված քայլեր կարող են լինել՝

- կրթական մակարդակում իրավագիտության բոլոր ճյուղերի, դրանց հետ կապված տերմինների վերաբերյալ տարրական իմացություն հաղորդելը տեսականի և գործնականի համադրմամբ (օրինակ՝ նյութը հաղորդել դասագրքերի և դատական բաց նիստերին ներկագտնվելու միջոցով),

- լեզվաբանների և իրավագետների համատեղ գործունեությամբ իրավատերմինաբանական վերլուծական աշխատություններ, գիտական հոդվածներ հրատարակելը, բառարաններ կազմելը,

- հեռուստառադիոհաղորդումներ պատրաստելը:

Նշված գործողությունները ծավալելու առաջնահերթ նախապայման պետք է լինի հասարակությանը նյութի մատչելի մատուցումը:

Այնուամենայնիվ, հայ իրավական լեզվի բառապաշարը մշտապես թարմացվող, կատարելագործվող շարժական համակարգ է: Այն չի խուսափում նոր տերմիններ (թե՛ փոխառյալ, թե՛ սեփական բառակազմական միջոցներով կազմված բառեր) համալրելու, հները նորերով փոխարինելու, լեզվական բառամիավորներ վերափոխառվորելով՝ նրանց տերմինային արժեք հաղորդելու և արդեն իսկ անգործածական տերմինները մի կողմ դնելու անհրաժեշտությունից:

Հայ իրավունքը և նրա լեզուն պետք է լինեն հասարակությանը մոտ, քանի որ դրանց զարգացումը ընթանում է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 1984, 372 էջ:
2. **Աղայան Էդ.**, Տերմինագիտություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 1978, 51 էջ:
3. **Աճառյան Հր.**, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, Պետ. համալս. հրատ., 1940, 355 էջ:
4. **Ասլանյան Ա.**, Հայաստանի պետության և իրավունքի պատմություն, Երևան, «Վան Արյան», 2009, 340 էջ:
5. **Ավագյան Ռ.**, Գրիգոր Չոփրապի և Գրիգոր Չոլբարյանի իրավական միտքը, Երևան, «Մանգ», 2003, 640 էջ:

6. **Ավագյան Ռ.**, Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IXդ. – մ. թ. XIX դ.), հ. 1, Երևան, «ՄՆԻԻ ԵՄ – XXI ԴԱՐ», 2001, 672 էջ :
7. **Ավետիսյան Յու.**, Պաշտոնական ոճ, Երևան, «Չանգակ-97», 2011, 116 էջ :
8. **Արեւմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Ուղեցոյց Ա**, Պրովանս, 1993, 108 էջ :
9. **Արեւմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Ուղեցոյց Գ**, Պրովանս, 1998, 87 էջ :
10. **Բարսեղյան Տ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս I, Երևան, Երևանի համալս. հրատ., 2004, 496 էջ :
11. **Գոշ Մ.**, Դատաստանագիրք հայոց: Իրավաբանական հետազոտությունք հանդերձ ծանօթութեամբք, Վաղարշապատ, իտպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1880, 442 էջ :
12. **Եզեկյան Լ.**, Հայոց լեզվի ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), Երևան, Երևանի համալս. հրատ., 2003, 376 էջ :
13. **Չաքարյան Հ., Ավետիսյան Յու.**, Բառագիտություն, Երևան, «Չանգակ-97», 2007, 264 էջ :
14. **Թելուկ Մ.**, Հայկական առաջին սահմանադրությունը. «Որոգայթ փառաց»-ը և ՀՀ 1995թ. սահմանադրությունը, Երևան, «Գիտություն», 2001, 226 էջ :
15. **Թովմայան Ա.**, Սովետական քրեական իրավունք, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 1973, 402 էջ :
16. **Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավաբանական մարմինները**, Երևան, ԵՊՀ հրատ., 2003, 448 էջ :
17. **Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն**, հատուկ մաս, Երևան, Երևանի համալս. հրատ., 2005, 592 էջ :
18. **Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք**, ընդհանուր մաս, Երևան, Երևանի համալս. հրատ., 2003, 528 էջ :
19. **Հայկական սովետական հանրագիտարան**, հ. 11, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխ. խմբ., 1985, 719 էջ :
20. **Ղազարյան Ռ.**, Միջին գրական հայերենի բառապաշարը, Երևան, ԵՊՀ հրատ., 2001, 228 էջ :

21. **Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայոց Լեզու (բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Երևան, ԵՊՀ հրատ., 1990, 408 էջ:
22. **Մարտիրոսյան Ա.**, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Երևան, «Էդիթ Պրինտ», 2007, 236 էջ:
23. **Մելքոնյան Լ.**, Բառապաշարային տեղաշարժերը արդի հայերենում /ատենախոսություն/, Երևան, 2014, 155 էջ:
24. **Միջազգային մասնավոր իրավունք**, Երևան, «Տիգրան Մեծ», 2005, 800 էջ:
25. **Որոգայթ փառաց**, Երևան, «Հայաստան», 2002, 298 էջ:
26. **Պասրյան Արտ, Բադիկյան Խ**, Ժամանակակից հայոց Լեզվի շարահյուսություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 2003, 462 էջ:
27. **Պետրոսյան Ջ.**, Հայերեն տերմինաբանություն, մաս 2, Երևան, հեղ. հրատ., 2010, 176 էջ:
28. **Ջահուկյան Գ.**, Հայոց Լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ հրատ., 1987, 748 էջ:
29. **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, ԳԱԱ հրատ., 1974, 586 էջ:
30. **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայոց Լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 319 էջ:
31. **Ջահուկյան Գ. և ուրիշներ**, Հայոց Լեզու, մաս I, արակ Ա, Երևան, «Լույս», 1980, 528 էջ:
32. **Սամուելյան Խ**, Հայ սովորութեան իրաւունքը: Հին հայոց իրաւունքը եւ նրա հետազօտութեան մեթօդը: Առևանգմամբ և գնմամբ ամուսնութիւն, Թիֆլիս, «Պետտալոյց», 1911, 104 էջ:
33. **Սամուելյան Խ**, Մխիթար Գոշի Դատաստանագիրքը և հին հայոց քաղաքացիական իրավունքը, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1911, 344 էջ:
34. **Սամուելյան Խ**, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Յերևան, «ԱրմՖԱՆ», 1939, 363 էջ:
35. **Սաքաթսոյան Ռ.**, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Երևան, ԵՊՀ հրատ., 2004, 232 էջ:

36. **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ., 2008, 349 էջ :
37. **Սուքիասյան Ա.**, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1978, 390 էջ :
38. **Սևակ Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, ԵՊՀ հրատ., 2009, 350 էջ :
39. **Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու**, Երևան, Եր. համալս. հրատ., 1978, 228 էջ :
40. **Болдырев С. Н.**, Юридическая техника: Теоретико-правовой анализ /диссертация/, Ростов-на-Дону, 2014, 468 էջ :
41. **Иерниг Р.**, Дух римского права. СПб., 1875, 309 էջ :
42. **Иерниг Р.**, Юридическая техника. СПб., 1906, 105 էջ :
43. **Малюкова Е. В.**, Юридическая терминология в системоцентрическом и антропоцентрическом аспектах /диссертация/, Бейск, 2005, 177 էջ // <http://www.dissercat.com/content/yuridicheskaya-terminologiya-v-sistemotsentricheskom-i-antropotsentricheskom-aspektakh>:
44. **Мейе А.**, Введение в сравнительное изучение индоевропейских языков, Москва, 1938, 510 էջ :
45. **Смаль Л. Д.**, Некоторые вопросы семантики юридических наук // Право и демократия: Вып. №8, Минск, 1997, էջ 31 – 34:
46. **Черехаев А. В.**, Юридическая терминология в Российском публичном праве: проблемы применения и совершенствования: дис. ... канд. филол. наук / А. В Черехаев. – Москва, 2004, 173 էջ // http://www.fpa.su/biblioteka/izdaniya/problemy-teorii-gosudarstva-i-prava/yuridicheskaya-terminologiya-v-rossiyskom-publichnom-prave-a-v-cherakaev/?sphrase_id=28246&SECTION_CODE=problemy-teorii-gosudarstva-i-prava&ELEMENT_CODE=yuridicheskaya-terminologiya-v-rossiyskom-publichnom-prave-a-v-cherakaev&PAGEN_1=2:

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

47. ՀՀ աշխատանքային օրենսգիրք (09.11.2004), ՀՀ ՊՏ 2004.12.21/69(368):
48. ՀՀ դատական օրենսգիրք (21.02.2007թ.), ՀՀ ՊՏ 2007.04.18/20(544) Հոդ. 489:
49. ՀՀ ընտանեկան օրենսգիրք (09.11.2004թ.), ՀՀ ՊՏ 2005.01.19/4 (376) Հոդ. 60:

50. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքության նկատմամբ և պայմանների ցանկը հաստատելու մասին (28.06.2007), ՀՀ ՊՏ 2007.09.05/45(569):
51. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը (08.02.2011), ՀՀ ՊՏ 2011.02.16/9(812) Հոդ. 134:
52. ՀՀ Սահմանադրության (05.07.1995թ.), ՀՀ ՊՏ 2005.12.05/Յատուկ թողարկում Հոդ. 1426:
53. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք (05.12.2013թ.), ՀՀ ՊՏ 2013.12.28/73(1013) Հոդ. 1186.1:
54. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (17.06.1998թ.), ՀՀ ՊՏ 1998.09.09/20(53):
55. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (05.05.1998), ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50):
56. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (01.07.1998), ՀՀ ՊՏ 1998.09.21/22(55):
57. ՀՀ քրեական օրենսգիրք (18.04.2003), ՀՀ ՊՏ 2003.05.02/25(260):
58. ՀՀ օրենքը ահաբեկչության դեմ պայքարի մասին (22.03.2005), ՀՀ ՊՏ 2005.04.27/24(396):
59. ՀՀ օրենքը արժեթղթերի շուկայի կարգավորման մասին (11.10.2007), ՀՀ ՊՏ 2007.10.31/53(577):
60. ՀՀ օրենքը արհեստակցական միության նկատմամբ (05.12.2000), ՀՀ ՊՏ 2001.01.15/1(133):
61. ՀՀ օրենքը գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին 05.12.2000, ՀՀ ՊՏ 2000.12.30/33(131):
62. ՀՀ օրենքը գույքահարկի մասին (26. 12. 2002), ՀՀ ՊՏ 2003.01.08/2(237):
63. ՀՀ օրենքը դատական ակտերի հարկադիր կատարման մասին (05.05.1998), ՀՀ ՊՏ 1998.06.15/12(45):
64. ՀՀ օրենքը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին (15.06.2006), ՀՀ ՊՏ 2006.07.12/38(493):
65. ՀՀ օրենքը մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին (17.12.2014), ՀՀ ՊՏ 2014.12.30/76(1089).1:

66. ՀՀ օրենք վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին (18.02.2004), ՀՀՊՏ 2004.03.31/18(317):
67. ՀՀ օրենքը մարդու իրավունքների պաշտպանի մասին (21.10.2003), ՀՀՊՏ 2003.11.26/58(293):
68. ՀՀ օրենքը քաղաքացիության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին (28.04.1999), ՀՀՊՏ 1999.06.11/15(81):
69. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք (06.12.1985թ.), ՀՍՍՀԳՍ 1985/23:

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

70. **Աբգարյան Իգ.**, Ֆրանսերեն-հայերեն իրավաբանական բառարան, Երևան, «Ասողիկ», 2001, 84 էջ:
71. **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976, հ. 1, 929 էջ, հ. 2, 1615 էջ:
72. **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, Երևան, ԵՊՀ, հ. 1, 1971, 698 էջ, հ. 2, 1973, 687 էջ, հ. 3, 635 էջ, 1977, հ. 4, 674 էջ, 1979:
73. **Ավետիսյան Ավ.**, Հայերենում գործածվող օտար բառերի բառարան, Երևան, «Անտարես», 2014, 344 էջ:
74. **Բազգիրք ի բարբառ Հայ եւ Իտալ ակամ**, Վենետիկ, ա. հ., 1837, 1509 էջ:
75. **Բազգիրք հայերեն լեզուի**, ՊԷՅ ըրութ, հեղ. հրատ, 1998, 526 էջ:
76. **Բարաթյան Ն.**, Անգլերեն-հայերեն բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 553:
77. **Գաբամաճեան Ս.**, Նոր բազգիրք հայերեն լեզուի, Կ. Պոլիս, հ. 1, 1907, 800 էջ, հ. 2, 1910, 801-1406 էջ:
78. **Գալստյան Ս.**, Դպրոցական բառակազմական բառարան, Երևան, «Չանգակ», 2014, 232 էջ:
79. **Գյուլնեշյան Ս., Գյուլնեշյան Մ.**, Իրավաբանական համառոտ բացատրական բառարան, Երևան, «Հոլյու», 1991, 191 էջ:
80. **Էլոյան Ս.**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի», 2002, 492 էջ:
81. **Կոբալյան Ա.**, Իրավաբանական համառոտ բացատրական բառարան, Երևան, «Արմինֆո», 2006, 80 էջ:

82. **Կոբալյան Ա.**, Օպերատիվ հետախուզողական տերմինների բացատրական բառարան, Երևան, 2007, 58 էջ :
83. **Յայնց Լեզվի բարբառային բառարան**, հ. 1, Երևան, «Գիտություն», 2001, 451 էջ :
84. **Յայնց Լեզուի նոր բառարան**, ՊԵՅ ընթ., Կ. Տոնիկեան եւ որդիք հրատ., 1992, հ. 1, 1306 էջ, հ. 2, 1206 էջ :
85. **Յայրապետյան Ա.**, Օտար բառերի բառարան, Երևան, ա. հ., 2011, 644 էջ :
86. **Ղազարյան Ռ.**, Գրաբարի բառարան, Երևան, Երևանի համալս. հրատ., 2000, հ. 1, 686 էջ, հ. 2, 658 էջ :
87. **Ղազարյան Ռ., Ավետիսյան Յ.**, Միջին հայերենի բառարան, Երևան, ԵՊՅ հրատ., 2009, 840 էջ :
88. **Ճիզմեճեան Պ.**, Յայերեն աշխարհաբար Լեզուի Լիակատար բառարան, Յալեպ, հ. 1, 1954, 726 էջ, հ. 2, 1957, 1460 էջ :
89. **Մախաճյանց Ստ.**, Յայերեն բացատրական բառարան, Երևան, պետհրատ., հ. 1, 1944, 608 էջ, հ. 2, 1944, 512 էջ, հ. 3, 1944, 614 էջ, հ. 4, 1945, 646 էջ :
90. **Մարտիրոսյան Մ.**, Քաղաքական, դիվանագիտական, իրավաբանական տերմինների իսպաներեն-հայերեն բացատրական բառարան, Երևան, «Կարին-Յրատ» ՍՊԸ, 2011, 90 էջ :
91. **Նոր բառգիրք հայկազեան Լեզուի**, Երևան, ԵՊՅ հրատ., հ. 1, 1879, 1140 էջ, հ. 2, 1981, 1066 էջ :
92. **Ոսկերչյան Ա.**, Քրեաիրավական տերմինների արդի համառոտ բացատրական բառարան, Երևան, «Եզեա», 2004թ., 184 էջ :
93. **Պետրոսյան Լ.**, Արդի Ռուս-Յայերեն իրավաբանական բառարան, Երևան, ա.հ., 1998, 263 էջ :
94. **Պետրոսյան Յ.**, Յայերենագիտական բառարան, Երևան, «Յայաստան», 1987, 686 էջ :
95. **Ջահուկյան Գ.**, Յայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ», 2010, 819 էջ :
96. **Ռուս-հայերեն բառարան**, Երևան, «Յայաստան» հրատ, 1977, 1440 էջ :
97. **Ռուս-հայերեն իրաւաբանական առձեռն բառարան**, Թիֆլիս, հրատ. Յայփաստի, 1919, 100 էջ :

98. **Ռուս - հայ երեն իրավաբանական բառարան**, Յերեվան, ա. հ., 1924, 173 էջ:
99. **Սաքաֆտյեան Ռ.**, Արեւմտահայ երեն-արեւելահայ երեն նոր բառարան, Երեւան, Տիգրան Մեծ, 2011, 382 էջ:
100. **Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, 2-րդ հրատարակություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2009, 1242 էջ:
101. **Փոթեյան Վ.**, Ռուս-հայ երեն իրավաբանական բառարան, Երևան, «Հայաստան»,
102. **Քարլ Ուլ.**, Անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն իրավաբանական բառարան, Երևան, ա. հ. 1994, 112 էջ:
103. **Օգանովա Ռ.**, Գերմաներեն-հայերեն իրավաբանական բառարան, Երևան, Երևանի համալս. հրատ., 2002, 188 էջ:
104. **Русско-армянский словарь юридических терминов и перифраз.** - /Под ред. Г.Г. Акопян, А.Г. Хачатряна/. – Ереван: Изд-во РАУ, 2005, 147 էջ:

ԲՆԱԳՐԵՐ

105. **Ազգային սահմանադրություն հայոց**, Կ. Պոլիս, 1860, 43 էջ:
106. **Գոշ Մ.**, Գիրք դատաստանի, Երևան: ԳԱ հրատ., 1975, 642 էջ:
107. **Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ**, մասն Գ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1967, 712 էջ:
108. **Հակոբյան Վ.**, Կանոնագիրք հայոց, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, 1964, 742 էջ, հ. 2, 1971, 473 էջ:
109. **Շահամիրեանց Յ.**, Որոգայթ փառաց, Թիֆլիս, Էլեքտրատպ. օր. Ն. Աղանեանի, Պոլից 7, 1913, 450 էջ:
110. **Շնորհալի Ն.**, Թուղթ ընդհանրական, Էջմիածին, 1865, 498 էջ:
111. **Շնորհալի Ն.**, Ողբ Եդեսիոյ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 138 էջ:
112. **Սաքաֆտ Ս.**, Դատաստանագիրք, Երևան, Հայպետհրատ., 1958, 205 էջ:

ԱՄՍԱԳԻՐ, ՀԱՆԴԵՍ, ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱՃՈՒ

113. ԳԱ «Տեղեկագիր», Հասարակական գիտություններ, Երևան, 1965, №12, 119 էջ:

114. «Известия» АН АрмССР, Յասարակական գիտություններ, 1948, № 3, 83 էջ:
115. «Լեզու և լեզվաբանություն», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 1-2(13), 2015, 110 էջ:
116. «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, «Ասողիկ», 1-2, 2013, 147 էջ:
117. «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2012, №1, 294 էջ:
118. «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1971, № 4, 307 էջ:
119. «Ջահուկյանական ընթերցումներ», Երևան, «Էդիտ պրինտ», 2010, 282 էջ:
120. «Ջահուկյանական ընթերցումներ», Երևան, «Գիտություն», 2009, 198 էջ:
121. «Язык и право: актуальные проблемы взаимодействия» II Международная научно-практическая Интернет-конференция, 2012.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԷՋԵՐ

122. «Ազդակ» օրաթերթ, Բեյրութ, 2015 թվականի լրատվություն, <http://www.aztagdaily.com/>:
123. «Ասպարեզ» օրաթերթ, Լոս Անջելես, 2010-2015 թվականների լրատվություն // <http://asbarez.com/arm/>:
124. «Գրանիշ» գրական ակումբ, Երևան, 2016 // <http://granish.org/arevelahayeren-ev-armtahayeren/>:
125. «Հայրենիք» շաբաթաթերթ, Լոս Անջելես, 2015-2016 թվականների լրատվություն // <http://hairenikweekly.com/>:
126. «News.am» լրատվական կայքէջ, Երևան, 2015 թվականի լրատվություն // <http://news.am/arm/news/296674.html>:
127. Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգ // <http://www.arlis.am/>:
128. Դատական տեղեկատվական համակարգ // <http://www.datalex.am/?app=AppCaseSearch>:
129. Իրավական տեղեկատվական կենտրոն // <http://www.irtek.am/views/dictionary.aspx>:

130. «Իրավունք և առողջ ապահովում» // <http://www.healthrights.am/practitioner-guide-arm/more/977/>:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

1. ածբ. - աստվածաբանական
2. ասոր. - ասորերեն
3. բժշկ. - բժշկական
4. բնստ. - բանաստեղծական
5. գերմ. - գերմաներեն
6. գիտ. - գիտական
7. գլ. - գլուխ
8. երկրչ. - երկրաչափոլթյուն
9. իտ. - իտալերեն
10. իրավբ. - իրավաբանական
11. լատ. - լատիներեն
12. լեզվբ. - լեզվաբանական
13. կենսբ. - կենսաբանոլթյուն
14. ՀԱ - Հայոց Աշխարհ (օրաթերթ)
15. հդ. - հոդված
16. Հեռ. - հեռուստատեսուլթյուն
17. ՀՀ - Հայաստանի Հանրապետուլթյուն
18. հոլն. - հոլնաբեն
19. շվեդ. - շվեդերեն
20. պիլ. - պահլավերեն
21. ՌՄ - Ռուզան Մինասյան
22. սպորտ. - սպորտային
23. ուս. - ուսուլմնական
24. քղբ. - քաղաքական
25. ֆր. - ֆրանսերեն

ՀԱՎԵԼՎԱԾ

(առենախոսուլթյան մեջ գործածված իրավաբանական տերմինների բացատրուլթյուն)

Ա

ալիմենտի ինդեքսավորում - ալիմենտի այն չափը, որ դատարանը սահմանում է նվազագույն աշխատավարձի չափի որոշակի թվի համապատասխանող կայուն դրամական գումարով

ամբաստանյալի վերջին խոսք - դատական քննության հարաբերականորեն ինքնուրույն կառուցվածքային մաս, որտեղ ամբաստանյալին վերջին անգամ հնարավորություն է տրվում արտահայտել իր վերաբերմունքը դատարանի քննած մեղադրանքի նկատմամբ և գնահատել սեփական գործողությունները, ինչպես նաև՝ դատական քննության արդյունքները

ամրագրված քաղաքացիներ - պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ու կազմակերպություններում աշխատող և բացառիկ մասնագիտություն ունեցող այն պահեստազորային քաղաքացիները, ովքեր ենթակա են հատուկ զինվորական հաշվառման

ամուսնական պայմանագիր - ամուսնացող անձանց համաձայնությունը կամ ամուսինների համաձայնությունը, որով որոշվում են ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները ամուսնության և (կամ) այն լուծվելու ընթացքում

այլընտրանքային (խառը) քննչական ենթակայություն - քննչական ենթակայության տարատեսակ, որի էությունը կայանում է նրանում, որ անձին դեպքերում քննչական ենթակայության հարցի լուծումը օրենսդիրը թողել է քննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին

այլ արժեքներ - արժեթղթեր, վճարահաշվարկային փաստաթղթեր, ինչպես նաև այլ գույք, որը պատվիրատուն ցանկանում է փոխադրել

այլ տեղանք - տեղանք, որը գտնվում է համապատասխան դատարանի, հետաքննության մարմնի, նախաքննության մարմնի, դատախազության իրավասության և գտնվելու վայրի սահմաններից դուրս կամ քրեական դատավարությանը մասնակցող անձի բնակության վայրի սահմաններից դուրս

անարժան ժառանգ - ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգությունից մեկուսացվում են այն անձինք, ովքեր դիտավորյալ խոչընդոտել են ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը, դիտավորյալ կյանքից

գրկել են ժառանգատուին կամ հնարավոր ժառանգներից որևէ մեկին կամ մահափորձ են կատարել նրանց կյանքի նկատմամբ: Բացառություներ են կազմում այն անձինք, որոնց նկատմամբ ժառանգատու նկատվել կազմել է մահափորձ կատարելուց հետո:

անգործություն - հանրության համար վտանգավոր գործողություն

անընդհատություն - գործընթաց, համաձայն որի՝ կազմակերպությունը շարունակելու է իր գործունեությունը տեսանելի ապագայում և միտում կամ անհրաժեշտություն չունի լուծարվելու կամ էականորեն կրճատելու իր գործունեությունը

անմեղսագիտականություն - հոգեվիճակ, որի ժամանակ մարդը ընդունակ չէ իր արարքների համար պատասխանատու լինել

անմեղսունակություն - անմեղսունակ լինելը, հանցանք գործելու անկարողություն

անփութություն - պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական պարտականություններին անփուլթ կամ անբարեխիղճ վերաբերվելու հետևանքով դրանց չկատարելը, կամ ոչ պաշտած կատարելը, որով էական վնաս է հասցվել պետական կամ հասարակական շահերին, կամ քաղաքացիների՝ օրենքով պաշտպանվող իրավունքներին ու շահերին

աշխատանքային ստաժ - այն ժամանակահատվածը, որի ընթացքում քաղաքացին եղել է ՀՀ աշխատանքային օրենսգրքով կարգավորվող աշխատանքային հարաբերություններին մեջ

ապահովադիր - ՀՀ օրենքով սահմանված կարգով ու չափերով սոցիալական վճարումներ կատարող և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցող (վճարող) իրավաբանական և ֆիզիկական անձ, պետական և համայնքային ենթակայության հիմնարկ

ապրանքների կոմպեկտ - գնորդին կոմպեկտով հանձնելու ապրանքների որոշակի հավաքածու

առաջին հերթի ժառանգներ - ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները

առգրավում - քննչական գործողություն, որը քննիչը կատարում է գործի համար նշանակություն ունեցող որոշակի առարկաներ և

փաստաթղթեր վերցնելու անհրաժեշտության դեպքում, երբ ստույգ հայտնի են, թե որտեղ և ում մոտ են դրանք գտնվում

առերեսում - միևնույն գործով քննվող երկու անձի միաժամանակ և միասին հարցաքննությանը՝ նրանց ցուցմունքներն ստուգելու և դրանց մեջ եղած հակասությանները վերացնելու համար

առջին գործարք - անվավեր ճանաչված գործարք

արգելանքի վերցնել – գործողությանը, որն սկսվում է անձին ազատությանը և իր փաստացի հարկադրական զրկելու պահից՝ ձերբակալելիս, կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս, ազատագրվման ձևով դատավճիռն ի կատար ածելիս

արհեստավարժ պահառու - այն առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպությանը, որի մասնագիտական գործունեության նպատակներից մեկն է պահատվության իրականացնելը

արյան պարաստուկներ – պլազմայից ստացված կենսաբանական նյութեր

արյան ռեցիպիենտ – բուժական նպատակով արյան բաղադրամասեր ստացող անձ

արտաշիրմում - շիրմից դուրս հանելը

Բ

բացառիկ լիցենզիա – արտաքին առևտրային գործունեության մասնակցին ապրանքի առանձին տեսակի արտահանման և (կամ) ներմուծման բացառիկ իրավունք տվող լիցենզիա

բենեֆիցիար – [ռուս. бенефициар < լատ. beneficiarius], այն անձը, ում արհեստավարը վճարում է դրամական գումար երաշխիք տված անձի (բանկի, այլ վարկային հաստատության կամ ապահովագրական կազմակերպության) միջոցով

բռնություն - անձի ֆիզիկական և (կամ) հոգեկան և (կամ) սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված արարք կամ դրա սպառնալիք

Գ

գործով վարույթ - քրեական դատավարական ընթացակարգ, որն սկսվում է քրեական գործի հարուցման հարցը լուծելիս և ներառում է գործով իրականացվող և ընդունվող դատավարական որոշումները և գործողությունները

գրավի առարկա - ցանկացած գույք, այդ թվում՝ գույքային իրավունք (պահանջ), բացառությամբ շրջանառությունից հանված գույքի, պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված պահանջների՝ ներառյալ ալիմենտի, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջների, պետական (գանձապետական) անվանական այն արժեթղթերի, որոնց թողարկման պայմաններով կնախատեսվեն, որ այդ արժեթղթերը գրավադրման ենթակա չեն, և այն իրավունքների, որոնց զիջելն այլ անձի արգելված է օրենքով

գրավի իրավունք - գրավատուի (գրավ դնող) գույքի նկատմամբ գրավառուի (գրավն առնող, գրավով պարտք տվող) գույքային իրավունքը, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար

գույքի անձեռնմխելիություն – քրեական դատավարության ընթացքում անձանց բանկային ավանդների և այլ գույքի վրա կալանք դնելը

գույքի հանձնում - գույքը ձեռք բերողին, ինչպես նաև ձեռք բերողին առաքելու համար փոխադրողին կամ առանց տեղ հասցնելու պարտավորության օտարված գույքը ձեռք բերողին ուղարկելու համար կապի կազմակերպությանը հանձնելը

Դ

դատական սեկվեստր - երկու կամ ավելի անձանց միջև վեճի առարկա գույքի՝ սեկվեստրի կարգով ի պահ հանձնելը դատարանի վճռով

դատակիր - ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի դեմ դատական գործ է հարուցվել

դատապահանջ - իրավունքների պաշտպանության պահանջով դատարանին ներկայացվող գործ

դատասացություն - գործի մասին կողմերի բերանացի բացատրությունները, փաստարկումներն ու հիմնավորումները քաղաքացիական դատի ժամանակ

դատավարության մասնակիցներ - դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրան ներկայացուցիչը

դատավճռի եզրափակիչ մաս – 1) դատարանի որոշումները, 2) դատարանի դատավճռի բողոքարկման կարգը

դատվածություն - տվյալ անձի անցյալում նրա կատարած հանցագործության համար դատապարտված լինելու փաստի պաշտոնական հավաստումը, մի հանգամանք, որը հաճախ հանդիպում է այդ անձի որոշակի իրավունքների ու արտոնությունների վերացմանը կամ սահմանափակմանը

դեբիտոր – [*ռուս. debitor < ֆր. debitor*], պարտապան՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ունի պարտք տվյալ հիմնարկությանը, գործարանին, կազմակերպությանը ևս

դերոգացիա – [*ռուս. derogация < լատ. derogatio*], հին օրենքի մասնակի արգելում

դիմազրկմամբ պահառվություն - պահառվության պայմանագրով ուղղակի նախատեսված դեպքերում մեկ պահատուրի ի պահ ընդունված գույքի խառնվելը այլ պահատուներից նույն տեսակի և որակի ի պահ ընդունած գույքի հետ

դիվիդենդ – [*ռուս. дивиденд < լատ. dividendus բաժանման ենթակա*], շահույթաբաժին՝ բաժնետիրական ձեռնարկության օգուտների՝ շահույթի այն մասը, որ ընկնում է բաժնետերերից յուրաքանչյուրին՝ նրաներ դրված դրամագլխի համապատասխան

դռնբաց նիստ - դատական ընթացակարգ, որին կարող է ներկա գտնվել ցանկացած ոք

դռնփակ նիստ - դատական ընթացակարգ, որին ներկա գտնվողները գործին մասնակցող անձինք են, նրանց ներկայացուցիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկաները, փորձագետները և

թարգմանիչները, որոնցից վերցվում է ստորագրություն՝ բացահայտված գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և չօգտագործելու մասին

դոնորի իմունացում – օտար հակածնի ներարկում դոնորին՝ հատուկ ախտորոշիչ կամ բուժական հատկություններով օժտված արյան բաղադրամասերի ստացման նպատակով

դուստր ձեռնարկություն - իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող այն ձեռնարկությունն է, որի ամբողջ գույքը սեփականության իրավունքով պատկանում է մեկ այլ ձեռնարկության, ինչպես նաև հասարակական կամ կրոնական կազմակերպության

Ե

Ենթաժառանգ - կտակարարի՝ կտակում նշած այն այլ ժառանգը, որը ժառանգություն կստանա այն դեպքում, երբ կտակարարի նշանակած ժառանգը մահանա մինչև ժառանգությունը բացվելը, հրաժարվի ժառանգությունից, որպես անարժան ժառանգ մեկուսացվի ժառանգությունից կամ չկատարի կտակարարի օրինաչափ պայմանները

Երաշխավորության պայմանագիր - երբ երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար

Երկրորդ հերթի ժառանգներ - ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը

Երրորդ անձ - այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք կամ մարմինները, որոնց իրավունքները շոշափվում են կամ անմիջականորեն կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով, ինչպես նաև այն մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնց լիազորություններին առնչվում է կամ կարող է առնչվել ընդունվելիք դատական ակտը

Երրորդ հերթի ժառանգներ - ժառանգատուի ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմի պապը և տատը

Է

Էվիկցիա - [< ռուս. эвикция < լատ. evictio], գնորդից ձեռք բերած սեփականության բռնագրավում դատարանի որոշման համաձայն

Թ

Թմրաբիզնես - տնտեսական գործունեությունն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և նրանց ելանյութերի ապօրինի շրջանառության ոլորտում՝ ուղղված հանցավոր եկամտի ստեղծմանը

Ժ

Ժառանգության զանգված - ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները

Ժառանգության տրանսմիսիա - ժառանգությունն ընդունելու իրավունքը փոխանցելը

Ի

Ինդոսանտ – [< ռուս. индоссант < գերմ. indossant], օրդերային արժեթղթով իրավունքներ փոխանցող անձ՝ փոխանցագրող

Ինդոսատ – [< ռուս. индосат < գերմ. indosat], օրդերային արժեթղթի նոր տերը

Ինկասո հաշվարկներ (ինկասո) – (< ռուս. инкассо < իտլ. incasso), բանկային գործառնություն, երբ բանկը մատակարարի հանձնարարության մեջ իր վրա է վերցնում գնորդից վճարման ենթակա դրամական գումարների գանձումը՝ դրամական, ապրանքային կամ հաշվարկային փաստաթղթերի հիման վրա

Ինտերպելլացիա - [< ռուս. интерpellация < ֆր. interpellation < լատ. interpellation], պառզամավորի հարցում կառավարությանը կամ առանձին նախարարի, որի պատասխանը կարող է քննարկվել խորհրդարանում, պառլամենտում ևն

Ինքնիրավչություն - որևէ գործի լուծման մեջ օրինական կարգի խախտում, ինքնակամ ապօրինի գործողություն

իրավաբանական անձ – այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող

իրավաբան-խորհրդատու - որևէ հաստատության՝ իրավունքի պրակտիկ հարցերով զբաղվող մշտական կոնսուլտանտ, այդ հաստատության շահերի պաշտպան

իրավազանց - իրավունքները խախտած

իրավազորություն - օրինական իրավունքներով օժտվածություն, օրենքով նախատեսված որոշակի իրավական վարքագիծ ունենալու և ուրիշներից այդպիսին պահանջելու իրավունք, սուբյեկտիվ իրավունք

իրավական ակտ - Հայաստանի Հանրապետության ժողովրդի, Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, ինչպես նաև իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր փաստաթուղթ, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություններ, սահմանափակումներ կամ այլ կանոններ

իրավահաջորդ - տվյալ իրավունք(ներ)ով մեկին հաջորդող, մեկի իրավունքներն ստացող

իրավունակություն – իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակություն

իրացվելի ակտիվ – դրամական միջոց կամ այլ ակտիվ, որը հնարավոր է կարճ ժամանակում առանց դրանց սեփականատիրոջ համար էական կորուստների վերածել դրամական միջոցների

Իրեղեն ապացույցներ – այլ առարկաները, որոնք իրենց արտաքին տեսքով, ներքին հատկություններով, գտնվելու վայրով կամ այլ հատկանիշներով կարող են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների հաստատման միջոց դառնալ: Իրեղեն ապացույցներ են նաև լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները:

Լ

Լեգալ իզացիա – [*« легализация «* լատ.], լեգալացում՝ օրինականացում՝ իրավական նորմների կողմից կազմակերպության օրինական գործունեության ճանաչումը

Խ

խարդախություն – ուրիշի գույքին տիրանալը կամ գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը խաբեության կամ վստահությունը չարաչափելու միջոցով

խնամակալ (հոգաբարձու) – խնամելու և հոգ տանելու պատասխանատվություն կրող անձինք

խնամակալություն (հոգաբարձություն) – անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության հսկողություն, որն իրականացվում է պետական իշխանության վերահսկողությամբ

խնամատար ընտանիք - խնամատար ծնողներից և հոգեզավակներից կազմված ընտանիք

խնամատար ծնողներ - քաղաքացիները (ամուսինները կամ առանձին անձինք), որոնք ցանկություն են հայտնել դաստիարակության վերցնել առանց ծնողական խնամքի մնացած երեխա (երեխաներ)

խնամարկյալ – խնամքի ենթակա անձինք

խորթ երեխաներ – ամուսնու՝ նախկին ամուսնությունից ծնված և խորթ ծնողի հետ համատեղ ապրող երեխաներ

Ն

Ճնողական իրավունքներ – ճնողների հավասար իրավունքներն ու պարտականությունները իրենց երեխաների նկատմամբ

Կ

Կանխամտածված սնանկություն – հանցագործության տեսակ

Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում – որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում, որը կարող է իրականացվել միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործության բացահայտման համար՝ բացառապես կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարության հիման վրա

Կեղծ ամուսնություն - երբ ամուսինները կամ նրանցից մեկը ամուսնությունը գրանցել են առանց ընտանիք ստեղծելու մտադրության

Կոմիսիայի պայմանագիր – [ռուս. комиссия < լատ. commissio], կոմիսիայի պայմանագրով մի կողմը (կոմիսիոները) պարտավորվում է մյուս կողմի (կոմիտենտի) հանձնարարությանը, վարձատրությանը, իր անունից, սակայն կոմիտենտի հաշվին, կնքել մեկ կամ մի քանի գործարք

Կոմիսիոներ – [ռուս. комиссионер < ֆր. commissionnaire < լատ. commissio], առևտրական միջնորդ՝ միջնորդարար, առևտրական հանձնակատար

Կոմիտենտ– կոմիսիայի պայմանագիր կնքող կողմերից մեկը

Կոնտրագենտ [ռուս. контрагент < գերմ. Kontrahent < լատ. contrahens (contrahentis)], պայմանադիր կողմ

Կոնֆիրմացիա [ռուս. конфирмация < լատ. confirmation], բարձրագույն պետական իշխանությունների կողմից դատավճիռների հաստատում

Կոշտ գրավ - այն գրավը, որի առարկան թողնվում է գրավատուի մոտ՝ գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով, ինչպես նաև գրավատուի մոտ թողնված գրավի առարկան կամ որի նկատմամբ գրավի իրավունքը գրանցված է օրենքով սահմանված կարգով

Կտակակատար - այն անձը, որին կտակի հեղինակը լիազորել է կտակի իրագործումը՝ տնօրինությունը

կտակայ ին հանձնարարություն - կտակարարն իրավունք ունի ըստ կտակի մեկ կամ մի քանի ժառանգների հանձնարարել ժառանգության հաշվին կատարելու որևէ պարտականություն հոգուտ մեկ կամ մի քանի անձանց (շահառուների), որոնք իրավունք ունեն պահանջել կատարելու այդ պարտավորությունը

կտակարար - կտակի հեղինակ, ժառանգությունը կտակող անձ

կրկնադատ- կրկին՝ երկրորդ անգամ կայացած՝ կայացող դատ

Յ

հակընդդեմ հայ ց - պատասխանողի՝ մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը սկզբնական հայցի հետ հակընդդեմ հայց հարուցելը հայցվորի դեմ

համակատարում - հանցակցության տեսակ, երբ հանցագործության կատարողները երկու կամ ավել են

համահայցվորներ – միևնույն հայցը հարուցած մի քանի հայցվոր

համապատասխանողներ - այն անձինք, որոնց դեմ ուղղված է մեկ ընդհանուր հայց

համիրավ պահանջ - երբ պահանջների համիրավության դեպքում համիրավ պարտատերերից յուրաքանչյուրն իրավունք ունի լրիվ ծավալով պահանջ ներկայացնելու պարտապահին

հայցայ ին վաղեմություն – իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը

հանցագործությունը մեղսագրել – հանցագործությունը վերագրել մեկին

հանցագործության օբյեկտիվ կողմ – որոշակի պայմաններում, տեղում և ժամանակահատվածում ընթացող և քրեաիրավական պաշտպանության համապատասխան օբյեկտներին վնաս պատճառող հանրորեն վտանգավոր ոտնձգության արտաքին դրսևորում

հանցանիշ - անուղղակի ապացույց, ապացուցման առարկային անուղղակի կերպով վերաբերող փաստ՝ իր, հանգամանք ևն

հաջորդող գրավ - գրավ դրված գույքի այլ գրավի առարկա դառնալը

հավատարմագրային կառավարում - խնամարկյալի անշարժ և արժեքավոր գույքի մշտական կառավարում այն անձի կողմից, ում ընտրում է խնամակալության և հոգաբարձության մարմինը և հավատարմագրային կառավարման պայմանագիր է կնքում նրահետ

հարցախորձ - հարցուփորձով վարվող դատական քննություն, հարցաքննություն

հետաքննության մարմին – հետաքննության իրավասություն ունեցող պետական մարմնի համապատասխան ստորաբաժանման պետը և աշխատակիցները

հոգեզավակ - դաստիարակության համար խնամատար ընտանիք հանձնվող երեխան (երեխաները)

հրապարակային օֆերտա - անձանց անորոշ շրջանակի հասցեագրված ապրանքի առաջարկը՝ գովազդով, քարտացուցակներով (կատալոգներով) և նկարագրությամբ

Ձ

ձեռքբերման վաղեմություն – քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր է, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք

Ճ

ճանաչման ներկայացնել - քննչական գործողություն, որի ընթացքում անձին (վկային, տուժողին, կասկածյալին, մեղադրյալին) ճանաչման է ներկայացվում որևէ սուբյեկտ (մարդ), դիակ կամ օբյեկտ (առարկա)՝ ճանաչող անձի կողմից նախկինում ընկալած սուբյեկտի կամ օբյեկտի (առարկայի) հետ դրանց նույնության, նմանության կամ տարբերության պարզաբանման (հաստատման) համար

Մ

մեղադրանքի կողմ - քրեական հետապնդման մարմինները, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը և նրանց օրինական ներկայացուցիչները

մեղսագիտակ - մեղսագիտակության վիճակում գտնվող, գիտակցաբար գործելու և իր արարքների համար պատասխանատվության կրելու վիճակով գտնվող

մուկնիցիպալ իզացիա - [ռուս. муниципализация < ֆր. municipalisation], պետության կողմից մասնավոր անձանց անշարժ գույքը (շենքերը և հողերը) տեղական ինքնավարության մարմիններին հանձնելը

Ն

նախադեպ - դատական կամ պետական իշխանության այլ մարմնի որոշում, որը իբրև օրինակ է ծառայում նման հարցերի ու գործերի լուծման ժամանակ

նպատակային փոխառություն - փոխառուի կողմից ստացված միջոցները որոշակի նպատակների համար օգտագործելու նպատակով կնքված պայմանագիրը

նվիրաբերություն – պայմանագիր, որը ճանաչված գույքի կամ իրավունքի նվիրատվությունն է հանրօգուտ նպատակներով

Շ

շահագրգիռ կողմ – ստանդարտացման գործընթացում շահագրգիռ կամ որևէ կերպ ներգործող ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ

Չ

չորրորդ հերթի ժառանգներ - ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը (հորեղբայրները, հորաքույրները, քեռիները, մորաքույրները)

չսպառվող գույք - այն օբյեկտները (հողամասեր, շենքեր, շինություններ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլն), որոնք օգտագործման ընթացքում չեն կորցնում իրենց բնական հատկությունները

Պ

պահապանություն - երբ մի կողմը (պահառու) պարտավորվում է պահել մյուս կողմի (պահատու) կողմից իրեն հանձնված գույքը և այն վերադարձնել պահպանված վիճակում

պայմանագրային սեկվեստր - սեկվեստրի պայմանագրով՝ երկու կամ ավելի անձինք, որոնց միջև գույքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճ է առաջացել, այդ գույքը հանձնում է երրորդ անձի, որը պարտականություն է ստանձնում վեճը լուծվելու դեպքում գույքը վերադարձնել այն անձին, ում դա կհատկացվի դատարանի վճռով կամ բոլոր վիճող անձանց համաձայնությամբ

պատրոնաժ – [ռուս. патронаж < ֆր. patronage հովանավորչություն]: Երբ չափահաս գործունակ քաղաքացին վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները, խնդրում է խնամակալության և հոգաբարձության մարմնին իր համար նշանակել օգնական՝ պատրոն: Սույն երևույթը կոչվում է պատրոնաժ:

պարտադիր բաժին - ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից, ժառանգելու այն բաժնի առնվազն կեսը, որը նրան կհասներ ըստօրենքի ժառանգելու դեպքում

պրինցիպալ – [ռուս. принципал < լատ. principalis], այն անձը, որն ունի հիմնական պարտավորություններ պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ

պրեզումպցիա - [ռուս. презумпция < լատ. praesumptio], փաստի ճանաչումը՝ որպես հավաստի, քանի դեռ չի ապացուցվել հակառակը (օրինակ՝ անմեղություն կանխավարկած)

Ռ

ռեգիստր [ռուս. регистр < լատ. registrum], բնակչության վերաբերյալ օրենքով սահմանված անձնական հաշվառման տվյալների տեղեկատվական համակարգ

ռեգրեսսիվ – [ռուս. регрессив < լատ. regressus], հետպահանջող, հետադարձ պահանջատեր, հետպահանջընկալ

ռեգրեսս – [ռուս. регресс < լատ. regressus], հետադարձ պատասխանող

ռեգեստր [< ռուս. реестр < լատ. registum], անվանական արժեթղթերի թողարկման, դրանց սեփականատերերի, անվանական արժեքի, քանակի և տեսակի վերաբերյալ տվյալների միասնական համակարգ

ռեզիդենտ [< ռուս. резидент < լատ. residens (residentis)], ֆիզիկական անձինք, որոնք տվյալ տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող 12-ամսյա ժամանակահատվածում գտնվել են ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև իրավաբանական անձինք, որոնք ստեղծվել և պետական գրանցում են ստացել ՀՀ-ում

ռեկվիզիցիա - [< ռուս. реквизиция < լատ. requisite պահանջ], տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների դեպքում և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներում օրենքով սահմանված պայմաններում ու կարգով, պետական մարմինների որոշմամբ սեփականատիրոջից գույքի վերցնելը՝ ի շահ հասարակության՝ դրաարժեքը վճարելու պայմանով

Ս

ստորադաս փոխառություն - փոխառուի լուծարման դեպքում փոխատուի պահանջների բավարարման ենթակա լինելը փոխառուի մյուս բոլոր պարտատերերի պահանջները բավարարելուց հետո

Վ

վարձակալություն պայմանագիր – երբ վարձատու և պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք

վարձույթի պայմանագիր – որպես մշտական ձեռնարկատիրական գործունեություն, գույքը վարձակալության հանձնող վարձատու և պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել շարժական գույք

վեճի առարկա գույքի պահապանություն (սեկվեստր) - արգելակալանք

վերահանձնարարում - հանձնարարության կատարման հանձնարարումն է այլ անձի

վերիֆիկացիա - [ռուս. верификация < ֆր.verification < լատ. verus], ճշմարտության ստուգում, իսկության հաստատում

S

սիրազուրկ գույք - այն գույքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրան կառավարման սեփականության իրավունքից

Ու

ուշացումով ստացված ակցեպտ – երբ ակցեպտի մասին ժամանակին ուղարկված ծանուցումն ստացվել է ուշացումով

ուլտիմատում – [ռուս. ультиматум < լատ. ultimus ամենավերջին], վերջնագիր՝ մի երկրի պահանջի չկատարման դեպքում որոշակի միջոցառումների իրագործում, որը հանգեցնում է երկու երկրների դիվանագիտական հարաբերության նսեղանակի խզման

Փ

փակ կտակ - երբ կտակարարի ցանկությամբ նոտարը կտակը վավերացնում է առանց դրա բովանդակության հետ ծանոթանալու

փորձաքննության օրը - որևէ բանի մասին ճիշտ եզրակացության գալու՝ որևէ բանի ճիշտ գնահատական տալու նպատակով կատարվող մասնագիտական հետազոտություն՝ քննություն, էքսպերտիզա

Ք

քննչական բաժնի պետ – քրեական դատավարության սուբյեկտ՝ ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների քննչական վարչության, բաժնի, բաժանմունքի պետերը և նրանց տեղակալները, որոնք գործում են իրենց իրավասության սահմաններում

քրեածին - քրեական հանցագործությունն ծնող՝ առաջացնող, դրանց առաջացմանը նպաստող

քրեական հետապնդման հարուցում – քրեական հետապնդման մարմնի որոշումն անձին որպես մեղադրյալ ներգրավելը, ինչպես

նաև մինչև այդ նրան ձեռքբերվելը կամ նրան կատմամբ խափանման միջոց կիրառելը

քրեական հետապնդում - այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները՝ դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը

Օ

օբյեկտ – [ռուս. объект < լատ. objectum առարկա], ինչ որ կարող է իրավունքի՝ դատի նյութ լինել

օրդերային արժեթուղթ - գրավոր փաստաթուղթ, որով մեկ անձը իր իրավունքները փոխանցում է այդ փաստաթղթում նշված անձին, որը կարող է ինքնուրույն իրականացնել այդ իրավունքները կամ իր կարգադրությամբ նշանակել այլ իրավագործ անձի

օրենսդրարոշումային – օրենսդրություն և որոշումներ պահանջող

Ֆ

ֆիզիկական անձ – Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք

ֆրանչիզա – [ռուս. франшиза < ֆր. franchise], առանձնաշնորհ՝ համատեղ գործունեության մասին պայմանագրերի հիման վրա կատարվող գործառնություն